

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՍ 2
2018-2020 ԹԹ.



ԵՐԵՎԱՆ-2021

ՀՏԴ 330
ԳՄԴ 65
Հ 247

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Կիրառական առաջարկությունների
սույն ժողովածուն կազմել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վլադիմիր Հարությունյանը**

Գիտական խմբագիրներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Գրիգորի Վահանյան**
տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Սարգսյան**
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության
դոկտոր, պրոֆեսոր **Վլադիմիր Հարությունյան**

Գրախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ռոբերտ Սարիյան**
տնտեսագիտության թեկնածու **Քրիստինե Բաղդասարյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
Հ 247 կողմից ՀՀ կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկու-
թյուններ. մաս 2, 2018-2020 թթ.. -Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ, 2021, - 284 էջ:

Ժողովածուում ամփոփվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագի-
տության ինստիտուտում 2018-2020 թթ. կատարված հետազոտական աշխա-
տանքները, որոնցից բխող կիրառական առաջարկություններն ամեն տարի
ներկայացվել են ՀՀ կառավարությանը: Դրանց մի մասը արդիական են և կարող
են օգտակար լինել ՀՀ գործող կառավարությանը տարբեր ստորաբաժանումների
ռազմավարական խնդիրները լուծելիս:

ՀՏԴ 330
ԳՄԴ 65

ISBN 978-9939-9214-7-1

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի փոխաբան	5
Կիրառական առաջարկություններ 2018-2020 թթ.	
1. Հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական և մեթոդաբանական ուղենիշերը անուղղակի հարկերի մասով (Վլադիմիր Հարությունյան, Տիգրան Հարությունյան)	6
2. Ֆինանսական համակարգի կատարելագործման ուղենիշերը ՀՀ-ում (Վլադիմիր Հարությունյան)	22
3. Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման ուղենիշերը ՀՀ-ում (Վլադիմիր Հարությունյան, Եվգենյա Հակոբյան)	37
4. Բենզինի և դիզվառելիքի շուկայի ազատականացման ուղենիշերը (Քրիստինե Բաղդասարյան)	49
5. Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության հիմնախնդիրներն ու զարգացման ուղենիշերը ՀՀ-ում (Սվետլանա Դալլաքյան)	58
6. Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման ուղենիշերը արդի տեխնոլոգիական զարգացումների համատեքստում (Հայկ Մարկոսյան)	72
7. Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման հեղափոխական մոդելը (Լիլիթ Սարգսյան)	86
8. Գյուղատնտեսության ապահովագրության ներդրումը որպես գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման ուղենիշ (Մերի Մանուչարյան)	104
9. Մտորումներ ՀՀ հարկային օրենքների շուրջ («Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներ) (Վլադիմիր Հարությունյան, Դավիթ Հարությունյան)	118
10. Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում (Սվետլանա Դալլաքյան, Նարեկ Մարատիկյան)	141
11. ԵՏՄ երկրներում գործող հարկային դրույքաչափերի և ՀՆԱ ցուցանիշի շուրջ (Եվգենյա Հակոբյան)	150
12. Ներառական տնտեսական զարգացման հարկային խթանիչ մեխանիզմները (ՀՀ օրինակով) (Գևորգ Հարությունյան)	155
13. ԵԱՏՄ երկրների տնտեսական պլատֆորմների զարգացմանը ՀՀ շուկայի սուբյեկտների մասնակցության հիմնախնդիրները (Սոնա Մարգարյան)	170
14. Սովերային տնտեսության նվազեցման մոտեցումները. մարտահրավերներ և առաջարկություններ (Լիլիթ Պետրոսյան)	175
15. ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման հնարավորությունները (Անուշ Սարգսյան)	186

16. Ագրոտուրիզմի զարգացման հիմնախնդիրները և խթանման ուղիները ՀՀ-ում (Լիանա Ազատյան)	193
17. ՀՀ գյուղատնտեսությունում մեքենատրակտորային համակազմի ներկա վիճակը և թարմացման հնարավոր ուղիները (Ռուզաննա Ալոյան)	202
18. Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների ինովացիոն գործունեության խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (Արմինե Զախարյան)	210
19. Օրգանական գյուղատնտեսության նշանակությունը որպես կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմացման միջոց (Մերի Մանուչարյան).....	221
20. Գիտակրթական համակարգը որպես ՀՀ գյուղատնտեսության զարգացման գործոն (Գոհար Ոսկանյան)	228
21. Ինովացիոն START-UP-երի հիմնախնդիրները և դրանց խթանումը ՀՀ-ում (Շողեր Պողոսյան)	235
22. Տնտեսության թվայնացումը որպես տնտեսական հեղափոխության կարևորագույն նախադրյալ (Տաթևիկ Շահինյան)	245
23. Սինգապուրի «տնտեսական հրաշքը» (Լիլիթ Սարգսյան).....	252
24. Մալայզիայի «տնտեսական հրաշքի» «կորպորատիվ ազգայնականության» մոդելը (Քրիստինե Բաղդասարյան)	255
25. «Ճապոնական տնտեսական հրաշքի» փիլիսոփայությունը (Սվետլանա Դալլաքյան)	258
26. Իսրայելի «տնտեսական հրաշքի» հետազիծը (Մերի Մանուչարյան).....	262
27. «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում (Վլադիմիր Հարությունյան).....	266

Հավելվածներ

Հավելված 1.....	273
Հավելված 2.....	277
Հավելված 3.....	281

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտը իր գործունեության վերջին 15 տարիներին (2006-2020 թթ.) գրեթե յուրաքանչյուր տարի կիրառական առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կառավարությանը՝ դրանք հասցեագրելով ՀՀ վարչապետներին կամ առաջարկության հասցեատեր պետական կառավարման մարմինների ղեկավարներին: Այդ առաջարկություններից երկուսը Տիգրան Սարգսյանի կառավարությունը 2008 թ. ամռանը բարձրացրել է օրենսդրական մակարդակի, որի արդյունքում 2009 թ. հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթներ, իսկ առանձին առաջարկություններ էլ իրենց արտացոլումն են ստացել կառավարությունների ռազմավարական փաստաթղթերում, հայեցակարգերում ու ենթաօրենսդրական ակտերում: Բայց կան նաև շատ կիրառական առաջարկություններ, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը և սպասում են իրենց կիրարկմանն ու գործարկմանը, որի ակնկալիքով էլ ծնվել է սույն հրապարակումը, որը

1. տեղադրված է ինստիտուտի կայքում,
2. ուղարկված է առաջարկության հասցեատեր պետական կառավարման մարմինների ղեկավարների կայքերին (հավելված 1)՝ ակնկալությամբ, որ ղեկավարները ժամանակ կգտնեն ծանոթանալու և հետևություններ անելու,
3. հիշատակված բոլոր կիրառական առաջարկությունները, որոնք տեղադրված են որևէ գրքում կամ գիտական հոդվածների ժողովածուում, տեղադրված են ինստիտուտի կայքում (economics.sci.am):

Պետական կառավարման մարմիններին, ԱԾ համապատասխան հանձնաժողովներին ստեղծագործական և հեղափոխական հաջողություններ եմ ցանկանում և պատրաստակամություն եմ հայտնում համագործակցության համար հանուն Հայաստանի տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ամրապնդման և ազգաբնակչության բարեկեցության բարձրացման:

Ինստիտուտի տնօրեն՝

Վլադիմիր Հարությունյան

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ (2019 Թ.)

Վլադիմիր Հարությունյան

ՀՀ ԳԱՄ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան Հարությունյան

տնտեսագիտության դոկտոր

Հայաստանում ԱԱՀ-ի գծով հաշվարկված մուտքերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտների մեջ դեռևս 1998-2001 թթ. եղել է ամենաբարձրը հետխորհրդային անցման շրջանի տնտեսությամբ երկրների մեջ, մինչդեռ այլ երկրների հետ համեմատած՝ շահութահարկի և եկամտահարկի գծով մուտքերը եղել են շատ ցածր¹:

Աղյուսակ 1

**ԱԱՀ-ի տեսակարար կշիռը հարկային և պետական բյուջեի
եկամուտների կառուցվածքում 2010-2018 թթ.²**

Տարի	Պետական բյուջեի եկամուտներ (մլն դրամ)	Հարկային եկամուտներ (մլն դրամ)	ԱԱՀ (մլն դրամ)	ԱԱՀ/հարկային եկամուտներ (%)
2010	780439.4	699434.9	301724.5	52.7
2011	880851	777409.7	328482.8	52.1
2012	946193.4	878381.4	369661.6	43.3
2013	1071371	1000931	401884.7	41.3
2014	1144763	1064118	440361.4	43
2015	1167744	1067889	423933.5	40.9
2016	1171107	1079689	391087.8	37.4
2017	1237781	1157988	406583.1	38.9

¹ Հայաստանում Ամերիկյան և Եվրոպական միության առևտրային պալատների «Հայաստանի հարկային համակարգի բարեփոխումներ. օտարերկրյա ներդրողների հեռանկարները» զեկույցը, օգոստոս, 2003, էջ 7:

² <https://www.armstat.am/file/doc/99493848.pdf>
<https://www.armstat.am/file/doc/99499473.pdf>
<https://www.armstat.am/file/doc/99504418.pdf>
<https://www.armstat.am/file/doc/99510818.pdf>
https://www.armstat.am/file/article/sv_11_18a_211.pdf
http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2017.pdf
http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2016.pdf
http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2015.pdf
http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2014.pdf
http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2012.pdf
<http://www.petekamutner.am/siPublications.aspx?ptname=AnnualReports>

ԱԱՀ-ի գծով հաշվարկված փաստացի մուտքերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտներում շարունակում է բարձր մնալ նաև 2010-2018 թթ. (տե՛ս աղյուսակ 1):

Հարկ է նշել, որ Հայաստանի թե՛ հարկային բազան և թե՛ հարկազանձման գործընթացը անհավասարակշռված են, ինչը վնասակար ու կործանիչ է երկրի համար, քանի որ ԱԱՀ-ը, լինելով անուղղակի հարկատեսակ, ավելի ազդեցիկ է ցածր եկամուտներ ունեցող սուբյեկտների համար, ինչն իր հերթին նպաստում է աղքատության խորացմանը: Ելնելով վերոհիշյալ և այլ փաստարկներից.

1. տնտեսագիտորեն հիմնավորված ենք համարում ԱԱՀ-ի դրույքաչափի տարբերակումը: Ընդ որում՝ անհրաժեշտ է ցածր հարկադրույքները սահմանել սպառման առարկաների, իսկ բարձր հարկադրույքները՝ խրախճանքի և շքեղության օբյեկտ հանդիսացող ապրանքների համար, որոնք կնվազեցնեն անապահով խավի հարկային բեռը, իսկ ունևոր խավինը կբարձրացնեն:
2. Անհրաժեշտ ենք համարում նաև որպես ԱԱՀ-ի հարկման բազա դիտարկել ոչ թե ամբողջ շրջանառությունը (որն անհարկի բարդացնում է ԱԱՀ-ի հաշվարկը, գործածության մեջ է մտցնում բացասական հետևանքներով հագեցած հաշվարկների պրակտիկան և այլն), այլ ավելացված արժեքը, որը կարելի է հաշվարկել վճարված աշխատավարձի և ստացված շահույթի հանրագումարով կամ վաճառված ապրանքներից ու մատուցված ծառայություններից ստացված գումարի և իրականացված ծախսերի տարբերությամբ, որով պայմանավորված՝ տրամաբանական է դառնում.

ա) ներմուծվող ապրանքներից ԱԱՀ-ի գանձման գործառույթի փոխանցումը մաքսային մարմիններից հարկային մարմիններին՝ ապահովելով «նշանակման վայրի» սկզբունքը,

բ) հարկային հաշիվների վերացումը, որոնք, առանձին հարկատուների համար լինելով ոչ խիստ հաշվառման փաստաթղթեր, դարձել են հարստացման միջոց «կեղծ հարկային հաշիվներ» դուրս գրելու եղանակով:

Հարկ է նշել, որ ԱԱՀ-ի հաշվարկման օրենսդրական ու մեթոդաբանական կարգի թերություններ տեղ են գտել նաև օրենսդրական մակարդակի բարձրացված բազմաթիվ ու բազմաբնույթ հարկային արտոնություններում, որոնք հանդես են գալիս հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելով, հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառելով¹ և այլն: Դա այն դեպքում, երբ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքով թույլատրված է (բացի օրենքում նշվածներից) սահմանել նաև այլ արտոնություններ: Ընդ որում՝ օրենքում առկա հարկային արտոնությունները սոցիալական ուղղվածություն չունեն և դեռ ավելին՝ շատ դեպքերում արդարացված չեն և ակտիվացնում են բացասական ազդեցություններ:

Մանրաձախ առևտրի համար հարկվող շրջանառության և դրանց ձեռքբերման գների տարբերության սկզբունքով որոշումը հանգեցնում է ավելացված

¹ ԱԱՀ-ից ազատումը հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է, իսկ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկումը հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումն է:

արժեքի հարկի ոչ հստակ հաշվարկի: Բացի դրանից, օրենքով սահմանվել են ավելացված արժեքի հարկից ազատման բազմաբնույթ, հաճախակի անորոշ և մեծածավալ արտոնություններ, որոնք կիրառության առումով խրթին են ու ոչ միանշանակ: Արտոնությունների այդպիսի առատությունը հանգեցնում էր միայն ավելացված արժեքի հարկի՝ որպես բյուջետային եկամուտների դերի նվազեցմանը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով ԱԱՀ-ից ազատելու միջոցով հարկային արտոնություններ են սահմանված ապահովագրական և վերապահովագրական կազմակերպությունների (ներառյալ դրանց հետ կապված ապահովագրական միջնորդները և գործակալները) կողմից մատուցվող ծառայությունների, ինչպես նաև բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական հսկայածավալ գործառնությունների ու ծառայությունների նկատմամբ¹, որին օրենքում կատարված փոփոխությամբ ավելացվել են նաև բանկեր և վարկային կազմակերպություններ չհանդիսացող այլ անձանց կողմից վարկերի ու փոխառությունների տրամադրման գործարքները²: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանում չկա մեկ այլ հարկատու, որը բանկերի և վարկային ու ապահովագրական կազմակերպությունների նման հնարավորություն ունենա իրականացնելու այդչափ շատ և բազմաբնույթ գործառնություններ, և դրանց գրեթե լրիվ գործարքների ու մատուցվող ծառայությունների գծով սահմանված լինեն ԱԱՀ-ի արտոնություններ, մանավանդ որ բանկային բիզնեսը Հայաստանում կայացած է ու զարգացած, բանկային ու ապահովագրական բիզնեսները շահութաբեր են և աշխատում են շուկայական հարաբերություններին բնորոշ մեխանիզմներով, վարկային ռեսուրսները հիմնականում շրջանառվում են առևտրում, իսկ բանկերի ու ապահովագրական ընկերությունների և վարկային կազմակերպությունների մատուցած ծառայությունների սակագները որոշվում են շուկայի օրենքներով և այլն:

Դա նշանակում է, որ երկրի օրենսդիր մարմինը չարդարացված լիբերալ վերաբերմունք է դրսևորել բանկերի, վարկային ու ապահովագրական կազմակերպությունների նկատմամբ և նրանց կողմից իրականացվող հսկայածավալ ու բազմաբնույթ գործարքների ու մատուցվող ծառայությունների համար հարկային արտոնություններ սահմանելով՝ չի արժևորել դրանք (հարկային արտոնությունը պետք է ունենա գին), քանի որ բանկերն ու վարկային կազմակերպությունները չունեն դրանց սահմանմամբ պայմանավորված պարտավորություններ: Մինչդեռ հարկային արտոնությունները հնարավորություն են տալիս այդպիսի ծառայություններ ու գործարքներ իրականացնող կազմակերպություններին (բանկեր, ապահովագրական ու վարկային կազմակերպություններ), ի հաշիվ բյուջեի, ստանալու լրացուցիչ եկամուտներ, որոնք «կերպարանափոխվում» և հանդես են գալիս ծառայության վճարի ձևով, այսինքն՝ այն, ինչ բյուջեն չի ստանում ԱԱՀ-ի, նրանք ստանում են ծառայության վճարի ձևով: Ավելին, ներկա-

¹ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 137-139:

² Նույն տեղում:

յումս բանկերով, ապահովագրական ու վարկային կազմակերպություններով որպես կապիտալ հիմնականում շրջանառվում են հարուստների գումարները, և իրականում ԱԱՀ-ի նշված արտոնությունը լրացուցիչ եկամուտ է բերում այդ մարդկանց և «ծառայում է» նրանց: Բացի դրանից, ՀՀ-ում ապահովագրական բիզնեսի օբյեկտներ են դարձել, որպես կանոն, խոշոր գումարներ ունեցող տնտեսավարող սուբյեկտները, քանի որ նրանք հնարավորություն ունեն օգտվելու այդպիսի մասնագիտական ծառայությունից, իսկ ապահովագրական ընկերությունները ստեղծվում են հիմնականում խոշոր գործարարների կողմից, և նույն անձին պատկանող գումարներն իր մի կազմակերպությունից անցնում են մյուսին առանց ԱԱՀ-ով հարկվելու, ինչի արդյունքում հարուստն ավելի է հարստանում, իսկ աղքատը՝ աղքատանում:

Հետևաբար քանի դեռ քաղաքացիների ու տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասը չունի ապահովագրական ծառայություններից օգտվելու ֆինանսական հնարավորություն, ապա այդպիսի ծառայությունների գծով ԱԱՀ-ի հարկային արտոնությունների սահմանումը նպաստում է ապահովագրական ընկերությունների լրացուցիչ շահույթի ստացմանը ի հաշիվ բյուջեի: Ուստի արդարացված պետք է համարել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ և 17-րդ կետերով սահմանված հարկային արտոնությունների ուժը կորցրած ճանաչելը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառմամբ հարկային արտոնություն է սահմանված միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար վառելանյութի և ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների, ինչպես նաև փոխադրամիջոցների սպասարկման, նորոգման, վերասարքավորման, փոխադրվող ուղևորների, ուղեբեռների, բեռների, փոստի սպասարկման ծառայությունների նկատմամբ: Այն ժամանակ, երբ միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող ընկերությունը պետական էր և միակը, այդպիսի հարկային արտոնությունների սահմանմամբ պետությունը կանխում էր բացասական ազդեցությունների ակտիվացումը, իսկ երբեմն էլ չեզոքացնում էր դրանք, որոնք, օրինակ, կարող էին դրսևորվել տոմսերի, անձնակազմին ու ուղևորներին մատակարարվող ապրանքների գների բարձրացման մեջ և այլն: Ներկայումս, երբ միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող ընկերությունը միակը չէ և պետական չէ, իսկ օդանավակայանը հանձնված է հավատարմագրային կառավարման, սահմանված հարկային արտոնությունները պետությանը փոխհատուցում չեն բերում: Դեռ ավելին, սահմանված հարկային արտոնությունները չեն կարող հետապնդել ուղևորափոխադրումների մեծացման նպատակ, քանի որ, անկախ տոմսի ու ինքնաթիռում մատուցվող ծառայությունների գների մեծությունից, «գնացողը գնում է, իսկ եկողը՝ գալիս»: Արդյունքում այդպիսի հարկային արտոնությունների գործողությունը հանգեցնում է ավիավառելիք, օդանավում սպառման համար նախատեսված ապրանքներ մատակարարող, փոխադրամիջոցների սպասարկում ու նորոգում և այլ ծառայություններ

մատուցող հարկատուների բյուջետային վարկավորմանը, որը չի բխում հարկման սկզբունքների պահանջներից: Ասվածի տրամաբանությունը հանգեցնում է այն հետևությանը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետը օդանավերի լցավորման համար վառելանյութի և օդանավում սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարման մասով, ինչպես նաև 16-րդ հոդվածի 5-րդ կետը միանգամայն արդարացված կլինի ուժը կորցրած ճանաչելը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում իր արտացոլումն է ստացել նաև հարկային խտրականության գուգակցմամբ հարկային արտոնության սահմանումը, որը հակասում է հարկման համընդհանրության սկզբունքին և հանգեցնում է բացասական այլ երևույթների: «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով հարկային արտոնություն սահմանող 16-րդ հոդվածի առաջին կետի երկրորդ պարբերության «օտարերկրյա անձանց կողմից հանրապետությունում ձեռք բերված ապրանքներն արտահանելիս դրանց համար հանրապետության տարածքում վճարված ԱԱՀ-ի գումարները վերադարձվում են» դրույթը նպաստում է այնպիսի բացասական ազդեցությունների ակտիվացմանը, ինչպիսիք են՝ հայաստանցիների կողմից օտարերկրացիների միջոցով ապրանքների արտահանումը և ստվերային դաշտում նրանց գործելը, օտարերկրացիների կողմից «անաշխատ եկամտի» ձևով հանդես եկող գումարների տնօրինումը բյուջեից վերադարձվող ԱԱՀ-ի չափով (երբ իրական արտահանողը հայաստանցին է), արտահանվող ապրանքի վաճառքից ստացվող շահույթի տնօրինումը օտարերկրացու կողմից և այդ գումարի շրջանառումը արտասահմանում (երբ իրական արտահանողը օտարերկրացին է), հարկման արդյունավետության նվազումն ինչպես հայաստանցու, այնպես էլ օտարերկրացու մասով հատկապես այն դեպքերում, երբ համապատասխան երկրների հետ Հայաստանը չունի միջպետական համաձայնագրեր, որոնց պարագայում օտարերկրացուց հարկի գանձման հնարավորությունը հավասարվում է զրոյի: Այդպիսի հարկային արտոնության սահմանման արդյունքը օտարերկրացու մուտքն է Հայաստան և դրսի հետ շփումների ակտիվացումը, ապրանքների արտահանումը և դրանց իրացման խնդրի հարցի լուծումը, որոնք ամբողջությամբ դրական ազդեցություններ էին տարիներ առաջ, բայց ոչ այժմ:

Հարկային խտրականության գուգակցմամբ հարկային արտոնությունների սահմանման օրինակ է օտարերկրացիների կողմից տրված (ըստ էության՝ նրանց կողմից մատակարարվող) հումքից, նյութերից ու կիսաֆաբրիկատներից և նրանց պատվերով ՀՀ տարածքում արտադրանքի մշակման կամ հավաքման, շարժական գույքի նորոգման, արդիականացման և համանման այլ ծառայությունների (որոնք արտահանվում են ՀՀ մաքսային սահմանից դուրս), ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների պաշտոնական օգտագործման նպատակով ներմուծվող կամ հանրապետության տարածքում ձեռք բերվող ապրանքների, նրանց մատուցվող ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումը¹: Այսպիսի հարկային արտոնությունների սահմանման առաջին դեպքի (երբ օտարերկրացին հումքի մատակարար է, պատրաստվող արտադրանքի ու մատուցվող ծառայության պատվիրատու ու դրանք արտահանող) ժամանակ դրական ազդեցություն է արտադրանքի իրացումը արտասահմանում, իսկ բացասական ազդեցություններն են բյուջեի մուտքերի նվազումը և հայաստանցի գործարարների ձգտումը դրանք իրականացնելու օտարերկրացիների անվան տակ, որը նվազեցնում է հարկման արդյունավետությունը: Սակայն գործնականում առավելապես հնարավոր են ինչպես բացասական ազդեցությունների խորացումը, այնպես էլ դրական ազդեցությունների չեզոքացումը, քանի որ Հայաստանը դեռևս չի դարձել միջազգային ընկերության լիիրավ անդամ, ինչը հնարավորություն կտար Հայաստանին ու նրա հարկատուներին օտարերկրացիների հետ ունեցած տարաձայնությունները վիճարկելու միջազգային դատարաններում: Քանի դեռ դա այդպես չէ, ճիշտ կլինի վերոհիշյալ նպատակին հասնելու խնդիրը լուծել ոչ թե հարկային արտոնությունների օրենսդրական սահմանման (որը գործողության երկար տևողություն ունի, առանց «խաղի միջազգային կանոնների» հստակեցման), այլ միջպետական որոշակի համաձայնագրերի կնքման միջոցով, որը կբացառի հարկային նշված արտոնությամբ պայմանավորված բացասական ազդեցությունների դրսևորումը:

Ելնելով վերոհիշյալից՝ անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ հարկային արտոնություն սահմանող 16-րդ հոդվածի 7-րդ կետը ամբողջությամբ:

Հարկային խտրականության գուգակցմամբ հարկային արտոնությունների սահմանման երկրորդ դեպքի (երբ ապրանքը վաճառվում կամ ներմուծվում է, ինչպես նաև ծառայությունը մատուցվում է դիվանագիտական ներկայացուցչություններին, միջկառավարական կազմակերպություններին և այլն) ժամանակ բացասական ազդեցություններ են բյուջեի մուտքերի նվազումը, հարկատուների կողմից արտասահմանյան պետական կառույցների (դիվանագիտական ներկայացուցչություն, հյուպատոսական հիմնարկ և այլն) միջոցով ԱԱՀ-ի գումարի չափով սեփական եկամտի ավելացումը (ԱԱՀ-ի գումարը ամբողջությամբ կամ գուցե փոքր-ինչ պակասեցված չափով վաճառվող ապրանքի կամ մատուցվող ծառայության գնի մեջ ներառելով), ԱԱՀ-ի վճարումից խուսափումը՝ արտասահմանյան պետական կառույցներին փաստաթղթային կեղծ ծառայություններ մատուցելով, իսկ դրական ազդեցությունը միայն Հայաստանի Հանրապետության կողմից արտասահմանյան պետական կառույցների նկատմամբ ուշադրության ու բարի վերաբերմունքի դրսևորումն է, որը կարելի է իրականացնել նաև այլ եղանակներով, բայց ոչ հարկերից խուսափելու «սողանքների» հնարավորություն սովող հարկային արտոնությամբ: Ուստի անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ արտոնություն սահմանող 16-րդ հոդվածի 11-րդ կետը ամբողջությամբ:

¹ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 141-142:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառմամբ հարկային արտոնություն է սահմանված հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ¹, որը ունի հետևյալ բացասական ազդեցությունը. ապրանքները, համաձայն փաստաթղթերի, արտասահմանյան մեկ երկրից մատակարարվում են մեկ այլ արտասահմանյան երկիր, սակայն դրանք իրականում ոչ թե արտահանվում, այլ իրացվում են հանրապետությունում՝ նախապես ապահովելով առաքված ապրանքները ստացող երկիր մուտք գործելու համապատասխան փաստաթղթերը: Այդպիսի ձևակերպմամբ սահմանված հարկային արտոնության բացասական ազդեցություններն են ինչպես բյուջեի մուտքերի նվազումը, այնպես էլ հարկային վարչարարության անկարողությունը, իսկ այդ գործարքը դառնում է քրեական դաշտի լուծելի խնդիր: Հարկային այս արտոնության բացասական ազդեցությունների կանխման հնարավոր միջոցը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ կետը հետևյալ բովանդակությամբ ձևակերպելն է. «Հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ, եթե դրանց արտահանումը հաստատում է հանրապետության մաքսային մարմինը»:

Ակցիզային հարկի մասով. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների (գարեջուրը, խաղողի և այլ գինիները, գինեկոթը, սպիրտը և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, ծխախոտի արտադրանքը, բենզինը, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրեր) արտահանման համար սահմանված են հարկային արտոնություններ՝ այն չհարկելու միջոցով²: Այդպիսի հարկային արտոնության սահմանումը կարող է արդարացված լինել և դրական ազդեցություններ ակտիվացնել միայն նշված ապրանքների «ավելցուկի» պայմաններում, քանի որ պետությունը հանդես է գալիս ոչ միայն որպես շուկայական հարաբերությունների կարգավորիչ, այլև որպես դրանց անմիջական մասնակից: Այդ առումով անընդունելի է հանրապետությունում չարտադրվող դիզելային վառելիքի և բենզինի նկատմամբ այդպիսի հարկային արտոնության սահմանումը և ապա հանրապետությունում այդ ապրանքատեսակների վաճառքի գների նվազման դեպքում դրան մեկ այլ կազմակերպության միջոցով արտահանումը (ստացվող շահույթի մակարդակը պահպանելու նպատակով) այն պետություններ, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունն ունի կրկնակի հարկումը բացառելու միջպետական պայմանագիր: Հայտնի է նաև, որ հանրապետություն ներմուծված դիզելային վառելիքի և բենզինի իրացման գծով («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան) հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարը, ինչպես նաև շրջանառության ծախսերի գծով մատակարարների հարկային հաշիվներում սահմանված կարգով առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը թույ-

¹ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 141:

² «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 192:

լատրվում են ՀՀ օրենսդրությամբ¹: Ավելին, գործող հարկային օրենսդրությունը հնարավորություն է տալիս այդ ապրանքատեսակների գծով տնտեսական գործունեությամբ պայմանավորված զուտ կամ մաքուր շահույթի բացակայությունը կամ որոշակի չափով վնասի առկայությունը «փոխհատուցելու» այդ ապրանքատեսակների իրացմամբ պայմանավորված ԱԱՀ-ի գումարների հաշվանցմամբ, որն այլ կերպ կարելի է անվանել քողարկված բյուջետային ֆինանսավորում: Փաստորեն այս ապրանքատեսակների գծով ավելացված արժեքի հարկի հաշվանցման թույլտվության և արտահանումը ակցիզային հարկով չհարկելու սահմանումները պետության կողմից արժեքավորված չեն ու արդարացված համարել չի կարելի, քանի որ պետությունը դրանց դիմաց, որպես շուկայական հարաբերությունների կարգավորիչ ու մասնակից, «փոխհատուցում» չի ստանում ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հատվածում: Ուստի անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դիզելային վառելիքի և բենզինի հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի բ) կետի երկրորդ պարբերությունը, իսկ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի ա) կետը սահմանել այլ բովանդակությամբ՝ *օտարումը* բառից հետո ավելացնելով՝ «բացառությամբ դիզելային վառելիքի և բենզինի»:

Հարկ է անդրադառնալ նաև 1990-ական թվականներին ԽՍՀՄ հանրապետություններում գործող ապրանքների (աշխատանքների ու ծառայությունների) արտահանման և ներմուծման ժամանակ կիրառվող «ծագման վայրի» սկզբունքին: Դա պայմանավորված էր նրանով, որ ավելացված արժեքի հարկի գործողության համար միասնական հարկային դաշտ էին համարվում ԱՊՀ անդամ երկրների տարածքները, և ԱՊՀ անդամ երկրների միջև գործում էր ավելացված արժեքի հարկի գանձման «ծագման վայրի» սկզբունքը, որի էությունն այն էր, որ ԱՊՀ անդամ մի երկիր ԱՊՀ անդամ որևէ այլ երկիր ներմուծելու համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների համար ավելացված արժեքի հարկը գանձվում էր ապրանքների և ծառայությունների վաճառքի (ծագման) վայր հանդիսացող ԱՊՀ անդամ երկրում և վճարվում այդ երկրի պետական բյուջե: Այսինքն՝ ավելացված արժեքի հարկի գանձման «ծագման վայրի» սկզբունքի կիրառման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում սպառված ապրանքների և ծառայությունների համար վճարված ավելացված արժեքի հարկի մի մասը մնում էր այդ ապրանքների և ծառայությունների վաճառքի (ծագման) վայր հանդիսացող ԱՊՀ անդամ երկրներում՝ կորուստներ պատճառելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին: Այս պատճառով էր նաև, որ այդ տարիներին Հայաստանի Հանրապետության առևտրային հաշվեկշիռը ԱՊՀ անդամ երկրների հետ ուներ բացասական մեծ մնացորդ (սաղոդ)՝ կապված Հայաստանի Հանրապետությունից արտահանված ապրանքների և ծառայությունների ծավալները ներմուծման ծավալների համեմատությամբ փոքր լինելու հետ: Փաստորեն ավելացված արժեքի հարկը կորցրել էր ՀՀ բյուջեն համալրելու իր տնտեսական նշանակությունը:

¹ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 200:

Բավական է նշել, որ 1995-1996 թթ. և 1997 թ. առաջին կիսամյակում ծագման վայրի սկզբունքի արդյունքում ավելացված արժեքի հարկի գումարային կորուստը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար կազմել է 44.2 մլրդ դրամ¹: Այստեղ տեղին է հիշատակել աստվածաշնչյան այն միտքը, որ «Շատ մեջ մի՛ ընկիր, որ չվոնդվես, ոչ շատ հեռու մնա, որ մոռացվես» (Հին կտակարան, էջ 927):

Իհարկե, դրանից հետո աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ իրողություններ են փոխվել: Մասնավորապես՝ 1997 թվականից (երբ ընդունվեց «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, 14.04.97 թ.) սկսվեցին հարկային օրենսդրության բարեփոխումները, որոնք շարունակվել են հին Հայաստանում, իսկ նոր Հայաստանում այս գործընթացն իր ավարտին է հասցվում հարկային օրենսգրքի մշակմամբ ու ընդունմամբ, որի կապակցությամբ ցանկանում ենք նշել հետևյալ դիտարկումները.

1. ավելացված արժեքի հարկի հետ կապված վերոնշյալ նմանատիպ կորուստներից խուսափելու համար առաջարկում ենք վերաքննության ու փորձաքննության ենթարկել ՀՀ-ում գործող բոլոր հարկային օրենքները, որոնք ընդունվել են հին Հայաստանում և մասամբ կամ առանձին դեպքերում երևի ծառայեցվել են առանձին մարդկանց կամ մարդկանց խմբերի շահերին, մանավանդ որ ՀՀ հարկային օրենսգիրքը ՀՀ-ում գործող հարկային օրենքների մեխանիկական միացում է, որով փորձ է արվում.
- արհեստականորեն ավելի բարձրացնել հարկային մարմինների դերը՝ որպես օրենսգիրքը պարզաբանող ու մեկնաբանող մարմին, որից հոգնել են թե՛ հարկատուները և թե՛ հարկային մարմիններն ու հարկային աշխատակիցները: Կարծում ենք՝ հնացած մտածողության ժամանակներն անցել են, իսկ նախագծի հեղինակները դա չեն ուզում մոռանալ,
- գիտությունն ու կրթությունը խթանելու փոխարեն նախագծի հեղինակները վնասում են պետության այդ հենասյուների՝ հանուն բյուջեի մուտքերի ավելացման: Կարծում ենք՝ դրա աղբյուրը խոշոր հարկատուների ստվերային շրջանառության կրճատումը և մակնունավոր ու անունավոր գործարարներին հարկման դաշտ բերելն է: Արդեն բավական է. պետության պարտքերը հասել են անասելի չափերի:
Ելնելով վերոնշյալներից՝ առաջարկվում է.
- հարկային օրենսգրքի նախագիծը հանել քննարկումից, եթե դա միջազգային պարտավորություններից չի բխում,
- անկախ բոլոր հանգամանքներից՝ փորձաքննության ենթարկել հարկային բոլոր օրենքները, որոնք ընդունվել են հին Հայաստանում և ընդունել նորերը կամ դրանց փոփոխված տարբերակները և միայն դրանից հետո անցնել հարկային օրենսգրքի ընդունմանը: Նշենք, որ սույն հոդվածի շրջանակներում փորձաքննության են ենթարկվել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի առան-

¹ Հարությունյան Վ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Զանգակ-97», 2003, 192 էջ, էջ 88:

ձին դրույթներ, որոնց հաշվառմամբ ընդունված օրենքը հարստացված կլինի դրական կողմերով:

Հարկային օրենքների փոփոխության կամ նորերի ընդունման դեպքերում անհրաժեշտ է կցել նաև դրանց արդյունքում ստացվելիք տնտեսական արդյունքը (էֆեկտը), հակառակ դեպքում (ինչպես եղել է քառորդ դար) կտիրի անպատասխանատվության մթնոլորտ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ջարմանալ կարելի է, թե անկախացման տարիներին ՀՀ հարկային օրենքներում որքան լրացումներ ու փոփոխություններ են կատարվել: Եթե դրանք բոլորը նոր գաղափարներ են եղել և արդարացված, ապա ինչո՞ւ դրանց հեղինակները չեն ներկայացվել պետական բարձր պարգևների, իսկ եթե ոչ, ապա պետք է հետևություններ անել:

Անուղղակի հարկերի հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը՝ ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառության¹ նկատմամբ 20 տոկոս դրույքաչափ կիրառելով: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով:

Հարկ է նշել, որ օրենսդրական մակարդակով ԱԱՀ-ով չեն հարկվում, այսինքն՝ հարկման օբյեկտ չեն համարվում այնպիսի գործարքներ ու շրջանառություններ, ինչպիսիք են².

ա) պետական տուրքի գումարը.

բ) ՀՀ կառավարության որոշումների հիման վրա հարկ վճարողների կողմից ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները, իսկ մասնակի հատուցմամբ գործարքների իրականացման դեպքում՝ սահմանված կարգով որոշվող հարկվող շրջանառության և ստացված հատուցման տարբերությունը.

գ) ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը.

դ) ՀՀ մշտական բնակության մեկնող քաղաքացիների անձնական գույքի ներմուծումը և այլն:

Ավելին, ԱԱՀ-ի գումարի մեծության հաշվարկմանը չեն մասնակցում նաև ԱԱՀ-ի գծով սահմանված արտոնությունները՝ հանձինս հարկից ազատման և զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների: Առաջին դեպքում այն պատճառով, որ ԱԱՀ-ից ազատումը հենց հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է, իսկ երկրորդ դեպքում այն պատճառով, որ ցանկացած ծավալի շրջանառություն, երբ բազմապատկվում է զրո հարկադրույքով, արդյունքում ստացվում է զրո մեծության հարկ:

ԱԱՀ-ի գումարի հաշվարկմանը (բացի վերը նշված արտոնություններից՝ ԱԱՀ-ով չհարկում, հարկից ազատում և զրոյական դրույքաչափով հարկում) չեն

¹ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, հոդ. 8:

² Նույն տեղում, հոդ. 7:

մասնակցում նաև¹. ա) այն իրավաբանական անձինք ու անհատ ձեռնարկատերերը, որոնք համարվում են պարզեցված հարկ և հաստատագրված վճար վճարողներ, կամ որոնց գործարքների հասույթի ծավալը չի գերազանցել 3.0 մլն դրամը, բ) ֆիզիկական անձանց պատկանող բնակելի շինության օտարման գործարքները և այլն:

Վերը նշված օրենսդրական հիմքերով ու մեթոդաբանությամբ է հաշվարկվում ԱԱՀ-ի մեծությունը: Սակայն ԱԱՀ-ի հաշվարկված մեծությունը ամբողջությամբ բյուջե չի վճարվում: Պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի մեծությունը, վերը նշված մոտեցումներով, հարկվող գործարքների (գործառույթների)՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և որոշակի նվազեցումների ու պակասեցումների տարբերությունն է: Այդ պակասեցումներին կամ նվազեցումներին վերաբերում են².

ա) հանրապետության տարածքում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց դիմաց բանկային փոխանցմամբ կատարվել է վճարում՝ բացառությամբ սահմանված դեպքերի,

բ) հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար մաքսային մարմինների կողմից գանձված (գանձման ենթակա) ԱԱՀ-ի գումարները և այլն:

Ի դեպ, մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները չի թույլատրվում հաշվանցել կամ պակասեցնել այն դեպքերում, երբ ա) հարկատուն ԱԱՀ վճարող չէ, բ) գործարքները լինում են ԱԱՀ-ից ազատված ու չհարկվող (հարկման օբյեկտ չհամարվող), գ) հարկատուն շրջանառելի բազմակի օգտագործման տարան ձեռք է բերում անմիջական արտադրողից կամ անմիջական ներմուծողից, դ) հարկատուն աշխատում է հաստատագրված վճարով և այլն, որոնց դեպքում հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները միացվում են ապրանքի ձեռքբերման գնին կամ շրջանառության ծախքերին, բացառությամբ ապրանքների արտահանման դեպքի³:

Վերը նշված մոտեցումներով հաշվարկված և հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարների դրական տարբերությունը հաշվարկվում է⁴ վճարողների կողմից հետագա հաշվետու ժամանակաշրջաններ ՀՀ տարածքում ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվին՝ բացառությամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով

¹ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, հոդ. 7:

² Նույն տեղում, հոդ. 23:

³ Նույն տեղում, հոդ. 26:

⁴ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, հոդ. 25:

հարկվող գործարքներին (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանման գործարքների) վերաբերող ձեռքբերումների գծով մատակարարների հարկային հաշիվներում և ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարների, որոնք հաշվանցվում են հարկ վճարողների այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերջիններիս բացակայության պայմաններում վերադարձվում են վճարողներին (երբ առկա է լինում ԱԱՀ-ի դեբետային մնացորդ) այն չափով, որը չի գերազանցում հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության 20 %-ը:

Մնացած բոլոր դեպքերում հաշվարկված ու հաշվանցված ԱԱՀ-ի գումարների դրական տարբերությունը այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար հարկ վճարողները հարկային մարմիններին են ներկայացնում ՀՀ կառավարության սահմանած փաստաթղթերը, իսկ գումարը կարող է վերադարձվել դիմումը ներկայացնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, և այն էլ միայն պետական բյուջեում ԱԱՀ-ի գծով առկա մուտքերի հաշվին:

Հաշվարկված և հաշվանցված ԱԱՀ-ի գումարների դրական տարբերությունը չի վերադարձվում (բացառությամբ այն գումարների, որոնք ուղղակիորեն վերագրվում են ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին) և դուրս է գրվում շահույթի (եկամտի) հաշվին այն դեպքերում, երբ անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման դեպքում ձեռնարկատիրական գործունեության օբյեկտների մնացորդների մասով (այդ թվում՝ ապրանքների, արտադրանքի, մտավոր սեփականության օբյեկտների), այլ գույքային իրավունքների գծով ձեռքբերումների դիմաց վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) և մինչև գործունեության դադարեցումը հաշվանցված ԱԱՀ-ի գումարների չափով առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն¹:

Բացի «Հարկերի մասին» ՀՀ օրենքից, տուգանքներ սահմանված են նաև «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքով՝ ստորև բերված չափերով ու հանգամանքներում.

1) սահմանված կարգի խախտումով հարկային հաշիվների լրացման համար վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ փաստաթղթերում հաշվարկված ԱԱՀ-ի տասը տոկոսի չափով:

2) ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը թաքցնելու կամ պակաս ցույց տալու, ինչպես նաև նախատեսված կարգի խախտումով ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարները պակասեցնելու (հաշվանցելու) հետևանքով բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով: Այդ տուգանքը կիրառվում է նաև այն դեպքում (անկախ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու հանգաման-

¹ Նույն տեղում, հոդ. 25, 40:

քից), երբ հարկային տեսչության մարմինների կողմից կատարվող ստուգման արդյունքում բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար չի առաջանում՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցելու հետևանքով՝ պակաս հաշվարկված կամ ավել հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարների նկատմամբ:

3) Սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ապրանքների մատակարարման կամ ձեռքբերման և ծառայությունների մատուցման կամ ստացման գծով ԱԱՀ-ի գումարները չներառելու (չներկայացնելու) դեպքում տեղեկություններ¹ ներկայացնող անձը վճարում է տուգանք՝ սխալ ներկայացված յուրաքանչյուր տեղեկության (հարկային հաշվի) համար 5.000 դրամի չափով:

Օրենսդրությամբ սահմանված կարգով առոչինչ և անվավեր ճանաչվող գործարքների, ավելացված արժեքի հարկից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող գործարքների հաստատագրված վճարով հարկվող կամ պարզեցված հարկով հարկվող գործունեությանը վերաբերող գործարքների գծով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման: Այդպիսի հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի հաշվանցված գումարները ենթակա են վերաձևակերպման: Ընդ որում՝ հաստատագրված վճարով կամ պարզեցված հարկով հարկվող գործունեությանը վերաբերող հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից պակասեցման) այն հաշվետու ժամանակաշրջանում, որում պարզվել կամ արձանագրվել է դրանց հաշվանցման անթույլատրելիությունը:

Անապրանք փաստաթղթերի օգտագործման միջոցով, ինչպես նաև ավելացված արժեքի հարկից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող, օրենսդրությամբ սահմանված կարգով առոչինչ և անվավեր ճանաչվող գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման այն հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով, որում իրականացվել են այդ գործարքները (կատարվել է հաշվանցում):

Հաշվանցված ԱԱՀ-ի գումարների սահմանված կարգով չձևակերպելը (չպակասեցնելը) դիտվում է որպես օրենքով նախատեսված կարգի խախտումով ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարների հաշվանցում (պակասեցում):

Ակցիզային հարկի հարկային պարտավորությունների հաշվարկման օրենս-

¹ Հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառման ենթակա՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք չեն արտացոլվել ներկայացված տեղեկություններում, կամ որոնց վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, ենթակա չեն հաշվանցման այդ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն կարող են հաշվանցվել այդ տեղեկությունները ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանում, եթե այդ տեղեկությունները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներին:

դրական և մեթոդաբանական հիմքերը. ակցիզային հարկի գծով հարկային պարտավորությունները ներառում են.

- ա) ակցիզային հարկի գումարը,
- բ) «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տույժերն ու տուգանքները,
- գ) «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները:

Աղյուսակ 2

Ակցիզային հարկի դրույքաչափը ¹

<i>Ծածկագիրն ըստ USԳ-ի</i>	<i>Ապրանքային անվանումը</i>	<i>Հարկման բազայի միավորը</i>	<i>Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)</i>
2203	Գարեջուր	1 լիտր	70
2204	Խաղողի և այլ գինիներ, գինենյութ	բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամ
2205	Վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ	1 լիտր	500
2206	Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք)	1 լիտր	180
2207	Էթիլային սպիրտ	1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	600

Ակցիզային հարկը ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների՝ գարեջրի, խաղողի և այլ գինիների, գինենյութի, սպիրտի և սպիրտային խմիչքների, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչների, սիգարետների, սիգարելաների և սիգարետների՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչով, բենզինի, հում նավթի և նավթամթերքների, դիզելային վառելիքի, նավթային գազերի և գազանման այլ ածխածինների (բացառությամբ բնական գազի) ներմուծման կամ ՀՀ տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար սահմանված կարգով հարկվող և պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

¹ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 176-177:

Այն հաշվարկվում է ակցիզային հարկի ստորն բերված հարկման բազայի նկատմամբ՝ սահմանված դրույքաչափերով և կարգով:

Ընդ որում՝ 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքատեսակների համար սպիրտայնության 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսային կետի համար հարկի դրույքաչափն ավելացվում է 7.5 դրամով, իսկ մինչև 9 տոկոս սպիրտայնություն պարունակող խմիչքների համար սահմանվում է յուրաքանչյուր լիտրի համար 100 դրամ:

Նշենք նաև, որ ծխախոտի արտադրանքի և ներմուծվող դիզելային վառելիքի ու բենզինի ակցիզային հարկը հաշվարկվում է այլ մոտեցումներով:

Ակցիզային հարկով հարկվող ապրանքների գծով սահմանված են հարկային արտոնություններ՝ ակցիզային հարկով չհարկելու միջոցով, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հարկի հաշվարկման ժամանակ:

Ակցիզային հարկի հաշվարկման ժամանակ, վերոնշյալ հարկային արտոնությունների հաշվառումից բացի, հարկի գանձման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել¹, որ

1) Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից Հայաստանի Հանրապետությունում բանկային վճարմամբ ձեռք բերված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարը

ա) ենթակա է վերադարձման այդ հումքից պատրաստված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանման դեպքում.

բ) պակասեցվում է դրանց համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանում վճարման ենթակա ակցիզային հարկի ընդհանուր գումարից՝ բացառությամբ ստորև 2-րդ կետում նշված դեպքի:

2) Հայաստանի Հանրապետությունում բանկային վճարմամբ ձեռք բերված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարի՝ այդ հումքից պատրաստված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարը գերազանցող մասը հաշվանցման կամ վերադարձման ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից:

3) Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարը՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարը գերազանցելու դեպքում գերազանցող

¹ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 180-181:

մասը, բացառությամբ առանձին դեպքերի, հաշվանցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջաններում վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների հաշվին:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են տուգանքներ՝ ստորև բերված դեպքերով ու չափերով¹.

1) ակցիզային հարկով հարկվող օբյեկտը կամ հարկման բազան թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար հարկ վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ակցիզային հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի չափով:

2) Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում գանձվում է տուգանք՝ 200 հազար դրամի չափով:

¹ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 182-183:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (2019 Թ.)

Վլադիմիր Հարությունյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

2019 թվականի փետրվարի 8-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության 5-ամյա ծրագիրը, որի գաղափարական հիմքը «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիրն է:

Կառավարությունը վճռական է «Իմ քայլը» խորհրդարանական խմբակցության, խորհրդարանական այլ ուժերի, քաղաքացիական հասարակության, հանրության հետ համագործակցության և երկխոսության միջոցով Հայաստանի Հանրապետությունում իրականացնել տնտեսական հեղափոխություն¹:

Տնտեսական հեղափոխության հիմնախնդիրները և իրականացման մոտեցումները բոլոր ժամանակներում ու երկրներում եղել և շարունակում են մնալ տնտեսագետների, փիլիսոփաների և այլ մասնագետների, քաղաքական ու հասարակական գործիչների, ինչպես նաև հասարակության անդամների զգալի մասի ուշադրության կենտրոնում, քանի որ տնտեսական հեղափոխության դրսևորումները բազմաշերտ են ու շոշափում են հասարակության յուրաքանչյուր անդամի շահերը, որոնց ընկալումները տնտեսագետների, փիլիսոփաների, քաղաքական ու հասարակական գործիչների, աղքատների ու հարուստների մոտ տարբեր են: Մեր կարծիքով՝ տնտեսական հեղափոխության իրականացման ուղենիշերը կարող են լինել բազմակողմ, որոնցից ստորև ներկայացվում է ֆինանսականը:

Ստորև ներկայացնում ենք տնտեսական վերելքը պայմանավորող ֆինանսական և հատկապես հարկային համակարգի կատարելագործման գործնական և հայեցակարգային հիմնուղիները ՀՀ-ում:

Առաջնային խնդիր ենք դիտում.

1.

- մինչև 30 %-ի հասցնել հարկեր/ՀՆԱ տոկոսային հարաբերակցության ցուցանիշը և այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ:
 - հրաժարվել հարկային օրենսդրությունում հաճախակի ու մասնակի փոփոխություններ կատարելու պրակտիկայից և կատարել այնպիսի փոփոխությունները, որոնք կնպաստեն.
- ա) անուղղակի և ուղղակի հարկերի հարաբերակցության փոփոխմանը՝ հոգուտ երկրորդի, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների և ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա, որի գերակշռող մասը ազգաբնակչությունն է,

¹ ՀՀ կառավարության ծրագիր, Հայաստանի Հանրապետություն, փետրվար, 2019, 73 էջ:

- բ) պրոգրեսիվ հարկման մոտեցումների գործնականում կիրառմանը, մոտեցումներ, որոնք իրենց կիրառությունն են ստացել զարգացած երկրներում,
- գ) միասնական հարկի ձևավորման և գործնականում ճիշտ մոտեցումների արմատավորմանը, բայց ոչ այնպես, ինչպես կատարվել է «պարզեցված հարկի» և «հաստատագրված վճարների» պարագայում, որոնցում դրված մոտեցումները չեն բխում հարկման արտերկրյա փորձից և հարկման տեսություններից¹.

- Հարկային օրենսդրությունում, այնուամենայնիվ, փոփոխություններ կատարելու դեպքերում անհրաժեշտ ենք համարում օրենսդրական փոփոխությունը՝ որպես հիմնավորում կցելով նաև տնտեսական արդյունքի (էֆեկտի) հաշվարկը, որը՝

- ա) պարզ ու հասկանալի կդարձնի օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը և նրա քննարկումներն ԱԺ-ում և կառավարությունում,

- բ) հարկային ծառայությունում կնվազեցնի փոփոխություններ կատարելու չարդարացված պրակտիկան:

- Հրաժարվել հաստատագրված վճարներից և վերադառնալ հանրապետությունում հարկային տարածքի միասնականացմանը, քանի որ հաստատագրված վճարների պարագայում հարկման հիմքում ընկած է ոչ թե եկամուտը, այլ գործունեության տեսակը: Մանավանդ որ հաստատագրված վճարների հարկման բազան կառուցված է տնտեսագիտական հիմնավորում չունեցող ելակետային սվյալների վրա, որոնց ճշտության վերահսկման արդյունավետությունը բավականին ցածր է, և վերջին հաշվով՝ նվազեցված են բյուջեի եկամուտները²:

- Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ների զարգացման համար անհրաժեշտ ենք համարում քննական վերլուծության ենթարկել ՓՄՁ-ների դասակարգման մոտեցումները և ներկայացնել նոր մոտեցումներ դրանց վերանայման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև որդեգրել նոր մոտեցումներ ՓՄՁ-ների գործունեությունը խթանող հարկային և վարկային խթանների վերաբերյալ:

- Վեր հանել հարկման սկզբունքների կիրառման ժամանակակից մոտեցումները, քանի որ «ինչպես պետք է հարկել» հավերժական հարցի պատասխանի վերաբերյալ մինչև օրս եղած տեսական ընկալումներն ու մոտեցումները, որոնք իրենց ձևակերպումներն են ստացել հարկման արդարության, արդյունավետության ու համընդհանրության սկզբունքներում, եղել և շարունակում են մնալ տարբեր: Դա բնական է ու տրամաբանական, քանի որ մարդկանց ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, մասնագիտությունը, սոցիալ-հոգեբանական վիճակը և այլն ձևափոխում և կերպարանափոխում են մարդկանց ընկալումները և մոտեցումները: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև քննարկվող հարցին: Ուստի հարկման սկզբունքների ժամանակակից չափորոշիչների ընտրությունը պետք է կատարել՝ հիմք ընդունելով ներկա իրողությունները, չմոռա-

¹ Հարությունյան Վ. և ուրիշներ, «Հարկեր և հարկազանձում», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 600 էջ, էջ 103:

² Հարությունյան Վ. Լ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Զանգակ-97», 192 էջ, էջ 165:

նալով, որ տարբեր երկրներում ու տարբեր ժողովուրդների մոտ դրանք տարբեր են: Եվ բնավ էլ պետք չէ ու ճիշտ չէ ներկան կառուցել՝ հիմք ընդունելով անցյալը, որքան էլ դրանք իրենց ժամանակին լինեին առաջադիմական մոտեցումներ:

2.

- Այդ ընթացքում տնտեսագիտական միտքը հարստացել է նոր մոտեցումներով, առաջադրել նոր սկզբունքներ տեղին, ժամանակին, երկրի առանձնահատկություններին համապատասխան:

- Ժողովրդավարացման ուղին բռնած բոլոր երկրներում հարկերը սահմանվում են օրենսդիր մարմնի կողմից: Դա նշանակում է, որ կառավարություններն ու երկրների ղեկավարների խոստումները կարող են արդարացված լինել, եթե օրենսդիր մարմնում ունենան ժողովրդի ընտրյալների մեծամասնության աջակցությունը:

Արդարացի ու արդյունավետ հարկազանձում իրականացնելու համար, ժողովրդի ընտրյալների մեծամասնության աջակցությունից բացի, շահագրգիռ կողմերից՝ երկրի առաջնորդից ու կառավարությունից պահանջվում է ձևավորել նաև ոչ միայն պրոֆեսիոնալ կամ արհեստավարժ, այլև երկրի ժողովրդի մեծամասնության (կամ, որ նույնն է ասել, պետության) շահերի պաշտպանությամբ մտահոգված մեծամասնություն:

- Ժողովրդավարության ուղին բռնած երկրների գործադիր մարմինները, որպես կանոն, ձևավորվում են առավելապես ոչ թե պրոֆեսիոնալիզմի, այլ քաղաքական հենքով, որը քաղաքական ժամանակակից համակարգի բացասական դրսևորումներից է և վնասում է երկրների տնտեսական վերելքին ու հետագա զարգացմանը:

Ընդհանուր առմամբ օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորման գործընթացի ապաքաղաքականացման ակտիվացումը կամ քաղաքականացման նվազեցումը լուրջ խթան կարող են դառնալ տնտեսագիտորեն հիմնավորված ու արդարացված, ինչպես նաև ազգաբնակչության մեծամասնության շահերից բխող հարկային օրենսդրություն ունենալու համար: Հակառակ դեպքում հարկային օրենսդրությունում շարունակական բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն կզգացվի (ինչպես ներկայումս է), իսկ հարկահավաքները, 19-րդ դարի ռուս հայտնի գրող Նիկոլայ Նեկրասովի պատկերավոր արտահայտությամբ, հանդես կգան «Ագահ ու ոչ ոքի հետ չկիսվող հարկահավաքի տեսքով»¹:

- Ժամանակակից պայմաններում դժվարացել է հատկապես եկամուտների ամբողջական հաշվառման նկատմամբ արդյունավետ վերահսկողության և արդարացի հարկազանձման իրականացումը, որի պատճառով անցումային տնտեսությամբ երկրներում հարկային բեռն ինչպես օրենսդրորեն, այնպես էլ գործնականում տեղափոխված է անուղղակի հարկերի վրա, քանի որ.

ա) այդպիսի հարկերի գանձումն աննկատելի է դառնում ժողովրդի համար և ներառվում է ապրանքի գնի մեջ ու մարդկանց ընկալումներում դիտարկվում

¹ Налоги. Люди. Время... или этот безграничный мир налогов, Под. ред. А.В.Брызгалина. Екб.; изд.-во «Налоги и финансовое право», 2008, 576 стр., էջ 436.

որպես ապրանքի գնի բաղադրիչ և ոչ որպես հարկ,

բ) անուղղակի հարկ վճարողը երբեք վաճառողը չի լինում, այն ամբողջությամբ վճարում է գնորդը:

Մինչդեռ հարկային եկամուտների գերակշիռ մասն անհրաժեշտ է ձևավորել ուղղակի հարկերից՝ իրականացնելով արդյունավետ հարկային վարչարարություն և ձևավորելով ուղղակի հարկերի գանձման գերակայությունն ապահովող հարկային օրենսդրություն: Այդ հիմնախնդրի լուծումը բխում է հենց հարկման արդարության սկզբունքի պահանջներից, քանի որ, որպես կանոն, հարկումը պետք է կատարվի հարկատուի մաքուր եկամտից: Ուստի անհրաժեշտ է շահութահարկի հաշվարկման մեխանիզմներում տեղադրել գիտականորեն հիմնավորված ու տրամաբանված մոտեցումներ, որոնք պետք է վերաբերեն ոչ միայն հարկվող շահույթի հաշվարկմանը (որն անվանվում է հարկվող օբյեկտ), այլև դրա նկատմամբ կիրառվող տոկոսադրույքներին: Արդարացված չի կարող համարվել հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումների անտեսման պայմաններում հարկադրույքների համեմատությունների հիման վրա հարկային բեռի մասին դատողություններ անելը: Դա մեխանիկական մոտեցում է, իսկ մասնագիտական առումով՝ նաև անպտուղ: Ուստի չի կարելի համաձայնվել այն տնտեսագետների¹ հետ, ովքեր ամերիկացի տնտեսագետ Ա. Լաֆերի կողմից կառուցված հարկման պրոգրեսիվության և բյուջեի հարկային եկամուտների կախվածության պարաբոլից (որը տնտեսագիտության մեջ հայտնի է «Լաֆերի կոր» անվանմամբ) բխեցված առանձին եզրակացություններ փորձում են տարածել այլ երկրների վրա: Խոսքը մասնավորապես վերաբերում է Ա. Լաֆերի այն եզրահանգմանը, որի համաձայն՝ բյուջեի հարկային վճարումների դրույքաչափը պետք է կազմի 30 %, որի սահմաններում մեծանում են բյուջեի մուտքերը, 40-50 % դրույքաչափի պայմաններում այդ աճը մի փոքր դանդաղում է, իսկ երբ հարկադրույքը գերազանցում է այդ չափը, որն անվանվել է «արգելված գոտի», ապա նկատվում է բնակչության խնայողությունների, տնտեսության մեջ ներդրումների և հարկային մուտքերի կտրուկ նվազում: Դրա արդյունքում Ա. Լաֆերը բյուջեի եկամուտների ավելացման ու տնտեսության զարգացման ճիշտ ուղի է համարում հարկադրույքների իջեցմամբ հարկման բազայի ընդլայնումը, որը և այլ ուրիշ հայեցակարգային մոտեցումներ մեծ դեր խաղացին ԱՄՆ-ի տնտեսության զարգացման գործում այդ երկրի 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեյգանի օրոք:

Դա պետք է բացատրել այն փաստով, որ Ա. Լաֆերը վերոհիշյալ պարաբոլը կառուցել է ամերիկյան տնտեսության իրողությունների և ԱՄՆ-ում գործող հարկային օրենսդրության հաշվառմամբ: Բնականաբար վերլուծությունների և ուսումնասիրության արդյունքում ստացված եզրակացություններն առավել օգտակար կարող են լինել նույնատիպ տնտեսություն ու նմանվող հարկային օրենսդրություն ունեցող երկրների համար: Հարկ է նշել նաև, որ հարկային բեռը շահութահարկի գծով առավել շատ կախվածության մեջ է գտնվում ոչ թե դրույ-

¹ Кравченко Л.А., «Налоговые реформы 80-х годов в США (Социально-экономические аспекты)», М., «НИФИ», 1989, стр. 9, Пепеляев С. Г., «Законы о налогах: элементы структуры», М., СВЕА, 1995, 345 с., стр. 37.

քաչափից, այլ հարկվող շահույթի (այն համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է) հաշվարկման մեխանիզմներից ու դրան մասնակից բաղադրիչներից:

- Անհրաժեշտ է բացահայտել ՀՀ-ում հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական ու մեթոդաբանական թերություններն ու բացթողումները և կատարել առաջարկություններ դրանց վերացման ուղիների վերաբերյալ: Խոսքը վերաբերում է ՀՀ-ում գործող բոլոր հարկատեսակներին:

- Կարևոր նշանակություն ունի նաև ՀՀ հարկային և մաքսային ծառայողների կերպարի արմատական վերափոխումը, որը պետք է դիտարկել երկու տեսանկյունից՝

1. մասնագիտական հմտությունների և գիտելիքների կատարելագործում.

2. վարքագծի կանոնների պահպանում:

Մասնագիտական գիտելիքների կատարելագործման հիմնական ձևը վերապատրաստումն է: Անձնակազմի վերապատրաստումը հենց ուղղակի մեկնագամյա վերապատրաստումը չէ, այլ պլանավորված շարունակական մասնագիտական ուսուցում գիտելիքների արդիականացման և իրազեկման, հմտությունների զարգացման միջոցով, որը հարկային ծառայողների առջև դրված խնդիրների իրագործման հիմնական պայմանն է: Շատ դեպքերում հանրային ոլորտում վերապատրաստումների միջոցառումը սահմանվում է բյուջեով և կանոնակարգվում համապատասխան օրենքներով (Ներքին առևտրի, Հարկային և մաքսային ծառայությունների մասին օրենքները): Ամբողջ աշխարհում ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածի առաջատար կազմակերպությունները մեծ ներդրումներ են կատարում անձնակազմի մասնագիտական զարգացման ոլորտում: Հարկային և մաքսային ծառայողի մասնագիտական գործունեությունը ենթադրում է մի շարք մասնագիտությունների գծով հաշվապահական հաշվառում, հարկային համակարգ, իրավագիտություն և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայություն:

Ընդհանուր նպատակների իրականացման բարձր արդյունավետության ապահովման նպատակով գիտելիքներից զատ անհրաժեշտ է նաև հաղորդակցման, թիմային աշխատանքում ինտեգրվելու ունակություն: Ժամանակի մարտահրավերները մշտապես փոփոխում են հարկային համակարգի առջև դրված խնդիրները, համապատասխանաբար փոփոխվում են նաև ծառայողի մասնագիտական ունակությունների նկատմամբ պահանջները, հետևաբար վերապատրաստումները պետք է կրեն շարունակական բնույթ: Հարկային և մաքսային համակարգի կադրային քաղաքականությունը միտված է հետևյալ երեք ուղղություններով՝ նոր մասնագետների պատրաստում, որոշակի փորձ ունեցող ծառայողների շարունակական վերապատրաստում, կարիերայի աճի հնարավորությունների ընձեռում: Հարկային և մաքսային ծառայողների վարվելակերպի բարելավման նպատակով պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն վերապատրաստման կարիքներն ըստ ոլորտների, պաշտոնների, սահմանվեն երկարաժամկետ գերակայությունները: Հետևաբար հարկային և մաքսային ծառայողների

վերապատրաստումն անհրաժեշտ է կազմակերպել ինչպես կրթական հաստատությունների, այնպես էլ պետական մարմիններին կից գործող մասնագիտական վերապատրաստման կառույցների միջոցով՝ ապահովելով սերտ կապ առաջարկ ձևավորողների և պահանջարկ թելադրող կառույցների միջև:

Վարքագծի կանոնների սահմանման նպատակն է ուղղորդել հարկային ծառայողին իր վարվելակերպում:

Հարկային և մաքսային ծառայողը պարտավոր է՝

- ցուցաբերել անմնացորդ հավատարմություն ու նվիրվածություն իր երկրին և աշխատանքին,
- գերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են պետական մարմնի աշխատանքները խոչընդոտել կամ վարկաբեկել և հեղինակագրկել,
- ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով,
- հարգել մարդու արժանապատվությունը,
- լինել անաչառ, անկողմնակալ, գուսպ, անկախ և օրինակելի,
- անհարկի չընդգծել իր պաշտոնեական դիրքը,
- լինել հավասարակշռված, կարգապահ, ճշտախոս,
- լինել քաղաքավարի հարկատուների, գործընկերների, ենթակա անձանց և ղեկավարության հետ,
- խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից, միջնորդությունից, աջակցությունից, որոնց արդյունքում կարող է խոչընդոտվել հարկային օրենսդրության պահանջների կատարումը, ծառայության ընթացքում օգտագործել միայն բարոյական միջոցներ՝ նպատակին հասնելու համար,
- իրենց վարքով կախվածության մեջ չընկնել որևէ անձից և լինել անկախ,
- մաքսային ծառայության անվտանգ գործունեությունն ապահովելու նպատակով անվերապահորեն պահպանել ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը¹:

Հարկային ծառայողի անմիջական ղեկավարը, հետևելով մասնագիտական վարքագծի կանոններին, հնարավորության սահմաններում միջոցներ է ձեռնարկում, որպեսզի իր ենթակա աշխատողները ևս պահպանեն այդ կանոնները: Դրանց խախտման և ոչ պատշաճ կատարման դեպքում պետք է կիրառվեն համապատասխան պատժամիջոցներ:

• Խնդիրները հնարավոր է իրականացնել հարկային վարչարարության մշտապես կատարելագործման և օպտիմալ կազմակերպչական կառուցվածքի ներդրման միջոցով: Կազմակերպչական կառուցվածքի ընդունված չորս տեսակներից առավել մեծ կիրառություն ունի ըստ գործառնությունների սկզբունքի կազմակերպչական կառուցվածքի կիրառումը: Սակայն շատ դեպքերում կազմակերպչական կառուցվածքում սահմանված նորմատիվային և օպերատիվ գործառնությունները կանոնակարգող ստորաբաժանումներին զուգահեռ ներառվում են անուղղակի հարկատեսակների հաշվառման և վերահսկողության ստորա-

¹ www.taxservice.am, www.costoms.am

բաժանումներ, ինչպես նաև առանձնացվում է խոշոր հարկատուների գործունեությունը վերահսկող հարկային ստորաբաժանումը: Հարկային համակարգի օպտիմալ կազմակերպչական կառուցվածքն ապահովում է հարկային համակարգի օրենսդրության կիրարկման ու հսկողության ամուր հիմքը:

Անկախության տարիներին Հայաստանում հարկային քաղաքականության և վարչարարության բարելավման դիտակետում մշտապես եղել են հարկային հսկողության մեխանիզմների և տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացումը, հարկ վճարողների սպասարկման ծառայությունների ընդլայնումը, մաքսային գործընթացների կատարելագործումը, հարկային ու մաքսային համակարգի կազմակերպչական կառուցվածքների օպտիմալացումը: Մասնավորապես՝ մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով ներդրվել են էլեկտրոնային հաշվետվությունների համակարգ, հարկ վճարողների գրանցման պարզեցված ընթացակարգ, հեռախոսագանգերի ու հարկ վճարողների սպասարկման կենտրոններ և այլն: Սակայն վերը թվարկված բարեփոխումներին զուգահեռ՝ հարկային և մաքսային համակարգերի արդյունավետության բարձրացման տեսանկյունից առանձնակի կարևորվում է հարկային ու մաքսային օրենսդրության, պետական եկամուտների քաղաքականության և ռիսկերի գնահատման համակարգերի, կազմակերպչական կառուցվածքների կատարելագործումը:

Պետությունը քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտն է, իսկ պետականության ձևը՝ կառավարման, պետական կառուցվածքի ձևի և քաղաքական վարչակարգի ամբողջությունը: Ըստ սահմանադրական իրավունքի՝ պետությունները լինում են ունիտար և դաշնային: Ունիտար պետությունները, որպես կանոն, ձևավորվում են մոնոէթնիկ տարածքների վրա, որտեղ գործում են մեկ սահմանադրություն և օրենսդրություն, միասնական օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների մարմիններ: Ունիտար պետությունները տարանջատվում են կենտրոնացված և ապակենտրոնացված պետությունների: Կենտրոնացված ունիտար պետության օրինակ է Հայաստանի Հանրապետությունը, իսկ ապակենտրոնացվածի՝ Ֆրանսիան, Վրաստանը և այլն: Ունիտար պետություններում հարկային և մաքսային համակարգը կառավարվում է մեկ կենտրոնից, միասնական օրենսդրությամբ, ինչպես, օրինակ, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, շատ դեպքերում գործում է համապետական հարկային օրենսգիրքը: 2016 թվականին Հայաստանը ևս ընդունել է հարկային օրենսգիրք, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի մեկից:

Ֆեդերատիվ պետությունը, ի տարբերություն ունիտարի, ունի իշխանության բարձրագույն մարմինների երկու մակարդակ: Ֆեդերացիայի սուբյեկտներն իրավունք ունեն ընդունել ու տարածաշրջանային օրենքներ: Այդպիսի պետությունների, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Ավստրալիան, Շվեդիան, հարկային համակարգը կազմված է մի քանի մակարդակներից՝ կենտրոնական և տարածաշրջանային (նահանգներ, մարզեր և այլն): Հարկային համակարգի միասնականության հիմքը բոլորի կողմից կիրառվող միասնական օրենսդրությունն է:

Պետական կառավարման համակարգում հարկային և մաքսային մարմինները կարող են գործել որպես.

- միասնական կիսահինքնավար մարմին, որը կազմակերպական կառուցվածքի այնպիսի տեսակ է, որում բոլոր գործառնությունները կենտրոնացված են մեկ մարմնում, իսկ ղեկավարը, որպես կանոն, հաշվետու է ֆինանսների նախարարին: Կազմակերպական կառուցվածքի այս տեսակը ընտրել են Ավստրալիան, Դանիան, Ճապոնիան, Իռլանդիան: Հատկապես Ճապոնիայում հարկային վարչարարության գործառնություն իրականացնում է ֆինանսների նախարարության ենթակայությամբ գործող ազգային հարկային գործակալությունը, որը ներառում է կենտրոնական ապարատ, 11 տարածքային մարմիններ և 524 տարածքային տեսչություններ¹:

- Միասնական կիսահինքնավար մարմին, որը հաշվետու է կառավարման խորհրդին: Խորհրդի կազմ ներառվում են ինչպես օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ, այնպես էլ հարկային խորհրդատուներ, իրավաբաններ, որակավորված հաշվապահներ: Կառավարման խորհրդի լիազորություններն ընդգրկում են լրացուցիչ վերահսկողություն, հարկային և մաքսային մարմնի գործունեության արդյունավետության գնահատում, հետագա ռազմավարության մշակում: Խորհուրդը անմիջականորեն հաշվետու է վերադաս մարմնի ղեկավարին, հիմնականում ֆինանսների նախարարին: Հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքի այս տեսակը ընտրել են ԱՄՆ-ը, Կանադան, Մեծ Բրիտանիան:

- Միասնական հարկային ստորաբաժանում (ծառայություն), որը գործում է ֆինանսների նախարարության ենթակայության ներքո: Հարկային վարչարարության գործառնություն իրականացնում է հարկային ծառայության ստորաբաժանումը, իսկ մյուս վարչակառավարչական գործառնությունները (կադրային քաղաքականություն, նյութատեխնիկական մատակարարում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ֆինանսներ և այլն) իրականացնում են ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումները: Կազմակերպական կառուցվածքի այս մոդելը կիրառվում է Ֆրանսիայում և Շվեյցարիայում:

- Հարկային վարչարարության գործառնությունների բաշխումը տարբեր ստորաբաժանումների միջև: Հարկային համակարգի կառուցվածքը ենթադրում է հարկային վարչարարության գործառնությունների բաշխում մի քանի նախարարությունների միջև, օրինակ՝ Գերմանիայում հարկային վարչարարության գործառնություններն իրականացնում է ֆինանսների նախարարության ենթակայության ներքո գործող ֆեդերալ հարկային ծառայությունը: Բացի այդ, հարկային գործառնությունների որոշ մասը բաշխված է ֆեդերալ կառավարության մյուս կառույցների միջև, օրինակ՝ որոշակի գործառնություններ իրականացնում է ոգելից խմիչքների արտադրության և իրացման վերահսկողության ֆեդերալ ծառայությունը:

¹ Институциональные и организационные характеристики налоговых органов http://studme.org/1115121/29929/ekonomika/institutsionalnye_organizatsionnye_harakteristiki_nalogovyh_organov

Կազմակերպական կառուցվածքի այս մոդելը կիրառվում է Բելգիայում, Հունաստանում, Պորտուգալիայում:

Հարկային և մաքսային մարմինների կարևորագույն խնդիրներից են հարկային համակարգի միջոցով տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի պաշտպանվածության ապահովումը, հարկային օրենսդրության պահանջների կատարման հսկողության իրականացումը, հարկ վճարողների սպասարկման և հարկային հսկողության գործառույթների հավասարաչափ զարգացումը: Այդ կարևորագույն խնդիրները հնարավոր է իրականացնել հարկային վարչարարության մշտապես կատարելագործման միջոցով, որի կարևորագույն մասն են կազմում գործառույթների ճիշտ բաշխումը, արդյունավետ և օպտիմալ կազմակերպչական կառուցվածքի սահմանումը:

Հարկային վարչարարությունը հարկային մարմնի օրենսդրությանը համապատասխան իրականացվող գործողություններն են, որոնք ուղղված են հարկային օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանը:

Հարկային վարչարարության առաքելությունը պետք է ընդգրկի հետևյալ գործառույթները.

1. հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, անհրաժեշտ օգնության և տեղեկատվության տրամադրում,
2. հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպում,
3. հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների ներդրում,
4. մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ներքին հսկողության մեխանիզմների կատարելագործում,
5. հարկային խախտումների կանխարգելում և հարկային պարտավորություններից խուսափողների հայտնաբերում,
6. ստվերային տնտեսության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,
7. հարկային կարգապահության ամրապնդում և այլն:

Հարկային ու մաքսային համակարգն իր առաքելության իրականացման ընթացքում բախվում է գործառույթային, կադրային և կառուցվածքային նշանակության խնդիրների, որոնց լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել գործառույթների օպտիմալացում, արդյունավետ կազմակերպական կառուցվածքի ներդրում, ծառայողների որակավորման բարձրացում:

Ժամանակակից հարկային վարչարարության հիմնախնդիրներից է հարկային և մաքսային համակարգի արդյունավետ կազմակերպական կառուցվածքի ներդրումը: Եվ ինչո՞ւ է հարկային վարչարարության արդյունավետության տեսանկյունից այդքան կարևորվում կազմակերպական համակարգի դերը: Վերջին տարիներին ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածներում մեծ ուշադրություն են դարձնում օպտիմալ կազմակերպական կառուցվածքի ձևավորմանը, քանի որ համակարգերի գործունեության հաշվետվողականությունը, պատասխանատվությունը, թափանցիկությունն ու արդյունավետությունը շատ անգամ պայմանավորված են կազմակերպական կառուցվածքով, օրինակ՝ որ-

քան հզոր և կայացած է օրենսդիր մարմինը, այնքան հսկողության մեխանիզմները կլինեն հասցեավորված և արդյունավետ, այնքան մարմինը ճկունություն կորսնորի ժամանակակից կառավարման խնդիրների լուծման ընթացքում: Կառավարությունը գործառնական արդյունքների կատարելագործման ուղիներ է փնտրում, որպեսզի մեծացնի համակարգի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքն այդ ջանքերի հիմնական բանալին է, հետևաբար այն մշտապես ենթարկվում է կատարելագործման:

Կազմակերպական կառուցվածքը նախագծելիս հաշվի են առնում մի շարք գործոններ, որոնց վերաբերում են՝

- հարկատեսակները՝ ավելացված արժեքի հարկ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ և այլն,
- գործառույթները՝ հարկերի հավաքագրում, հարկ վճարողների սպասարկում, վերահսկողություն, աուդիտ և այլն,
- հարկ վճարողների տեսակները՝ խոշոր, միջին և փոքր հարկատուներ:

Պրակտիկայում կիրառվում են հարկային վարչարարության կազմակերպական կառուցվածքի հետևյալ չորս մոտեցումները.

1. ըստ գործառնական սկզբունքի (principles of a function-based),
2. ըստ մասնագիտացման հարկատեսակների,
3. համակցված,
4. ըստ հարկատուների սեգմենտի¹:

Ըստ գործառնական սկզբունքի՝ կազմակերպչական կառուցվածքի հիմքում դրվում են համընդհանուր սահմանված նորմատիվային և օպերատիվ գործառույթները, որոնք ուղղակիորեն առնչվում են հարկատուներին: Սովորաբար կազմակերպական կառուցվածքի այս տեսակին բնորոշ է ստորաբաժանումների ղեկավարների բարձր կազմակերպվածությունը, որոնք սահմանում են քաղաքականության և ծրագրերի ուղղվածությունը: Կառուցվածքը ներառում է տարբեր կազմակերպական միավորներ, որոնք կառավարվում են կառույցի անմիջական ղեկավարին հաշվետու ծառայողների կողմից:

Հարկային վարչարարության գործառույթները դասակարգվում են.

- նորմատիվային և օպերատիվ,
- հիմնական և օժանդակ:

Նորմատիվային գործառույթները կիրառվում են հարկային վարչարարության առաջնային նպատակի օրենսդրական խնդիրների լուծման և օպերատիվ համակարգի բարձր արդյունավետության ապահովման նպատակով: Անհրաժեշտ մեթոդների և վարչական ընթացակարգերի ներդրմամբ այդ գործառույթներն ապահովում են նորմատիվ ակտերի և հարկային օրենսդրության կիրառվումն ու մեկնաբանումը:

Արդյունավետ օպերատիվ համակարգը հարկային համակարգի հաջորդ կարևորագույն նպատակի՝ նվազագույն ծախսերով առավելագույն հարկային

¹ www.taxservice.am/ATS_Structural_Units.aspx?puid=13&suid=118.

մուտքերի ապահովման համար հիմք է ստեղծում:

Օպերատիվ գործառույթներն ուղղակիորեն առնչվում են հարկերի հավաքագրմանը: Դրանք ներառում են հարկատուների գրանցումն ու հաշվառումը, ընթացիկ հարկային ստուգումներն ու հսկողությունը:

Հարկային համակարգի հիմնական գործառույթները ներառում են հարկատուների գրանցումն ու հաշվառումը, ընթացիկ հարկային վերահսկողությունն ու ստուգումը, որոնց օգնությամբ հարկային մարմինները տիրապետում են գրանցված հարկատուների գործունեությանն առնչվող օպերատիվ տեղեկատվությանը:

Օժանդակ գործառույթները նպաստում են հիմնական գործառույթների կատարմանը: Դրանք են.

- **իրավական գործառույթն** ապահովում է հարկային մարմնի և հարկատուի կողմից նորմատիվ ակտերի ճիշտ կիրառումը,

- **կադրերի** կառավարումը ցանկացած կազմակերպության կարևորագույն գործառույթներից է: Կադրերի կառավարումն իրականացվում է գործատու և ծառայող հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ (աշխատանքային օրենսգիրք, հարկային և մաքսային ծառայությունների մասին օրենքները և այլն): Հարկային համակարգում առաջնահերթությունների շարքում են կադրերի ուսուցումն ու շարունակական վերապատրաստումը:

- **Աուդիտի և ներքին վերահսկողության գործառույթն** իրականացնող ստորաբաժանումը պատասխանատու է կառույցի և նրա միավորների ներքին աուդիտի, հարկային համակարգում առկա ռիսկերի կառավարման գործընթացի գնահատման, վերլուծության և բացահայտված խնդիրների լուծման առաջարկությունների ներկայացման համար: Ընդ որում՝ հարկային համակարգի նպատակների վրա ազդող ռիսկերի բացահայտման նպատակով իրականացնում է հարկային համակարգի ստորաբաժանումների և աշխատակիցների գործունեության գնահատում¹:

- Հարկատուների իրազեկման գործառույթն իր ուրույն տեղն ունի հարկային մշակույթի բարձրացման գործում: Հարկային համակարգում գործող համապատասխան ստորաբաժանումները պատասխանատու են հարկային օրենսդրության վերաբերյալ հարկատուների ժամանակին և պատշաճ իրազեկմանն ու օժանդակմանը:

- Հաշվապահական, ֆինանսական գործառույթներն իրականացնող ստորաբաժանումները ձևավորում և բաշխում են կառույցի ու նրա ենթակա միավորների բյուջեն, վարում են հաշվապահական հաշվառումը և կազմում հաշվետվություններ:

- Տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող գործառույթներ: Հաշվի առնելով հարկային և մաքսային համակարգում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման արդի պահանջները՝ կառույցն աջակցում է համակարգի արդիակա-

¹ Tax Administration in OECD Countries: Comparative Information Series, October, 2004, p. 70. www.oecd.org/ctp/administration/CIS-2004.pdf

նացմանը, իրականացնում է ծրագրավորման աշխատանքներ, համակարգչային տեխնիկայի, տարբեր տեխնոլոգիական ծրագրերի սպասարկում¹:

Հարկային և մաքսային համակարգի չափերից կախված՝ օժանդակ գործառույթները կարող են միավորվել կամ ընդլայնվել:

Ըստ գործառնական սկզբունքի՝ կազմակերպական կառուցվածքի կիրառման արդյունքում հարկային համակարգի գործունեությունը դառնում է առավել մասնագիտացված, վերահսկումը՝ առավել արդյունավետ, հետևաբար բազմաթիվ երկրներում կազմակերպական կառուցվածքի այս տեսակի լայնամասշտաբ կիրառման միտում է նկատվում: Բուլղարիան, Հունգարիան, Հնդկաստանը, Կանադան, Հոլանդիան, Թուրքիան, Ֆինլանդիան և այլ երկրներ հարկային համակարգում կիրառում են գործառնական սկզբունքով կազմակերպական կառուցվածքը:

Կանադայում եկամուտների գործակալության կենտրոնական ապարատում կազմակերպական կառուցվածքը սահմանված է ըստ գործառույթի: Այդ գործառույթների իրականացման նպատակով սահմանվել են բողոքարկման, հարկային արտոնությունների տրամադրման, հաշվառման, ստուգումների, ռիսկերի կառավարման, աուդիտի հարկատուների հետ հարաբերությունների և ապառքների, օրենսդրության վերլուծության ստորաբաժանումները: Այսպիսով, ըստ գործառնական սկզբունքի, կազմակերպական կառուցվածքի հիմքը երկու կարևորագույն սկզբունքներն են.

1. կառուցվածքը ձևավորվում է ըստ սահմանված քաղաքականության/առաքելության, և հսկողությունն իրականացնում են համապատասխան կառույցների ղեկավարները:

2. Քաղաքականությունը պետք է սահմանվի ըստ գործառույթների՝ սպասարկում, գրանցում, տվյալների մշակում, գանձումներ, աուդիտ և այլն: Գործառույթները սահմանելիս հաշվի են առնվում պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները, համընդհանուր ընդունված մոտեցումները՝ նպատակ ունենալով ապահովելու ինչպես համակարգի, այնպես էլ տնտեսության առջև դրված նպատակների կատարումը²:

Ըստ մասնագիտացման՝ կազմակերպական կառուցվածքը ձևավորվել է շատ վաղուց և մինչև վերջերս համարվում էր ամենատարածվածը: Մեծ Բրիտանիայի հարկային վարչարարություն իրականացնող մարմնի կազմակերպչական կառուցվածքը, ըստ հարկերի տեսակի, ձևավորվել է դեռևս 1690 թվականին: ԱՄՆ-ի հարկային համակարգը մինչև 1950 թվականը նույնպես հիմնված է եղել այս սկզբունքի վրա, սակայն 1950-1998 թվականներին անցում կատարվեց գործառնական սկզբունքին, իսկ այնուհետև կազմակերպական կառուցվածքը սահմանվեց ըստ հարկատուների չորս սեգմենտների՝ փոքր բիզնես և անհատ ձեռներեցներ, միջին և խոշոր բիզնես, հարկերից ազատված և պետական միավորներ, աշխատավարձից և ներդրումներից եկամուտներ: Նոր Զելանդիան, Ավստրալիան նույնպես ի սկզբանե հարկային համակարգի կառուցվածքը սահ-

¹ А.В.Аронов, В.А.Кашин. Налоги и налогообложение (Учебное пособие), 2009, стр. 576.

² Maureen Kidd, Revenue Administration: Functionally Organized Tax Administration, June, 2010, p. 15.

մանել են ըստ հարկատեսակների, այնուհետև վերակազմավորվել են ըստ գործառույթների, սակայն նախորդ դարի իննսունականներից կիրառում են ըստ հարկատուների սեզմենտի կազմակերպական կառուցվածքը: Չարգացած երկրներում առավել հաճախ հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքը ձևավորելիս կիրառվում է վերը թվարկված երկու և ավելի կառուցվածքների տեսակների համակցությունը¹: Մասնագիտացման մոտեցման համաձայն՝ հարկային համակարգում բազմաֆունկցիոնալ ստորաբաժանումները սահմանվում են ըստ կիրառվող հարկատեսակների, և դրանք գործում են իրարից անկախ, ինչը կարող է առաջացնել կազմակերպական կառուցվածքի անարդյունավետություն, քանի որ գործառույթների կրկնությունն ուղեկցվում է ծախսերի ավելացմամբ: Հետևաբար այս մոտեցումը կիրառող երկրները հիմնականում իրենց հարկային համակարգերի կազմակերպական կառուցվածքը վերակազմավորում են ըստ գործառնական սկզբունքի և հարկատուների սեզմենտի: Բազմաթիվ երկրներում, ինչպիսիք են՝ Ավստրիա, Բելգիա, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա, հարկային համակարգի ներքին կազմակերպական կառուցվածքը, որպես կանոն, սահմանվում է վերը թվարկված մեթոդների համակցմամբ: Այս կամ այն սկզբունքի գերակշռությունը որոշելը դժվար է, քանզի հարկային համակարգի գործունեության արդյունավետության վրա ազդում են նաև այլ բազմաբնույթ գործոններ, օրինակ՝

- գործառնական սկզբունքի հիման վրա սահմանված կառուցվածքը, որում առկա են նաև որոշ հարկատեսակների գծով մասնագիտացված ստորաբաժանումներ,
- մասնագիտացման հիման վրա կազմակերպական կառուցվածքը, որում առկա են որոշակի գործառնական գործառույթներ և այլն:

Հարկային համակարգի՝ ըստ հարկատուների սեզմենտի կազմակերպական կառուցվածքում, հարկատուների սեզմենտներից բացի, առանձնացվում են ստանդարտ օպերատիվ գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներ: Սեզմենտները դասակարգվում են ըստ փոքր, միջին և խոշոր տնտեսվարողների: Քանի որ հարկային եկամուտների գերակշիռ մասն ապահովում են քիչ քանակությամբ խոշոր կազմակերպությունները, հետևաբար բազմաթիվ երկրներում ընդունված մոտեցում է խոշոր հարկատուների սեզմենտի առանձնացումը:

Պետք է նշել, որ բազմաթիվ երկրներում կիրառում են գործառնական սկզբունքի հիման վրա կազմակերպական կառուցվածքի տեսակը, սակայն այն երկրները, որտեղ առկա է ԱԱՀ (ավելացված արժեքի հարկ), կազմակերպական կառուցվածքում առանձնացվում է այդ հարկատեսակի համար պատասխանատու ստորաբաժանում, ինչպես նաև ստորաբաժանում ըստ հարկատուների սեզմենտի խոշոր հարկատուների: Հայաստանի հարկային համակարգում նույնպես գործում է խոշոր հարկատուների հարկային տեսչություն:


Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը ստեղծվել է 1991

¹ Arturo Jacobs, Detailed Guidelines for Improved Tax Administration in Latin America and the Caribbean, Organizational Structure and Management, USAID, August, 2013, p. 43.

թվականին և իր գործունեությունը սկսել է բավականին դժվար պայմաններում՝ առանց սեփական հարկային օրենսդրության, պետական բյուջեի և վերջինիս հարկային եկամուտների պլանավորման, չունենալով նյութատեխնիկական բազա, շենքային պայմաններ, բանիմաց և որակավորված կադրեր: Անցնելով բարդ ճանապարհ՝ 26 տարիների ընթացքում համակարգն ունեցել է մեծ ձեռքբերումներ, ինչպիսիք են՝ տնտեսության աճի խթանումը, սպառողների շահերի պաշտպանությանը միտված օրենսդրության մշակումը, միջազգային չափանիշներին համապատասխան մաքսային համակարգի ստեղծումը, համակարգում առաջադեմ տեխնոլոգիաների լայնածավալ կիրառումը, հեռախոսագանգերի, հարկատուների սպասարկման կենտրոնների ստեղծումը, մարդկային ռեսուրսների կառավարման կատարելագործումը, ստուգումների և վերահսկողության կանոնակարգումը և այլն: Հարկ վճարողների սպասարկման ոլորտի զարգացումը պետական եկամուտների կոմիտեի ռազմավարության գերակայություններից է: Այդ գերակայությունն իրագործելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային խոր փոփոխություններ, ինչպիսիք են՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, հարկ վճարողների կողմից իրենց իրավունքների, պարտավորությունների և հարկային օրենսդրության պահպանման անհրաժեշտության պատշաճ ընկալումը: Համատեղ հեռախոսային, ինտերնետային, փոստային կապի, զանգվածային լրատվամիջոցների և անմիջական շփումների միջոցով տրամադրվող ծառայությունների ծավալի և որակի մեծացումը հնարավորություն է տալիս ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ավելի արդյունավետորեն սպասարկել և իրազեկել ավելի մեծ քանակի հարկ վճարողների, ինչն իր հերթին հանգեցնում է հարկ վճարող հանրության կողմից ՀՀ ՊԵԿ-ի և նրա առաքելության դրական ընկալմանը¹: Կոմիտեի գործունեությունը կանոնակարգվում է «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Մաքսային կարգավորման մասին» օրենքներով: Եկամուտների կոմիտեն ստեղծվում, վերակազմավորվում, և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության հրամանագրերով: Ձևավորման սկզբնական փուլում կոմիտեն գործում էր որպես միասնական կիսաինքնավար մարմին, որին զուգահեռ գործում էր մեկ այլ վերահսկող կառույց՝ հարկային տեսչության խորհուրդը: Կոմիտեի կազմակերպական կառուցվածքը սահմանված էր ըստ համակցման սկզբունքի, և առավելապես գերակշռում էր ըստ հարկատեսակների մասնագիտացումը: Այնուհետև, հաշվի առնելով այդ ոլորտում տեղի ունեցող միջազգային մարտահրավերները, առկա լավագույն միջազգային փորձը, կոմիտեն ևս անցում կատարեց հիմնականում գործառնական սկզբունքով կազմակերպական կառուցվածքին՝ ավելացնելով խոշոր հարկատուների սեգմենտը:

Կազմակերպական կառուցվածքի հիմնական օղակները՝ վերադաս հարկային մարմին, տարածքային հարկային տեսչություններ, մասնագիտացված առանձնացված ստորաբաժանումներ, ստորև ներկայացված են գծապատկերի տեսքով:

¹ Arturo Jacobs, Detailed Guidelines for Improved Tax Administration in Latin America and the Caribbean, Organizational Structure and Management, USAID, August, 2013, p. 43.



Գծապատկեր 1. Հարկային մարմնի կազմակերպական կառուցվածքի օղակները

Պետական եկամուտների կոմիտեի և նրան ենթակա հարկային և մաքսային կառույցների կազմակերպական կառուցվածքը սահմանվում է կոմիտեի կանոնադրությամբ¹: Կոմիտեի համակարգը կազմված է նախագահից, նախագահի տեղակալներից, խորհրդականներից, օգնականներից, կոմիտեի աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից: Վերադաս մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչությունը,
- հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչությունը,
- կազմակերպման և հսկողության վարչությունը,
- ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչությունը,
- ներքին աուդիտի վարչությունը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը,
- մաքսային հսկողության վարչությունը,
- իրավաբանական վարչությունը,
- քննչական վարչությունը,
- իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունը,
- օպերատիվ հետախուզության վարչությունը,
- մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչությունը,
- ներքին անվտանգության վարչությունը,
- անձնակազմի կառավարման վարչությունը,
- ֆինանսահաշվային վարչությունը և այլն:

¹ www.armenpress.am/arm/news/832217/hayastanum-kirakanacven-harkayin-varchararutyanyardyunavetutyanyan .

ՀԱՐԿԵՐ/ՀՆԱ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (2019 Թ.)

Վլադիմիր Հարությունյան

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Եվգենյա Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու

«Ի՞նչ է հարկը» հարցադրման պատասխանը տարբեր ժամանակներում ու տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց կողմից տարբեր ձևակերպումներ ու բնորոշումներ է ստացել: Այն զբաղեցրել է ոչ միայն տնտեսագետներին, այլև փիլիսոփաներին, իրավաբաններին, պոետներին, քաղաքական գործիչներին: Դա ոչ պատահական է և ոչ էլ զարմանալի:

Հարկազանձման «պտուղները» ճաշակում է յուրաքանչյուր երկրի յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ սեռից, ռասայից, ազգային պատկանելությունից, մասնագիտությունից, զբաղեցրած հասարակական դիրքից և այլն, մանավանդ որ այդ «պտուղները» լինում են տարբեր համի՝ կախված, թե ով կամ ովքեր են «ծնունդ տալիս ու կյանքի կոչում» հարկային քաղաքականությունը: Եթե այն մշակում ու կյանքի են կոչում քաղաքական դիլետանտները, ոչ պրոֆեսիոնալները կամ պրոֆեսիոնալների կարծիքն անտեսողները, ապա այդպիսի քաղաքականության և դրա արդյունքում իրականացվող հարկազանձման պտուղները լինում են դառը, կորուստները՝ անդառնալի, իսկ հետևանքները՝ վնասակար հասարակության յուրաքանչյուր անդամի համար:

Դարեր շարունակ հարկահավաքումը եղել է պետությունների գործառույթներից մեկը, որի հաշվին իշխանությունները համալրել են պետական գանձարանները և վարել են նվաճողական ու պաշտպանողական պատերազմներ, կառուցվել են մարդկության անկրկնելի ճարտարապետական կառույցները, կատարվել են մեծագույն հայտնագործությունները տարբեր բնագավառներում, և, ի վերջո, հարկերը եղել են հասարակական պահանջումները բավարարելու հիմնական միջոց և օգտագործվել պետության գործառույթների իրականացման համար:

Պատահական չէ, որ բոլոր ժամանակներում հարկման տեսությունները փորձել են լուծել մեկ հավերժական խնդիր՝ բյուջեի համար անհրաժեշտ եկամուտների հավաքագրման համար ո՞րն է ավելի նպատակահարմար՝ հարկային բեռի մեծացումը, թե՞ հարկային բեռի կրճատումը և հարկման բազայի ընդլայնումը: Ահա թե ինչու հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովումը մնում է պետական գանձարանի համալրման հիմնական ուղենիշերից մեկը:

Այժմ դիտարկենք, թե Հայաստանի Հանրապետությունում վերջին 10 տարիների ընթացքում ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել հարկեր/ՀՆԱ ցու-

ցանիշը: Նշենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հարկային բեռի վերաբերյալ վերլուծությունները կատարվել են երկու փուլով.

1. 2008-2015 թթ.՝ մինչև Հայաստանի՝ ԵՏՄ անդամակցությունը,
2. 2015-2018 թթ.՝ ԵՏՄ անդամակցությունից հետո:

Այսպես, մինչև ԵՏՄ անդամակցությունը հարկային բեռը կազմել է միջինը 16.9 %, իսկ ԵՏՄ անդամակցությունից հետո՝ 18.9 %: Փաստորեն ԵՏՄ անդամակցությունից հետո հարկային բեռն ավելացել է 2 %-ով, ինչը պայմանավորված է ԵՏՄ երկրներում հարկային և մաքսային քաղաքականությունների փոփոխություններով: Մասնավորապես՝ ԵՏՄ անդամակցությունից հետո ԵՏՄ անդամակցություններ արտահանված ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ կիրառվեց ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ¹ և 10 տոկոս մաքսատուրքից ազատում:

Կատարված վերլուծությունների արդյունքներն արտացոլված են ստորև բերված աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշ 2008-2018 թթ.

<i>Տարի</i>	<i>Հարկեր</i>	<i>ՀՆԱ</i>	<i>հարկեր/ՀՆԱ</i>
2008	553072.5	3568227.6	15.5
2009	454954.7	3141651.0	14.5
2010	524493.1	3460202.7	15.1
2011	575 860.7	3777945.6	15.2
2012	792153.8	4266460.5	18.6
2013	914169.8	4555638.2	20.1
2014	969651.0	4828626.3	20.1
2015	971558.3	5043633.2	19.2
2016	975686.5	5067293.5	19.3
2017	1043504.0	5568901.5	18.7
2018	1104091.4	6002747.8	18.4

2018 թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում կիրառվել է հարկային նոր օրենսգիրքը, որտեղ փոփոխություններ են կատարվել հարկային մի շարք օրենքներում: Մասնավորապես՝ ուղղակի հարկերի մասով փոփոխություններ են կատարվել եկամտային հարկի հաշվառման մեջ: Այսպես, հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է մինչև 150000 դրամը ներառյալ դրույքաչափը կազմում է 23 տոկոս, իսկ 150000-ից մինչև 2000000 դրամը ներառյալ՝ 28 տոկոս²:

Օրենքի ընդունումից հետո հարկեր /ՀՆԱ ցուցանիշն էական փոփոխության չի ենթարկվել, մասնավորապես՝ 2017 թվականին այն եղել է 18.7 տոկոս, իսկ 2018 թվականին՝ 18.4, այսինքն՝ տարբերությունը կազմել է ընդամենը 0.3 տոկո-

¹ <https://www.arlis.am>, ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 76:

² Նույն տեղում, հոդված 150:

սային կետ, իսկ դա վկայում է 2018 թվականին հարկային ցածր վարչարարության կամ բարձր ստվերային տնտեսության առկայության մասին: Այս համատեքստում կարևոր դերակատարում կարող է ունենալ ստվերային շրջանառության կրճատումը: Սակայն պետք է նշել, որ տեղի ունեցած տնտեսական հեղափոխությունից հետո արդեն իսկ բավականին տարբերություն է նկատվում: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում նոր կառավարության ձևավորումից հետո՝ 2018 թ. հունիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի և հարկերը վճարելուց խուսափելու վերաբերյալ հարուցվել է 1079 քրեական գործ¹, որոնց շրջանակներում արձանագրվել է պետությանը պատճառած 66.9 մլրդ դրամի գույքային վնաս, որից փաստացի վճարվել է բյուջե շուրջ 22.5 մլրդ դրամ: Նշվում է նաև, որ քրեական գործերի քննության ընթացքում մասնակից անձանց կողմից կամավոր վճարվել է շուրջ 9.5 մլրդ դրամ գումար:

Դեռևս 20-րդ դարի կեսերին ամերիկացի տնտեսագետ Գուտմանը նշել է, որ ԱՄՆ-ում գոյություն ունի տնտեսության չվերահսկվող մի հատված, որի ծավալներն աճելու միտում ունեն², իսկ ավելի ուշ ամերիկացի մեկ այլ տնտեսագետ՝ Էդգար Ֆայգը, հավելել է, որ չվերահսկվող տնտեսության ծավալները կազմել են պաշտոնական ՀՆԱ-ի 1/3-ը³:

Ըստ էության ստվերային շրջանառության գլխավոր բնութագրական գծերից մեկը պետության չվերահսկած գործունեությունն է, երբ տնտեսական գործակալների գործունեությունը թաքցվում է պետական կառավարման և վերահսկողական մարմիններից կամ ընդհանրապես արգելվում է օրենքով⁴:

Ընդհանուր առմամբ կարելի է տարբերակել ստվերային շրջանառության երկու հիմնական ոլորտ.

- ստվերային շրջանառություն, որը գործում է օրինական հատվածում, սակայն վերահսկողությունից և հաշվառումից դուրս,
- ստվերային շրջանառություն, որն օրենքով արգելված է և գործում է անօրինական հատվածում:

Հետևաբար կարելի է տարբերակել տնտեսության երկու հատված.

- արտադրողական, որն իրական ներդրում ունի ՀՆԱ-ի աճի մեջ,
- վերաբաշխող, որը չի առնչվում տնտեսական բարիքներ ստեղծելուն (կոռուպցիա և այլն):

Էդգար Ֆայգը ստվերային տնտեսությունում իրականացվող գործունեության տեսակները ներկայացնում է 4 խմբով⁵.

¹ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N141-Ս որոշման հավելված:

² Gutmann P., The Subterranean Economy, Financial Analysis Journal, 1977, vol. 33.

³ Hart K., Informal Urban Income Opportunities and Urban Employment in Ghana, Journal of Modern African Studies, 1973, vol. 11, #1.

⁴ Handbook on the Shadow Economy: Friedrich Schneider, Austria, 2011, էջ 3:

⁵ Feige, Edgar L., Working Papers, Reflections on the meaning and measurement of Unobserved Economies: What do we really know about the "Shadow Economy"? MPRA Paper 68466, University Library of Munich, Germany, 2015.

1. անօրինական կամ հակաօրինական, երբ ստեղծված եկամուտը տնտեսության անօրինական գործունեության հետևանք է.
2. չհայտարարագրված, երբ շրջանցվում են հարկաբյուջետային կանոնները, կամ խուսափում են այդ կանոններով նախատեսված պահանջները կատարելուց.
3. չգրանցված, որտեղ իրականացվող գործունեությունը շրջանցում է պաշտոնական վիճակագրության սահմանած հաշվետվություններ ներկայացնելու և հայտարարագրելու համակարգը.
4. ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ)՝ ներառելով տնտեսական այն գործունեությունները, որոնք շրջանցում են կամ չեն վճարում նախատեսվող ծախսերը և միաժամանակ չեն օգտվում տարբեր ոլորտների (ինչպիսիք են՝ սեփականատիրական հարաբերությունները, առևտրային գործունեության տեսակներն արտոնագրելը, վարկավորումը, սոցիալական ապահովվածությունը և այլն)՝ իրավական ակտերով նախատեսված եկամուտներից և իրավունքներից:

Վերջինս մեր հանրապետությունում շատ տարածված է՝ պայմանավորված աշխատուժի շուկայի թերզարգացմամբ, որտեղ աշխատող-գործատու հարաբերությունները հաճախ բանավոր համաձայնությամբ են, որը թույլ է տալիս բարձր դրույքաչափերի վճարումներով հնարավորինս նվազեցնել պարտադիր վճարումները¹: Սակայն հարկ է նկատել, որ 2018 թվականի չորրորդ եռամսյակի դրությամբ ոչ պետական աշխատատեղերի քանակն ավելացել է մոտ 37 հազարով², ինչն էլ թույլ է տալիս ենթադրել, որ նույն ժամանակահատվածում ստվերից դուրս է բերվել առնվազն 30 հազար աշխատատեղ:

Ստվերային գործունեության առանձնահատուկ տեսակ է դրամանենգությունը, որի դեմ պայքարի միջոցներն են՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ թղթադրամի պաշտպանվածության աստիճանը բարձրացնելը կամ երկրում վճարային ոչ կանխիկ միջոցները զարգացնելը (անդորրագրերի, կրեդիտային և դեբետային քարտերի համակարգերի ներդրումը և լայն կիրառումը), որը նվազագույնի կհասցնի կանխիկ դրամով իրականացվելիք, հատկապես տնտեսական խոշոր գործարքների թիվը և կմեղմի դրամանենգության բացասական հետևանքները:

Երկրի տնտեսության վրա ստվերային տնտեսության ունեցած բացասական հետևանքներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- ստվերային տնտեսությունը հանգեցնում է հարկային եկամուտների նվազման, ինչի հետևանքով պետությունը հարկադրաբար կարող է բարձրացնել հարկային դրույքաչափերը՝ ավելի վատթարացնելով երկրի տնտեսության վիճակը, կապված, որպես հետևանք, պետության կատարած ներդրումների ծավալների ու տրամադրած ծառայությունների նվազման հետ:
- Կասկածելի է դառնում ՀՆԱ-ի, գործազրկության մակարդակի, սղաճի և

¹ Վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ. http://www.armstat.am/file/article/rep_ashx_09a_4.pdf

² ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N141-Ս որոշման հավելված:

այլ մակրոտնտեսական ցուցանիշների ճշգրտությունը:

- Անհավասար մրցակցային պայքար է ստեղծվում արտադրության և առևտրի ոլորտների միջև:

- Խաթարվում է նաև աշխատուժի արդյունավետ վերաբաշխումը տնտեսության տարբեր ճյուղերի միջև: Քանի որ, ինչպես արդեն նկատել ենք, ՀՀ-ում գործատու-աշխատող փոխհարաբերությունները երբեմն բանավոր համաձայնությամբ են՝ աշխատողներին չգրանցելով, հետևաբար վերջիններս չեն վճարում հարկային ու սոցիալական ապահովության պարտադիր վճարները՝ հայտնվելով ավելի լավ վիճակում, քան տնտեսության պաշտոնական հատվածում զբաղվածները:

Չնայած ստվերային շրջանառությունը տնտեսության համար ունի մի շարք բացասական հետևանքներ, այդուհանդերձ կարելի է առանձնացնել նաև որոշակի դրական կողմեր.

- հարկեր չմուծելը ձեռնարկատերերին կարող է մրցակցային առավելություններ տալ, որոնք էլ հնարավորություն են ընձեռում նոր տեխնոլոգիաների ներդրմամբ և արտադրության նոր ձևեր կազմակերպելով ավելացնել տնտեսական արդյունավետությունը:

- Ստվերային հատվածում գտնվող աշխատողները, հարկային պարտավորությունները չկատարելով, ձևավորված եկամուտներն օգտագործում են իրենց անձնական կարիքների համար, որն էլ նպաստում է նրանց կենսամակարդակը բարձրացնելուն:

- Նոր աշխատատեղեր ստվերային ոլորտում:

Ստվերային շրջանառությունը նպաստում է ամբողջական պահանջարկը մեծացնելուն, իսկ ստեղծված եկամուտը, այդուհանդերձ, ծախսվում է տնտեսության պաշտոնական հատվածում:

Ստվերային տնտեսության շրջանառությունն իրատեսորեն գնահատելը ստվերի դեմ պայքարի կարևորագույն քայլերից է: Աշխարհի բոլոր երկրներում կառավարությունները ստվերային տնտեսությունը կրճատելու ուղղությամբ մշակում և կյանքի են կոչում տարբեր ծրագրեր ու մեխանիզմներ, որոնք, սակայն, միշտ չէ, որ ակնկալվող արդյունք են ապահովում: Դրանք առավել արդյունավետ ու իրատեսական են զարգացած երկրներում:

Ընդհանուր առմամբ ստվերային տնտեսությունը կրճատելու միջոցառումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. օրենքների և նորմատիվ ակտերի ընդունում, օրենսդրական բարեփոխումների իրականացում.
2. դատաիրավական համակարգի բարեփոխումների իրականացում.
3. քաղաքական ոլորտի առողջացում(ազատ ընտրություններ, քաղաքական հովանավորչության բացառում).
4. բանկային համակարգի զարգացում, տնտեսական գործունեության մեջ ընդգրկվածության ավելացում.
5. հարկային վարչարարության բարելավում, վարչարարական ներուժի ամբողջական կիրառում:

Ստվերը կրճատելու վերը թվարկված բարեփոխումները փոխկապակցված են. իրականացնում են պետական համապատասխան շահառու գերատեսչությունները, իսկ վերահսկում՝ կառավարությունը և օրենսդիր մարմինները:

Ստվերային տնտեսության ծավալները կրճատելու նպատակով օրենսդրական բարեփոխումներն իրականացվում են ինչպես հարկային և մաքսային, այնպես էլ հարակից մյուս ոլորտներում, քանի որ տնտեսվարման բարենպաստ պայմաններ ապահովելը հնարավոր է միայն պետական և մասնավոր հատվածում կոռուպցիոն ռիսկերը, բյուրոկրատիան նվազեցնելով, անհրաժեշտ օրենքներ և նորմատիվ ակտեր ընդունելով և տնտեսվարողի տեսանկյունից դյուրին կիրարկելով:

Հանրապետությունում հարկային օրենքները վաղուց են ընդունվել, և պարբերաբար իրականացված փոփոխությունների նպատակը կարճատև, ժամանակավոր խնդիրներ լուծելն էր, իսկ ժամանակի մարտահրավերները, միջազգային տարբեր տնտեսական միությունների անդամակցելը պահանջում են խնդիրների առավել երկարաժամկետ և արմատական լուծումներ, կայուն և կանխատեսելի հարկային միջավայր՝ նպաստելով տնտեսվարող սուբյեկտների ներդրումային մեծ ակտիվությանը: Ուստի տնտեսության զարգացման ներկա փուլում կարևորվում են հարկային օրենսդրական դաշտում իրականացվող արմատական փոփոխությունները: Կարելի է արձանագրել, որ մեր հանրապետությունում կատարվող բարեփոխումներն արդեն իսկ տալիս են իրենց պտուղները: Մասնավորապես՝ կարևորվում է նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենաների համատարած և պարտադիր կիրառումը, որը հնարավորություն է տալիս հարկային մարմինն ստանալ հարկ վճարողի գործարքի մասին մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաև նպաստում է անկանխիկ գործարքների աճին, ինչն էլ զգալիորեն նվազեցնում է շրջանառությունների թերհայտարարագրման ռիսկերը:

Հարկեր/ՀՆԱ տոկոսային հարաբերակցության շարունակական աճի հարցում կարևոր դեր կարող է խաղալ նաև փոքր ու միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) արդյունավետ հարկումը, որը թե՛ հրատապ է և թե՛ բարդ:

ՓՄՁ-ների արդյունավետ հարկման հրատապությունը պայմանավորված է դրանց դերի բարձրացող կարևորությամբ, բազմաթիվ երկրներում ՓՄՁ-ների համար նոր մոտեցումների, զբաղվածության և տնտեսական աճի հարցերում դրանց ստանձնած պարտավորություններով: Դրանք նպատակ ունեն իրականացնել բարեփոխումներ՝ պայմանավորված ավելի խոշոր ձեռնարկությունների հարկման, ինչպես նաև ստվերի պատճառով առաջացած անհավասար պայմանների և անարդյունավետ ռեժիմների վերանայման անհրաժեշտությամբ: Դրանք բարդ հարցեր են՝ պայմանավորված քաղաքականության և վարչարարության տարաբնույթ մոտեցումներով, ինչպես նաև համեմատաբար լուրջ վերլուծական աշխատանքների բացակայությամբ: Հետևաբար ՓՄՁ-ների հարկման արդյունավետ համակարգի ձևավորման անհրաժեշտ պայմանը դրանց բազմազանության ճանաչումն է, քանի որ այն, ինչ երկրի համար կարող է համարվել փոքր կամ միջին, մի ուրիշ երկրում կարող է լինել խոշոր: Բայց այդ ամենով հանդերձ՝ գրեթե բոլոր երկրներում ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ ավելի

մեծ է, քան հարկային եկամուտներում: Դա նշանակում է, որ ՓՄՁ-ների հարկումը կարող է ունենալ ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալական նշանակություն, քանի որ ՓՄՁ-ների հարկման տիրույթում են կենտրոնացած աշխատող ազգաբնակչության շահերի բախումները կամ համընկնումը: Հետևաբար ՓՄՁ-ների համար հատուկ հարկային ռեժիմ ներդնելիս հարկավոր է հիշել, որ ՓՄՁ-ների վրա բացասաբար անդրադարձող շուկայում տիրող իրավիճակը հարկ վճարողի չափի վրա հիմնված հարկային միջոցառումների միջոցով կարգավորելը հազիվ թե կարելի լինի համարել ամենաճիշտ լուծումը: Երբեմն փաստարկներ են բերվում ավելի փոքր ձեռնարկությունների համար ավելի նպաստավոր ռեժիմ սահմանելու օգտին: Այսպես, եթե կան արտաքին ֆինանսավորումն ավելացնելու հետ կապված դժվարություններ, ապա, օրինակ, նվազեցված հարկային դրույքաչափը կարող է օգտակար լինել: ՓՄՁ-ների լրիվ ներուժի օգտագործման առումով այս և շուկայի հետ կապված այլ հնարավոր դժվարությունների ազդեցությունը դեռևս մնում է չպարզված: Մակայն կարևոր է այն, որ տնտեսվարող սուբյեկտի չափը՝ որպես այդպիսին, միշտ չէ, որ սերտորեն կապված է համապատասխան շուկայի դժվարությունների հետ (օրինակ՝ որոշ փոքր ձեռնարկություններ կարող են ֆինանսական դժվարություններ չունենալ), և հարկային միջամտությունները հաճախ կարող են նպատակային ծախսումների ազդեցություն կրել: Հարկավոր է խուսափել սխալ հարկի ներդրման արդյունքում փոքր ձեռնարկություններին հասցվող անդառնալի վնասից:

Կան հարկի ներդրման և կիրարկման հիմնավորված փաստարկներ, որոնք նպաստում են ՓՄՁ-ների լայնածավալ ներառմանը հարկային դաշտում: Չափը կարևոր հանգամանք է հարկային խախտումների և վարչական ծախսերի մոտավոր սահմանները որոշելիս, թեև այդ դերն արդյունավետ հարկային քաղաքականությունը որոշելիս այդպիսի ծախսերի բացակայության պայմաններում վիճելի հարց է: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն առավելությունները, որ կարող է իր հետ բերել հարկ վճարողների ներառումը (որը կարող է, օրինակ, հեշտացնել ֆինանսական միջոցներից օգտվելու հնարավորությունը), ինչպես նաև մյուս առավելությունները, որ կարող է բերել հարկային դաշտ լրացուցիչ հարկ վճարողների տեղափոխումը (կարգապահության խթան հանդիսանալով այդ հարկ վճարողների հետ համագործակցող այլ տնտեսվարող սուբյեկտների համար), և հարկի ներդրման գործընթացի պարզեցման հետ կապված ծախսերի կրճատումը: Այս առումով ԱԱՀ-ի շեմը, որը զգալիորեն տարբերվում է ըստ երկրների, կարող է կարևոր դեր խաղալ: Մակայն պետք է փաստել, որ ՓՄՁ-ների հարկման հիմնական խնդիրները ծագում են աշխատողների աշխատավարձից հարկերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների պահման դեպքերում: Այս ոլորտում իրավիճակի պարզեցումը կապված է դժվարությունների հետ: Եվ պատահական չէ, որ ՓՄՁ-ների հարկումը վերջին տարիներին մեծ կարևորություն է ստանում թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրներում, քանի որ.

- անցած ժամանակաշրջանում զարգացող և զարգացած երկրների հիմնական ուշադրությունը կենտրոնացած է եղել խոշոր հարկ վճարողների վրա, և բնական է, որ հաջորդ քայլը պետք է լիներ ուշադրության շեշտադրումը ՓՄՁ-

ների վրա տեղափոխելը: Վերջինիս նպատակն էր ջանքերը (հարկ վճարողների և հարկային մարմնի) կենտրոնացնել այնտեղ, որտեղից ավելի շատ եկամուտ է հավաքագրվում: Ավելին, ավելի ցածր եկամուտ ունեցող երկրներում խոշոր հարկ վճարողների խումբը հաճախ հանդես է գալիս որպես հարկային եկամուտների հավաքագրման գործընթացի արդիականացումն ապահովող հենարան:

- ՓՄՁ-ներին անբավարար ուշադրություն դարձնելու վտանգի մասին ահագանգերն աճել են, ինչի անտեսումը կարող է անհավասար հարկային դաշտի արդյունքում հանգեցնել, օրինակ, մրցակցության խաթարմանը, սահմանափակել աճը և խուսափել հարկերից՝ արհեստականորեն մասնատելով ձեռնարկությունները:

- Խոշոր ձեռնարկությունների և վարձու աշխատողների կամավոր կարգապահությունը կարող է արդարացիորեն տուժել, քանի որ նրանց փոքր կամ բարեկեցիկ գործընկերների խախտումների վրա հարկային մարմինը կարող է «աչք փակել»:

- Մեծանում է ՓՄՁ-ների պոտենցիալ առանցքային նշանակությունը՝ կապված նորարարությունների, զբաղվածության աճի ապահովման, ինչպես նաև սպասարկումների ոլորտում ունեցած դերի հետ, որոնք հավասարապես կարևոր են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար:

- Մեծանում և ուղղակի է դառնում ստվերի և ձեռնարկությունների չափերի միջև եղած կապը: Հենց ՓՄՁ-ների միջոցով ու օգնությամբ են խոշոր հարկատուներն ավելացնում իրենց ստվերային շրջանառությունները՝ ստեղծելով մրցակցային անհավասար պայմաններ հենց ՓՄՁ-ների համար:

Նկատի ունենալով տարբեր երկրներում ՓՄՁ-ների դասակարգման չափանիշների զգալի տարբերությունները՝ միանշանակ է, որ հնարավոր չէ հանգել ՓՄՁ-ների հարկման մեկ միասնական «լավագույն» մոտեցման, որը կիրառելի լինի բոլոր հանգամանքներում և զարգացման նույնիսկ նույն մակարդակում գտնվող երկրների համար:

ՓՄՁ-ների համար հարկային հատուկ ռեժիմի սահմանումը դժվար խնդիր է և պահանջում է ավելի շատ քաղաքականության և վարչարարության փոխկապակցված մոտեցում:

Հաջողված հարկային վարչարարություն նշանակում է ոչ միայն եկամուտների ավելացում, այլև, ավելի շուտ, կամավոր կարգապահության աճ: Այն լուծումները, որոնք հարմար են անցումային շրջանում գտնվող զարգացած և առաջավոր երկրների համար (օրինակ՝ էլեկտրոնային կառավարումը), կարող են չգործել ոչ զարգացած ենթակառուցվածքներ ունեցող երկրներում: Խնդիրները տարբեր կլինեն տարբեր երկրներում և նույնիսկ միևնույն երկրում՝ տարբեր տարիների կտրվածքով: Օրինակ՝ ստվերային տնտեսության բարձր չափեր ունեցող երկրներում ավելի մտահոգված են փոքր ձեռնարկություններին հարկային դաշտ բերելու անհրաժեշտությամբ, իսկ զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներում կարող են համարել, որ փոքր ձեռնարկությունների հարկային ճեղքվածքն առաջանում է գրանցված ձեռնարկությունների եկամտի պակաս հայտարարագրման արդյունքում:

Արդի հարկային վարչարարությունը կախված է հարկ վճարողի ինքնագնահատումից, որն իր հերթին կախված է հարկ վճարողների սպասարկման մոտեցումներից, որոնք ուժեղացվում են հարկային օրենսդրության կիրառմամբ՝ ուղղված այն հարկ վճարողներին, որոնք հավանաբար կամ չեն հասկանում, կամ միտումնավոր խուսափում են իրենց պարտավորությունները կատարելուց: Ինքնագնահատման ենթատեքստում ռիսկերի վրա հիմնված և հավասարակշռված սպասարկումը և հարկային ռազմավարությունը զուգահեռ իրականացնելը նպատակ ունեն ուժեղացնել կամավոր հարկային կարգապահությունը և եկամուտների հավաքագրումը օրենքի շրջանակներում: Այս մեթոդն իր գործնական առումով հարկ վճարողներին խմբավորում է ըստ մի քանի խոշոր ռիսկերի տեսակների՝ ընտրելով ակնհայտ հատկանիշներ, որոնք բնութագրում են հարկային կարգապահության վարքագիծը: Այստեղ մեկնարկային կետը ձեռնարկության մեծությունն է, թեև սովորաբար կիրառվում են բազմաթիվ այլ չափանիշներ: Փոքր հարկ վճարողների ռիսկերի ցուցանիշները կարող են ներառել ընկերությունների արագ ստեղծումներն ու լուծարումները, գրանցման գրքերի ոչ պատշաճ վարումը կամ դրանց բացակայությունը, կանխիկով կամ բարտերի վրա հիմնված գործարքները, ստվերային տնտեսությունում գործելը, բազմաթիվ մանրածախ գործարքները, որոնք հատկապես դժվար է վերահսկել սպասարկման ոլորտում: Հարկային մարմինների համար սա բազմաթիվ դժվարություններ է ստեղծում: Օրինակ՝ ընկերությունների շրջանառությունը ծանրաբեռնում է գրանցման գործընթացը, ինչպես նաև սպասարկման գործառույթի իրականացումը: Գրանցումների գրքերի թերի վարումը, որը հատկապես խնդիր է զարգացող երկրներում, որտեղ ինքնագրադների և միկրո ձեռնարկությունների ոլորտի մի մասը կարող է լիովին տեղեկացված չլինել, կարող են խոչընդոտել ինքնագնահատման համակարգի ներդրումը՝ հանգեցնելով վարչարարական գնահատումների կիրառմանը:

Սահմանափակ ռեսուրսներ ունեցող հարկային մարմինները հաճախ համեմատաբար ավելի քիչ կարևորություն են տալիս ՓՄՁ-ների աճող թվին՝ հաշվի առնելով դրանցից ակնկալվող փոքր հարկային մուտքերը: Սա հատկապես ճիշտ է, երբ հարկային մարմնի կատարողականը անցյալում գնահատվել է կամ ներկա պահին գնահատվում է հիմնականում ըստ հարկային մուտքերի մեծության: Հաջող ինքնագնահատման համակարգերը հիմնված են արդար և անկողմնակալ վարչարարության վրա, որը ներառում է թափանցիկ օրենքներ և ընթացակարգեր, հարկային պարտավորությունների վերաբերյալ հստակ տեղեկություններ ստանալու հնարավորություն, հեռախոսով այդ պարտավորությունների կատարման համար աջակցության տրամադրում, սպասարկման կետ, թղթակցություն և բողոքարկման իրավունքներ: Հարկային կարգապահության ապահովման հարցում հարկ վճարողին աջակցելու համար մատուցվող ծառայությունները եկամուտների վարչարարության օժանդակ և էական մաս են կազմում: Այդուհանդերձ, հաճախ դժվար է ծախսերի և օգուտների առումով չափել այն պնդումը, որ ավելի արդյունավետ ծառայության տրամադրման շնորհիվ եկամուտների հա-

վաքագրումն ավելի բարձր է, քան լրացուցիչ հարկադիր աշխատանքների¹ միջոցով հավաքագրումը: Դրույթը վիճարկելի է:

ՓՄՁ հանդիսացող հարկ վճարողներին որակյալ ծառայություններ առաջարկելու մարտահրավերները հատկապես զարգացող երկրներում կարևոր են, քանի որ.

- այս հարկը վճարողները բազմաթիվ են և տարբեր,
- նրանք սովորաբար հարկային օրենքների և պարտավորությունների մասին թույլ գիտելիքներ ունեն,
- նրանց թվում գերակշռում են քիչ փորձված և հաճախ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու սահմանափակ հնարավորություն ունեցողները, հետևաբար նրանց համար անհրաժեշտ են թանկ, առերես ծառայություններ և ավելի շատ աջակցություն գրքույկների և տեղեկագրերի միջոցով,
- նրանք «անկայուն հաճախորդներ» են, քանի որ նրանց կարճ գործարար կյանքի պատճառով մշտական ջանք է պահանջվում՝ նորաստեղծներին ուսուցանելու համար:

Սույն մարտահրավերները հաղթահարելու համար հարկային մարմինները պետք է հասկանան հարկ վճարողներին աջակցելու տարբեր ծառայությունների (թղթակցությունը, տեղական գրասենյակներում հանրային սպասարկման կետերը, հեռախոսային կապի կենտրոնները, գրքույկներն ու տեղեկագրերը, արտաքին օժանդակությամբ ծառայությունները և կայքի վրա հիմնված տարբերակները) մատուցման հարաբերական ծախսերն ու օգուտները: Հարկ վճարողների սպասարկման ավանդական ծրագրեր ունեցող երկրներում ռազմավարությունը սովորաբար ծախսերի կառավարումն է՝ հարկ վճարողներին ինքնաջակցման տարբերակների (էլեկտրոնային ծառայությունների, օրինակ՝ հեռախոսային զանգերի ավտոմատ սպասարկման տարբերակը) դաշտ տեղափոխելու միջոցով: Հարկային մարմինը նվազեցնում է իր ընդհանուր ծախսերը՝ նվազագույնի հասցնելով անմիջական ծառայությունների անհրաժեշտությունը, որոնք տրամադրվում են ավելի ծախսատար թղթակցության և տեղական գրասենյակների սպասարկման կետերի միջոցով՝ առավելագույնի հասցնելով հեռախոսների օգտագործումը և խրախուսելով տեղեկատվությունից օգտվելու ցանցային ձևը:

Զարգացող երկրների համար, որոնք ձգտում են սպասարկման ծրագիր մշակել, հիմնական կառուցվածքային նկատառումը ՓՄՁ-ների կողմից հեռախոսային ծառայությունից, լրատվամիջոցներից և ինտերնետից օգտվելու հնարավորության չափն է: Բազմաթիվ երկրներում էլեկտրոնային ծառայությունները և ինքնաջակցման տարբերակները ներկայումս կարող են սահմանափակ կիրառում ունենալ: Այդպիսի դեպքերում, թեև դրանք պետք է լինեն միջնաժամկետ կամ երկարաժամկետ նպատակներ, հարկ վճարողների սպասարկումը միշտ պետք է ավելի հաճախ կատարվի ավելի քիչ ծախսատար, հեշտ տրամադրվող և հեռախոսային ծառայությունների միջոցով:

¹ Քանի որ ծառայությունների եկամտային վճարումը հաճախ համեմատաբար դժվար է չափել, հարկային ծառայությունների գործառնական բյուջեները հաճախ ավելի մեծ ճնշման տակ են, քան հարկադիր ծրագրերինը:

Այդպիսի երկրներում հանրության հետ կապված աշխատանքները (համայնքային հանդիպումները և նման միջոցառումները), հարկային գրագիտության ծրագրերը և լրատվամիջոցները մեծ կարևորություն ունեն:

Ծառայությունները և ապրանքները պետք է ձևափոխվեն և մշակվեն ՓՄՁ-ների գործարքային և կենսափուլի կարիքներին համապատասխանեցնելու տեսանկյունից: Կոնկրետ հարցերի համար ՓՄՁ-ներին պարզ և հասկանալի պատասխաններ են անհրաժեշտ. ինչպե՞ս ձեռնարկություն հիմնել, ինչպե՞ս ներկայացնել հարկային հայտարարագիրը և վճարել, ինչպիսի՞ մատյաններ պետք է վարել, որո՞նք են պարտավորությունները որպես գործատու, ո՞ր եկամուտն է ենթակա հաշվետվության, և ո՞ր ծախսերն են ենթակա նվազեցման, ինչպե՞ս լուծարել ձեռնարկությունը և այլն: Հարկային օրենսգրքից կամ հարկային ընթացակարգերի մասին օրենքից, որքան էլ դրանք պարզ լինեն, պարզապես օգտվելու հնարավորությունը չի բավարարի ինքնազբաղ հարկատուի կարիքները, ով պատրաստվում է առաջին անգամ աշխատող վարձել:

Բազմաթիվ հարկային մարմիններ ներկայումս մասնագիտացված կենտրոններ են ձևավորել տարբեր ոլորտներում գործող փոքր ձեռնարկությունների աջակցության համար (օրինակ՝ շինարարություն, հանրային սնունդ, գյուղատնտեսություն, մանրածախ առևտուր, արտադրություն): Հարկային մասնագետների և մյուսների դերը պետք է լծակների կիրառման միջոցով ամրապնդվի՝ ավելացնելու համար ցածր գներով ՓՄՁ ծառայությունների ծավալը: Հարկային մարմինները պետք է ուղիներ փնտրեն՝ ներգրավելու համար երրորդ անձանց, որպեսզի վերջիններս օժանդակեն ՓՄՁ-ներին նրանց հարկային պարտավորությունների կատարման գործում:

Հաշվի առնելով ՓՄՁ-ների կարգապահության կարողությունների սահմանափակումները՝ հարկային մարմինները պետք է ընթացակարգերը պարզեցնեն՝ առաջնորդվելով չորս սկզբունքներով.

1. չպահանջել ավել տվյալներ, քան կարող են մշակվել և օգտագործվել հարկային մարմնի նպատակների համար,
2. պարզ և հասկանալի տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե ինչի վերաբերյալ, ինչպես, որտեղ և երբ պետք է գործողություններն ավարտվեն, և հստակ նկարագրել մատյանների վարման պայմանները,
3. ամբողջ երկրում ընթացակարգերը միօրինակ դարձնել, որպեսզի հնարավոր լինի խուսափել տարբեր գրասենյակներում տարբեր կարգերի կիրառումից,
4. աշխատել թափանցիկ և հասարակության հանդեպ պատասխանատվությամբ:

Զարգացող երկրներում ապօրինի գործունեությունը փոքր ձեռնարկությունների շրջանում հարկային մարմինների ամենամեծ խնդիրներից է: Գրանցումը կարգապահության հիմնական խնդիր է՝ կապված էլքային տվյալների գրանցման և հուսալի տեղեկատվության հետ: Զգրանցված հարկ վճարողների հայտնաբերումը չափազանց ծախսատար է և սովորաբար հարկադիր միջոցառումների և ուսուցման (իրազեկման) զգալի ջանքեր է պահանջում: Օրինակ՝ վերջերս Մեքսիկայում անցկացված փորձնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ակտիվ ձեռնարկությունների 24 տոկոսը (որոնցից 93 տոկոսը ՓՄՁ-ներ էին) ներառված

չէին հարկային գրանցամատյանում, ընդհանուր ակտիվ հարկ վճարողների 38 տոկոսի հասցեները ճշգրիտ չէին հարկ վճարողների անձնական գործերում, իսկ ճշգրիտ հասցե պարունակող գործերի 71 տոկոսում պակասող տվյալներ կային (Gonzalez, 2006): Հետևաբար չգրանցելը և (չներկայացնելը) ցածր եկամուտներ ունեցող որոշ երկրներում կարող է հարկային եկամուտների լուրջ կորուստներ առաջացնել: Չգրանցվելու և հայտարարագիր չներկայացնելու հետ կապված կարգապահության չկատարման համամասնությունը կարող է տարբեր լինել զարգացած և զարգացող երկրներում: Օրինակ՝ Միացյալ Նահանգներում ներքին եկամուտների ծառայության անցկացրած հետազոտությունը ցույց է տալիս, որ կարգապահության ընդհանուր թերացումների միայն մոտավորապես 7 տոկոսն է կապված հայտարարագրեր չներկայացնելու հետ, թեև ընդհանուր ճեղքվածքի 32 տոկոսն առաջանում է ձեռնարկության եկամտի պակաս հայտարարագրումից:

ԲԵՆՁԻՆԻ ԵՎ ԴԻԶԵԼԻՆԻ ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ (2019 Թ.)

Քրիստինե Բաղդասարյան

տնտեսագիտության թեկնածու


Բենզինի շուկայում որևէ մեկին որևէ բան չի պարտադրվում: Այն, ըստ էության, ազատ շուկա է, իսկ բենզինի գները բարձրանում ու իջնում են շուկայական գործոնների ազդեցությամբ: Ստացվում է, որ բենզինի շուկան, իր տնտեսական և իրավական դրդապատճառներից ելնելով, բաց շուկա է, որի վրա ազդում են ներքին և արտաքին գործոններ: Մասնավորապես՝ բենզինի միջազգային գների բարձրանալը կամ իջնելը նույնպես կարող է ազդել բենզինի ներքին շուկայի գների մակարդակի վրա: Այս գործընթացի փոփոխությունները կարող ենք բացատրել նաև ՀՀ տնտեսության մեջ գործարար մշակույթի փոփոխությամբ կամ կառուցվածքային բարեփոխումներով, որոնք ուղեկցվելու են միջազգային կազմակերպությունների, կորպորացիաների ներկայացուցիչների ներգրավմամբ: Օրինակ՝ ներքին շուկայում բենզինի մրցակցության վրա էական ազդեցություն կունենա այս ոլորտի միջազգային հայտնի կորպորացիաների մուտքը, օրինակ՝ GULF, Lukoil, Total, British Petroleum, Agip, Wissol, Shell և այլն, որոնց բենզալցակայանները և ներկրող ներկայացուցչություններն ազատորեն գործում են հարևան Վրաստանի Հանրապետությունում:

Բենզինի գնագոյացման շուկան կարգավորելու համար պետությունը պետք է վերահսկի կամ կարգավորի մեծածախ շուկան, օրինակ՝ մեծածախ վաճառքն իրականացվի էլեկտրոնային աճուրդներով: Որպես մոտեցում կամ ձևաչափ կարող է հաստատվել այն, որ պետության կողմից դիզելային և բենզինային վառելիքի ներմուծումը էական ազդեցություն կունենա շուկայում գնագոյացման վրա:

Բացի այդ, կախված միջազգային շուկայի իրավիճակից, օրենսդրության փոփոխություններից և այլնից, օբյեկտիվորեն հնարավոր են գնային ճնշումներ, որոնք կլանող-չեզոքացնող տնտեսական «բարձիկները» Հայաստանի տնտեսության դեպքում շատ թույլ են կամ բացակայում են այն ապրանքային շուկաներում, որտեղ գործունեություն են ծավալում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները:

Ըստ գծապատկեր 1-ի՝ ՀՀ-ում 2011-2018 թթ. ընկած ժամանակահատվածում բենզինի և դիզելային գներն ամենացածրը եղել են 2016-2017 թթ.: Օրինակ՝ դիզելային գները 2016 թվականին 2015 թվականի համեմատ նվազել են 74 դրամով՝ 426 դրամից կազմելով 352 դրամ, իսկ 2017 թվականին 2016 թվականի համեմատ աճել են 14 դրամով՝ 352 դրամից դառնալով 366 դրամ:

Դիզելային գների աճը շարունակվել է նաև 2018 թվականին. դրանք 2017 թվականի համեմատ աճել են 100 դրամով՝ 366 դրամից դառնալով 466 դրամ (տե՛ս գծապատկեր 1-ը):



Գծապատկեր 1. 2011-2018 թթ. բենզինի և դիզելային գները ՀՀ-ում¹

Բենզինի գների տատանողականությունը նույնպես կտրուկ փոխվել է 2016-2017 թթ., ընթացքում: Օրինակ՝ բենզինի գները 2016 թվականին 2015 թվականի համեմատ նվազել են 49 դրամով, 2017 թ. 2016 թ. համեմատ բարձրացել են 15 դրամով, իսկ 2018 թվականին՝ 65 դրամով՝ կազմելով 462 դրամ:

Որպես բենզինի և դիզելային գների բարձրացման վրա ազդող տնտեսական լծակներ՝ կարելի է նշել.

2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ՀՀ-ում հարկային նոր օրենսգիրքը, ըստ որի՝ մի շարք ապրանքատեսակների ակցիզային հարկը վերանայվեց, մասնավորապես՝ բենզինի և դիզելային վառելիքի դեպքում ակցիզային հարկի դրույքաչափերի վերանայումը հանգեցրեց գների աճի: ՀՀ տնտեսության և ազգաբնակչության համար առավել զգայուն է դիզելային վառելիքի և բենզինի գների աճը, քանի որ այս ապրանքները ոչ միայն սպառողական, այլև տնտեսական նշանակություն ունեն:

Դիզելային վառելիքի և բենզինի գների կտրուկ աճն ուղղակիորեն ազդում է ՀՀ տարածքում արտադրվող և մատուցվող ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի վրա: Մասնավորապես՝ դիզելային վառելիքի գների ազդեցությունը մեծ է գյուղատնտեսության, արդյունաբերության և տրանսպորտի ոլորտների վրա:

Հարց է առաջանում. ի՞նչ ազդեցություն է ունեցել հարկային նոր օրենսգրքի կիրառությունը բենզինի և դիզելային գների վրա:

1. ***Բենզինի գների մասով՝*** 2018 թվականի հունվարի 1-ից բենզինի ներմուծման համար ակցիզային հարկը բարձրացել է 1 տոննայի հաշվով 15 000 ՀՀ դրամով: Եթե մինչև 01.01.2018 թվականը 1 տոննա բենզինի ներմուծման համար ակցիզային հարկի գումարը կազմում էր 25 000 դրամ, ապա ներկայումս այն կազմում է 40 000 դրամ: Բացի այդ, մինչև 2018 թվականը մաքսային սահմանին վճարվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը կազմում էր 120 000 ՀՀ դրամ, իսկ **այժմ՝ 135 000 ՀՀ դրամ:** Արդյունքում տեղի է ունեցել գների աճ: Ակցիզային հարկի դրույքաչափի բարձրացումը համաչափ է ազդել բենզինի մանրածախ գնի գնազոյացման վրա, որը որևէ կերպ չի արդարացնում այս շուկայում

¹ https://www.armstat.am/file/article/f_sec_4_2018_2.pdf

տարիներ շարունակ իրականացվող միասնական գնային քաղաքականությունը:

2. Դիզվառելիքի գների մասով՝ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (ուժի մեջ է եղել **մինչև 01.01.2018 թ.**) **դիզելային վառելիքի ակցիզային հարկի դրույքաչափը 1 տոննայի համար սահմանված էր մաքսային արժեքի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 1 տոննայի համար 35 000 ՀՀ դրամ:**

01.01.2018 թվականից ուժի մեջ մտած հարկային նոր օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիզելային վառելիքի ակցիզային հարկի դրույքաչափը 1 տոննայի համար սահմանված է 13 000 ՀՀ դրամ, սակայն նույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ներմուծված և 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ առկա դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների մասով ներմուծման ժամանակ վճարված ակցիզային հարկը յուրաքանչյուր տոննայի հաշվով 22 000 ՀՀ դրամի չափով է:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը դիզելային վառելիքի ներմուծումը և օտարումը ազատված էին ԱԱՀ-ից: ՀՀ նոր հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածը կարգավորում է ԱԱՀ-ից ազատված գործարքները և գործառնությունները, ըստ որի՝ այս տարվա հունվարի 1-ից դիզելային վառելիքի ներմուծումը և օտարումը ԱԱՀ հարկման ենթակա են:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ դիզվառելիքի գների փոփոխության հարցում առաջնային խնդիրն այն է, որ անհրաժեշտ է հստակեցնել դիզելային վառելիքի մանրածախ գնի ձևավորման մեթոդաբանությունը՝ հաշվի առնելով ԱԱՀ հաշվանցման առկա հնարավորությունը: Ընդ որում՝ դիզելային վառելիքի մանրածախ գների հաշվարկման մեթոդաբանության մեջ ներառված չէ տնտեսվարողի կողմից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների (օրինակ՝ էլեկտրաէներգիայի, տրանսպորտային ծառայությունների, սարքավորումների և այլնի) գնի մեջ ներառված ԱԱՀ-ի հաշվանցման հնարավորությունը (համամասնությամբ): Եթե մինչև 2018 թվականի հունվարի 1-ը դիզելային վառելիք ներմուծողը և վաճառողը նվազեցնում էր շահույթից ԱԱՀ-ի գումարը, ապա ներկայումս կարող է հաշվանցել, ինչը թույլ կտա վերանայել իր վերադրի կամ շահույթի մեծությունը: Հակառակ դեպքում ստացվում է, որ ԱԱՀ-ի բարձրացման ողջ բեռը դրվում է դիզելային վառելիքի սպառողների վրա: Դիզելային վառելիք ներմուծման և օտարման դեպքում պետք է հաշվարկել ԱԱՀ հաշվանցման մեծությունը:

Ավելին, վառելիքային շուկայի դեպքում գրեթե բոլոր գնային ճնշումներն արտահայտվում են գների բարձրացմամբ, երբ այլ մրցակցային ապրանքային շուկաներում տեսանելի են ծախսերի նվազեցման կամ արդյունավետության աճին ուղղված հստակ մեխանիզմները: Այս շուկայում տարիներ շարունակ իրականացվող միասնական գնային քաղաքականությունը կարող է փաստել շուկայի բաժանման և հակամրցակցային համաձայնության մասին:

Կարելի է ասել, որ ՀՀ-ում բոլոր գործարարներն էլ ռիսկի են գնում և կրում են կամ տնտեսական վնասներ, կամ ստանում են օգուտներ, ինչը հնարավոր է չափել կամ հաշվարկել: Ամենակարևորն այն է, որ բենզինի գինը պետք է որոշի

շուկան, իսկ գները դառնան շուկայական: Իսկ որքան մեծաթիվ խաղացողներ հայտնվեն բենզինի շուկայում, մրցակցությունն այդքան կմեծանա, ու շուկան ավելի զգայուն կլինի միջազգային շուկայի նկատմամբ: Այսինքն՝ բենզինի շուկայում տատանողականությունը կավելանա, որովհետև, եթե շուկան բացարձակ մրցակցային է, միջազգային շուկայում ցանկացած փոփոխություն գների վրա է ազդում:

Ինչպես ներկայացված է ՀՀ կառավարության 2018 թ. ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի 1.6 կետում, որը վերաբերում է արհեստական տնտեսական մենաշնորհների բացառմանը, տնտեսական մրցակցության պաշտպանությանն ու տնտեսական որևէ գործունեությամբ զբաղվելու իրական հնարավորությանը, հարկ է արձանագրել, որ վերջինում ներառվել են նաև բենզինի և դիզելային շուկայի ներմուծման համակենտրոնացման և մենաշնորհային կարգավիճակ ունեցող դեպքերը: Հայաստանը բենզինը ձեռք է բերում հիմնականում ՌԴ-ից, Ռումինիայից, Բուլղարիայից, իսկ Վրաստանը՝ Ադրբեջանից և Թուրքմենստանից:

ՀՀ-ում բենզինի տեղափոխումն իրականացվում է Վրաստանի տարածքով՝ երկաթուղային տրանսպորտի միջոցով, ինչն էական ազդեցություն ունի գնագոյացման վրա:

Աղյուսակ 1

Նավթի և նավթամթերքի ներմուծումը (հազ. ԱՄՆ դոլար)

ԱՏԳ, ԱԱ-ի կոդը	Ապրանքի անվանումը	ՆԵՐՄՈՒԾՈՒՄ				
		Չափի միավոր	2017 թ.		2018 թ.	
			քանակ	միավորի արժեք	քանակ	միավորի արժեք
2710	Հում նավթ և նավթամթերք	տ	346,146.7	243,775.1	330,328.9	278,186.5

Վրաստանում ռեգուլյար տեսակի բենզինը վաճառվում է 2 լարիով, որը հայկական դրամի վերածելու դեպքում կկազմի 384 դրամ (1 լարին 192 դրամ է):

ՀՀ-ում ռեգուլյար տեսակի մոտ բենզինի մեկ լիտրը վաճառվում է 440-460 դրամով՝ մոտ 40-60 դրամով ավելի:

Վրաստանում բենզինի գնի թանկացումը պայմանավորված է լարիի արժեզրկմամբ:

Վրաստանում բենզինի գինը միշտ էլ ՀՀ ներքին շուկայի համեմատ էժան է եղել: Եթե այնտեղ բենզինի գնի բարձրացման մասով դժգոհություն է առաջանում, 2 հանգամանք կարող է դրա պատճառը լինել.

1. միջազգային շուկայում նավթի գների բարձրացումը,
2. լարիի արժեզրկումը:

Եթե մեկը փորձի բարձր գնով բենզին վաճառել, մյուսները չեն թողնի, որովհետև այնտեղ այլընտրանքի հնարավորություն կա, իսկ ՀՀ-ում բենզինի ոլորտը մոնոպոլացված է:


Վրաստանում բենզինի շուկան լրիվ ազատականացված է, մոնոպոլացված

չէ: Սեփական փորձից ելնելով՝ Վրաստան մտնելիս ճանապարհին կարող եք նկատել 4-5 ընկերության տարբեր բենզալցակայաններ, որոնցում բենզինի գները տարբեր են:

Այսինքն՝ Վրաստանում գինը ձևավորվում է մրցակցության արդյունքում:

ՀՀ-ում վերջինիս խոչընդոտման նախապայմաններից հիմնականն այն է, որ ՀՀ-ում միակ ներկրողը «Ռոսնեֆտ»-ն է, երկրորդ, երրորդ, չորրորդ կամ հինգերորդ չկա ու չի էլ լինելու: Բացի դրանից, մանրածախ շուկայում վերավաճառում են երկու-երեք կազմակերպություն, որոնք էլ որևէ հնարավորություն չունեն գների մեծ տարբերությունն դնելու:

Ըստ ԱՎԿ-ի՝ ՀՀ-ում 2017 թվականին ներմուծվել են 346,2 հազար տոննա նավթ և նավթամթերք՝ 243,8 մլն դոլար մաքսային արժեքով (տե՛ս աղյուսակ 1-ը): Արտաքին տնտեսական գործունեության 2710 կողով այս ապրանքախմբի մեջ մտնում են ոչ միայն բենզինն ու դիզվառելիքը, այլև մեքենաների յուղերն ու նմանատիպ այլ արտադրանք: Այսինքն՝ մաքսայինի տվյալների հիման վրա կարելի է ընդամենը մոտավոր պատկերացում կազմել բենզինի և դիզվառելիքի առանձին ծավալների մասին:



Գծապատկեր 2. ՀՀ-ում բենզինի և դիզվառելիքի սպառման ծավալները 2011-2017 թթ.¹

Գծապատկեր 2-ի համաձայն՝ ՀՀ-ում բենզինի սպառման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2011 թվականին՝ կազմելով 225,1 մլն լիտր, իսկ դիզվառելիքի համար՝ 2012 թվականին՝ 193 մլն լիտր: 2017 թվականին 2016 թվականի համեմատ դիզվառելիքի սպառումը գրեթե չի փոխվել, իսկ բենզինի սպառումն ավելացել է շուրջ 3 մլն լիտրով:

Հարց է առաջանում. ի՞նչ գումարներ են շրջանառվում բենզինի և դիզվառելիքի շուկայում: Սա նույնպես հնարավոր է հաշվել: Ըստ ՀՀ ԱՎԿ-ի՝ 2017 թվականի ընթացքում Հայաստանում բենզինի 1 լիտրի միջին մանրածախ գինը կազմել է 397 դրամ, դիզվառելիքինը՝ 366 դրամ: Ըստ այդմ՝ պարզ թվաբանական գործողությունների միջոցով կարելի է հաշվել, որ 2017 թվականին Հայաստանում սպառվել են 77.4 մլրդ դրամի բենզին և 56.3 մլրդ դրամի դիզվառելիքի վառելանյութ: Ընդամենը բենզինի և դիզվառելիքի վառելիքի շուկայի ծավալը կազմել է մոտ 133,7 մլրդ դրամ (տե՛ս աղյուսակ 2-ը):

¹ https://www.armstat.am/file/article/f_sec_4_2018_2.pdf

Վառելիքի շուկայի ծավալը 2011-2017 թթ.

Տարի	Դիզվառելիքի շուկայի ծավալը (մլն դրամ)	Բենզինի շուկայի ծավալը (մլն դրամ)
2011	74018.8	98368.7
2012	88780	90016
2013	85944.1	88195.7
2014	85840.2	83190
2015	67180.2	76976.6
2016	54524.8	73535
2017	56364	77415

Բենզինի շուկան բաժանված է 4 խաղացողների միջև՝ CPS օյլ քորփորեյշն, Ֆլեշ, Էյ բի էքսպորտ ՍՊԸ և Մաքս պետրոլ (անցած տարվա վերջից): Հարց է առաջանում. արդյո՞ք մեծ է շուկան այս 4 ընկերությունների համար, թե՞ ոչ (տե՛ս աղյուսակ 3-ը):

2014 թվականի սկզբից դուրս եկավ այս շուկայից խաղացողներից մեկը՝ Միկան: Սակայն 2016 թվականի վերջից շուկայում մնացած 2 հիմնական ընկերություններին՝ CPS-ին և Ֆլեշին, միացավ երրորդը՝ Մաքս պետրոլը (բենզինի գնի նվազումը պայմանավորվում էր հենց այս ընկերության մուտքով):

Ստացվում է, որ բենզինի և դիզվառելիքի շուկայի կրճատման ամենացավոտ շրջանում մասնակիցների թիվն ավելացավ՝ համապատասխանաբար նվազեցնելով մյուս երկուսի հասույթը: Դրա համար էլ շուկայի «հնարակներն» ուրախանալու առանձնապես մեծ պատճառներ չունեն:

2017 թվականին բենզինի շուկայում գերիշխող դիրք ունի Միփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ն, որը կազմում է այս շուկայի 52 %-ը, 2018 թվականին նրա դիրքերն ավելի են ընդլայնվել՝ կազմելով շուկայի 58 %-ը: Այս ընկերությունը 2017 թվականին ներմուծել է 74,3 հազ. տ բենզին, որի մաքսային արժեքը կազմել է 24,7 մլրդ դրամ, իսկ 2018 թվականին ներմուծել է 80,6 հազ. տ բենզին՝ 31,7 մլրդ դրամ մաքսային արժեքով, շուկային ավելացնելով իր մասնաբաժինը 6 տոկոսային կետով:

Բենզինի շուկայի 4 խաղացողները

Տեսակարար սուբյեկտ	Քաշ (կգ)	Ինվոյսային արժեք (ԱՄՆ դոլար)	Մաքսային արժեք (դրամ)	Տեսակարար կշիռ
2017 թ.				
Միփիէս օյլ քորփորեյշն՝ ՍՊԸ	74,336,058	51,183,557	24,704,296,674	52 %
Ֆլեշ ՍՊԸ	66,509,385	42,619,017	20,545,051,569	47 %
Էյ բի էքսպորտ ՍՊԸ	497,394	348,137	166,660,888	0 %
Մաքս պետրոլ ՓԲԸ	342,921	241,503	116,196,762	0 %
Ընդամենը՝ 2017 թ.	141,685,758	94,392,213	45,532,205,894	100 %

2018 թ.				
Միփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	80,662,982	64,947,959	31,368,782,463	58 %
Ֆլէշ ՍՊԸ	46,436,958	35,519,238	17,138,796,656	34 %
Ռոսնէֆտ էքսպորտ ՍՊԸ	10,409,168	8,561,541	4,153,746,780	8 %
Էյ բի էքսպորտ ՍՊԸ	745,606	547,878	277,147,320	1 %
Պլատինում օյլ ՍՊԸ	298,305	236,829	114,323,472	0 %
Ընդամենը՝ 2018 թ.	138,553,019	109,813,445	53,052,796,691	100 %

2017 թվականին Ֆլէշ ՍՊԸ-ն գրավել է բենզինի շուկայի 47 %-ը՝ ներմուծելով 66,5 հազ. տ բենզին՝ 20,5 մլրդ դրամ մաքսային արժեքով, իսկ 2018 թվականին, կորցնելով շուկայում իր նախկին դիրքերը շուրջ 13 տոկոսով, կրճատել է նաև բենզինի ներմուծման ծավալները 20,1 հազ. տ չափով, ինչպես նաև պակաս է վճարել մաքսային արժեքը 3,4 մլրդ դրամով: Դա պայմանավորված է եղել նրանով, որ 2018 թվականին հայկական բենզինի շուկայում հայտնվել են այլ խաղացողներ՝ Ռոսնէֆտ էքսպորտ ՍՊԸ-ն, Էյ բի էքսպորտ ՍՊԸ-ն, Պլատինում օյլ ՍՊԸ-ն, որոնք, այսպես ասած, «ջարդել են» մոնոպոլ դիրք գրավող Ֆլէշ ՍՊԸ-ի դիրքերը: Թվարկված ընկերություններից միայն 2-ն են շուկայում դիրք զբաղեցրել 8 և 1 տոկոսի չափով (տե՛ս աղյուսակ 3-ը):

Բենզինի շուկայի այլ մասնակիցներ՝ Էյ բի էքսպորտ ՍՊԸ-ն և Մաքս պետրոլ ՓԲԸ-ն 2017 թվականին բենզինի շուկայում դիրք չեն զբաղեցրել, ուստի վերլուծություն իրականացնելու տնտեսական իմաստը կորչում է:

Աղյուսակ 4-ի համաձայն՝ բենզինի շուկայի 2 խաղացողների՝ Միփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ի և Ֆլէշ ՍՊԸ-ի իրացման ծավալները 2017 թվականին կազմել են 100,036 հազ. լիտր և 93,299 հազ. լիտր, որոնք փաստացի վաճառվել են (ներառյալ՝ ԱԱՀ) 36,1 մլրդ դրամով և 33,7 մլրդ դրամով:

Աղյուսակ 4

Բենզինի իրացման ծավալները առավել խոշոր 2 ընկերություններում

2017 թվական	Տնտեսվարող սուբյեկտ	Բնեղեն (հազ. լիտր)	Արժեքային, վաճառքի փաստացի գնով (ներառյալ ԱԱՀ հազ. դրամ)
		Միփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	100,036
	Ֆլէշ ՍՊԸ	93,299	33,735,702

Բենզինի ներկրմամբ և մեծածախ վաճառքով այսօր զբաղվում են 3 ընկերություններ՝ CPS-ը, Ֆլէշը և Մաքս պետրոլը, որն իր գործունեությունը սկսել է 2016 թվականի 4-րդ եռամսյակից:

2018 թվականին ևս բենզինի շուկայում գործել են գերիշխող դիրք ունեցող Միփիէս օյլ քորփորեյշն և Ֆլէշ ընկերությունները, որոնց մասնաբաժինը ներմուծման կառուցվածքում կազմել է համապատասխանաբար 58 և 34 տոկոս:

Դիզվառելիքի շուկայում պատկերը հետևյալն է.

2017 թվականին այս շուկայի 50 %-ը պատկանում է Ֆլէշ ՍՊԸ-ին, որը ներմուծել է 71,1 հազ. տ բենզին՝ 22,1 մլրդ դրամ մաքսային արժեքով:

Դիզելային վառելանյութի ներմուծման ծավալները

Տեսակարար սուբյեկտ	Քաշ (կգ)	Ինվոյսային արժեք (դոլար)	Մաքսային արժեք (դրամ)	Տեսակարար կշիռ
2017 թ.				
Ֆլեշ ՍՊԸ	71,096,793	45,737,571	22,051,548,721	50 %
Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	59,455,861	40,386,059	19,471,443,214	42 %
Էյ քի էքսպորտ ՍՊԸ	6,988,311	4,364,649	2,099,703,764	5 %
Մաքս պետրոլ ՓԲԸ	4,702,891	2,953,395	1,427,180,821	3 %
Ռուսալ Արմենալ ՓԲԸ	443,500	7,383	3,596,785	0.3 %
ԶԱՐԶԱՆԴ ՍԱՐՈՅԱՆ ՍՊԸ	313,320	205,632	98,989,302	0.2 %
Ընդամենը՝ 2017 թ.	143,000,676	93,654,688	45,152,462,607	100 %
2018 թ.				
Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	70,241,551	59,017,535	28,483,149,293	59 %
Ֆլեշ ՍՊԸ	44,608,111	35,691,170	17,243,559,989	37 %
Էյ քի էքսպորտ ՍՊԸ	3,742,269	2,632,448	1,278,954,646	3 %
Պլատինում օյլ ՍՊԸ	605,016	488,576	236,046,109	1 %
ԶԱՐԶԱՆԴ ՍԱՐՈՅԱՆ ՍՊԸ	549,234	380,986	185,050,366	0 %
Ընդամենը՝ 2018 թ.	119,746,181	98,210,715	47,426,760,403	100 %

Դիզվառելիքի շուկայի 42 տոկոսը պատկանում է Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ին, որը ներմուծել է 59,5 հազ. տ բենզին՝ 19,5 մլրդ դրամ մաքսային արժեքով: Վառելիքի շուկայի 0,2-5 տոկոսը պատկանում է այլ մասնակիցների՝ Էյ քի էքսպորտ ՍՊԸ-ին, Մաքս պետրոլ ՓԲԸ-ին, Ռուսալ Արմենալ ՓԲԸ-ին, Զարգանդ Սարոյան ՍՊԸ-ին:

2018 թ. տեղի է ունենում հիմնական խաղացողների փոփոխություն, և Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ն գրավում է այս շուկայի 59 տոկոսը, Ֆլեշ ՍՊԸ-ն՝ 37 տոկոսը, և դիզվառելիքի ներմուծման մաքսային արժեքները կազմում են համապատասխանաբար՝ 28,5 մլրդ դրամ և 17,2 մլրդ դրամ: Իսկ այլ մասնակիցների բաժինները շուկայում նվազում են և կազմում են 0-3 տոկոս (տե՛ս աղյուսակ 5-ը):

Նույնը վերաբերում է նաև դիզվառելիքի իրացման ծավալներին (տե՛ս աղյուսակ 6-ը): 2017 թվականին այս շուկայի «թելադրողներն» են Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ-ն և Ֆլեշ ՍՊԸ-ն, որոնց շրջանառությունը կազմել է 68,565 հազար լիտր դիզվառելիքի դեպքում 22,9 մլրդ դրամ փաստացի գնով (ներառյալ՝ ԱԱՀ-ը) և 85,909 հազար լիտր դիզվառելիքի դեպքում 28,2 մլրդ դրամ փաստացի գնով (ներառյալ ԱԱՀ-ը):

**Դիզելային վառելանյութի իրացման ծավալները
առավել խոշոր 2 ընկերություններում**

2017 թ.	<i>Տնտեսվարող սուբյեկտ</i>	<i>Բնեղեն</i> (հազ. լիտր)	<i>Արժեքային, վաճառքի փաստացի գնով</i> (ներառյալ ԱԱՀ հազ. դրամ)
	Սիփիէս օյլ քորփորեյշն ՍՊԸ	68,565	22,941,581
	Ֆլեշ ՍՊԸ	85,909	28,206,358

Վերոնշյալները հիմք ընդունելով՝ բիզնես-իշխանություն սերտաճումը և մե-նաշնորհների գերակայությունը վերացնելու, բենզինի և դիզվառելիքի ոլորտի ազատականացման քաղաքականություն իրականացնելու նպատակներով կա-տարվել են գործնական բնույթի առաջարկություններ.

1. սոցիալական և ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների մեծա-ծախ վաճառքն առավել արդյունավետ և վերահսկելի է, երբ այն իրակա-նացվում է էլեկտրոնային հարթակների (բորսաների) միջոցով, ինչը նպաս-տում է շուկա մուտք գործող նոր տնտեսվարողների վերաբերյալ տեղե-կատվության հասանելիությանը, խտրական գների բացառմանը, մեծածախ շուկայում ստվերի կրճատմանը, առողջ մրցակցությանը և այլն:
2. Այս կամ այն շուկայում որևէ տնտեսվարողի մրցակցության վրա ազդեցու-թյունը գնահատելիս անհրաժեշտ է տիրապետել շուկայի իրական շրջա-նառության ծավալներին, հետևաբար առաջարկվում է առավել խստացնել բենզալցակայաններում ՀԴՄ կանոնների շահագործմանն ուղղված հարկա-յին վարչարարությունը:
3. Բենզինի և դիզելային վառելիքի դեպքում պետք է սահմանափակվի (չար-գելվի) ներկրող տնտեսվարողների (նաև փոխկապակցված անձանց) գործու-նեությունը մանրածախ շուկայում, ինչը կնպաստի փոքր և միջին ձեռնար-կատիրության զարգացմանը և եկամուտների վերաբաշխմանը:
4. Ելնելով ՀՀ շուկայի փոքրությունից՝ չպետք է բացառել գերիշխող դիրք ունե-ցող տնտեսվարողների գործունեությունը: Այդ ընկերությունները, դառնալով բաժնետիրական, բաժնետոմսերի որոշ մասը ազատ վաճառքի հանելով, կնպաստեն հանրային վերահսկողության և եկամուտների վերաբաշխման հաստատմանը: Օրինակ՝ պետական կառավարման մարմինները, մասնա-վորապես՝ Երևանի քաղաքապետարանը ևս կարող է հանդիսանալ բենզա-լցակայանների բաժնետոմսերի որոշ մասի սեփականատեր, ինչը կապա-հովի լրացուցիչ եկամուտներ, և արդյունքում պետական բյուջեից տրվող Երևանի հատկացումների մի մասը կվերաբաշխի հոգուտ մարզերի՝ ապա-հովելով տարածքային համաչափ զարգացում:

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (2019 Թ.)

Սվետլանա Դալլաքյան

տնտեսագիտության թեկնածու

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսության անկայունությունն ու մրցունակության անկումը վկայում են տնտեսական առաջընթացի նախկին մոդելը նորով փոխարինելու անհրաժեշտության մասին: Ապրում ենք աննախադեպ տեխնոլոգիական նորարարությունների դարաշրջանում, ինչը ազդարարում է «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության» սկիզբ: ՀՀ կառավարությունը, կարևորելով բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակությունն ապահովելու հիմնական գործոն, հատուկ շեշտադրում է Հայաստանում այդ ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը և նրա բերած հնարավորությունների օգտագործումը ՀՀ տնտեսության հեռանկարային զարգացման մեջ: Ուստի անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացումը խթանող էկոհամակարգի ստեղծման, ներառյալ սկսնակ ընկերությունների հարկային արտոնությունների շարունակականության ապահովման, պետական աջակցության նոր օրենսդրական նախաձեռնությունների ընդլայնման, ռազմաարդյունաբերական տնտեսության առաջնահերթությունների ուղենշման, սկսնակ ընկերությունների կողմից նորարար գաղափարների իրականացումը խթանելու նպատակով ֆինանսական միջոցների հասանելիության ապահովման, նորագույն տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը խրախուսող վենչուրային ֆոնդերի, աքսելերատորների հիմնման խթանման հարցերին:

Բարձր տեխնոլոգիաների և SS ոլորտը վերջին տարիներին զգալի առաջընթաց է ապրում Հայաստանում՝ արձանագրելով տարեկան միջինում 22-25 % աճ¹: Մեծանում և ընդլայնվում է արտահանման և ներդրումների ծավալների աշխարհագրությունը, արտահանումը կազմում է ոլորտի գրեթե 60 %-ը: Ակտիվ գործող կազմակերպությունների թիվը հասել է գրեթե 800-ի՝ ապահովելով աննախադեպ 23 % աճ 2017 թ. համեմատ: Տեղական ընկերությունների մասնաբաժինը նշված 800 ընկերությունների մեջ կազմում է 52.5 %: 2008-2018 թթ. միջին հաշվով տարեկան հիմնվել է մոտ 53.8 ՏՀՏ ձեռնարկություն²: Անհրաժեշտ է նշել,

¹ Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտության հաշվետվություն – 2018, էջ 15:

² Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտության հաշվետվություն – 2018, էջ 16:

որ 2018թ. ակտիվ գործող ընկերությունների քանակն ավելացել է շուրջ 150-ով, իսկ աշխատուժը տարեկան առնվազն 10 % աճ է արձանագրում¹: Այսօր այդ ոլորտում ներգրավված է շուրջ 15239 մասնագետ: Այսպիսի մեծ թվով ընկերությունների ստեղծումը պայմանավորված է SՏՏ ոլորտի պետական աջակցությանն ուղղված օրենսդրական փաթեթի կիրարկմամբ, որով հարկային արտոնություններ են սահմանվում նորաստեղծ ընկերությունների համար, ինչպես նաև բազմակողմ ենթակառուցվածքային, ֆինանսական և այլ ուղղություններով ցուցաբերված աջակցության շնորհիվ: Սակայն այդ արտոնությունները չեն կիրառվում բարձր տեխնոլոգիական տնտեսության այլ ոլորտներում: SՏՏ ոլորտը Հայաստանի տնտեսության մեջ ամենաբարձր հավելյալ արժեք ձևավորող ոլորտն է՝ տեղ զբաղեցնելով երկրի տնտեսության զարգացման գերակայությունների առաջին շարքում:

Աշխարհում գոյություն ունեն բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության գործունեության արդյունավետության գնահատման տարատեսակ մոտեցումներ, որոնց հիմնական տարբերությունը գնահատվող չափանիշի ընտրությունն է: Մի շարք տնտեսագետների կողմից առաջարկվում է որպես ինովացիոն գործունեության ինտենսիվությունն արտահայտող ցուցանիշ դիտարկել երկրի ներսում գրանցված պատենտների քանակը^{2,3}: Այսպես, գծապատկեր 1-ում ներկայացված է 2017 թ. ընթացքում գրանցված պատենտների և օգտակար մոդելների, առևտրային նշանների և արտադրանմուշների բաշխվածությունը: Անհրաժեշտ է նշել, որ 2017 թ. երեք դեպքերում էլ առաջատար դիրք ունի Չինաստանը, որն արձանագրել է ռեկորդային ցուցանիշ՝ 1.38 մլն պատենտավորման դիմումներ, ինչը ավելի քան երկու անգամ գերազանցում է ԱՄՆ-ի դիմումներին (606 956) (տե՛ս գծապատկեր 1)⁴: Ինչպես նկատում ենք, առևտրային նշանների գրանցման դիմումների մասով բավականին նշանակալից տեղ ունեն Հայաստանի հարևաններ Իրանի Իսլամական Հանրապետությունը (358 353) և Թուրքիան (247 474)⁵:

¹ Նույն տեղում, էջ 37:


² Furman J. L., Porter M. E., Stern S.: “Does the Entrepreneurial Activity Enhance the National Innovative Capacity?” - Research Policy 31 (2002), pp. 899–933.

³ Furman J. L., Hayes R.: “Catching up or standing still? National innovative productivity among ‘follower’ countries, 1978–1999” - Research Policy 33 (2004), pp. 1329–1354.


⁴ World Intellectual Property Organization (WIPO) - “WIPO Facts and Figures” Economics & Statistics Series 2018, p. 12.

⁵ Նույն տեղում, էջ 22:


Պատենտներ



Արտադրանուշներ



Առևտրային նշաններ




Գծապատկեր 1. Պատենտների, առևտրային նշանների և արտադրանուշների բաշխվածությունը 2017 թ., %¹

Տարածաշրջանում առկա ինովացիոն համակարգի առանձնահատկությունները առավել պատկերավոր է արտահայտում Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Թուրքիայում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից գրանցված պատենտների քանակը 2016 թ. (տե՛ս գծապատկեր 2):

Տարածաշրջանի երկրների տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը գրանցված պատենտների թվով զիջում է Ադրբեջանին, ընդ որում՝ դրանց մեծամասնությունը պատկանում է ոչ ռեզիդենտներին, ինչը ցույց է տալիս ինովացիոն ոլորտում ֆինանսների շարժունության մակարդակի մասին: Այս իմաստով առաջատարը Թուրքիան է՝ 6230 գրանցված պատենտ 2016 թ. ընթացքում, հանգամանք, որը հնարավորություն է ստեղծում Թուրքիային դառնալ բարձր տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոն:

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով World Intellectual Property Organization (WIPO) - “WIPO Facts and Figures” Economics & Statistics Series 2018, pp 12,22,29.



Գծապատկեր 2. Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից գրանցված պատեւանների քանակը 2016 թ.¹

Աղյուսակ 1

Բարձր տեխնոլոգիաների արտահանումը բնութագրող ցուցանիշներ, 2012–2017 թթ., %

	<i>Բարձր տեխնոլոգիաների արտահանում</i> (ԱՄՆ դոլար)	<i>Բարձր տեխնոլոգիաների արտահանման տեսակարար կշիռը արդյունաբերական ապրանքների արտահանման մեջ, %</i>		
		Միջին տարեկան աճի տեմպը	մասնաբաժինը	փոփոխությունը
2012	7,045,295	2.65	2.6	1.96
2013	8,886,596	2.88	2.9	8.82
2014	8,317,916	2.70	2.7	-6.34
2015	11,067,794	5.27	5.3	95.32
2016	21,142,634	5.94	5.9	16.60
2017	25,601,284	-	6.8	15.27

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալներ: <https://tcdata360.worldbank.org>

Երկրի առևտրային արդյունքի գնահատման, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշներից մեկը ընդհանուր ապրանքների արտահանման մեջ բարձր տեխնոլոգիաների արտահանման մասնաբաժինն է (տե՛ս աղյուսակ 1):

Ակներև է, որ բարձր տեխնոլոգիաների արտահանման մասնաբաժինը արդյունաբերական ապրանքների արտահանման մեջ 2017 թ. համար կազմում է 6.8 %, փոփոխությունը նախորդ տարվա համեմատ՝ 15.27 %, իսկ միջին աճի տեմպը 2016 թ. համար՝ 5.94 %: Այս ցուցանիշով տարածաշրջանում առաջատար դիրք է գրավում Թուրքիան՝ 3.571.518.721 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով (ընդհանուր ապրանքային արտահանման 2,5 %), սակայն և՛ Վրաստանը (22,147,916 ԱՄՆ դոլար, ընդհանուր ապրանքային արտահանման 2.9 %), և՛ Ադրբեջանը (9,003,491 ԱՄՆ դոլար, ընդհանուր ապրանքային արտահանման 2 %) ծավալով հետ են ընկնում

¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով data.worldbank.com էլ. կայքում առկա տվյալները

Հայաստանից: Հարկ ենք համարում նշել, որ ընդհանուր արտահանման մեջ, մասնաբաժնի առումով, ՀՀ-ն գերազանցում է տարածաշրջանի բոլոր, այդ թվում՝ նաև ԵԱՏՄ երկրներին (Բելառուս՝ 3.8 %, Ղազախստան՝ 2.9 %, Ղրղզստան՝ 5.6 %), բացառությամբ ՌԴ-ի (11.5 %)¹: Այսպիսով, բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված թռիչքային աճ ապահովելու հնարավորությունները շարունակում են լինել գրավիչ, սակայն դրան տանող քաղաքականությունները դեռևս ակնհայտ բանաձևեր չունեն:

Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսությունը հաճախ բնութագրվում է նաև մի շարք համաշխարհային համաթվերով՝ համաշխարհային նորարարական համաթիվ՝ ՀՆՀ (GII) և համաշխարհային մրցունակության համաթիվ՝ ՀՄՀ (GCI): Տնտեսագիտության էվոյուցիոն մոտեցումը կարևորում է տնտեսական համակարգի շարունակական զարգացման դերը տնտեսական սուբյեկտների հարմարեցման մշտական դինամիկ գործընթացում: Տնտեսական և տեխնոլոգիական էկոհամակարգերը երբեք հավասարակշռված վիճակում չեն լինում, ընդհակառակը, մշտապես գտնվում են ակտիվ «ստեղծագործական ավերվածությունների» վիճակում, որի միջոցով էլ ստեղծվում է տնտեսական արժեքը: Շուկաներն արդյունավետ չեն հավասարակշռության պայմաններում ռեսուրսների հավասար բաշխման մեջ, սակայն արդյունավետ են անհավասարակշռության պայմաններում նորարարության մեջ²: Նորարարությունը գոյատևման նախապայման է և հետևաբար՝ առանցքային գործոն աճի համար: Նորամուծական կարողության մեծությունը պարամետր է, որ թույլ է տալիս տարածաշրջանը գնահատել իր նորարարական գործունեության հնարավորությունների մեջ և որոշել նորարարական զարգացման ռազմավարությունը: Այս մոտեցմամբ որոշ հեղինակներ³ առաջարկում են բացահայտել այսպես կոչված «թաքնված ռեսուրսները կամ հնարավորությունները», որը թեև հիմնավորված է, սակայն չի բացահայտում ընթացիկ իրավիճակը: Անհրաժեշտ է փաստել, որ ամերիկյան հետազոտողները նորարարության աղբյուրներ են համարել կազմակերպությունների ստեղծարարությունը, գիտահետազոտական և մշակման աշխատանքները, առևտրայնացման հանգեցնող ինովացման «շարժիչները» (համալսարաններ, լաբորատորիաներ, ինկուբատորներ և այլն) և տեխնոլոգիական կլաստերները, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների ու դրանցից բխող գիտելիքների տարածումը (այսպես կոչված «տեխնոլոգիայի արտանետումը՝ technology spillover»)։⁴ Նորարարությունը ստեղծվում է այնպիսի ռազմավարությունների և կազմակերպչական ունակությունների որոնման գործընթացում, որոնք ապահովում են առավելագույն հարմարեցում շուկայական պայմաններին՝ նպաստելով գոյատևմանն ու հարատևմանը: Նորարարությունը համալիր խնդիրների համար

¹ Համաշխարհային բանկի տվյալներ: <https://tcdata360.worldbank.org>

² Beinhocker, E., 2006, “The Origin of Wealth”, Harvard Business Review Press.

³ Чекулина Т. А., Тамахина Е. А., Инновационный потенциал региона : содержательные особенности и теоретические аспекты исследования. Вестник ТГУ, 2011, № 2 (94), с. 65-70.

⁴ A. Datta, R. Reed and L. Jessup, Commercialization of innovations: an overarching framework and research agenda, American Journal of Business, 2013, vol. 28, No. 2, pp. 147-191.

լուծումներ որոնելու մշտական գործընթաց է, որը հիմնված է շարունակական ուսուցման և գիտելիքներ կուտակելու վրա: Հենց այս տրամաբանությամբ է կառուցված ՀՆՀ-ն, որը որպես ծախսերի և արդյունքի հարաբերակցություն հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել այս կամ այն երկրում ինովացիայի զարգացմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հայաստանի համաշխարհային նորարարական համաթիվը իր երկու ենթահամաթիվերով և ցուցանիշներով 2017-2018 թթ. կտրվածքով ¹

<i>Ցուցանիշի անվանումը</i>	2017		2018	
	Միավորը (0-100)	Դիրքը	Միավորը (0-100)	Դիրքը
<i>Ենթահամաթիվ 1. Ինովացիոն հետազոտության համար անհրաժեշտ ռեսուրսները և պայմանները (Innovation Input).</i>	39.70	82	24.7	94
• Բնստիտուտներ	61.9	63	60.8	67
• Մարդկային կապիտալ և հետազոտություններ	19.4	103	15.2	110
• Ենթակառուցվածքներ	39.0	91	36.5	93
• Շուկայի զարգացում	50.5	46	43.5	81
• Բիզնեսի զարգացում	27.7	85	26.1	88
<i>Ենթահամաթիվ 2. Ինովացիաների իրականացումը և ձեռքբերված գործնական արդյունքը (Innovation Output)</i>	31.6	47	34.1	50
• Գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունք	25.7	50	23.2	62
• Ստեղծագործական գործունեության արդյունք	37.5	44	35.0	48

Ինչպես նկատում ենք, ՀՆՀ-ի ցուցանիշներում ՀՀ 2018 թվականին առկա է դիրքերի վատթարացում՝ իջնելով ինը հորիզոնականով՝ 59-րդից 68-րդը, իսկ ՀՆՀ-ի միավորը՝ համապատասխանաբար 35.65-ից 32.81 միավոր: Վերջինս պայմանավորված է այն ձևավորող երկու ենթահամաթիվերում ներառված ցուցանիշների անկմամբ: Բավականին ցածր միավոր ունեն երկրորդ ենթահամաթիվի (*Innovation Output*) *բաղադրիչները*՝ գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունքը (23.2) և ստեղծագործական գործունեության արդյունքը (35.0):

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև համաշխարհային մրցունակության համաթիվին (ՀՆՀ), որը ներառում է 12 հենասյուներ կամ ենթահիմքեր, որոնք ազդեցություն են մեկ՝ ազգային տնտեսության մրցունակությունը բնութագրող համաթիվի մեջ, որով էլ պայմանավորվում է երկրների դասակարգումը: Ամենավերջին հենասյունը իրենից ներկայացնում է նորարարությունը (Innovation), որին առավել մանրամասն անդրադարձել ենք աղյուսակ 3-ում:

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով՝ Global innovation index 2018, Energizing the World with Innovation, 11th edition, p. 221, Global innovation index 2017, Energizing the World with Innovation, 10th edition, p. 188.

Նորարարության համաթիվը և դրա բաղադրիչ ցուցանիշների շարժմանը 2010–2018 թթ.¹

h/ h	2012–2013		2013–2014		2014–2015		2015–2016		2016–2017		2017–2018	
	Տեղը 144 երկրների շարքում	Ցուցանիշը (1-7)	Տեղը 148 երկրների շարքում	Ցուցանիշը	Տեղը 144 երկրների շարքում	Ցուցանիշը	Տեղը 140 երկրների շարքում	Ցուցանիշը	Տեղը 139 երկրների շարքում	Ցուցանիշը	Տեղը 137 երկրների շարքում	Ցուցանիշը
Գլոբալ մրցունակության համաթիվ	82	4.02	79	4.10	85	4.01	82	4.01	79	4.07	73	4.2
Նորարարություններ	105	2.89	103	2.99	104	2.95	107	3.02	87	3.2	70	3.3
1. Նորարարությունների կարողություն	62	3.2	77	3.4	98	3.5	87	3.8	63	4.2	59	4.2
2. Գիտահետազոտական կազմակերպությունների որակ	111	3.0	106	3.1	105	3.1	105	3.2	100	3.4	88	3.5
3. Կազմակերպությունների ԳՀՓԿԱ (R&D) հատկացումներ	111	2.7	109	2.8	102	2.8	109	2.8	92	3.0	71	3.2
4. Արդյունաբերության ու բուհերի համագործակցությունը ԳՀՓԿԱ շրջանակներում	122	2.9	107	3.2	112	3.1	111	3.1	92	3.2	88	3.2
5. Առաջավոր տեխնոլոգիաների արդյունքների պետական գնումներ	108	3.1	111	3.0	121	2.9	109	2.8	93	2.9	80	3.2
6. Գիտնականների ու ինժեներների առկայություն (հասանելիություն)	73	4.0	74	4.0	75	4.0	59	4.1	52	4.2	48	4.3
7. Մտավոր սեփականության առևտրայնացման արտոնագրեր (դիմումներ 1 մլն բնակչի հաշվով)	61	1.4	58	1.7	53	3.2	49	3.7	57	2.8	57	2.6

64

¹ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Global competitiveness report-ի համապատասխան տարիների հրապարակումներից՝ 2012-2013, էջ 92-93, 2013-2014, էջ 108-109, 2014-2015, էջ 112-113, 2015-2016, էջ 98-99, 2016-2017, էջ 100-101, 2017-2018, էջ 48-49:

2018 թ. մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ) Հայաստանը 140 երկրների մեջ գրավում է 70-րդ տեղը¹, բարելավելով իր դիրքը նախորդ տարվա համեմատ. 2017 թ. զբաղեցնում էր 72-րդ տեղը 137-րդ երկրների շարքում²:

Հայաստանը բավարար ներդրումներ չի ուղղորդել նորարարական և տեխնոլոգիական էկոհամակարգերի ստեղծմանը: Համակարգի գործառնական արդյունավետությունը, որը չափվում է կատարողական ցուցանիշի և ներդրված ռեսուրսների (ներառյալ մարդկային, ֆինանսական և ենթակառուցվածքային) հարաբերակցությամբ, բավականին բարձր է, սակայն չի կարող կայուն համարվել երկարաժամկետ կտրվածքով: Ռազմավարական արդյունավետությունը պետք է կարևորություն ունենա գործառնական արդյունավետության նկատմամբ: Վերջինս պահանջում է ավելի խոշոր ներդրումներ նոր զարգացող տեխնոլոգիական ուղղություններում:

Հիմք ընդունելով աղյուսակ 2-ում և 3-ում ներկայացված տվյալները՝ կարող ենք փաստել, որ Հայաստանում առկա է նորարարությունների կարողությունը (capacity for innovation) հավաստող բավականին հուսադրող ցուցանիշ՝ 4.2 (աղյուսակ 3, 1-ին ցուցանիշ): Հուսադրող է նաև գիտնականների ու ինժեներների առկայությունը՝ 4.2 (աղյուսակ 3, 6-րդ ցուցանիշ): Սակայն հակառակ դրանց՝ 7-րդ ցուցանիշը, որը վերաբերում է մտավոր սեփականության առևտրայնացմանը, 2.6 է: Սա հաստատում է նաև գծապատկեր 2-ում ներկայացված տարածաշրջանի երկրների ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից գրանցված պատենտների քանակը 2016 թ., որտեղ ՀՀ-ն ամենացածր տեղն էր զբաղեցրել՝ 126 դիմում: Շարադրվածից հետևում է, որ բացակայում է գիտություն-տնտեսություն կապը, ինչի հետևանքով էլ զենեացված նորարարական, գիտական, ինժեներական կարողությունները արդյունավետ կերպով չեն առևտրայնացվում և մտնում տնտեսություն: Ստահոգիչ են նաև 3-րդ, 4-րդ և 5-րդ ցուցանիշները, որոնց շնորհիվ ապահովվում է կրթություն-գիտություն-տնտեսություն կապը: Այսպիսով, Հայաստանը, թեև ունակ է որոշ ոլորտներում տալու համաշխարհային մակարդակով մրցունակ հետազոտական արդյունք, այնուհանդերձ հետ է մնում հետազոտական գիտելիքները առևտրային հնարավորությունների վերածելու առումով:

Նորարարության միջոցով երկրի տնտեսական զարգացմանը նպաստ բերելու ամենաանմիջական եղանակներն են հետազոտական ու նորարարական արդյունքների ներդրումը, առևտրայնացումը և տեխնոլոգիաների փոխանցումը տնտեսվարողներին: Ուսումնասիրությունները վկայում են, որ, օրինակ, այսպես կոչված գիտելիքի փոխանցման գործընկերությունները (Knowledge transfer partnerships, KPI) Անգլիայում կայուն հնարավորություններ են ստեղծում բիզնեսի նորարարության համար, ինչի շնորհիվ բարձրանում են երկրի ինովացիոն կարողությունները³:

¹ The Global Competitiveness Report 2018, p. 73-74.

² The Global Competitiveness Report 2017-2018, p. 48-49.

³ P. Ternouth, C. Garner, L. Wood and P. Forbes, Key Attributes for Successful Knowledge Transfer Partnerships, Commissioned by the Technology Strategy Board and the Research Councils, from

Կատարված վերլուծության հիման վրա բացահայտել ենք մի շարք խոչընդոտներ, որոնք համարվում են ՀՀ բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության զարգացման առկա *հիմնախնդիրներ*՝

- գիտահետազոտական աշխատանքի ցածր առևտրայնացում՝ չնայած առանձին ոլորտներում մրցունակ գիտահետազոտական աշխատանքների առկայությանը,
- կրթություն–գիտություն–տնտեսություն փոխկապակցված շղթայի բացակայություն (հատկապես գիտելիքի փոխանցման և առևտրայնացման տեսանկյունից),
- բարձր տեխնոլոգիաների և S2S ոլորտում աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև անհամապատասխանության առկայություն,
- արտապատվիրման մոդելից սեփական արտադրության և ձեռներեցության զարգացման մոդելի անցման մեխանիզմների և գործիքակազմի բացակայություն. այս խոչընդոտի հաղթահարումը պահանջում է գիտելիքի ավելի բարձր մակարդակ, առևտրային գործունեության և ձեռներեցության նոր մասնագիտական ունակություններ, ինչպես նաև բիզնես վարելու համար անհրաժեշտ գիտելիքներ,
- ինովացիոն հետազոտությունների ծավալների ընդլայնման, դրանց որակի ապահովման ու համապատասխան կարողությունների կատարելագործման հիմնախնդրի առկայություն,
- ինովացիոն արդյունքի նկատմամբ պահանջարկի խթանման, ինչպես նաև հարկային քաղաքականության ճկուն մեխանիզմների բացակայություն,
- գիտության և տեխնոլոգիայի, գիտահետազոտական զարգացման աշխատանքների ֆինանսավորման ցածր մակարդակ,
- գիտելիքի կուտակման և տնտեսության մեջ դրա կիրառման շրջանակների շարունակական ընդլայնման պետական միջամտության և աջակցության բացակայություն:

Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության վերափոխման ցանկացած օրակարգ պիտի լուծի վերոնշյալ խնդիրները՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի դժվարության աստիճանը, գործոնների խմբերի միջև հարաբերությունների բարդ կառուցվածքը և առկա սահմանափակ միջոցները: Գծային մտածողությունը ենթադրում է յուրաքանչյուր խնդրի անմիջական լուծում, սակայն անհրաժեշտ է կիրառել նորարարական ու արդյունավետ այնպիսի հեղափոխական մոտեցում, որը ենթադրում է անցում գծային երկկողմ հարաբերություններից բազմակողմ՝ ցանցային փոխհարաբերություններին, որը կարող է գործածել փոփոխությունների արագացումը խթանող լծակներ: Այս ամենը պահանջում է ձևավորել բարձր տեխնոլոգիական և նորարարական տնտեսության ելությունը արտացոլող ոչ գծային մոտեցումներ:

Բարձր տեխնոլոգիաները, մասնավորապես՝ բեկումնային տեխնոլոգիաները (բլոկ շղթա, արհեստական բանականություն, ռոբոտաշինություն), կարող են

զգալի ազդեցություն ունենալ Հայաստանի տնտեսության վրա և հիմնականում կախված են տեղական տնտեսության կլանման ունակությունից: Այդ ազդեցության բնույթը մեծապես պայմանավորված է նաև հիմնական տնտեսական շահառուների, այդ թվում՝ ձեռնարկատերերի և կառավարության նախաձեռնություններից: Բացվում են նոր հնարավորություններ հայաստանյան ձեռներեցության միջազգայնացման, ինչպես նաև հանրապետությունը համաշխարհային շուկաների համար լուծումներ առաջարկող հարթակ դարձնելու ուղղությամբ: Բարձր տեխնոլոգիաները՝ թե՛ մեքենայական ուսուցումը և թե՛ իրերի համացանցը, կարող են տարբեր ոլորտներում ավելացնել տեղական ձեռնարկատիրական գործունեության արտադրողականությունը, ինչպես նաև բոլորովին նոր արժեքի ստեղծման աղբյուր դառնալ սպառողների համար (տե՛ս գծապատկեր 3):

Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսություն ունենալու համար առաջակում ենք ոչ գծային փոփոխություններ իրականացնել միաժամանակ մի շարք ոլորտներում և այդ գործընթացի կազմակերպումն էլ ապահովել համակարգային ուղենիշերով:

1. Ազգային ինովացիոն էկոհամակարգի առաջնություն

Հետհեղափոխական ժամանակաշրջանում Ազգային ինովացիոն էկոհամակարգի ձևավորումը և առաջնությունը ունի հստակ ուղենիշեր՝ ավելացնել ՀՆԱ-ն, հասնել գիտատար արտադրանքի, ստեղծագործական ապրանքների և ծառայությունների ծավալների ավելացմանը, ինչը կարող է հանգեցնել նաև ամբողջ համաշխարհային տնտեսության մասշտաբով Հայաստանի մրցունակության դիրքի բարձրացմանը: Վերջինս ապահովելու համար առաջարկում ենք ազգային ինովացիոն էկոհամակարգի հիմքում դնել «ինովացիոն վերելակների» մոտեցումը՝ ելակետ ունենալով Համաշխարհային նորարարական համաթվի երկու կշռադատված ենթահամաթվերի (*Innovation Input, Innovation Output*) տարրերը (տե՛ս աղյուսակ 2)¹:

Գնահատման մոտեցումն ունի հետևյալ կառուցվածքը՝ նորարարությունները *խթանող գործոններ* → *ռեսուրսներ* → *կատարողական արդյունք*, որը ներկայացրել ենք հիերարխիկ բուրգի տեսքով (տե՛ս գծապատկեր 4): Հստակ մշակված խթանող գործոնների ներազդմամբ ինովացիոն գործունեության արդյունքը կհայտնվի «վերելակի առաջին հարկում», ինչը հավաստում է հստակ բարձրանալու մեխանիզմներ, այնուհետև խթանող գործոններին միանում են ռեսուրսներ (մարդկային, ֆինանսական, ենթակառուցվածքային), որոնց շնորհիվ ինովացիոն արդյունքը կհայտնվի «վերելակի երկրորդ հարկում», որը գիտական արդյունքի առևտրայնացման միջոցով կապահովի ավելի մեծ վերելքների հասնելու հնարավորություն:

¹ Տե՛ս՝ Դալլաքյան Ս. Ա., «Նորամուծական տնտեսության զարգացումը կլաստերացման համատեքստում», «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտ. հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, էջ 140:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՈԼ ՈՐՏ/ ՕԳՏՎՈՂՆԵՐ

ԲԼՈԿ-
ՇՂԹԱ

1. Փողերի լվացման դեմ պայքարի գործընթացներ
2. Քլիրինգային հաշվարկային վճարային համակարգ
3. Իրավական գրանցումներ
4. Նոտարական վավերացումներ

1. Տնտեսական անվտանգություն
2. Ֆինանսներ
3. Կառավարություն
4. Հանրային ոլորտ

ԱՐՉԵՍԱԿԱՆ
ԲԱՆԱԿԱՆՈՒ-
ԹՅՈՒՆ

1. Պաշարների կառավարում և օպտիմալացում
2. Պահանջարկի կանխատեսում
3. Հաճախորդների սեզմենտավորում
4. Վարկառուների վարկանշային գնահատում
5. Մարդկային ռեսուրսների կառավարում


1. Ամբողջ տնտեսություն
2. Մանրածախ առևտուր
3. Ֆինանսներ
4. Կազմակերպություններ

ՌՈՐՏԱՇԻ-
ՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքների ավտոմատացում
2. Երկրի անվտանգություն

1. Արտադրություն
2. Դազմաարդյունաբերություն

Գծապատկեր 3. Հայաստանի տնտեսության որոշ ոլորտներում բեկումնային տեխնոլոգիաների որոշակի կիրառումների ազդեցության գնահատում



Գծապատկեր 4. Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգի գնահատման մոտեցում

Այսպիսով, անհրաժեշտ է ուղենշել ինովացիաների կենսագործման «լոգիստիկ շղթան», այսինքն՝ մշակել քայլերի այն համակարգը, որը ինովացիոն գաղափարը վերածում է առևտրայնացման արդյունքի: Այս առումով առաջարկում ենք «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում իրականացնել որոշակի փոփոխություններ և սահմանել ինովացիաների առևտրայնացման լոգիստիկ շղթա, ինչպես նաև ցույց տալ «ինովացիոն վերելակի» գործարկման մեխանիզմները:

2. Կրթություն և գիտություն

Ներկայացված առաջարկները պետք է նպաստեն կրթություն–գիտություն–տնտեսություն փոխկապակցված շղթայի լիարժեք ապահովմանը.

- մշակել բուհական և հետբուհական համակարգի (մասնավորապես՝ բնագիտական և տեխնիկական մասնագիտությունների համար) նոր կրթակարգ՝ մասնավոր հատվածի մասնակցությամբ: Մշակված նոր կրթակարգի մեջ պարտադիր ներառել յուրաքանչյուր ուսանողի ցանկության հիմունքներով՝ կամավորության սկզբունքով (աշխարհում հայտնի փորձ) աշխատելու բաղադրիչը (հստակ սահմանված ժամաքանակով) որևէ մասնագիտական կազմակերպությունում, ինչն իր վերջնական արտացոլումը կգտնի յուրաքանչյուր ուսանողի ՄՈԳ–ի (մասնագիտական որակական գործակից) մեջ: Արդյունքում բուհն ավարտելու պահին ուսանողներն արդեն ձեռք կբերեն իրենց մասնագիտական որակավորման զարգացման համար անհրաժեշտ աշխատանքային փորձը և կունենան փաստացի իրականացված ծրագրերի ցուցակ՝ ապացուցելով իրենց աշխատանքային կարողությունները, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա ընկերություններին մասնագիտական գիտելիքները արագ փոխանցել ուսանողներին, ինչպես նաև կնպաստի ուսա-

նողների միջև գիտելիքների փոխանակմանը, որը, բնականաբար, կբարձրացնի ուսումնական հաստատությունների նկատմամբ ակնկալիքները, և աստիճանաբար ուսանողները պատրաստ կլինեն բուհն ավարտելուց հետո անցնել աշխատանքի:

- Մշակել և ներդնել մեխանիզմներ ուսանողներին, երիտասարդ գիտնականներին գիտակրթական և գիտահետազոտական գործունեության մեջ ներգրավման ուղղությամբ (տեխնոպարկերի, ինկուբատորների), ստեղծել պայմաններ գիտական աշխատանքի գրավչության բարձրացման, երիտասարդների խրախուսման ու շահագրգռման համար:

3. Գործարար և ներդրումային միջավայր

Բարձր տեխնոլոգիաների խթանները կարող են դառնալ արժեքավոր ռեսուրս ձեռնարկատերերի համար: Այդ նպատակով առաջարկում ենք ապահովել բարձր տեխնոլոգիական ընկերությունների, ինչպես նաև S2S սկսնակ ընկերությունների զարգացումը խթանող էկոհամակարգի ստեղծումը, ներառյալ պետական աջակցության նոր օրենսդրական նախաձեռնությունների ընդլայնում, սկսնակ ընկերությունների կողմից նորարար գաղափարների իրականացումը խթանելու նպատակով ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում, նորագույն տեխնոլոգիաների մշակում ու ներդրում, խրախուսող վենչուրային ֆոնդերի, աքսելերատորների հիմնման խթանում, մասնավորապես՝

- ստեղծել Ազգային վենչուրային հիմնադրամ (ԱՎՀ), որը ներդրումներ կկատարի այնպիսի գերակա ուղղություններում, ինչպիսիք են՝ բլոքչեյն, արհեստական ինտելեկտ, հիպերանվտանգություն, իրերի համացանց, ռոբոտաշինություն և բեկումնային այլ տեխնոլոգիաներ,
- ապահովել վենչուրային կապիտալի համալրման ուղղությամբ բանկերի մասնակցությունը, քանի որ ՀՀ բանկային համակարգը հանդիսանում է ֆինանսական շուկայի ամենակայացած ինստիտուցիոնալ կառույցը և կարող է էապես աջակցել վենչուրային համակարգի կայացմանը՝ ՀՀ կենտրոնական բանկի միջամտությամբ նորմատիվային դաշտը մեղմելու միջոցով,
- կառավարության միջնորդությամբ աքսելերատորի միջոցով հող նախապատրաստել, «աքսելերացիա անել» ինչպես սկսնակ ընկերություններին, այնպես էլ գործող ստարտափերին և վենչուրներին, ինչը հնարավորություն կտա նրանց շուկաներում դառնալ մրցունակ, առևտրայնացնել արդյունքները և կապիտալացնել ու ընդլայնել բիզնեսը,
- ինովացիան խթանելու նպատակով ձևավորել գործարար ոլորտի հետ գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանակման, հետազոտողների կողմից իրենց ստեղծած արդյունքների շուկայական հնարավորությունների քննարկման պայմաններ, ուղիներ և հարթակներ:

4. Ֆիզիկական ենթակառուցվածքներ

- Գործարար հատվածում նորամուծությունների սահմանափակվածության հիմնական պատճառը ինովացիոն գործընթացում միջնորդների, աջակցության գործուն մեխանիզմների և գործիքների սակավությունն է: Հայաստանում բացակայում է ինովացիոն ձեռնարկություններին վաղ շրջանում

Ֆինանսավորելու համակարգը, բացառությամբ ՏՀՏ ոլորտի, որը ուղեկցվում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ստեղծմամբ, ինչպես նաև ՏՀՏ ոլորտի պետական աջակցությանն ուղղված օրենսդրական փաթեթի ընդունմամբ (մասնավորապես հարկային): Ուստի կարևոր է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի փորձը կիրառել նաև ինովացիոն և բարձր տեխնոլոգիական այլ ոլորտներում ևս, մասնավորապես՝ կապված պետական և մասնավոր ֆինանսական ռեսուրսների ներգրավման, միջազգային կառույցների ու պետական-մասնավոր հատվածների համագործակցության հետ:

- Հայաստանի գիտակրթական ու գործարար ոլորտների առաջադեմ, ստեղծարար, փորձառու մասնագետների ներգրավմամբ ստեղծել ինովացիոն խորհուրդներ ՀՀ գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում՝ նորարարական գործունեության առաջնահերթությունները սահմանելու և համակարգելու, կրթություն-գիտություն-արդյունաբերություն/գործարար ոլորտ կապն ապահովելու նպատակով:

Այսպիսով, ՀՀ կառավարության կողմից ներդրված գործիքակազմը թեև նպաստեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արագատեմպ զարգացմանը և ինովացիոն ծառայությունների արտահանման տեմպերի ավելացմանը, սակայն դեռևս առկա համակարգային ու կառուցվածքային խնդիրները խոչընդոտում են ոլորտի կայուն աճին: Ուստի ՀՀ տնտեսության բարձր տեխնոլոգիական և ինովացիոն միջավայրի զարգացման քաղաքականությունը պետք է ուղղված լինի ՀՀ ինովացիոն ներուժի գնահատման հիմնախնդիրների լուծմանը, առաջադեմ տեխնոլոգիական ձեռնարկությունների գործունեության արդյունքների լայնամասշտաբ առևտրայնացմանը, գլոբալ տեխնոլոգիական ընկերությունների Հայաստան ներգրավմանը, ինչպես նաև հայկական տեխնոլոգիական ընկերությունների գլոբալացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (2019 Թ.)

Հայկ Մարկոսյան

տնտեսագիտության թեկնածու

Էներգիան, ինչպես կապիտալն ու աշխատուժը, արտադրության և հասարակության առաջընթացի կարևոր գործոն է, ժամանակակից քաղաքակրթության զարգացման և գոյության անփոխարինելի ու կարևորագույն բաղկացուցիչը¹: Էներգետիկան ցանկացած երկրի տնտեսական ենթակառուցվածքի վրա էական ու որոշիչ ազդեցություն ունեցող ճյուղերից մեկն է: Հայաստանը, չունենալով վառելիքաէներգետիկ ռեսուրսների բավարար կիրառելի պաշարներ, միշտ էլ խիստ կախվածության մեջ է գտնվել դրա ներմուծումից, ինչը սպառնում է թե՛ ազգային անվտանգությանը, թե՛ ազգային տնտեսության մրցունակությանը:

Անբավարար էներգետիկ ռեսուրսներով երկրներում էներգիայի հասանելիությունը կապվում է էներգակիրների ներմուծման շղթայի կայունության հետ: Ընդ որում՝ եթե շատ երկրներում էներգիայի անհասանելիությունը հաճախ դիտվում է որպես հնարավոր սցենար կամ տեսական ռիսկ, ապա 1990-ականների սկզբներին Հայաստանը համտեսել է այդ ռիսկի ողջ դառնությունը, երբ ԽՍՀՄ փլուզումից հետո հայտնվեց էներգետիկ շրջափակման մեջ: Դրա հետևանքով 1992-1996 թթ. էներգետիկ սովի պայմաններում բնակչությանն օրական միջինում 2 ժամ էր էլեկտրաէներգիա մատակարարվում, ինչը հանգեցրեց արտագաղթի, ջեռուցման նպատակով լայնածավալ անտառահատումների, շահագործման և պահպանման ռեժիմների խախտմամբ պայմանավորված հսկայածավալ բնակելի և արտադրական գույք պարզապես ոչնչացվեց կամ փոշիացվեց²: Ընդ որում՝ բոլոր այն գործոնները, որոնք հանգեցրին Հայաստանի էներգետիկ և տնտեսական շրջափակմանը, այդ թվում՝ Արցախյան հակամարտությունը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից մինչ օրս շարունակվող շրջափակումը, Վրաստանի ներքին խնդիրների առկայությունը, ռուս-վրացական անկայուն և անկանխատեսելի տնտեսական ու քաղաքական հարաբերությունները, Իրանի և Ռուսաստանի դեմ պարբերաբար գործադրվող պատժամիջոցները, չեն կորցրել իրենց արդիականությունը և ցանկացած պահի կարող են նորովի արտահայտվել:

Հայաստանի էներգետիկ անվտանգության վերաբերյալ գիտական քննարկումները 1992-1996 թթ. էներգետիկ խոր ճգնաժամի հաղթահարումից հետո կարծես թե հետին պլան էին մղվել: Դա պայմանավորված էր Հայաստանում խոշոր էներգետիկ հզորությունների առկայությամբ, որոնք էներգակիրների

¹ Jefferson, M., There's nothing much new under the Sun: The challenges of exploiting and using energy and other resources through history. Energy Policy, Vol. 86, November 2015, pp. 804-811.

² Gevorg Sargsyan, Ani Balabanyan and Denzel Hankinson, From Crisis to Stability in the Armenian Power Sector: Lessons Learned from Armenia's Energy Reform Experience, World Bank Working Paper, 2006.

մատակարարումների շղթայի վերականգնումից հետո ապահովեցին էլեկտրա-
էներգիայի ավելցուկային արտադրություն: Վերագործարկվեց միակ միջուկային
էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկը, և Հայաստանը վերադարձավ միջուկային
երկրների «ակումբ»: Ջարգացման ներկա փուլում Հայաստանում կրկին արդիա-
կան են դարձել էներգետիկ անվտանգության քննարկումները, ինչը պայմանա-
վորված է առկա էներգետիկ արտադրական հզորությունների սերնդափոխության
պահանջով: Այս առումով կարևորագույն հարցադրումն այն է, թե ինչ մասնա-
բաժիններ պետք է ունենան էներգիայի տարբեր աղբյուրները էներգիայի ար-
տադրության ընդհանուր կառուցվածքում: Ընդ որում՝ ամենաթեժ բանավեճերը
վերաբերում են վերականգնող և միջուկային էներգետիկայի միջև ընտրությանը
կամ մասնաբաժինների սահմանմանը:

Վերջին տասնամյակներում գերիշխող է եղել այն տեսակետը, որ ՀՀ տնտե-
սական և էներգետիկ անվտանգության և կայունության ապահովման գործըն-
թացում միջուկային էներգետիկայի զարգացումն այլընտրանք չունի: Նման
մոտեցումը արդարացված էր, քանի որ առկա տեխնոլոգիաների և արժեքային
շղթաների պայմաններում միջուկային էներգետիկային այլընտրանք առա-
ջադրելը գործնականում անհնար էր: Բնականաբար գործող միջուկային էներ-
գաբլոկը ունի շահագործման սահմանափակ ժամկետ, որի ավարտից հետո
անհրաժեշտ կլինի գործարկել համարժեք այլընտրանքային հզորություններ:
Որպես այդպիսին, առնվազն վերջին 10-15 տարիների ընթացքում, միջուկային
էներգետիկան ներկայացնելով որպես այլընտրանք չունեցող տարբերակ՝ առա-
վել հաճախ քննարկվում է 3-րդ միջուկային ռեակտորի շինարարությունն ու
շահագործումը: Իրողությունն այն է, որ էներգետիկայի զարգացման ծրագրերը
երկարաժամկետ բնույթ ունեն, հետևաբար դրանք պետք է հիմնավորված լինեն
բոլոր տեսանկյուններից, այլապես նոր կայանի կառուցումը կարող է բեռ դառ-
նալ ապագա սերունդների համար և մինչև 21-րդ դարի կեսերը վերածվել ՀՀ
էներգետիկ անվտանգության աքիլլեսյան գարշապարի:

ՀՀ նախկին իշխանությունների դիրքորոշումն այս հարցում իր արտա-
ցումն է գտել 2015 թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար-
ության կողմից մշակված «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև
2036 թ.) զարգացման ուղիների» վերաբերյալ ռազմավարությունը¹, որի կիզակե-
տում ՀՀ էներգետիկ համակարգի ֆիզիկապես և բարոյապես մաշված ենթակա-
ռուցվածքների՝ նվազագույն ծախսերով սերնդափոխությունն է: Չնայած զեկույ-
ցում ընդհանուր առմամբ կարևորվում է վերականգնվող էներգետիկայի զարգա-
ցումը, այդուհանդերձ պետք է փաստել, որ ՀՀ կառավարության որդեգրած քա-
ղաքականությունը, առաջնային կարևորություն տալով նվազագույն ծախսերի
քաղաքականությանը, անտեսում է էներգետիկ անվտանգության շատ հիմնա-
հարցեր: Չեկույցում ուղղակիորեն սահմանվում է, որ անհրաժեշտ է սահմանա-
փակել արևային ֆոտովոլտային տեխնոլոգիաներով էլեկտրակայանների հզո-

¹ ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036 թ.) զարգացման ուղիները,
http://www.arlis.am/Annexes/4/ardzN4-7_2017hav1.doc

րությունը 70 մեգավատով, իսկ հողմային էլեկտրակայաններինը՝ 200 մեգավատով՝ ակնկալելով, որ երկրաջերմային պոտենցիալի ուսումնասիրությունները կտան դրական արդյունք, և կհիմնավորվի ևս 30 մեգավատ հզորությամբ երկրաջերմային կայանի կառուցումը մինչև 2036 թ. ընկած ժամանակաշրջանում: Փոխարենը հիմնավորվում է նոր միջուկային կայանի շինարարության անհրաժեշտությունը՝ այն ներկայացնելով որպես Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման թերևս միակ ճանապարհ:

Սակայն նվազագույն ծախսերի քաղաքականության մշակման հիմքում դրված են մի քանի վիճելի դրույթներ, որոնց չիրագործման պարագայում համակարգը կվիուզվի: Նշված փաստաթղթում էներգետիկ համակարգի զարգացման քննարկումներում շեշտվում է էներգիայի արտահանման հանգամանքը: Նպատակադրվում է առկա հզորությունների հետագա զարգացում և արտադրվող էլեկտրաէներգիայի առնվազն կրկնապատկում՝ մինչև տարեկան 15 մլրդ կվտ/ժ, որից 30 %-ը պետք է արտահանվի՝ որպես պոտենցիալ շուկա առանձնացնելով ԻԻՀ-ն, որը ներկայումս ունի էլեկտրաէներգիայի պակասուրդ:

Արտահանման հնարավորությունների քննարկումները ցույց են տալիս, որ էլեկտրաէներգիայի արտահանման հեռանկարներն ու ծավալները, մեղմ ասած, գերազնահատված են կամ, առնվազն, խորությամբ ուսումնասիրված չեն: Միջուկային նոր էլեկտրակայանը իր նախագծահաշվային արդյունքները ցույց տալու համար պետք է աշխատի առնվազն 40 տարի, ևս միջինում 10 տարի կպահանջվի շինարարության համար, այսինքն, լավատեսական սցենարով, Հայաստանի նոր միջուկային էլեկտրակայանը կգործի 2030-2070 թթ: Չկա որևէ փորձագետ, ով կկարողանա հիմնավորել, որ Հայաստանը 2030-2070 թթ. կունենա էլեկտրաէներգիայի արտահանման կայուն շուկա, հետևաբար, մեր կարծիքով, էներգետիկ համակարգի զարգացումը առաջին հերթին պետք է ուղղված լինի ազգային տնտեսության սպասարկմանը և ոչ թե արտահանման հնարավորությունների ավելացմանը:

Անտեսվում է նաև այն հարցը, թե ինչ կլինի, եթե այդչափ արտադրական հզորությունները կառուցվեն, սակայն արտահանման ներուժը չօգտագործվի: Պատասխանը շատ պարզ է. հաստատուն ծախսերը կվերաբաշխվեն սպառվող էլեկտրաէներգիայի քանակի վրա, որի արդյունքում սակագինը կբարձրանա: Ավելին, էներգախնայող տեխնոլոգիաների հետագա զարգացման պայմաններում հարցականի տակ է նաև ներքին շուկայում էլեկտրաէներգիայի սպառման տեմպերի ավելացման առկա միտումների պահպանման կամ աճի խնդիրը: Ազդեցության երկրորդ փուլում սակագնի բարձրացումը կհանգեցնի սպառման կրճատմանն ու արտադրանքի մրցունակության անկմանը, որը կրկին կառաջացնի սակագինը վերանայելու անհրաժեշտություն: Հետևաբար առանց երկարաժամկետ պայմանագրերի և գնման երաշխիքների արտահանման կողմնորոշմամբ էներգետիկ հզորությունների զարգացման սցենարը ոչ միայն վտանգավոր թակարդ է, այլև վտանգում է երկրի տնտեսական անվտանգությունը:

Ակններև է, որ փաստաթղթում ըստ էության քննարկված չեն ներկայումս օգտագործվող էներգետիկ ռեսուրսների մատակարարումների շղթայի գործունե-

ության խափանումների, շուկայական իրավիճակի փոփոխության, շուկայում նոր խաղացողների հայտնվելու ռիսկերը: Տարածաշրջանային զարգացումները, Ռուսաստանի և Իրանի նկատմամբ նոր տնտեսական պատժամիջոցների սահմանման և գործողների երկարաձգման պայմաններում ճիշտ չէ բոլոր խաղադրույքները կենտրոնացնել այդ երկրների վրա՝ անտեսելով ազգային էներգետիկ անվտանգության հարցերը: Ակնհայտ է, որ նման ռազմավարության իրականացման պայմաններում կտրուկ ավելանալու է մեկ առանձին երկրից, սովյալ դեպքում Ռուսաստանից, ՀՀ էներգետիկ կախվածությունը: Ահա նման պայմաններում խիստ արդիական է դառնում նոր իրողությունների համատեքստում քննարկել էներգետիկ համակարգի զարգացման հեռանկարները՝ դրանում ներառելով ինչպես համաշխարհային կարևորագույն միտումները, այնպես էլ գնահատելով ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման գործում էներգետիկայի տարբեր ուղղությունների իրական ազդեցությունն ու ներդրումը:

Էներգետիկ անվտանգության տեսանկյունից միջուկային էներգետիկան քննարկելիս ակնհայտ է, որ այն չի կարող ապահովել Հայաստանի էներգետիկ անկախությունը այն պարզ պատճառով, որ Հայաստանը չի տիրապետում միջուկային վառելիքի սեփական պաշարների: Ավելին, միջուկային վառելիքի համաշխարհային շուկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջուկային էներգետիկան, որպես էներգետիկ անկախության երաշխավոր, չի կարող ներկայանալ գրեթե ոչ մի երկրում: Միջուկային էներգետիկա շահագործող 31 երկրներից միայն Կանադան և Հարավաֆրիկյան Հանրապետությունն է, որ միջուկային վառելիքի տեսանկյունից ինքնաբավարար է¹: Հայաստանի դեպքում պատկերն է՝ ավելի մտահոգիչ է, քանի որ ՀՀ միջուկային վառելիքը մատակարարվում է Ռուսաստանից, որն ինքն է հանդիսանում միջուկային վառելիք ներկրող: Հետևաբար Հայաստանում միջուկային էներգետիկայի հետագա զարգացումը, եթե պետք է հիմնվի ռուսաստանյան միջուկային վառելիքի մատակարարումների վրա, ոչ միայն չի լուծում, այլև խորացնում է էներգետիկ անվտանգության հիմնահարցը:

Միջուկային վառելիքի տեղափոխումը տեխնիկատնտեսական տեսանկյունից շատ ավելի հեշտ է, քան նույն էներգատարությամբ ածխաջրածնային վառելիքի տեղափոխումը: Այսպես, Հայաստանի միջուկային էլեկտրակայանի համար անհրաժեշտ տարեկան վառելիքի զանգվածը կազմում է շուրջ 65 տոննա, ինչը կարելի է տեղափոխել տարեկան մեկ անգամ և ապահովել ամբողջ տարվա ընթացքում էներգիայի արտադրությունը: Էլեկտրաէներգիայի նույն քանակը արտադրելու համար ածխաջրածնային վառելիքը անհրաժեշտ է մատակարարել անընդհատ, ընդ որում՝ հաշվի առնելով, որ Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործվող ածխաջրածնային վառելիքը բնական գազն է, պետք է արձանագրենք, որ դրա պահեստավորումը պահանջում է լուրջ և ծախսատար ինժեներական կառույցներ: Ահա այս պայմաններում միջուկային

¹ Nikolaus A., Klaus G., The future of nuclear fuel supply. NURIS 2015, the 1st International Conference on Nuclear Risk, Vienna, 16-17 April, 2015. http://nuris.org/wp-content/uploads/2015/04/Arnold_Gufler_The-Future-of-Nuclear-Fuel-Supply.pdf

Էներգետիկայի զարգացման հիմնավորումների շարքին է դասվում միջուկային վառելիքի տեղափոխման մատչելիությունը՝ որպես ՀՀ էներգետիկ անվտանգության կարևոր բաղադրիչ:

Սակայն նման հիմնավորումներում հաշվի չեն առնվում մի քանի կարևոր դրույթներ: Նախ՝ միջուկային վառելիքի մատակարարումը նույնպես չի կարող երաշխավորված համարվել, քանի որ չկա միջուկային վառելիքի ներքին արդյունահանում և վերամշակում, և մյուս կողմից՝ դրա մատակարարումը իրականացվում է բացառապես Ռուսաստանի կողմից և ցանկացած պահի քաղաքական, տնտեսական կամ պարզապես միջուկային վառելիքի համապատասխան պաշարի բացակայության պայմաններում կարող է և դադարեցվել: Պետք է չմոռանանք, որ Ռուսաստանն ինքը միջուկային վառելիք ներկրող է, այսինքն՝ արտադրության ներքին ծավալներով ինքնաբավարար չէ:


Մյուս կողմից՝ միջուկային էներգետիկայի դերը գնահատելիս անթույլատրելի է սահմանափակվել միայն էլեկտրաէներգետիկ ոլորտի դիտարկումով, քանի որ երկրի ներսում էլեկտրաէներգիան սպառվող էներգիայի միակ տեսակը չէ: Սպառվող ընդհանուր էներգիայի ծավալում էլեկտրաէներգիայի մասնաբաժինը միայն մի մասն է, հետևաբար մեծ կախվածություն կա էներգիայի այլ աղբյուրներից: Այսպես, գործնականում ամբողջ տրանսպորտային համակարգը հենված է ածխաջրածնային վառելիքի վրա: Ընդ որում՝ Հայաստանը բնական գազի հիման վրա աշխատող ավտոտրանսպորտի մասնաբաժնով աշխարհում առաջատար երկրներից է: Հայաստանի բնակլիմայական պայմաններում նորմալ կենսագործունեությունը, մանավանդ տարվա ցուրտ ամիսներին, անհնար է պատկերացնել առանց շենքերի և շինությունների ջեռուցման, ինչը նույնպես իրականացվում է գերազանցապես ներմուծվող ածխաջրածնային վառելիքի հիման վրա: Նույնը վերաբերում է նաև պարենային արտադրությանը, արտադրության մյուս ոլորտներին, որտեղ ածխաջրածնային վառելիքի օգտագործումը տեխնոլոգիական ցիկլի անբաժանելի բաղադրիչ է:

Այս առումով միջուկային էներգետիկայի դերի գնահատումը վառելիքաէներգետիկ ռեսուրսների ներկրման մատչելիության տեսանկյունից խիստ նվազում է, քանի որ եթե հնարավոր չլինի ապահովել ածխաջրածնային վառելիքի անընդհատ ներկրում, ապա, միևնույնն է, տնտեսությունը կոլապսի կենթարկվի, և միջուկային կայանի արտադրած էլեկտրաէներգիան բավարար չի լինի ապահովելու տնտեսության նորմալ կենսագործունեությունը, էլ չենք ասում տրանսպորտային համակարգի կոլապսի մասին, քանի որ երկաթգիծն ու մետրոպոլիտենը ի վիճակի չեն լինի ապահովել տրանսպորտային հոսքերը: Սրանով կարելի է բացատրել նաև այն ֆենոմենը, որ չնայած 1990-ականների սկզբին Հայաստանում արտադրվում էր նույնքան էլեկտրաէներգիա, որքան 2000-ականների կեսերին, այն չէր բավարարում առկա պահանջմունքի բավարարմանը, քանի որ չկար անհրաժեշտ քանակի ածխաջրածնային վառելիքի ներկրում, ասել է թե՛ անկախ Հայաստանում միջուկային էներգետիկայի զարգացվածության աստիճանից և մասշտաբներից՝ այն չի կարող փոխարինել ածխաջրածնային վառելիքի անխափան ներկրումների ապահովմանը:

Հետևաբար սխալ է այն տեսակետը, որ միջուկային էներգետիկան Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հիմքն ու երաշխավորն է: Նման հայեցակետը չափազանցված է, քանի որ միջուկային էներգետիկան առանձին չի կարող երաշխավորել տնտեսության կայուն կենսագործունեությունը: Ավելի կտրուկ արտահայտվելու դեպքում կարող ենք պնդել, որ առանց միջուկային էներգետիկայի ՀՀ տնտեսությունը կարող է գոյատևել և զարգանալ, իսկ առանց ածխաջրածնային վառելիքի՝ ոչ: Այն առավելագույնս կարող է դիտվել որպես տնտեսության էներգետիկ համակարգի կարևոր բաղադրիչ, որը կարևոր ներդրում ունի էլեկտրաէներգետիկ կայունության ապահովման գործում:

Միջուկային էներգետիկայի զարգացման տնտեսական հիմնահարցերի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված մոտեցում արդեն գործող էլեկտրակայանի և նոր էլեկտրակայանի կառուցման այլընտրանքները քննարկելիս: Ետգնված միջուկային էներգետիկ օբյեկտի շահագործման տնտեսական նպատակահարմարությունը բանավեճի առարկա չի կարող հանդիսանալ, քանի որ զուտ տնտեսական տեսանկյունից դիտարկելիս այն ունի գնային ամենաբարձր մրցունակությունը բնութագրող ցուցանիշներ: Հայաստանում էներգետիկ անվտանգության հարցերի քննարկումներում առաջնային նշանակություն է տրվում ՀԱԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ցածր ինքնարժեքին, որը, ապահովելով Հայաստանում թողարկվող էլեկտրաէներգիայի 30-40 տոկոսը, զգալի ազդեցություն է թողնում էլեկտրաէներգիայի վերջնական սակագնի ձևավորման վրա: ՀԱԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ինքնարժեքը չի հրապարակվում, փոխարենը հրապարակվում է ՀԱԷԿ-ից էլեկտրաէներգիայի գնման սակագինը, և հաշվի առնելով, որ ՀԱԷԿ-ը վնասով աշխատող կազմակերպություն է, կարելի է ենթադրել, որ ինքնարժեքը մոտ է գնման գնին և կազմում է մոտ 6 դրամ 1 կվտ/ժ համար: Այսպիսով, մեջբերելով ՀԱԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ցածր ինքնարժեքը, հանրության մոտ տպավորություն է ստեղծվում, որ նոր ատոմակայան կառուցելու դեպքում ևս թողարկվող էլեկտրաէներգիայի ինքնարժեքը լինելու է նույն միջակայքում, հետևաբար տնտեսապես ձեռնտու կլինի նման էլեկտրակայանի կառուցումն ու շահագործումը: Սակայն նոր կառուցվող միջուկային կայանի դեպքում թողարկված էլեկտրաէներգիայի սակագինը կլինի բոլորովին այլ հարթությունում:

Կարևորագույն դիտարկում է այն իրողությունը, որ ամբողջ աշխարհում մեկնարկել է վերականգնվող էներգետիկայի անցման հեղափոխությունը, որին չհետևող երկրների տնտեսությունները, ամենայն հավանականությամբ, կհայտնվեն մրցունակության լուսանցքից դուրս: Շարունակաբար կրճատվում է միջուկային էներգետիկայի ներդրումը էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության կառուցվածքում (գծապատկեր 1), ինչը ցույց է տալիս, որ էլեկտրաէներգիայի նկատմամբ անընդհատ աճող պահանջարկը բավարարվում է այլ աղբյուրների առավել արագ ընդլայնման հաշվին:



Գծապատկեր 1. Միջուկային էներգետիկայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում 1971-2015 թթ.¹, %


Գծապատկերում ներկայացված տվյալները վկայում են, որ միջուկային էներգետիկայի մասնաբաժինը 1990-ականներից հետո անընդհատ նվազել է՝ կրճատվելով ավելի քան կրկնակի և 2015 թ. հասնելով 8 տոկոսի: Ընդ որում՝ հաշվի առնելով 2015 թ. հետո վերականգնվող էներգետիկայի զարգացման միտումները՝ կարելի է կանխատեսել, որ այդ մասնաբաժինն էլ ավելի է կրճատվելու: Հետևաբար անհրաժեշտ է բացահայտել նման կրճատման պատճառներում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների նշանակությունը, ինչը հիմք կտա ազգային միջուկային էներգետիկայի զարգացման համար մշակել ռացիոնալ ռազմավարություն:

Էներգետիկայի զարգացման կանխատեսումների վերաբերյալ մինչև 2010 թ. հրապարակված բոլոր հետազոտություններում սկզբունքորեն ամրագրվում էր, որ վերականգնվող էներգետիկան առկա տեխնիկատնտեսական գործոնների պայմաններում տեսանելի ապագայում չի կարող ոչ միայն փոխարինել, այլև անգամ մրցակցել ավանդական էներգետիկ աղբյուրների հետ: Դա հիմք էր տալիս հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ էներգետիկ անվտանգությունը կապել միջուկային էներգետիկայի հետ: Սակայն վերջին տասնամյակում վերականգնվող էներգետիկան կտրուկ զարգացում է ապրել: Փորձագետներն արձանագրում են, որ էներգետիկ ոլորտում վերջին հինգ տարիներին տեղ գտած նորարարությունների ու փոփոխությունների շիջումը նման է հեղափոխության, և ընդամենը տասը տարի առաջ վերականգնվող էներգետիկայի զարգանալու հեռանկարների վերաբերյալ հոռետեսական տեսակետներն ու սցենարները այլևս որևէ քննադատության չեն դիմանում: Ներկայիս տեխնոլոգիաների պայմաններում բազմաթիվ երկրներում հողմային և արևային էլեկտրա-

¹ Ըստ Համաշխարհային բանկի տվյալների: Աղբյուրը՝ <https://data.worldbank.org/indicator/EG.ELC.NUCL.ZS?locations=1W>

կայանները հանդես են գալիս որպես ամենաէժան սակագնով էլեկտրաէներգիա մատակարարողներ:

Էներգետիկ ոլորտը չափազանց կապիտալատար է, և այնտեղ ներդրումային որոշումները առաջնային նշանակություն ունեն: Ներդրումային որոշումների ուղղությունները և դինամիկան էներգետիկ ռազմավարության և քաղաքականության մշակման կարևորագույն ազդակներ են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մակարդակներում: Գծապատկեր 2-ում ներկայացված են 2004-2017 թթ. էներգետիկ ոլորտում ներդրումային որոշումների ուղղություններն ու դինամիկան:



Գծապատկեր 2. Համաշխարհային ներդրումային որոշումները միջուկային և վերականգնվող էներգետիկաներում, 2004-2017 թթ., մլրդ ԱՄՆ դոլար¹


2017 թ. տվյալներով միջուկային էներգետիկայի ոլորտում ներդրվել է շուրջ 16 մլրդ դոլար, քանու էներգետիկայի ոլորտում՝ շուրջ 100 մլրդ դոլար և արևային ֆոտովոլտային էներգիայի ոլորտում՝ շուրջ 160 մլրդ դոլար: 2017 թ. վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումները, առանց խոշոր հիդրոէներգետիկայի, կազմել են 279.6 մլրդ դոլար, 2016 թ.՝ 274 մլրդ դոլար և 2015 թ.՝ 323.4 մլրդ դոլար, որը և այս պահին պատմական առավելագույնն է²: Սակայն վերականգնվող էներգետիկ տեխնոլոգիաները սրընթաց էժանանում են, ինչով պայմանավորված՝ նույն տարիներին շահագործման հանձնված տարիների հզորությունները փոքր-ինչ այլ դինամիկա են դրսևորում, քանի որ միավոր ֆինանսական միջոցով ավելի շատ տեղակայված հզորություն են ապահովում:

«Լազարը» խորհրդատվական ընկերությունը, ի թիվս մի շարք այլ վերլուծու-

¹ The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 188.

² Global Trends in Renewable Energy Investment Report 2018, United National Environment Programme, April, 2018.

թյունների¹, պարբերաբար հրապարակում է տարբեր տեխնոլոգիաներով ստացված էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքի վերաբերյալ հաշվետվություններ²: Դրանցից վերջինում, որը հրապարակվել է 2018 թ. նոյեմբերին, հետաքրքիր միտումներ են բացահայտվում (գծապատկեր 3)³:



Գծապատկեր 3. *Էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը տարբեր տեխնոլոգիաների պայմաններում*

Համաձայն ստացված արդյունքների՝ միջուկային էներգետիկայի արտադրած 1 մվտ/ժ էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը կազմում է 112-189 դոլար, որը էլեկտրաէներգիայի արդյունաբերական արտադրության բոլոր տեխնոլոգիաներից ամենաբարձրն է: Ամենացածր հաշվեկշռված արժեքն ունի քամու էներգետիկան. այն կազմում է 29-56 դոլար: Արդյունաբերական մասշտաբի ֆոտովոլտային կայաններում էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը կազմում է 40-46 դոլար կամ միջուկային էներգետիկայից շուրջ 3 անգամ պակաս: Ավանդական էներգետիկ տեխնոլոգիաներից ամենաէժեկտիվ համակցված ցիկլով գազային էլեկտրակայաններն են, որտեղ էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը կազմում է 41-74 դոլար:

Հետաքրքիր է, որ էլեկտրաէներգիայի հաշվեկշռված միջին արժեքը վերջին 10 տարիներին աճել է միայն միջուկային էներգետիկայի դեպքում, իսկ աճը կազմել է 23 %: Մյուս տեխնոլոգիաների պարագայում արժեքի նվազումը կազմել է, համապատասխանաբար, արևայինի (կոնցենտրացիոն) դեպքում՝ 17 %, ածուխի դեպքում՝ 9 %, գեոթերմալի դեպքում՝ 21 %, բնական գազի (համակցված ցիկլով)


¹ Պաշտոնական կայք՝ www.lazard.com

² Levelized Cost of Energy (LCOE): Էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքը էլեկտրակայանի ողջ կենսացիկլի ընթացքում արտադրված էլեկտրաէներգիայի միջինացված արժեքն է: Էլեկտրաէներգիայի հաշվեկշռված արժեքի հաշվարկի համար օգտագործվում է բավականին ընդգրկուն մոդել, որը հաշվի է առնում կայանի կապիտալ շինարարության, վառելիքի, վարկերի մարման և տոկոսի սպասարկման, հարկերի, շահույթի մարժայի, կայանի միջին բեռնվածքի և այլ ցուցանիշներ:

³ Levelized Cost of Energy and Levelized Cost of Storage 2018, կայք՝ <https://www.lazard.com/perspective/levelized-cost-of-energy-and-levelized-cost-of-storage-2018/>

դեպքում՝ 30 %, արևայինի (ֆոտովոլտային) դեպքում՝ 88 %, հողմայինի դեպքում՝ 69 %: Ամենամեծ անկումն արձանագրվել է արևային ֆոտովոլտային կայանների արտադրած էլեկտրաէներգիայի միջին արժեքի համար, ինչն էլ ապահովել է ոլորտի սրընթաց զարգացումն ու ընդլայնումը:

Էներգետիկայի զարգացման համաշխարհային միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նոր գործարկված էներգետիկ հզորությունների կառուցվածքում վերականգնվող էներգետիկան անխոս առաջատարն է: 2000-2018 թթ. ընդհանուր առմամբ հողմային էլեկտրակայանների ընդհանուր տեղակայված հզորությունների հավելվածը կազմել է 497 գեգավատ, արևային կայանների՝ 399, այն դեպքում, երբ միջուկային կայանների՝ 35 (գծապատկեր 4):




Գծապատկեր 4. Տեղակայված արևային, հողմային և միջուկային էներգետիկ կայանների գումարային հզորությունները, գվտ, 2000-2017 թթ. համար¹

Միջուկային կայանների այս հավելվածում ներառված են նաև երկարաժամկետ դադարի կարգավիճակում գտնվող ռեակտորները, որոնք, չնայած փաստացի չեն գործում, պաշտոնապես համարվում և ներառվում են տեղակայված հզորությունների կազմում: Վերջիններս հաշվարկներում չներառելու պարագայում միջուկային էլեկտրակայանների տեղակայված հզորությունների հավելվածը 2000 թ. նկատմամբ 2017 թ. կլինի ընդամենը 2.8 գեգավատ:

Տեղակայված էներգետիկ հզորությունների գումարային մեծության վերաբերյալ տեղեկատվությունը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր կառուցվածքում դրանց ներդրման չափի վերաբերյալ: Էներգետիկ կայանների տեխնոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված՝ օբյեկտիվորեն տարբերվում է դրանց միջին բեռնվածքի մեծությունը: Մասնավորապես՝ ակնհայտ է, որ արևային էներ-

¹ The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 194.

գետիկ կայանները գիշերային ժամերին էլեկտրաէներգիա չեն թողարկում: Ընդհանուր առմամբ, միջուկային էլեկտրակայանները, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, ունենում են բեռնվածքի ամենամեծ գործակիցը, ինչն ապահովում է նաև միավոր տեղակայված հզորությունից ավելի մեծ ծավալով թողարկվող էլեկտրաէներգիա:



Գծապատկեր 5. Արևային, հողմային և միջուկային էներգետիկ կայանների արտադրած էլեկտրաէներգիան, տվտ/ժ, 2000-2017 թթ. համար¹

Ահա այս իրողությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ չնայած արևային և հողմային էլեկտրակայանների տեղակայված հզորությունները, անգամ առանձին–առանձին, գերազանցում են միջուկային կայանների համանուն ցուցանիշին, այնուամենայնիվ տարեկան արտադրված էլեկտրաէներգիայի ծավալով միջուկային էներգետիկան քննարկվող 3 տեխնոլոգիաների շարքում բացարձակ առաջատարն է (գծապատկեր 4)

Գծապատկերում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 2017 թ. միջուկային էներգետիկան ապահովել է հողմայինից ավելի քան 2 անգամ և արևայինից ավելի քան 5.5 անգամ ավելի թողարկված էլեկտրաէներգիա: Միանշանակ արձանագրենք, որ, դատելով գծապատկերներ 3 և 4–ից, այդ տարբերությունը առաջիկա տարիներին կրճատվելու է: Նշենք նաև, որ նմանատիպ զարգացումներ են արձանագրվում նաև ածխաջրածնային հիմքով էներգետիկայի ոլորտում, որտեղ ևս համեմատության մեջ առավելությունը տրվում է վերականգնվող էներգետիկային:

Վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը վերջին տարիներին լայն քննարկման առարկա է դարձել: Վերականգնվող էներգետիկ ռեսուրս-

¹ The World Nuclear Industry Status Report 2018, A Mycle Schneider Consulting Project, Paris, London, September 2018, p. 194.

ները յուրահատուկ հնարավորություններ են ընձեռում կայուն և էկոլոգիապես մաքուր էներգետիկ համակարգ ձևավորելու համար, ինչպես նաև մեղմում են տնտեսության վրա բնական վառելիքահումքային ռեսուրսների սակավության անբարենպաստ ազդեցությունը՝ բավարարելով էլեկտրաէներգիայի, ջեռուցման և տրանսպորտային կարիքների պահանջարկի մի մասը: Հայաստանը վառելիքաէներգետիկ ռեսուրսների ներկայիս գների պայմաններում տիրապետում է տնտեսապես հիմնավորված ռեսուրսների բավականին լայն սպեկտրի և ծավալների:

Աղյուսակ 1

Վերականգնվող էլեկտրաէներգիայի ռեսուրսների ներուժը Հայաստանում ըստ տեխնոլոգիայի¹

<i>Տեխնոլոգիայի տեսակը</i>	<i>Հզորություն (մվտ)</i>	<i>Արտադրություն (գվտժ/տարի)</i>
Հողմ	300	650
Արդյունաբերական արևային ՖՎ	830-1200	1700-2100
Կոնցենտրացիոն արևային կայան	1200	2400
Ապակենտրոնացված արևային ՖՎ	1300	1800
Երկրաջերմային կայան	25-150	200-1100
Աղբավայրի գազ	2	20
ՓՀԷԿ	100	340
Կենսազազ	5	30
Կենսազանգված	30	230
Ընդամենը	3800-4300	7400-8700

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ տարբեր գնահատումներով Հայաստանում առկա են 3800-4300 մվտ պոտենցիալ հզորությամբ և 7.4-8.7 մլրդ կվտ/ժ տարեկան թողարկման հնարավորությամբ վերականգնվող ռեսուրսներ, ինչը համարժեք է Հայաստանի ներկայիս շահագործվող էլեկտրակայանների դրվածքային հզորությանն ու տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալին:

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում վերականգնվող էներգետիկան ծավալային ցուցանիշներով ունակ է ապահովելու առկա պահանջարկը, եթե, իհարկե, տեխնոլոգիապես հնարավոր լինեք պահուստավորել արտադրված էլեկտրաէներգիան: Ավելին, քանի որ վերականգնվող էներգետիկական տեխնոլոգիաները շարունակ էժանանում են, տնտեսապես հիմնավորված էներգետիկ ներուժը աճում է, և նախկինում ոչ մրցունակ տեղանքը կարող է դառնալ մրցունակ: Հաշվի առնելով էներգիայի պահուստավորման տեխնոլոգիական առաջընթացն ու ինքնարժեքի դինամիկան՝ կարելի է վստահորեն պնդել, որ ինչ-որ ժամանակ հետո վերականգնվող էներգետիկան

¹ «Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագիր», Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, Երևան, 2014: http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan_final-June-27-2014-arm-final.pdf

ունակ կլինի բավարարել ամբողջ էներգետիկ պահանջարկը:

Վերականգնվող էներգետիկայի լայնամասշտաբ կիրառման խոչընդոտները բնորոշ են գրեթե բոլոր երկրներին¹: Հողմային կայանների անհավասար բեռնվածքը, արևային էլեկտրակայանների օրական և սեզոնային հզորության տատանումները էներգիայի այդ աղբյուրների անբաժանելի հատկություններ են, ինչը չի խանգարում բազմաթիվ երկրներում դրանք հաջողությամբ զարգացնելուն: Ոլորտի շատ մասնագետներ փորձում են հիմնավորել, որ վերականգնվող էներգիան չի կարելի դիտարկել որպես ավանդական էներգետիկայի փոխարինող: Որպես հիմնավորում նշվում է, որ էներգիայի վերականգնվող աղբյուրներին զուգահեռ պետք է լինեն նաև այլընտրանքային էներգաարտադրող հզորություններ, որոնք անհրաժեշտության դեպքում պետք է ունակ լինեն արագ գործարկվել և միացվել ընդհանուր ցանցին: Այսինքն՝ եթե վերականգնվող էներգետիկան դիտվում է որպես էներգետիկ համակարգի ընդլայնման ուղի, ապա պետք է կառուցվեն նաև միևնույն հզորությամբ ավանդական էներգիայի արտադրական հզորություններ, ինչը կրկնապատկում է կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը: Ավելին, քանի որ էներգետիկայի մասին օրենսդրության համաձայն՝ սակագինը պետք է ներառի հզոր կամ հիմնական էլեկտրակայանների պահպանման ֆիքսված ծախսերը, ապա անգամ չգործող էլեկտրակայանները մշտական բեռ են սակագնի, ինչպես նաև սպառողների համար:

Նման մոտեցումը հատկապես կիրառելի չէ փոքր տնտեսություններում միջուկային էներգետիկայի զարգացման հիմնավորումների համար: Եվ իրոք, նույն հիմնավորմամբ կարելի է պնդել, որ, օրինակ, Հայաստանը միջուկային կայան շահագործելու պարագայում պետք է տիրապետի այլընտրանքային համարժեք հզորությունների, որոնք միջուկային կայանի լիցքավորման, ընթացիկ վերանորոգման և վթարային անջատումների ժամանակ իրենց վրա կվերցնեն էլեկտրաէներգիայի պահանջարկի բեռը: Ընդ որում՝ լիցքավորումն ու ընթացիկ նորոգումը միջուկային կայանի տեխնոլոգիական ցիկլի բաղադրիչներ են, որոնք տեղի են ունենում որոշակի պարբերականությամբ:

Հետևաբար վերականգնվող էներգետիկայի այս բնութագրիչ թերությունը պետք է պարզապես հաղթահարվի առկա տեխնիկական հնարավորություններով: Որպես խնդրի լուծում հաճախ մատնանշվում է էներգիայի կուտակման արդյունաբերական և տեղային տեխնոլոգիաների զարգացումը: Առանց վարանելու կարելի է պնդել, որ վերականգնվող էներգետիկայի զարգացման և համընդհանուր օգտագործման բոլոր սկզբունքային հիմնախնդիրները կլուծվեն, եթե ստեղծվեն էներգիայի արդյունաբերական մասշտաբի կուտակման մատչելի և վստահելի գործիքներ: Ի դեպ, ինչպես և վերականգնվող էներգետիկայում, վերջին տարիներին նկատվում է կուտակող, մասնավորապես՝ էլեկտրաքիմիական տեխնոլոգիաների սրընթաց էժանացում, ինչը խոստումնալից ապագա է նախանշում դրանց արդյունաբերական համատարած կիրառության համար²:

¹ Aviel Verbruggen et al., “Renewable Energy Costs, Potentials, Barriers: Conceptual Issues”, Energy Policy 38, no. 2 (2010), 850–61.

² Levelized Cost of Energy and Levelized Cost of Storage 2018, կայք՝ <https://www.lazard.com/perspective/levelized-cost-of-energy-and-levelized-cost-of-storage-2018/>

Այս պայմաններում վառելիքաէներգետիկ համալիրում նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և վերականգնվող էներգետիկայի ընդլայնման խնդրի լուծումը կբարձրացնի տնտեսության էներգետիկ ապահովվածության աստիճանը, կմեղմի երկրի կախվածությունն արտերկրի հումքային աղբյուրներից, հիմք կստեղծի տնտեսության էքստենսիվ աճից ինտենսիվ զարգացման անցնելու և սեփական շահերով թելադրված ազգային էներգետիկ քաղաքականության վարման համար՝ բարձրացնելով երկրի էներգետիկ անկախության և անվտանգության աստիճանը¹: Հաշվի առնելով միջազգային շուկաներում վերականգնվող էներգետիկայի ոլորտին առնչվող տեխնոլոգիաների և սարքավորումների նկատմամբ բարձր պահանջարկը՝ տնտեսության այս ճյուղի զարգացումը կարող է նպաստել նաև հայկական կազմակերպությունների արտահանման ներուժի ավելացմանը:

Վերականգնվող էներգետիկայի՝ առաջանցիկ տեմպերով զարգացումը հնարավոր է ապահովել պետական ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցության մեխանիզմների լայն ցանկով, որոնց շարքում կարող են ներառվել.

1. վերականգնվող էներգիայի անհատական օգտագործման համակարգերի ներդրման համար ֆինանսական աջակցության մեխանիզմների ներդրում, այդ թվում՝ հարկային արտոնություններ, պետական դրամաշնորհներ, համաֆինանսավորման մեխանիզմներ, վարկային միջոցներով էներգետիկ հզորությունների տեղակայման դեպքում՝ հաշվարկված տոկոսադրույքը ֆիզիկական անձանց վճարած եկամտային հարկից փոխհատուցելու տարբերակ:

2. Էլեկտրաէներգիայի կուտակման էլեկտրաքիմիական մարտկոցների և հիդրոակուումուլյացիոն կառույցների պիլոտային նախագծերի իրականացում, ինչը հնարավորություն կտա տեղում գնահատել դրանց կիրառելիությունը ՀՀ բնակլիմայական պայմաններում:

3. էներգետիկ ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում, ինչը հնարավորություն կտա էլեկտրաէներգետիկ կուտակման հզորություններ տիրապետող մասնավոր և պետական ընկերություններին հանդես գալ որպես էներգետիկ համակարգի լիիրավ մասնակիցներ՝ ապահովելով ֆինանսական հոսքեր և եկամուտներ:

4. Ավարտին հասցնել էներգետիկ շուկայի ազատականացման գործընթացը, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի ուղղակի համագործակցություն հաստատել էլեկտրաէներգիա արտադրող և սպառող կազմակերպությունների միջև:

5. Բարձրացնել հանրային տեղեկացվածության մակարդակը վերականգնվող էներգիայի աղբյուրների, անհատական հզորությունների ընձեռած հնարավորությունների և շուկայում առկա առաջարկների վերաբերյալ, ինչը հիմքեր կստեղծի ավելացնել հասարակության ընդգրկվածությունը վերականգնվող էներգիայի օգտագործման բնագավառում:

¹ Odabashian V., Karamyan G., “Fuel Cells Development in Armenia, Renewable Energy: Reality and Perspectives”, p. 5, Conference Proceedings, Yerevan, 2003.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԵՂԱՓՈՒՏԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ (2019 Թ.)

Լիլիթ Սարգսյան

տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ներքին սպառողական շուկան բավական փոքր է, ինչի արդյունքում էապես նվազում էր ՀՀ ներդրումային գրավչությունը: 2015 թ., սակայն, ԵՏՄ անդամակցությամբ ՀՀ-ն լուծեց այս խնդիրը՝ հնարավորություն տալով ՀՀ-ում գործող կազմակերպություններին արտոնյալ պայմաններով դուրս գալու դեպի ԵՏՄ բազմամիլիոնանոց շուկա: Այդուհանդերձ ՀՀ ներդրումային միջավայրի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանը դեռևս հեռու է թե՛ ներքին, և թե՛ օտարերկրյա ներդրողների համար գրավիչ երկիր լինելուց: Իհարկե, ՀՀ ներդրումային դաշտի բարելավման համար առաջնային քայլերը ստվերային տնտեսության, մոնոպոլիաների և կոռուպցիայի նվազեցումն է, սակայն դրանք համակարգային մոտեցումներ են, որոնք արդեն իսկ փորձում է իրագործել ՀՀ կառավարությունը: ՀՀ ներդրումային միջավայրում առկա են նաև բազմաթիվ այլ խնդիրներ, որոնց լուծման պարագայում հնարավոր կլինի ապահովել տեղական և արտասահմանյան ներդրումների ներհոսք դեպի ՀՀ տնտեսություն:

Հասկանալու համար, թե որքանով են մինչ օրս կատարած օտարերկրյա ներդրումները նպաստել ՀՀ ՀՆԱ-ի ավելացմանը, մենք էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ հաշվարկել ենք այդ ազդեցության գործակիցը: 1998-2018 թթ. համար բացահայտվել է հետևյալ փոխառնչությունը. ՕՈՒՆ-ի աճի տեմպի մեծացումը 1 դրամական միավորով նպաստում է ՀՆԱ-ի աճի ավելացմանը 1.23 միավորով, մինչդեռ 1998-2010 թթ. համար հաշվարկված նույն ցուցանիշը 1.1 էր: Մտացվում է, որ վերջին 8 տարվա ընթացքում ՕՈՒՆ-ը ավելի մեծ նպաստում է ունեցել ՀՆԱ-ի աճին, քան նախկինում, ինչը կարող է պայմանավորված լինել ավելի մեծ ավելացված արժեքի ստեղծմամբ: Հարկ է նշել նաև, որ մեր կողմից կատարված էկոնոմետրիկ հաշվարկները ցույց տվեցին նաև, որ ՕՈՒՆ-ը առավել մեծ չափով է նպաստել ՀՀ տնտեսական աճին ներդրման և դրան հաջորդող եռամսյակում¹:

Հիմնվելով Բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հաշվարկի վրա՝ կարող ենք նշել այն ոլորտները, որոնցում ԵՏՄ անդամ, ինչպես նաև հարևան Վրաստանի և Իրանի համեմատությամբ միայն ՀՀ-ն ունի ԵՏՄ շուկա արտահանման տեսանկյունից բացահայտ համեմատական առավելություն: Դրանք են՝ կենդանի ծառեր, թփեր, բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք, ծխախոտ և դրա արդյունաբերական փոխարինողներ, կաշվե իրեր, կենդանիների աղիքից իրեր, տրիկոտաժե հագուստ և պարագաներ, գլխարկներ ապրանքախմբերը: Ուստի այս ոլորտները

¹ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ www.armstat.am

կարելի է համարել ՀՀ տնտեսությունն այսօր արդեն ամենամեծ ներդրումների ներգրավման հնարավորություն ունեցողներից:

Գործարարության դյուրինության ինդեքսի 10 ենթակետերից 2-ում ՀՀ-ն ավելի վատ դիրքում է գտնվում, քան ԵՏՄ անդամ երկրները, իսկ 4-ում զիջում է ԵՏՄ անդամ առնվազն 3 երկրի, հարևան Վրաստանին զիջում է բոլոր ենթակետերով, իսկ Իրանին՝ միայն 1-ում¹: Այսպիսով, գործարարության դյուրինության ինդեքսի բարելավման համար ՀՀ-ն պետք է դիրքերի բարելավման քայլեր իրականացնի շինարարության թույլտվության ստացման, էլեկտրաէներգիայի միացման, փոքր ներդրողների պաշտպանության, հարկերի վճարման, պայմանագրերի կիրարկման և վեճերի քննման տեսանկյունից: Ընդ որում՝ նշված ցուցանիշներից ամենավատ դիրքում ՀՀ-ն գտնվում է շինարարության թույլտվության ստացման ցուցանիշով:

Իսկ ներդրումային ներուժի և ներդրումային ռիսկի գնահատման համար ընտրված 35 ցուցանիշներից Հայաստանը ԵՏՄ բոլոր երկրներին զիջում է միայն 5-ում, իսկ 13 ցուցանիշի մասով գրանցել է լավագույն արդյունքը: Մակայն Վրաստանին ՀՀ-ն զիջում է նշված 35 ցուցանիշներից 26-ով և գերազանցում է միայն 9-ով:

Իսկ ահա Իրանի պարագայում պատկերն այլ է. 35 ցուցանիշից 22-ի տեսանկյունից ՀՀ դիրքերն անհամեմատ ավելի լավ են, քան ԻԻՀ-ինը: Նշված 35 ցուցանիշի տեսանկյունից մտահոգիչ են ՀՀ ցուցանիշերը ՕՈՒՆ-ի ներհոսքի, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, աղքատության, բիզնեսի կողմից վճարվող հարկերի տեսանկյունից²:


Վերլուծությունն առավել հիմնավոր դարձնելու համար մեր կողմից փորձ է արվել սոցիոլոգիական հարցման միջոցով բացահայտել ներդրումային դաշտի թերությունները ՀՀ-ում: Հարցմանը մասնակցել է 500 կազմակերպության ներկայացուցիչ³:

Հարցմանը մասնակցած կազմակերպություններն ընտրվել են հետևյալ ոլորտներից (գծապատկեր 1).

¹ Վերլուծությունը կատարվել է հեղինակի կողմից՝ համաձայն <http://www.doingbusiness.org/ru/rankings> կայքի տվյալների

² Վերլուծությունը կատարվել է հեղինակի կողմից՝ համաձայն <http://knoema.com>, <http://www.theglobaleconomy.com>, <http://www.tradingeconomics.com> կայքերի տվյալների:


³ Նշենք, որ ՀՀ-ում գործող կազմակերպությունների շրջանում 95 % վստահության մակարդակ և առավելագույնը 5 % սխալի մակարդակի պահպանմամբ հարցում իրականացնելու համար՝ համաձայն սոցիոլոգիական հարցման սկզբունքների, անհրաժեշտ էր հարցում իրականացնել 384 կազմակերպության շրջանում:



Գծապատկեր 1. Կազմակերպությունների ոլորտային բաշխումը

Ինչպես ՀՀ տնտեսության ոլորտներում կազմակերպությունների բաշխումն է, այդպես էլ մեր հարցման պարագայում ռեսպոնդենտների մեծամասնությունը ծառայությունների ոլորտից է ընտրվել:


Հարցմանը մասնակցած կազմակերպությունների չափերը ներկայացված են գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. Կազմակերպությունների տարանջատումը ըստ չափի


Այստեղ ևս փորձել ենք պահպանել ՀՀ-ում գործող կազմակերպությունների առկայությունն ըստ չափի:

Հարցված կազմակերպությունների մի մասի գործունեությունն ուղղված է միայն տեղական պահանջարկի բավարարմանը, մյուս մասինը՝ տեղական և արտաքին շուկաների պահանջարկին (գծապատկեր 3):




Գծապատկեր 3. Կազմակերպությունների բաշխումն ըստ թիրախավորած շուկայի

Համաձայն հարցման արդյունքների՝ դրան մասնակցած կազմակերպությունների 3 %-ը սկսնակ է, 62 %-ը ՀՀ-ում գործում է արդեն 1-10 տարի, իսկ 35 %-ը՝ 10 տարուց ավելի (գծապատկեր 4):




Գծապատկեր 4. ՀՀ-ում կազմակերպության գործունեության տևողությունը

Ռեսպոնդենտների 52.5 %-ը նշել է, որ կազմակերպությունը հիմնադրելիս հաշվի է առել տվյալ ոլորտում նախկինում իր ունեցած փորձը, 47.3 %-ը՝ իր տնօրինության ներքո եղած ֆինանսական միջոցների չափը, 19 %-ը՝ տվյալ ոլորտին պետության կողմից տրամադրվող աջակցությունը, 0.8 %-ը՝ նորարարական մոտեցմամբ շուկա մուտք գործելու իր հնարավորությունը և այլն (գծապատկեր 5):



Գծապատկեր 5. Ներդրում կատարելու որոշման վրա առավելապես ազդած գործոնները


Կազմակերպության գրանցման ընթացքում հանդիպած խոչընդոտները ներկայացված են գծապատկեր 6-ում:



Գծապատկեր 6. Կազմակերպության գրանցման ընթացքում հանդիպող խոչընդոտները


Տվյալ պարագայում այլ պատասխանների շարքում գերակշռում են հարկային, մաքսային օրենսդրությունների միջև առկա անհամապատասխանությունները, պատկան մարմինների դանդաղ աշխատանքը, օրենքների երկիմաստ մեկնաբանությունները և այլն:

Հարցված կազմակերպությունները նշել են նաև իրենց գործունեության ընթացքում աշխատուժի կամ կապիտալի հետ առնչվող խնդիրները (գծապատկեր 7-8):



Գծապատկեր 7. Աշխատողի ներգրավմանն առնչվող խնդիրները


Աշխատողների մասնագիտական հմտությունների անհամապատասխանությունը կազմակերպության պահանջներին ամենահաճախ հանդիպած խնդիրն է, դրան հաջորդում են աշխատողների արտագաղթն ու աշխատանքային ռեսուրսների պակասը կամ տվյալ ոլորտում և տվյալ տարածաշրջանում՝ առհասարակ բացակայությունը:



Գծապատկեր 8. Կապիտալի ներգրավմանն առնչվող խնդիրները

Կապիտալի ներգրավման տեսանկյունից ամենաշատ բարձրաձայնվող խնդիրը վարկային բարձր տոկոսադրույքն է սկսնակ ներդրողի համար, դրան հաջորդում են վարկի առավելագույն սահմանաչափի անհամապատասխանությունը ձեռնարկության հիմնադրման համար անհրաժեշտ կապիտալի չափին և վարկավորման համար պահանջվող գրավի առկայությունը: Մա հատկապես արդիական է մարզերում գործող կազմակերպությունների համար, օրինակ՝ պահածոների գործարան, հյուրանոց և այլն, որոնց հիմնադրման համար անհրաժեշտ գումարը շատ ավելի մեծ է, քան սեփականատիրոջ տնօրինած գրավադրվող գույքի արժեքն է:


Մենք փորձել ենք պարզել նաև հարկային վարչարարության և հարկային օրենսդրության հետ կապված խոչընդոտները (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. Հարկային վարչարարության և հարկային օրենսդրության հետ կապված խոչընդոտները


Այս տեսանկյունից հիմնական խնդիրները բարձր հարկադրույքներն են, ինչպես նաև հարկադրույքների հաճախակի փոփոխությունից առաջացող անորոշությունը:

Մրցակիցներին առնչվող խնդիրներից մասնավորապես նշվում է գերիշխող դիրքի չարաշահումը, մաքսային մարմինների կողմից խտրական մոտեցումը և այլն (գծապատկեր 10):




Գծապատկեր 10. Մրցակիցներին առնչվող խնդիրները

Այլ խոչընդոտների շարքում հաճախ նշվում են գազի և էլեկտրաէներգիայի բարձր սակագինը, ներմուծվող հումքի և սարքավորումների բարձր մաքսադրույքը, ճանապարհների ոչ բավարար վիճակը և այլն (գծապատկեր 11):




Գծապատկեր 11. Կազմակերպության գործունեության սկզբնական ժամանակահատվածում հանդիպող այլ խոչընդոտներ

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կազմակերպություններն իրենց անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակասը լրացնում են հիմնականում սեփական շահույթի վերաներդրմամբ, վարկերի միջոցով, նոր ներդրողների ներգրավմամբ և այլն (գծապատկեր 12):




Գծապատկեր 12. Ֆինանսական միջոցների պակասը լրացնելու աղբյուրները

Արտահանման և ներմուծման ընթացքում հանդիպած հիմնական խոչընդոտները փոխարժեքի տատանումից կազմակերպության կրած վնասներն են և անհրաժեշտ փաստաթղթերի բազմազանությունը (գծապատկեր 13-14):




Պատասխաններ 13. *Արտահանման ընթացքում հանդիպած խոչընդոտները*



Պատասխաններ 14. *Ներմուծման ընթացքում հանդիպած խոչընդոտները*

Թեպետ ԵՏՄ անդամակցությունից դեռ բավարար ժամանակ չի անցել հստակ պատկեր ստանալու համար, այդուհանդերձ ռեսպոնդենտները ԵՏՄ անդամակցության ազդեցությունն իրենց կազմակերպության գործունեության վրա գնահատում են հետևյալ կերպ. աճել կամ նվազել են հումքի գները, ինչպես նաև առաջացել են մաքսային ձևակերպումների բարդություններ (պատասխաններ 15):



Պատասխաններ 15. *ԵՏՄ անդամակցության ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա*

Ռեսպոնդենտներին խնդրել ենք նշել նաև իրենց գործունեության վրա առավել բացասական և առավել դրական ազդող գործոնները: Ըստ այդմ՝ առավել

լապես բացասական ազդող գործոնների շարքում են օրենքների անկատարությունը, գների և փոխարժեքի փոփոխությունից առաջացող անորոշությունը, դրանց հաջորդում են հարկային դրույքաչափերի մեծությունը, վարկերի տրամադրման պայմանները և այլն: Առավելապես դրական են ազդել կազմակերպությունների գործունեության վրա պետության կողմից վարվող արտաքին քաղաքականությունը, հարկային դրույքաչափերի նվազեցումը և այլն:

Այսպիսով, ՀՀ-ում գործող իրավաբանական անձանցից 500-ի շրջանակում մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցման (95 % վստահության մակարդակի և առավելագույնը 5 % սխալի մակարդակի պահպանմամբ) հիման վրա բարձրաձայնված ամենաէական խնդիրները հետևյալներն են՝ առևտրային վարկի բարձր տոկոսադրույք՝ 52.7 %, առևտրային վարկի համար պահանջվող գրավի առկայություն՝ 27.3 %, նոր ներդրողների ներգրավման դժվարություն՝ 25.7 %, աշխատողների մասնագիտական հմտությունների անհամապատասխանություն կազմակերպության պահանջներին՝ 49.2 % (այս խնդիրը բարձրաձայնել են հիմնականում ծառայությունների ոլորտի ձեռնարկությունները), բարձր հարկադրույքներ՝ 36.6 % (այս խնդիրը բարձրաձայնել են հիմնականում փոքր և գերփոքր, սակայն արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունները), մաքսազերծման ժամանակ հսկիչ գների չարդարացված չափի արդյունքում առաջացող վճարումներ՝ 24.2 % և այլն:

Այս խնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ քաղաքականությունը կարող է նպաստել ՀՀ տնտեսությունում նոր ներդրողների աճին, ինչպես նաև արդեն իսկ գործող կազմակերպությունների ընդլայնմանը: Իհարկե, «տնտեսական հեղափոխություն» եզրույթ գոյություն չունի մասնագիտական գրականության մեջ: Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում մանրամասնել տվյալ պարագայում, թե ինչ ասել է ներդրումային միջավայրի բարելավման հեղափոխական մոդելը: Հեղափոխական մոդելի ներքո մենք կհասկանանք այն քայլերի ամբողջությունը, որոնք չեն իրականացվել մինչ օրս գործող որևէ կառավարության կողմից, սակայն կարող են էականորեն բարելավել ներդրումային միջավայրը, ինչպես նաև այն անհրաժեշտ միջոցառումները, որոնք անխուսափելիորեն պետք է իրականացվեն նախորդ իշխանություններից ժառանգություն մնացած ծրագրերի մի մասի շտկման և արդյունավետության բարձրացման համար:

Այսպիսով, գործարարության համաթվի, ներդրումային ռիսկի և ներդրումային դաշտի վրա ազդող ցուցանիշների վերլուծությամբ, ինչպես նաև ՀՀ-ում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքում բացահայտված խնդիրների չեզոքացման և ներդրումային միջավայրի բարելավման նպատակով ներկայացվող առաջարկությունները կներկայացնենք ստորև:

1. Ներդրումային դաշտի կարգավորման համար պատասխանատու կառույցների գործառույթների վերանայում

Ներկայիս կառուցվածքով ՀՀ կառավարությունը նախկինից ժառանգություն է ստացել կառավարության կողմից տարբեր տարիներին ստեղծված բազմաթիվ

կառույցներ, որոնք, որպես կանոն, կրկնում են միմյանց, ինչպես նաև այս կամ այն նախարարության գործառույթը: Այս երևույթի շարունակականության պարագայում երբևէ կառավարության տեսանկյունից հնարավոր չի լինի բացահայտել, թե տվյալ գործառույթի թերի իրականացումը կամ չիրագործումը հատկապես ո՞ր կառույցի պատասխանատվության ներքո էր գտնվում: Իսկ ստեղծված կառույցներն էլ իրենց հերթին չեն ջանա իրագործել տվյալ գործառույթը, քանի դեռ հստակ չէ, որ դրա ոչ լիարժեք իրագործման պարագայում հենց իրենք են պատասխանատվություն կրելու: Նմանատիպ կառույցները բազմաթիվ են: Օրինակ՝ 2015 թ. ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ստեղծվեց Հայաստանի զարգացման հիմնադրամը, որը ներկայումս վերաբրենդավորված Բիզնես Արմենիան է¹: Այս կառույցի հիմնական գործառույթները ներդրումների ներգրավումն ու արտահանման խթանումն է, որոնք հանդիսանում են նաև ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործառույթները (թեպետ կառույցը ստեղծված է նախարարության կազմում, այդուհանդերձ նախարարությունում առկա են նաև նշված գործառույթների իրականացման առանձին ստորաբաժանումներ): Ընդ որում՝ նշված գործառույթները մասամբ իրականացվում են նաև Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության, ՓՄՁ ՋԱԿ-ի, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և այլ պետական կառույցների կողմից: Բազմիցս միմյանց կրկնում են նաև ՓՄՁ ՋԱԿ-ի և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործառույթները և այլն: Ընդ որում՝ չի առաջարկվում գործող կառույցների կամ նրանց մի մասի վերանայում, պարզապես անհրաժեշտ է հստակեցնել նրանց գործառույթները և բացառել գործառույթների կրկնությունը:

2. Ներդրումային առցանց հարթակի ստեղծում կամ նախկինում մշակված հարթակի էական բարեփոխում՝ ծրագրային համապատասխան լուծումների միջոցով

Մեր կողմից առաջարկվում է ստեղծել ներդրումային առցանց հարթակ, որտեղ կհանդիպեն ներդրման կարիք և ներդրման հնարավորություն ունեցող տնտեսական սուբյեկտները: 2017 թ. Հայաստանի զարգացման հիմնադրամը մշակեց նման մի հարթակ՝ investmentprojects.am, որը, սակայն, շատ թերի էր և ներկայումս անգամ չի էլ գործում անհայտ պատճառներով²: Այդուհանդերձ այդ կայքի ստեղծման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է զգալի գումար:

¹ <https://www.businessarmenia.am/about>

² Կայքի գործունեության դադարեցման պատճառների մասին փորձել ենք տեղեկանալ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունից, ինչպես նաև Բիզնես Արմենիայից, սակայն որևէ պատասխան մինչ օրս առկա չէ: Թերևս սա արդեն իսկ ապացուցում է 1-ին հիմնապան անհրաժեշտությունը, քանի որ կայքը ստեղծվել էր նախարարության նախաձեռնությամբ Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից, սակայն որևէ կերպ չէր արձանագրվել, թե որ կառույցն է պատասխանատու դրա գործունեության շարունակականության ապահովման, որը, դրա առաջնիկն և հետագա զարգացման համար, ուստի ներկայումս թե՛ նախարարությունը, թե՛ Բիզնես Արմենիան պատասխանում են, որ կայքի գործունեության մասին տեղեկատվությունն անհրաժեշտ է ճշտել մյուս կառույցից:

Ուստիև կարծում ենք, որ անգամ բավական անհաջող և մակերեսայնորեն ստեղծված լինելու պարագայում կայքը կարող էր շարունակել իր գործունեությունը՝ վերափոխված տարբերակով: Մեր կողմից առաջարկվող տարբերակում¹ կայքը կունենա առանձնացված բաժիններ՝ start-up-ի համար և տարբեր ոլորտներում գործող սկսնակ և ոչ սկսնակ բիզնեսների համար: Ներդրման կարիք ունեցողների համար կայքը կսահմանի պարտադիր դաշտեր, որոնք պետք է լրացվեն գրանցվելիս, այդ թվում և՛ էլեկտրոնային ստորագրություն: Նրանք մուտք կգործեն համակարգ առանձին մուտքանունով և գաղտնաբառով և կունենան հնարավորություն իրենց հատկացված օգտահաշվում ստանալ հարցեր կամ մեկնաբանություններ պոտենցիալ ներդրողներից՝ դրանց պատասխանելու հնարավորությամբ: Ներդրման կարիք ունեցողների համար գրանցումը կարող է լինել միանվագ 3000 ՀՀ դրամ անդամավճարով, որի օրենսդրական կանոնակարգման համար առաջարկում ենք Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի հոդված 16-ում կատարել հետևյալ փոփոխությունը. «Ներդրումային հարթակում ձեռնարկությունների պետական գրանցման համար պետական տուրքը սահմանել բազային տուրքի եռապատիկի չափով»: Ներդրողների գրանցումը կլինի անվճար: Մեր կողմից առաջարկվող մեխանիզմով հարթակը հնարավորություն կտա ներդրողներին միաժամանակ գումարներ ներդնել տարբեր նախագծերում կամ գործող ձեռնարկություններում՝ այսպիսով դիվերսիֆիկացնելով և նվազեցնելով ռիսկերը: Մյուս կողմից՝ հարթակը հնարավորություն կտա նաև օտարերկրյա տնտեսական սուբյեկտներին ևս ներդրումներ իրականացնել ներկայացված տարբեր նախագծերում: Բացի այդ, կայքը պետք է նախատեսի հնարավորություն նաև յուրաքանչյուր նախագծի համար անհրաժեշտ գումարի մի մասի ներդրման համար՝ հնարավորություն տալով տվյալ նախագծի համար անհրաժեշտ գումարը հավաքագրել տարբեր աղբյուրներից: Սա ունի 3 հիմնավորում. նախ՝ հնարավորություն կտրվի ներդրողին տարբերակել իր ներդրումային պորտֆելը, բացի այդ՝ հնարավորություն կտրվի նախագծի հեղինակին կախում չունենալ մեկ ներդրողից, և ի վերջո՝ նախագծի հեղինակը կկարողանա առաջարկվող բոլոր ներդրողների հետ բանակցություններ վարել և ընտրել իր տեսանկյունից առավել վստահելիներին: Այսինքն՝ մեր առաջարկած մոդելում ընտրության հնարավորություն է տրվում ոչ միայն ներդրողին, որն առկա էր investmentprojects.am-ի պարագայում, այլ նաև նախագծի հեղինակին: Կայքի ստեղծման մանրամասնությունները շատ են, ուստի դրանց կանդրադառնանք անհրաժեշտության դեպքում: Հետագա զարգացման պարագայում կայքը կունենա նաև համապատասխան բջջային հավելված՝ առավել ճկունություն ապահովելու համար: Հարկ է նշել նաև, որ կայքի ստեղծումը ինքնին չի կարող հանդիսանալ ներդրումների ներգրավմանն ուղղված քայլ: Անհրաժեշտ է նաև անհապաղ իրականացնել դրա առաջնդում արտերկրում ինչպես սոցիալական ցանցերի,

¹ Կայքի նախատիպը մեր կողմից մշակվել է որպես լավագույն հարթակների օրինակ դիտարկելով Ֆիլիպինների <https://www.angelinvestmentnetwork.com.ph/>, Ռուսաստանի <https://rusinvestproject.ru/katalog-investproektov/>, ԵՄ-ի <https://ec.europa.eu/eipp/desktop/en/index.html?2nd-language=en> կայքերը և այլն:

այնպես էլ արտերկրում գործող ՀՀ ներկայացուցչությունների կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ստորաբաժանումների միջոցով:

3. Ներդրողներին պատասխանող «1 պատուհանի սկզբունքի» կամ «թեժ գծի» ներդրում

Ներկայումս ՀՀ տնտեսությունում ներդրում կատարող անձինք հնարավորություն ունեն արտոնյալ պայմաններով արտադրված ապրանքն արտահանելու դեպի ԵՏՄ շուկա: Սակայն ՀՀ տնտեսությունը օտարերկրյա ներդրողների համար դեռևս մնում է չբացահայտված, նրանք դժվարանում են ՀՀ տնտեսությունում գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ տեղեկատվություն գտնելու հարցում՝ իրենց հասանելի լեզվով ոչ բոլոր օրենքների և իրավական ակտերի առկայության, ինչպես նաև դրանց փոփոխությունների պատճառով: Ընդ որում՝ այդ խնդիրն առկա է նաև տեղական գործարարների պարագայում: Նրանց համար, նախ և առաջ, բարդ է ընկալել շարունակաբար փոփոխվող օրենսդրությունը: Բացի այդ, հասկանալի է, որ գործարարները, իսկ առավել ևս սկսնակ գործարարները միշտ չէ, որ իրավաբան են և կարող են ճիշտ մեկնաբանել նոր ընդունված կամ նախկինից գործող օրենքը: Այդ պատճառով առաջարկում ենք ներդնել տեղական և օտարերկրյա գործարարների հարցերին պատասխանող, ինչպես նաև օտարերկրյա գործարարների և պետական մարմինների միջև առաջացող խնդրահարույց իրավիճակների լուծմամբ զբաղվող «1 պատուհանի սկզբունք» կամ «թեժ գիծ»՝ իր պաշտոնական կայք-էջով, ինչպես նաև դրան կից էջերով linkedin և facebook սոցիալական հարթակներում: Մեր առաջարկած մոդելի պարագայում գործարարը, կապվելով տվյալ 1 պատուհանի կամ թեժ գծի հետ, կներկայացնի իրեն հետաքրքրող բոլոր հարցերը, որոնց պատասխանները կմշակվեն և կներկայացվեն նրան իր թողած կոնտակտային տվյալների միջոցով՝ որոշակի սահմանված ժամկետում: Գաղտնիք չէ, որ ներկայումս ՀՀ պետական կառավարման համակարգում դեռևս առկա է նախորդից ժառանգած փորձը, երբ որևէ հարցի պատասխան ստանալու համար ստիպված ես ժամերով կամ օրերով զանգահարել կամ նամակագրական կապ հաստատել այս կամ այն կառույցի տարբեր ստորաբաժանումների հետ¹: Սա ամենին էլ դրական լույսի ներքո չի ներկայացնում ՀՀ ներդրումային միջավայրը գործարարի և հատկապես օտարերկրյա ներդրողի աչքերում: Առաջարկվող մոդելի պարագայում գործարարը կամ պոտենցիալ ներդրողը չեն վատնի իրենց ժամանակը համապատասխան նախարարության կամ առընթեր մարմինների

¹ Մասնավորապես՝ investmentprojects.am կայքի գործունեության դադարեցման պատճառների մասին մեկնաբանություն ստանալու փորձերը ձգձգվեցին 2 օր. արդյունքում այդպես էլ չպարզվեց կայքի գործունեության դադարեցման պատճառը: Միայն Բիզնես Արմենիայի մեկ շաբաթյաին աշխատակից կարծիք հայտնեց, որ հավանաբար դա կապված է կառավարության փոփոխության հետ, և ներկայիս կառավարությունը պետք է հաստատի առկա ծրագրերը, որպեսզի դրանք շարունակվեն՝ նշելով, որ դա պաշտոնական պատասխան չէ, այլ իր կարծիքը: Թերևս ավելի լուրջ և հիմնավոր հարցերի առկայության պարագայում գործարարներն ավելի շատ ժամանակ կծախսեն:

տարբեր ստորաբաժանումներ զանգելու վրա: Նրանց փոխարեն դա կիրակա-նացնեն 1 պատուհանի կամ թեժ գծի համապատասխան աշխատակիցները և նրանց կներկայացնեն ամփոփ և հստակ պատասխան, թե իրենց հարցի որ մասը որ օրենքի որ կետի համաձայն և ինչպես է կարգավորվում:

4. Համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպությունների գործունեության բարելավում

Հարցումները ցույց են տվել, որ ՀՀ մարզերում գործող մի շարք ձեռնարկություններ ունեն պետական աջակցության կարիք՝ վարկային արտոնությունների կամ երաշխավորման տեսքով՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած ֆորս-մաժորային իրավիճակի հաղթահարման և աշխատակիցների ու արտադրության ծավալի նախաճգնաժամային մակարդակի հասնելու համար: Այս դեպքում խոսքը վերաբերում է միջին և խոշոր կազմակերպություններին, ուստի մեր կողմից առաջարկվում է համայնքի զարգացման խնդիր լուծող նորաստեղծ կամ ընդլայնման ծրագիր ունեցող կազմակերպություններին կազմակերպության ստեղծման, առողջացման կամ ընդլայնման կենսունակ ծրագիր ներկայացնելու դեպքում տրամադրել պետական աջակցություն առևտրային բանկերից առանց համապատասխան գրավի առկայության՝ պետական երաշխավորմամբ վարկերի տրամադրման տեսքով: Այս պարագայում հաշվի է առնված այն հանգամանքը, որ համայնքում գործող միջին և խոշոր ձեռնարկատերերը մեծածավալ ներդրումների իրականացման համար չունեն պահանջվող ներդրման գումարին համապատասխանող արժեքի գրավ: Մեր կողմից մշակված այս դրույթի համաձայն՝ համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպություն կարելի է համարել առնվազն 200 աշխատատեղ ունեցող կամ ընդլայնման արդյունքում աշխատատեղերի քանակը առնվազն 200-ի հասցնող իրավաբանական անձին, որի 200 աշխատակիցների ամսական աշխատավարձը նվազ չէ 100000 ՀՀ դրամից: Այս պարագայում ուռճացված տվյալների ներկայացման, ինչպես նաև գրանցված, սակայն իրականում ավելի քիչ աշխատավարձի վճարման ռիսկից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել տույժ յուրաքանչյուր նմանատիպ բացահայտված դեպքի համար նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: Նշենք, որ 200 աշխատատեղի սահմանման համար հիմք ենք ընդունել ՀՀ մարզերի քաղաքաբնակ բնակչության թվաքանակը: Եթե ընդունենք, որ միջին վիճակագրական ընտանիքը 4 հոգի է, 200 հոգու աշխատանքով ապահովելով գրեթե բոլոր մարզերում հնարավորություն է ստեղծվում քաղաքաբնակ բնակչության 1 %-ին վեր հանել աղքատության գծից: Այս փոփոխության պարագայում նոր շունչ կստանան «Արագած» հյուրանոցը, որը չի կարողանում իրականացնել ընդլայնման ծրագիրը, «Արմավիրի պահածոների գործարանը», որն ընդհանրապես ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում կրած վնասներից հետո դարձել է օտարերկրյա սուբյեկտի՝ «Գազպրոմ Արմենիայի» սեփականություն, և բազմաթիվ այլ կազմակերպություններ:

5. Արտադրական գործունեություն իրականացնող փոքր կազմակերպությունների համար շրջանառության հարկով հարկման տարեկան շրջանառության չափի վերանայում

Մեր կողմից իրականացված հարցումները ցույց տվեցին, որ տոնավաճառում վաճառվող ապրանքի համար փաստաթուղթ չեն ներկայացնում փոքր արտադրողները, որոնք, ամենայն հավանականությամբ, շրջանառության հարկ վճարողներ են: Փաստաթուղթ չտրամադրելու հանգամանքն այս դեպքում, սակայն, ունի միանգամայն օբյեկտիվ հիմք. տարեկան 58.35 մլն դրամի շրջանառության շեմ սահմանելը՝ անկախ գործունեության տեսակից, ամեննին էլ արդարացի չէ: Այս շեմը միանգամայն ընդունելի է մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի, ինչպես նաև այլ ոլորտի գերփոքր կազմակերպությունների համար: Սակայն արտադրական գործունեություն իրականացնող փոքր ձեռնարկությունը, որն ունի, օրինակ, 15 աշխատակից, 58.35 մլն դրամ տարեկան շրջանառություն ունենալու պարագայում չի կարող ստանալ շահույթ, քանի որ այդ շրջանառությունից պետք է հանվեն հումքի, սարքավորումների գները, աշխատողների աշխատավարձերը, հարկերը և այլն: Այս պատճառով էլ փոքր կազմակերպությունները կխուսափեն փաստաթղթավորումից՝ ԱԱՀ-ի և շահութահարկ վճարողի դաշտ չանցնելու համար: Այս շեմի պահպանմամբ ՀՀ տնտեսությունում գործող փոքր ձեռնարկություններին առավել շահավետ կլինի ներմուծել ապրանքն ու վաճառել, քան արտադրել: Ուստի առաջարկում ենք ՀՀ շրջանառության հարկի մասին օրենքում փոփոխություն կատարել՝ կախված կազմակերպության գործունեությունից՝ արտադրող կազմակերպությունների համար այս շեմը բարձրացնելով մինչև 100 մլն, քանի որ հենց սա է այն սահմանաչափը, որի պարագայում ձեռնարկությունը համարվում է փոքր՝ ըստ ՀՀ օրենսդրության:

6. Որոշակի գումարից պակաս տարեկան շրջանառություն ունեցող, ինչպես նաև սկսնակ գործարարներին ուղղված հարկային բարեփոխումներ

Իրականացված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ սկսնակ բիզնեսները գրեթե միշտ գործունեության սկզբում գերադասում են գործել ստվերում մինչև որոշակի զարգացման մակարդակի հասնելը: Ուստի ստվերայնության մակարդակի կրճատման և ներդրումային ակտիվության խրախուսման նպատակով առաջարկում ենք ՀՀ Հարկային օրենսգրքի գլուխ 23-ի 127-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն, համաձայն որի՝ start-up բիզնեսները կազատվեն շահութահարկի վճարումից մինչև 2 տարի ժամանակահատվածով, իսկ արտադրական գործունեություն իրականացնող նորաստեղծ ձեռնարկությունները՝ 6 ամսից մինչև 1 տարի ժամկետով՝ որոշակի քանակի աշխատատեղերի ապահովման պարագայում:

7. Ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ի գանձման պայմանների վերանայում

Ներկայումս, համաձայն ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի, ներմուծվող ապրանքի համար ԱԱՀ-ն գանձվում է սահմանին, որը, սակայն, լրացուցիչ բեռ է դառնում

ձեռնարկատերերի համար: Այս տեսանկյունից առաջարկում ենք ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում ԱԱՀ դաշտում գործող, ինչպես նաև շրջանառության հարկ վճարող ՀՀ իրավաբանական անձանց համար ներմուծված ապրանքի ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված տասնօրյա ժամկետը փոփոխել և սահմանել 1 տարի ժամանակահատված՝ հաշված ապրանքի մաքսագերծման օրվանից: Սա, փաստորեն, հնարավորություն կտա սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ ունեցող կազմակերպություններին ներմուծել 20 %-ով ավելի շատ ապրանք, այդ թվում և՛ հումք, որի գոնե որոշակի մասի իրացումից կամ վերամշակումից հետո միայն կվճարվի ԱԱՀ-ն. այսպիսով հնարավորություն կստեղծվի ապրանքաշրջանառության ծավալների աճի համար՝ բազմարկչի էֆեկտով աշխուժացնելով տնտեսության առանձին հատվածները ևս: Առաջարկվող փոփոխության պարագայում, իհարկե, այս մասով կնվազեն ամսական կամ եռամսյակային կտրվածքով բյուջեի մուտքերը, սակայն տարեկան կտրվածքով դրանք էապես կաճեն՝ բազմարկչի էֆեկտի ազդեցությամբ:

8. ՀՀ և ԼՂՀ տնտեսական սուբյեկտների միջև իրականացվող տնտեսական գործարքների պայմանների բարելավում

Հարցումների արդյունքում պարզ դարձավ նաև, որ ներկայումս ՀՀ և ԼՂՀ իրավաբանական անձանց միջև իրականացվող գործարքների պարագայում առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ ոչ ռեզիդենտի շահութահարկի տեսքով: Իհարկե, խնդիրը տվյալ պարագայում տնտեսական հարթությունից չի առաջանում: Սակայն հաշվի առնելով դրա ընդգրկման մասշտաբները և դրա արդյունքում ՀՀ և ԼՂՀ տնտեսական սուբյեկտների կրած վնասները՝ առաջարկում ենք տնտեսական գոնե միջանկյալ լուծում տվյալ խնդրին: Դա կարող է լինել, օրինակ, ՀՀ և ԼՂՀ միջև կնքվող կրկնակի հարկումը բացառող համաձայնագրի տեսքով՝ ՀՀ և ԼՂՀ իրավաբանական անձանց միջև տնտեսական գործարքների իրականացման պարագայում, կամ գոնե որոշակի գաղտնի համաձայնագրի տեսքով՝ իրավական տեսանկյունից խնդիրներից խուսափելու համար:

9. Արտահանման ներուժ ունեցող կազմակերպություններին միջազգային ցուցահանդեսներում ներկայանալու աջակցության տրամադրում

Սոցիոլոգիական հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ինչպես ապրանքներ արտադրող, այնպես էլ ծառայություն մատուցող փոքր և միջին ձեռնարկատերերը ունեն արտաքին շուկաներում գործընկերներ գտնելու և վստահության մթնոլորտ ստեղծելու խնդիր: Որպես խնդրի լավագույն լուծում՝ նրանցից շատերը կընտրեին միջազգային արտադրական ցուցահանդեսներին մասնակցելու տարբերակը, եթե դրա համար տրամադրվեր որոշակի ֆինանսական աջակցություն: Այս տեսանկյունից մեր կողմից առաջարկվում է յուրաքանչյուր տարի ընտրել 1 ոլորտ, որի արտահանման խրախուսումը կլինի տվյալ տարվա հրամայականը, և ֆինանսավորել տվյալ ոլորտի կազմակերպությունների ներկայացումը ոլորտին առնչվող միջազգային ցուցահանդեսին՝ տրանսպորտային կամ

տաղավարի վարձակալության ծախսերի որոշակի մասի փոխհատուցմամբ:

Համանման եղանակով գյուղմթերքի ոլորտի կազմակերպությունների համար միջազգային ցուցահանդեսի մասնակցության աջակցությունը կարող է փոխարինվել Մոսկվայում նորաբաց Food city գյուղմթերքի հսկայական շուկայում ներկայանալու հնարավորության ընձեռմամբ հետևյալ մեխանիզմով. ՀՀ համապատասխան պետական կառույցը կվարձակալի Food city-ում, օրինակ, 50-100 քմ մեծությամբ տաղավար, որը վարձակալությամբ կտրամադրի գյուղմթերքի արտադրության կամ վերամշակման ոլորտում գործող մի քանի կազմակերպության միաժամանակ՝ 10-20 քմ տարածքով՝ 1 ամսով՝ հերթափոխության սկզբունքով: Մինևույն ժամանակ 20 քմ տարածք կհատկացվի Մոսկվայում գործող ՀՀ առևտրային ներկայացուցչության ներկայացուցչի, որտեղ նա կներկայացնի այն կազմակերպությունների արտադրանքների օրինակները, որոնց վարձակալության 1 ամիսն արդեն լրացել է, և նրանց փոխարինելու են եկել նոր կազմակերպություններ: Բնականաբար Food city-ի առաջին հարկում գտնվող պահեստում վարձակալված տարածքում կպահվեն տարբեր կազմակերպությունների արտադրանքները, իսկ առևտրային ներկայացուցչի կողմից դրանց վաճառքի պարագայում այդ վաճառքի որոշակի տոկոս կտրամադրվի պետությանը՝ վարձակալված պահեստի գումարի փոխհատուցման համար:

10. Արտահանման առցանց հարթակի ստեղծում

Առաջարկում ենք նաև ՀՀ արտահանող կազմակերպություններին աջակցելու նպատակով ստեղծել ՀՀ արտահանման հարթակ, որտեղ կազմակերպությունների գրանցումը կլինի կամավոր և ոչ մեծ չափի անդամավճարի պայմանով: Գրանցվող կազմակերպությունները կներկայացնեն տվյալ հարթակում իրենց արտադրանքի տեսականին՝ համապատասխան նկարագրությամբ: Արտերկրի գործարարը, մուտք գործելով կայք, կկարողանա ապրանքներ պատվիրել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի արտադրողից: Ինչպես հայտնի է, բազմաթիվ են դեպքերը, երբ հատկապես փոքր արտադրողները չեն կարողանում բավարարել մեկ պատվիրատուի համար անհրաժեշտ ծավալները: Այս հարթակը հնարավորություն կտա այս խնդիրը լուծել մի քանի արտադրողների արտադրանքի միաժամանակյա պատվիրման միջոցով: Իսկ տվյալ կայքի առաջնդման գործառույթը կդրվի տարբեր երկրներում գործող ՀՀ առևտրային ներկայացուցչությունների վրա, որոնց արդյունավետությունը ներկայումս այնքան էլ նկատելի չէ: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է օպտիմալացնել պետական ֆինանսավորմամբ գործող բոլոր կառույցների աշխատանքը՝ կա՛մ դրա արդյունավետության բարձրացման, կա՛մ տվյալ կառույցներից հրաժարման միջոցով: ՀՀ առևտրային ներկայացուցչությունները ներկայումս այդպիսի կառույցների շարքում են: Նրանց վրա պետք է դրվի ստեղծված արտահանման հարթակի առաջնդման գործառույթը իրենց իրավասության տակ եղած տարածաշրջանում գործարար միջավայրի հետ առերես շփման, linkedin սոցիալական հարթակի օգտագործման և այլ միջոցներով: Արտահանման հարթակի այցելությունների թվի աճի ցուցանիշի, ինչպես նաև դրանց աշխարհագրական տեղաբաշխման արդյունքում ակնհայտ կլինի

այս կամ այն ներկայացուցչության լավ կամ վատ աշխատանքը, որի արդյունքում էլ նրանք կշարունակեն իրենց գործունեությունը նույն անձնակազմով կամ տեղի կունենա անձնակազմի փոփոխություն: Բացի այդ՝ ներկայացուցչությունները, պարբերաբար շուկայի հետազոտություն իրականացնելով, կպարզեն շուկայում պահանջարկի փոփոխությունը և կտեղեկացնեն արտադրողներին՝ այսպիսով կողմնորոշելով նրանց նախատեսվող տեսականու արտադրության հարցում:

Այսպիսով, ինչպես ցույց տվեց վերլուծությունը, ՀՀ ներդրումային միջավայրը դեռևս ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք էապես խոչընդոտում են ներդրումների ներհոսքին: Այդ պատճառով մենք հնարավորինս ընդգրկուն վերլուծության հիման վրա բացահայտեցինք առկա խնդիրները և ներկայացրինք այն համալիր միջոցառումները, որոնց վրա կարող է հիմնվել ներդրումային դաշտի բարեփոխումները հետհեղափոխական Հայաստանում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇ (2019 թ.)

Մերի Մանուչարյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Մեծ է ապահովագրության դերը ագրարային ոլորտի արտադրական գործընթացների և գույքի օգտագործման ռիսկերի կառավարման ու դրանց հետևանքների կարգավորման գործում: Ըստ էության այն հանդիսանում է պետության կողմից գյուղատնտեսական արտադրանքի, հումքի, պարենի և այլ մթերքների արտադրության, վերամշակման և իրացման գործընթացների խթանման կարևորագույն պայման:

Շուկայական հարաբերությունների ձևավորման արդյունքում ՀՀ տնտեսության ագրարային հատվածում ձևավորվեցին նոր տնտեսական հարաբերություններ: Նախադրյալներ ստեղծվեցին գյուղում առկա արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական արտադրության զարգացման և արդյունավետության բարձրացման համար: Սակայն ագրարային ոլորտում իրականացված հախուռն սեփականաշնորհումը և բարեփոխումները ակնկալվող արդյունքների առումով դեռևս հեռու են սպասված արդյունքներից:

Գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՀ համախառն ներքին արդյունքում 2013-2017 թթ. միջին տվյալներով կազմել է 16.9 %¹, գյուղատնտեսությունում զբաղված են (2017 թ.) հանրապետության ընդհանուր զբաղվածների 31.3 %-ը կամ 317.1 հազար մարդ²: Իր նշանակությամբ ճյուղը բացառիկ է երկրի բնակչության պարենային ապահովության ու պարենային անվտանգության գործում:

Գյուղատնտեսությունը ՀՀ-ում, մշտապես ենթարկվելով անբարենպաստ բնակլիմայական պայմանների, բնական, տարերային աղետների ներգործությանը, դասվում է բարձր ռիսկայնություն ունեցող ճյուղերի շարքին:

Համաշխարհային բանկը Հայաստանը դասում է աշխարհի 60 ամենաաղետավտանգ երկրների թվին: Աշխարհում հայտնի 350 բնական վտանգներից Հայաստանին բնորոշ են շուրջ 110-ը: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանը բարդ ռելիեֆ ունեցող երկիր է՝ կտրուկ լեռնաշղթաներով, դաշտավայրերով և իհիստ մասնատված, բարձրության մեծ տատանումների տարածքով (բարձրությունների տարբերությունը ավելի քան 3500 մ է): Երկիրը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր: Հարկ է նկատել, որ այդ 110 բնական վտանգներից մեր հանրապետությանն առավել հաճախ

¹ Պարենային ապահովություն և աղքատություն: Վիճակագրական տեղեկագիր, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2018 թ. հունվար-սեպտեմբեր, Երևան, 2018, էջ 9:

² Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2013-2017: Վիճակագրական ժողովածու: Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Երևան, 2018, էջ 70:

սպառնում են շուրջ 10 տեսակը, որոնց ազդեցությունը կրում է աղետալի բնույթ:
Համաձայն ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայության տվյալների՝ ՀՀ տարածքը ենթակա է հետևյալ վտանգներին՝

- 0,5 % - փլուզումների ու քարաթափումների,
- 4,1 % - սողանքների (ավելի քան 2500 սողանք, որից 300-ը՝ բնակեցված տարածքներում),
- 12 % - ցրտահարությունների,
- 15 % - երաշտի,
- 17 % - կարկտահարման,
- 30 % - սելավների և հեղեղումների
- 100 % - ուժեղ երկրաշարժերի և այլն:

ՀՀ հողատարածքների 80 %-ից ավելին ենթակա է էրոզիայի, աղակալման կամ ալկալիացման, գերխոնավության, ջրակալման վտանգների ազդեցության¹:

Գյուղատնտեսության խոցելիությունը պայմանավորված է նաև հարաբերական սակավահողությամբ (ըստ 2018 թ. վիճակագրական տարեգրքի՝ վարելահողերը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի 21,8 %-ը)², սակավաջրությամբ, արտադրական, սոցիալական և ֆինանսական ենթակառուցվածքների ոչ բավարար կենսունակությամբ, ներդրումների անբավարարությամբ, ինստիտուցիոնալ առանձին կառույցների գործունեության անկատարությամբ և մի շարք այլ գործոններով:

ՀՀ ագրարային ոլորտում ռիսկերի կառավարման բնագավառում արդյունավետության բարձրացումը կարևոր ու առանձնահատուկ ռազմավարական նշանակություն ունի՝ հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտի դերը երկրի պարենային անվտանգության, գյուղական աղքատության հաղթահարման, տեղական արտադրության հաշվին պարենամթերքով ինքնաբավության (պարենային անկախության) մակարդակի բարձրացման, պարենամթերքի ներքին շուկայի կարգավորման, արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշռի բարելավման, սպառողների առողջության համար սնուցման լիարժեքության ապահովման տեսանկյունից: Ռիսկերի կառավարման բնագավառում արդյունավետ համակարգի ձևավորման հիմնախնդրի լուծումը վերապահված է ՀՀ պետական կառավարման մի շարք մարմիններին, մասնավորապես՝ ՀՀ գյուղատնտեսության, տարածքային կառավարման և զարգացման, բնապահպանության նախարարություններին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեին: Իսկ քանի դեռ մշակված չէ այդ բնագավառը կարգավորող միասնական ծրագիր (ռազմավարություն), հանրապետական, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների ու ՀՀ կառավարությանն առընթեր գերատեսչությունների գործունեության համակարգումը գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման ուղղությամբ լիարժեք չի իրականացվում: Բացի այդ, դեռևս լիարժեք չեն գնահատվել գյուղատնտեսության վարման ռիս-

¹ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը վնաս պատճառող բնական և մարդածին աղետների ռիսկերի նվազեցման ուղեցույց, Երևան, 2015, էջ 23:

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Երևան, 2018, էջ 301:

կերը՝ ըստ տարածաշրջանների ու վտանգների (սպառնալիքների) տեսակների, ուստի հստակ կանխորոշված չեն ռիսկերի կառավարման ուղղությամբ աշխատանքների բարելավման հիմնական ուղիները, այդ բնագավառում պետական աջակցության գերակայությունները, մեխանիզմները, ինչն անհրաժեշտ է հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման և ոլորտի կայուն զարգացում ապահովելու համար:

Այդուհանդերձ, գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման վերջին տասնամյակի որոշ դրական տեղաշարժերը ՀՀ պետական բյուջեի, վարկային միջոցների, դրամաշնորհների, տնտեսվարողների սեփական ներդրումների հաշվին իրականացվող հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, արոտների ջրարբիացման, հակասելավային, հակակարկտային, հակահեղեղային, անտառավերականգնողական, անտառաշերտերի ստեղծման, ինչպես նաև տարաբնույթ այլ միջոցառումների ուղղությամբ դեռևս խիստ անբավարար են, եթե հաշվի առնենք, որ տարերային աղետների հետևանքով հանրապետության տարբեր գոտիներում ամեն տարի միջին հաշվով ոչնչանում է բերքի 20-25 %-ը (շուրջ 15-20 մլրդ դրամի):

1990-ին գյուղատնտեսական կազմակերպությունների պարտադիր գույքային ապահովագրության (կենդանիների, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի) չեղյալ համարելը չուղեկցվեց հուսալի ապահովագրական պաշտպանվածության պատշաճ կազմակերպման կանոնների ստեղծմամբ: Գործադիր իշխանության կողմից ընդունված առանձին որոշումները չունեն համակարգային բնույթ: Համապատասխան իրավական-նորմատիվային բազայի և դրանց իրականացման մեխանիզմի բացակայությունը գյուղատնտեսական ապրանք արտադրողներին խիստ կախվածության մեջ դրեց շուկայի և բնակլիմայական պայմանների տատանումներից՝ իր բացասական հետևանքներն ունենալով գյուղատնտեսական կազմակերպությունների և ֆերմերային տնտեսությունների մեծ մասի ֆինանսական վիճակի վրա: Ցրտահարության, կարկտահարության և այլ բնակլիմայական պայմանների հետևանքով հնարավոր կորուստները մեղմելու և գյուղացիական տնտեսությունների ֆինանսական կայունություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ-ում ներդնել գյուղատնտեսության ապահովագրությունը:

Ապահովագրությունը վտանգներից պաշտպանվելու գործիք է, որի էությունը դարերի ընթացքում չի փոխվել, թեև զգալիորեն փոխվել են նրա կազմակերպման ձևերը: Այն աստիճանաբար դարձել է մարդկային կենսագործունեության անբաժան մասը: Պատմական ժամանակներից ի վեր վնասի փոխհատուցումը դարձել է անհրաժեշտություն, իր զարգացման ընթացքում կրել է էական փոփոխություններ ու տարածվել բազմաթիվ դեպքերի վրա¹:

Ըստ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ս որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի՝ գյուղատնտեսությունը համարվում է Հայաս-

¹ Աբգարյան Կ., Ճուղուրյան Ա., Ապահովագրական գործ, Երևան, 2007, էջ 9-11:

տանի Հանրապետության 3 առաջնահերթություններից մեկը¹, իսկ գյուղատնտեսության ապահովագրությունը համարվում է այդ ոլորտի առաջնային խնդիրներից: Սակայն հարկ է նշել, որ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի և կենդանիների՝ կարկտահարությունից, ցրտահարությունից, երաշտից, համաճարակից, ջրհեղեղից և այլ բնական աղետներից ապահովագրությունը կապված է որոշակի ռիսկերի հետ: Այս ոլորտի ապահովագրության առանձնահատկությունն այն է, որ հաճախ բացակայում են ճշգրիտ տվյալները, օրինակ՝ ապահովագրվող մշակաբույսերի բերքատվության մասին, և սա վերաբերում է հատկապես նոր ձևավորվող տնտեսություններին: Ինչպես նաև, կախված կլիմայական պայմաններից, նույն տարածաշրջանում գտնվող տնտեսությունները տուժում են միաժամանակ, և տվյալ պարագայում մեծ գումարներ են անհրաժեշտ լինում վնասը փոխհատուցելու համար: Հաջորդ առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ գյուղատնտեսության ապահովագրությունն էությամբ տարբերվում է դասական ապահովագրությունից: Դրա վառ օրինակն է բերքի կորստի ապահովագրությունը, որի դեպքում վնասի իրական չափի որոշումը շատ բարդ է, քանի որ կորստի պատճառ կարող է հանդիսանալ և՛ բնակլիմայական աղետը, և՛ մարդկային գործոնը: Ու քանի որ գյուղատնտեսության ռիսկերը մեծ են, ապահովագրական ընկերությունները նպատակահարմար չեն գտնում գործունեություն իրականացնել այս ոլորտում: Ի դեպ, նշենք, որ 2019 թ. փետրվար ամսին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և MicroFinance Strategy-ն (Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ծրագրի իրականացման համար խորհրդատվական ընկերություն) անցկացրին գյուղատնտեսական ապահովագրության վնասի գնահատման մասնագետների ուսուցման և սերտիֆիկացման անվճար դասընթացներ, որոնք վարում էին արտերկրից հրավիրված փորձառու մասնագետներ:

Ներկայումս Հայաստանում կիրառվում են մի շարք միջոցառումներ բնական աղետներից գյուղատնտեսության վնասների չափը նվազեցնելու ուղղությամբ (գյուղացիական տնտեսություններում տեղադրում են հակակարկտային տեղակայաններ, ներդրվում են հակակարկտային ցանցեր, փորձում են կիրառել ռոռզման կաթիլային եղանակը): Դրանք արդյունավետ կազմակերպելու համար հիդրոմետ ծառայությունը նախապես տեղեկացնում է ցրտահարությունների մասին, իսկ գյուղնախարարությունը՝ իրազեկում, թե ինչպես պաշտպանել այգիներն ու ցանքատարածությունները: Նշված միջոցառումները պահանջում են բավականին մեծ ֆինանսական ներդրումներ: Ընդհանրապես գյուղատնտեսության նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, ռիսկերի կանխարգելման հնարավորությունների ընդլայնումը հնարավոր է միայն պետական աջակցության պարագայում, և միայն այդ դեպքում գյուղացին կարող է հաղթահարել իր առջև ծառայած ռիսկերը:

Գյուղատնտեսության համար շրջադարձային նշանակություն ունի բերքի

¹ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ս որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց, Հավելված ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 28-ի N 141-Ս որոշման:

ստացման ավտոմատ համակարգի ներդրումը: Վերջինս հնարավորություն է ստեղծում ամբողջ վեգետացիայի ընթացքում համակարգչային ծրագրով հետևել բույսերի աճին և զարգացմանը, ավտոմատ կերպով կարգավորել ոռոգման, պարարտացման ու բուժման գործողությունները: Այս միջոցառումները բարձրացնում են ոչ միայն մշակաբույսերի բերքատվությունը, այլ նաև իջեցնում են համախառն բերքի կորստի ռիսկայնությունը¹:

«Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման» թեմայի ուսումնասիրության արդյունքում դոկտոր Կլեմանս Տատեն - Ժալերանը անդրադարձ է կատարում նաև ֆինանսական և շուկայական ռիսկերին՝ հատկապես շեշտադրելով, որ «Ֆերմերները ենթարկվում են այնպիսի ռիսկերի, որոնք չեն սահմանափակվում եղանակով և վնասատուներով: Նրանք հանդիպում են այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են՝ գնային տատանումները, բարձր արտադրական ծախսերը, ֆինանսավորման ծախսերը և շուկայի հասանելիության բացակայությունը»²:

Գյուղատնտեսության ապահովագրության վերահսկողությունը կատարվում է տվյալ երկրի իշխանության կողմից՝ նպատակ ունենալով՝

- արդար և թափանցիկ ապահովագրական շուկայի ձևավորումը,
- շուկայի ֆինանսական կայունության ապահովումը,
- ապահովադիրների շահերի պաշտպանությունը,
- շուկայի վարվելակերպի կանոնների պահպանումը,
- ապահովագրական հատուցումների տրամադրման ապահովումը,
- ֆինանսական խարդախությունների կանխումը,
- շուկայի մասնակիցների կողմից օրենսդրության պահանջների կատարումը,
- տնտեսության մասշտաբով ապահովագրության հիմնական գործառնությունների ապահովումը³:

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ստեղծման հիմնական նպատակներն են՝ պաշտպանել գյուղատնտեսական ապրանք արտադրողների գույքային շահերը և կայունացնել նրանց եկամուտները:

Գյուղատնտեսության ապահովագրության և դրա միջոցով գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման տարբեր երկրների ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար կարևոր պայման է հանդիսանում պետության մասնակցությունը, որն առանձին երկրներում տարբեր կերպ է արտահայտվում՝ կախված


¹ Ավետիսյան Ս. և ուրիշներ, Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Տնտեսագետ», 2016, 114 էջ («Ամբերդ» մատենաշար), էջ 5:

² «Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար», ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ, 2014 թ., էջ 7:

³ Սարգսյան Հ. Ի., Ապահովագրական վերահսկողությունը ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման համատեքստում, 2008, էջ 211-217, <http://lraber.asj-oa.am/426/4/Sargsian.pdf>

երկրի տնտեսական զարգացման մակարդակից, իրականացվող քաղաքականությունից, գյուղատնտեսության առանձնահատկություններից, ապահովագրական շուկայի զարգացվածության աստիճանից, բնակչության կենսամակարդակից և այլ գործոններից:

Ստորև բերված գծապատկերի միջոցով ներկայացված է ռիսկերի բաշխման և փոխանցման սխեմաները Բսպանիայի գյուղատնտեսությունում, որոնք հետագայում կարելի է կիրառել նաև ՀՀ գյուղատնտեսության մեջ:



Գծապատկեր 1. Ռիսկերի բաշխման և փոխանցման սխեմաները Բսպանիայի գյուղատնտեսությունում¹

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության իսպանական համակարգը պետության և մասնավոր հատվածի բազմակողմանի համագործակցության արդյունք է: Ապահովադիրները գյուղատնտեսական մթերքների արտադրողներն են, որոնք ապահովագրվում են հիմնականում իրենց կոոպերատիվների և միությունների միջոցով՝ կիրառելով փոխադարձ ապահովագրության մեխանիզմները: Բացի ֆերմերներից, համակարգի կարևոր և բաղկացուցիչ մաս են կազմում հետևյալ կառույցները՝

1. ENESA գյուղատնտեսական ապահովագրության պետական գործակա-

¹ OECD (2011) Managing Risk in Agriculture: Policy Assessment and Design, OECD Publishing, 2011, p. 230.

լությունը՝ որպես գյուղատնտեսության, ձկնաբուծության և սննդի նախարարությանն առընթեր գյուղատնտեսության ապահովագրության վարչություն:

2. AGROSEGURO գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության պոլիս (հիմնադրվել է 1980 թ.), որին մասնակցում են 33 ապահովագրական ընկերություններ, որոնք համամասնորեն բաժանում են ապահովագրական պատասխանատվությունը միմյանց միջև:

3. CCS-ը որպես էկոնոմիկայի նախարարության պետական վերաապահովագրական կազմակերպություն (հիմնադրվել է 1941 թ.), որն իրականացնում է պարտադիր օբլիգատորային վերաապահովագրություն, ինչպես նաև աղետային (մեծածավալ) ռիսկերի ապահովագրություն:

Աղյուսակ 1

Գյուղատնտեսության ապահովագրության խոշորագույն շուկաները աշխարհում և ՌԴ-ում, 2017 թ.¹

Երկիրը	Մշակաբույսերի ապահովագրված տարածքը, %	Ապահովագրության համակարգը	Սուբսիդիաները, %	Ապահովագրական պոլիս առկայությունը	Պետական վերաապահովագրություն
ԱՄՆ	85	Բազմառիսկային	>70	-	+
Չինաստան	35	Բազմառիսկային	80	+	Մասամբ (+/-)
Հնդկաստան	30	Բազմառիսկային	80	-	+
Կանադա	85	Բազմառիսկային և կարկուտից	55	-	+
Իսպանիա	60	Բազմառիսկային	50	+	+
Թուրքիա	23	Բազմառիսկային	50	+	+
Ֆրանսիա	55	Բազմառիսկային և կարկուտից	65 (բազմառիսկային)	-	-
Իտալիա	20	Բազմառիսկային	65	Մահմանափակ ձևով	-
Գերմանիա	60	Կարկուտից	0	-	-
Արգենտինա	58	Բազմառիսկային և կարկուտից	0	-	-
Հարավային Աֆրիկա	40	Բազմառիսկային և կարկուտից	0	-	-
Ռուսաստան	<2	Բազմառիսկային	Մինչև 50	-	-


Միջազգային փորձի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ գյուղատնտեսության ապահովագրությունը և դրա կառավարումը ռազմավարական կարևոր նշանակություն ունեն ոլորտի կայուն զարգացման, գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացման և երկրի պարենային ապահովության հիմնախնդիրների լուծման համար:

Այժմ մի փոքր անդրադարձ կատարենք գյուղատնտեսության ապահովագրության՝ աշխարհում գոյություն ունեցող խոշորագույն շուկաներին, որպեսզի կարողանանք Հայաստանի համար օպտիմալ տարբերակ առաջարկել:

Հարկ է նշել, որ տարբեր երկրներում գյուղատնտեսական մշակաբույսերի

¹ Годовой отчет 2017, Агрострахование для России, Национальный союз агростраховщиков, 2018 г., стр. 12.

ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ մտնելու ժամանակահատվածը տարբեր է (գծապատկեր 2).




Գծապատկեր 2. Ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը տարբեր երկրներում¹

Օրինակ՝ ԱՄՆ-ում և Կանադայում գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության պայմանագիրը սկսում է գործել պայմանագրի կնքման հաջորդ օրը ժամը 12:00-ին, Ավստրալիայում՝ 2 օրից, Իսրայելում պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագիրը ստորագրելուց 3 օր հետո, Իսպանիայում տվյալ ժամանակահատվածը կազմում է 6 օր, Թուրքիայում՝ 7 օր, իսկ ամենաերկար ժամանակահատվածը Լեհաստանում և Գերմանիայում է՝ 14 օր:

Այժմ ներկայացնենք գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության գծով ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովագրական ընկերության տեղյակ պահելու ժամկետները տարբեր երկրներում (գծապատկեր 3):

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ տարբեր երկրներում ապահովադիրների համար գոյություն ունեն տարբեր պահանջներ՝ ապահովագրական ընկերությանը տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին տեղյակ պահելու վերաբերյալ: Օրինակ՝ ինչպես տեսնում ենք գծապատկերից, ամենակարճ ժամանակահատվածում՝ տեղի ունեցած պատահարի մասին, այն է՝ 3 օրվա ընթացքում, պետք է տեղյակ պահեն Իսրայելի, Լեհաստանի և Ավստրալիայի ապահովադիրները, իսկ ամենաերկար ժամանակահատվածում՝ Թուրքիայի՝ 15 օրվա ընթացքում:

¹ www.agroinsurance.com



Գծապատկեր 3. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովագրական ընկերությունը տեղյակ պահելու ժամկետները տարբեր երկրներում (օրեր)¹

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետությունները մշակում և իրականացնում են ագրարային ոլորտի ռիսկերի ապահովագրության ներդրման և զարգացման խթանման քաղաքականություն: Մասնավորապես՝ ԱՊՀ երկրներից Ռուսաստանի Դաշնությունում կառավարությունը գյուղատնտեսության նախարարությանը կից ստեղծել է դաշնային պետական կազմակերպություն՝ «Ագրոպարենային արտադրության ոլորտում ապահովագրության պետական աջակցության դաշնային գործակալություն», որի հիմնական գործառույթներից է ապահովագրության զարգացման և պետական կարգավորման քաղաքականության իրականացումը, ինչը նաև նպատակահարմար կլինի իրականացնել Հայաստանում:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է վերջին տարիներին բնակլիմայական պայմանների վատթարացման և բնական աղետներից տուժած անձանց թվի ու կրած վնասներով և այդ վնասների լիարժեք հատուցման մեխանիզմների բացակայությամբ:

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրումն առաջին հերթին ունի կարևորագույն սոցիալական նշանակություն, քանի որ գյուղատնտեսական գործընթացները տնտեսական գործունեության ամենառիսկայիններից են, իսկ բազմապիսի ռիսկերի շարքում առավել դժվար կառավարվողները բնական և տարերային աղետներն են: Ուսումնասիրությունները վկայում են, որ վերջիններիս հետևանքով Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը միջին հաշվով պատճառվել է տարեկան 20.0 մլրդ դրամի վնաս:

Քանի որ գյուղատնտեսության ապահովագրության ներդրումը մեր երկրում

¹ www.agroinsurance.com

նորույթ է, ապա պետությունն այս դեպքում չպետք է միայն դրամական միջոցներ հավաքի կամ բաշխի, այլ նաև պետք է կարգավորի ֆինանսական հոսքերը և բաշխման հարաբերությունները շուկայականին բնորոշ մեխանիզմների ու կառույցների միջոցով:

Որքան էլ բնական ռիսկերի հասցրած վնասները մեղմելու նպատակով պետությունը փորձում է որոշակի օգնություն տրամադրել տարերային աղետներից տուժած գյուղացիներին, այնուամենայնիվ ՀՀ պետական բյուջեի հնարավորությունները խիստ սահմանափակ են, և, որպես կանոն, կորուստներն ամբողջովին չեն փոխհատուցվում:

Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման հիմնախնդիրների և գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները հիմք են տալիս ներկայացվող եզրակացությունների ու առաջարկություններ համար:

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրների լուծումը երկրի տնտեսության ագրարային ոլորտի կայուն ու համաչափ զարգացման հիմնական նախապայմաններից է: Այս բնագավառի բազմաթիվ խնդիրների աստիճանական լուծումը մեծապես կնպաստի ագրարային ոլորտի մրցունակության բարձրացմանը, ոլորտում տնտեսվարողների ֆինանսական վիճակի բարելավմանը, գյուղատնտեսական մթերքների (հումքի) արտադրության ծավալների ավելացմանը, գյուղական տարածքների զարգացմանը և վերոնշյալներով պայմանավորված՝ երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանն ու գյուղական աղքատության նվազմանը: Ուստի անհրաժեշտ է ստեղծված և կանխատեսվող իրավիճակի համալիր վերլուծության արդյունքում մշակել այնպիսի քաղաքականություն, որի իրականացումը հնարավորություն կընձեռի կանխել կամ մեղմել խոչընդոտող գործոնների բացասական ազդեցությունը և հնարավորինս ճիշտ օգտագործել գյուղատնտեսական արտադրությունում առկա բնատնտեսական ներուժը:
2. Ագրարային ոլորտը Հայաստանում բնութագրվում է դրա կողմից իրականացվող գործընթացների վարման բարձր ռիսկայնությամբ, քանի որ, այլ ոլորտների համեմատությամբ, այն ավելի շատ է ենթարկվում բնակլիմայական պայմանների ազդեցությանը, որն էլ հիմնականում պայմանավորում է ոլորտի խոցելիությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ գործող ռիսկերի խմբում ընդգրկվում են մարդածին գործոնով պայմանավորված, ինչպես նաև բազմաթիվ այլ ռիսկեր, ներառյալ խոշոր օբյեկտների հնարավոր տեխնածին վթարները, հակամարտությունները, շրջակա միջավայրի աղտոտվածությունը, էկոհամակարգերի խաթարումը, սննդամթերքի անվտանգությանն առնչվող ռիսկերը, ինչպես նաև միջազգային շուկայում պարենամթերքի գների անկայունությունը, էներգակիրների գնաճը, որը կարող է հանգեցնել երկրի գյուղատնտեսության մրցակցային հնարավորությունների նվազմանը:
3. Իրողությունն այն է, որ գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղա-

տնտեսության ապահովագրության նկատմամբ պահանջարկը դեռևս մեծ չէ, ինչը բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից մասնավորապես կարելի է առանձնացնել գյուղմթերք արտադրողների վճարունակության ցածր մակարդակը:

4. Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման միջազգային փորձը վկայում է այն մասին, որ շուկայական հարաբերությունների արմատավորումը զուգորդվում է մրցակցային միջավայրի ձևավորմամբ, տնտեսության կառուցվածքում մասնավոր հատվածի ընդլայնմամբ, ձեռնարկատիրական գործունեության խթանման շնորհիվ ներդրումների ներհոսքի ավելացմամբ: Նշվածի հետ մեկտեղ տեղի են ունենում պարենամթերքի շուկայի որոշակի անկանխատեսելիությունը, տնտեսվարողների որոշ խմբերի անվճարունակության բարձրացումը (սնանկացումը), հավաստի տեղեկատվության պակասի և մարքեթինգային աշխատանքների անկատարության հետևանքով՝ իրացման հիմնահարցերի ի հայտ գալը:
5. Հայաստանի գյուղատնտեսությունը դիվերսիֆիկացված է, զարգացած են ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության ոլորտներն, ընդ որում՝ վերջին տարիների տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 60 %-ը բաժին է ընկնում բուսաբուծությանը, որն առավելապես ենթարկվում է անբարենպաստ բնակլիմայական պայմանների (կարկտահարություններ, ցրտահարություններ, ջրհեղեղներ, սելավներ, երաշտ, սողանքներ, խորշակներ և այլն) ներգործությանը: Ըստ գնահատման՝ գյուղատնտեսությանը միայն անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետևանքով հասցված ամենամյա վնասը միջին հաշվով կազմում է առնվազն մինչև 20 մլրդ դրամ, ինչը զգալիորեն վատթարացնում է գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսվարողների սոցիալ-տնտեսական վիճակը: Թերևս այդ պատճառով էլ ապահովագրական համակարգը հանդիսանում է շուկայական տնտեսության առանցքային ինստիտուցիոնալ կառույցներից մեկը:
6. Գյուղատնտեսության ապահովագրություն իրականացնելու տեսանկյունից առանձնանում է գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ապահովագրությունը, քանի որ բարդություններ են առաջանում ռիսկերի հստակ սահմանման, վնասի չափի գնահատման, ապահովագրական գումարի որոշման առնչությամբ՝ հաշվի առնելով, որ գույքային ապահովագրության այլ ենթատեսակների համեմատությամբ՝ բուսաբուծությունում ապահովագրության օբյեկտը դեռ չստացված բերքն է: Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությունը դրսևորվում է համեմատաբար պակաս ռիսկայնությամբ, ավելի փոքր ծախսատարությամբ, մեթոդաբանական դյուրինությամբ, ուստի կազմակերպման առումով այն կարելի է համարել ավելի մատչելի, իսկ գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների ու առևտրային կազմակերպությունների շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների և այլ անշարժ գույքի ապահովագրությունն իրականացվում է այլ ոլորտներում՝ գույքի ապահովագրության հիմ-

նական սկզբունքներին (մոտեցումներին) համապատասխան և այդ առումով, ըստ էության, որևէ առանձնահատկություն չունի:

7. ՀՀ ագրարային հատվածում ապահովագրության համակարգի ներդրման գործընթացում պետության աջակցությունը արդյունավետության հիմնական նախապայմաններից է: Այդ մոտեցումը պահանջում է օրենսդրորեն ամրագրել գյուղատնտեսության ապահովագրության 3 գլխավոր կողմերի՝ գյուղատնտեսական մթերք արտադրողների (վերամշակողների), ապահովագրող ընկերությունների և պետության (ի դեմս լիազորված մարմինների) փոխհամագործակցության ձևերը, աջակցության ուղղությունները, չափերը և այլն: Այդ կապակցությամբ առաջարկվում է «Գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման և ապահովագրության մասին» ՀՀ օրենքի մշակումը և սահմանված կարգով ընդունումը՝ էլնելով ոլորտի առանձնահատկություններից և գործընթացը խոչընդոտող գործոնների հաղթահարման անհրաժեշտությունից (գյուղական բնակչության ցածր վճարունակությունը, ապահովագրողների և ապահովադիրների փոխադարձ անվստահությունը, շուկայական տնտեսության պայմաններում ապահովագրության փորձի, ինչպես նաև որակյալ կադրերի պակասը, օրենսդրության որոշակի անկատարությունը, պետության աջակցության ուղղությունը և այլն):
8. Հայաստանում առկա գյուղատնտեսական ռիսկերի գնահատման և տվյալների բազայի ստեղծման աշխատանքներ դեռևս չեն իրականացվել, ինչն էլ ավելի է բարդացնում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործընթացը: Ռիսկերի գնահատումը հիմնավորված իրականացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել դրանց բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն:
9. Ապահովագրական գործուն համակարգի ներդրման հիմնական նախապայմանը գյուղատնտեսության վարման ներկայիս պայմաններում ապահովագրական ռիսկերի համապարփակ գնահատումն է, որին համահունչ ապահովագրական դաշտում ընդգրկվող գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների գծով առաջարկվում է պետական միջոցների հաշվին ապահովագրական ռիսկերի համատարած գնահատման ծրագրերի իրականացումը:
10. Ապահովագրության գործընթացի պետական կարգավորման և վերահսկողության բնագավառներում իրականացվելիք քաղաքականությունը պետք է համարժեք լինի հանրապետությունում ագրարային ոլորտում գույքային ապահովագրության ռիսկերին: Այդ մոտեցումը կարևորվում է այն պատճառով, որ Հայաստանում գործող ապահովագրական ընկերությունները դեռևս չունեն բավարար փորձ, հմտություններ և համապատասխան ռեսուրսներ, որպեսզի կարողանան արդյունավետ մրցակցել օտարերկրյա խոշոր (կայացած) ընկերությունների հետ: Հետևաբար գտնում ենք, որ նշված հիմնահարցերի լուծումը պահանջում է վերահսկողության և հաշվետվության համակարգի համապատասխանեցումը IAIS և IFRS միջազգային կազմակերպությունների ստանդարտների (չափորոշիչների) պահանջներին: Միա-

Ժամանակ պետք է նշել այն իրողությունը, որ հանրապետությունում դեռևս չի ձևավորվել գյուղատնտեսության ապահովագրության «մշակույթը», և այդ գործընթացը բավականին ժամանակատար է, ուստի այդ ուղղությամբ նույնպես կատարվելիք միջոցառումները հանդիսանալու են ապահովագրության բնագավառում իրականացվելիք քաղաքականության նախընտրելի ուղղություններից մեկը:

11. Ինդեքս ապահովագրության միջոցով գյուղատնտեսական ռիսկերի կառավարման միջազգային փորձի ուսումնասիրումը և մեր կողմից իրականացված հետազոտությունները հիմք են տալիս առաջարկելու ՀՀ-ում կիրառել ոչ միայն ավանդական, այլև նորարարական պրոդուկտներ, որոնք էական առավելություններ ունեն: Ինդեքս ապահովագրության ներդրման գործընթացում կարևորվում է «ռիսկերի քարտեզագրումը»: Տեղի մասնագետները միջազգային փորձագետների խորհրդատվությամբ պետք է իրականացնեն քարտեզագրումը, որը կարելի է անել ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ մի մարզի կամ համայնքի կտրվածքով:
12. Ապահովագրական պատահարների դեպքում վնասների գնահատումը գյուղատնտեսության ապահովագրության ամենաբարդ և կարևորագույն գործընթացներից է, որի համար առաջարկվում է հիմնել անկախ փորձագետների ինստիտուտ. անկախ փորձագետը պետք է ունենա համապատասխան մասնագիտական կրթություն, բավարար գիտելիքներ և ստանա անկախ փորձագետի որակավորման վկայական: Փորձագետների որակավորման համար պետք է ստեղծվի համապատասխան հանձնաժողով, իսկ որակավորման կարգը պետք է սահմանվի ՀՀ կառավարության կողմից:
13. Անհրաժեշտ և պարտադիր պայման է, որ որոշակի տարածքներում, խոշոր տնտեսություններում, առանձին համայնքներում իրականացվեն փորձնական (պիլոտային) ապահովագրական ծրագրեր, մասնավորապես՝ կապված սահմանափակ ռիսկերի հետ: Տեղին կլինի ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրությունը սկսել կարկուտի ռիսկի ապահովագրությունից: Միաժամանակ, հաշվի առնելով հացահատիկային մշակաբույսերի, հատկապես ցորենի կարևոր նշանակությունը պարենային անվտանգության ապահովման հարցում, ինչպես նաև ցորենի ինքնաբավության ցածր աստիճանը, գտնում ենք, որ առաջնահերթ պետք է ապահովագրել ցորենի ցանքատրածությունները: Ապահովագրության ոլորտի մասնագետների կարծիքով՝ հացահատիկային մշակաբույսերն այլ մշակաբույսերի համեմատությամբ ապահովագրության տեսանկյունից պակաս ռիսկային են: Այս հանգամանքը ևս կարևոր է գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրման սկզբնական փուլում:

Այսպիսով, ապահովագրությունը, այդ թվում՝ նաև ագրարային ոլորտում, երկրի տնտեսության կարևորագույն օղակներից է և նպաստում է երկրի ֆինանսական կայունության, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական անվտանգության ապահովման հիմնախնդիրների լուծման գործընթացին:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է փաստել, որ ՀՀ գյուղատնտեսության

մեջ ապահովագրական համակարգի ներդրումը կնպաստի գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների եկամուտների կայունացմանը, գյուղատնտեսությունում ներդրումներ կատարելու գրավչության բարձրացմանը, ինչպես նաև պետությանը կազատի տարերային աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին աջակցություն ցուցաբերելու պարտավորությունից:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

(«Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին»,
«Հաստատագրված վճարների մասին»
և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներ)

Վլադիմիր Հարությունյան

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Դավիթ Հարությունյան

տնտեսագիտության դոկտոր

• **Հողի հարկի մասով:** «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են հարկային արտոնություններ, որոնք արդարացված չեն: Այսպես, օրինակ, հողի հարկից 100 տոկոսի չափով ազատվելու արտոնություն է սահմանված «հողային ռեֆորմի և սեփականաշնորհման ընթացքում ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների նկատմամբ՝ հողի սեփականության իրավունքի» ձեռքբերման ամսից սկսած երկու տարվա ընթացքում¹, որը կարող է նպաստել այնպիսի դրական ազդեցության ակտիվացմանը, ինչպիսին հողի սեփականության իրավունքի ձեռքբերումն է: Սակայն ներկայումս նշված նախապայմաններով (հողային ռեֆորմ և սեփականաշնորհման ընթացք) ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հողի սեփականության իրավունքի ձևակերպման երկու տարին հիմնականում լրացել է, հողային ռեֆորմը, կարելի է ասել, ավարտված է, սեփականաշնորհումը՝ նույնպես: Հետևաբար այսպիսի հարկային արտոնության կիրառումը եթե 1990-ական թվականներին անհրաժեշտություն էր, ապա ներկայումս գործնականում կիրառություն ունենալ չի կարող: Ուստի անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի բ) կետով ամրագրված վերոհիշյալ հարկային արտոնությունը:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը հողի հարկից 100 տոկոսի չափով ազատելու հարկային արտոնություն է սահմանում նաև «բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերի (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն)»² նկատմամբ: Ընդ որում՝ հարկային սույն արտոնությունը սահմանվել է, երբ նշված հողերը եղել են պետական սեփականություն, իսկ հողի հարկը եղել և շարունակում է մնալ համայնքների բյուջեի եկամտի աղբյուր: Հարկային արտոնություն չսահմանելու դեպքում հողի սեփականատերը, այսինքն՝ պետությունը, համաձայն վերոհիշյալ օրենքի 1-ին հոդվածի, ճանաչվում է հողի հարկ վճարող և պարտավորվում գումարը փոխանցել այն բյուջեին, որին

¹ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 298:

² Նույն տեղում:

ամրակցված է հողի հարկը, այսինքն՝ համայնքային բյուջե՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի¹: Սակայն գործնականում դա կնշանակեր պետական բյուջեից գումարների հատկացում համայնքային բյուջեներին, բայց ոչ թե դրամաշնորհների (որն ընդունված մեխանիզմ է միջբյուջետային հարաբերություններում), այլ հողի հարկի ձևով, որի նախադեպը չկա միջբյուջետային հարաբերությունների համաշխարհային պրակտիկայում:

Ուստի հարկային արտոնության սահմանման միջոցով խնդրի լուծման այս տարբերակը համարում ենք ճիշտ, որը, սակայն, ունի թերություն այն հողերի մասով, որոնք հանձնված են վարձակալության, քանի որ դրանց դիմաց գանձվող վարձավճարները մուտքագրվել են ոչ թե համայնքային, այլ պետական բյուջե, այսինքն՝ երկրի օրենսդիր մարմինը գործել է երկակի ստանդարտով: Ներկայումս, երբ այդ հողերը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի պահանջով սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել են համայնքներին, և տեղի է ունեցել սեփականատիրոջ փոփոխություն, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում նույն ձևակերպմամբ շարունակում է պահպանվել հարկային այդ արտոնությունը:

Ելնելով վերը շարադրվածից և սեփականատիրոջ փոփոխության փաստից՝ անհրաժեշտ ենք համարում «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դ) կետը ձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «...Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն) բացառությամբ վարձակալության տրված հողերի»: Դա նշանակում է, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության հանձնվելուց հետո վարձակալները պետք է դառնան հողի հարկ վճարողներ, որի համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում և հողի հարկ վճարող ճանաչել նաև հողի վարձակալներին:

Միաժամանակ հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետությունում հողը ներկայումս հարկվում է ստանդարտ մոտեցումներով՝ անկախ այն բանից՝ հողն իր սեփականատերերին, մշտական ու ժամանակավոր օգտագործողներին, այսինքն՝ հողի հարկ վճարողներին եկամուտ բերում է, թե՛ ոչ, այսինքն՝ հողի հարկի չափը կախված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից, այն սահմանված է հողակտորի միավոր մակերեսի համար տարեկան հաստատագրված վճարի ձևով, իսկ հողերը տարբերակված են միայն ըստ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության: Ընդ որում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հողի կադաստրային գնահատմամբ որոշված հարկային զուտ եկամուտը, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ հողի կադաստրային գնահատման

¹ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 21 (196), 21.06.2002, էջ 33:

արժեքը¹, որոնց նկատմամբ կիրառվում են համապատասխանաբար 15 և 0.5-1.0 տոկոս հարկադրույքներ:

Այսպիսի մոտեցումների պարագայում հողերը ամենաթանկ կապիտալից վերածվում են էժան կապիտալի և շատ դեպքերում չեն օգտագործվում կամ օգտագործվում են ընտանիքների կարիքները հոգալու նպատակով և միայն քիչ դեպքերում են վերածվում բիզնեսի օբյեկտի, քանի որ հողի սեփականատերը, դրանց մշտական ու ժամանակավոր օգտագործողները շատ հաճախ չեն ունենում անհրաժեշտ ֆինանսական հնարավորություններ՝ հողը որպես եկամտի հավելյալ աղբյուր ծառայեցնելու համար: Այդ ամենի արդյունքում հողերը քիչ են վերածվում առք ու վաճառքի օբյեկտի, չի ձևավորվում հողի շուկան (բացառությամբ Երևան քաղաքի) և այլն: Դրանից ելնելով՝ անհրաժեշտ ենք համարում բարձրացնել հողի հարկադրույքները և վերարժեքավորել հարկման օբյեկտները (ներկայումս դրանց մեծությունները սիմվոլիկ են), որոնք կարող են չեզոքացնել վերոհիշյալ բացասական ազդեցությունները և հարկային արտոնություններ (հարկադրույքների նվազեցում, հարկադրույքի զրոյացում, հարկվող օբյեկտների հաշվարկում նվազեցումների մեխանիզմի կիրառում և այլն) սահմանել այն հողերի նկատմամբ, որոնք օգտագործվում են ըստ նշանակության և առավել բարձր արդյունավետությամբ: Հողի հարկի հաշվարկման այդպիսի մոտեցումների պարագայում կակտիվանան այնպիսի դրական ազդեցություններ, ինչպիսիք են՝ գյուղական համայնքների բյուջեների մուտքերը, քաղաքից դեպի գյուղ կապիտալի տեղաշարժը և, դրանով պայմանավորված, աշխատատեղերի ստեղծումը մարզերում, ինչպես նաև չօգտագործվող հողերի վաճառքը արդյունավետ հողօգտագործողներին, որն առավել կարևոր է սակավահող Հայաստանի տնտեսության զարգացման համար:

• **Գույքահարկի մասով:** «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնությունները սահմանափակ են և չեն բխում հարկման սկզբունքների պահանջներից: Այսպես, օրինակ, ջրամբարների մասով հարկային արտոնության սահմանումն արդարացված էր, երբ խմելու և ոռոգման ջուրը բնակչությանը տրվում էր ձրի: Այսօր, երբ հանրապետությունում ջուրը դիտարկվում է որպես ապրանք և վաճառվում է նրա տեղափոխման, պահպանման և այլ ծախսերի հաշվառմամբ որոշված սակագնով և ոչ զեղչ գներով, չարդարացված է դառնում դրանց գծով սահմանված հարկային արտոնության պահպանումը: Այդ առումով կարևորվում է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ հարկային արտոնություններ սահմանող 15-րդ հոդվածի 2) կետի ուժը կորցրած ճանաչելը:

Գույքահարկի հաշվարկման կատարելագործման առումով անհրաժեշտ ենք համարում գույքահարկի հաշվարկման մեխանիզմներում կիրառել հետևյալ մոտեցումները.

- բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, ավտոտնակների² արժեքի մեծությունից գույքահարկը հաշվարկել և գանձել տարեկան զրոյա-

¹ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 2:

² Բացառությամբ հասարակական և արտադրական նշանակության ոչ բնակելի տարածքների:

կան դրույքաչափով՝ նկատի ունենալով ազգաբնակչության մեծ չափերի հասնող աղքատության և նրանց միջև եկամուտները խիստ անհավասարաչափ բաշխվելու հանգամանքը:

- Անհատական բնակելի տների և ամառանոցային շինությունների մասով գույքահարկի դրույքաչափը սահմանել հանրապետությունում գործող բանկային ավանդի միջին տարեկան տոկոսի և ուղղիչ գործակիցների արտադրյալի չափով: Իսկ վերջիններիս համար որպես հիմք կարող են ընդունվել հաստատագրված վճարի հաշվարկման համար խանութի, կրպակի (տաղավարի) գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցները: Գույքահարկի որոշման նման մոտեցումը կնպաստի այնպիսի դրական ազդեցության ակտիվացմանը, ինչպիսին է քաղաքացիների ազատ դրամական միջոցների ուղղակի կամ անուղղակի (բանկային ավանդների) եղանակով տեղափոխումը տնտեսության իրական հատված: Արդեն կառուցված անհատական բնակելի տների և ամառանոցային շինությունների մասով գույքահարկի դրույքաչափը առաջարկվում է սահմանել նույն մոտեցմամբ, բայց հետևյալ տարբերակմամբ. մինչև երեք տարվա վաղեմության շինությունների համար գույքահարկի դրույքաչափը սահմանել նոր կառուցվողի չափով, իսկ երեք տարուց ավելի վաղեմության շինությունների համար՝ գույքահարկի դրույքաչափը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցնել 10 տոկոսի չափով, որից հետո կիրառել գույքահարկի գրոյական դրույքաչափ 1990 թ. և դրանից առաջ կառուցված շինությունների մասով: Այդպիսի շինությունների գույքահարկի դրույքաչափի սահմանման նման մոտեցումը կարող է մեղմացնել տնտեսության իրական հատվածից հանված գումարների բացասական ազդեցության ներգործությունը:
- Հասարակական և արտադրական նշանակության չօգտագործվող շինությունների համար գույքահարկի դրույքաչափը առաջարկվում է սահմանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ամորտիզացիոն մասհանումների տոկոսի (որոնք համապատասխանաբար կազմում են 5 և 10 տոկոս) և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ուղղիչ գործակիցների արտադրյալի չափով: Իհարկե, առանձին դեպքերում նմանատիպ շինությունների նկատմամբ (կախված նրանց տեխնիկական վիճակից ու կառուցման տարեթվից) նպատակահարմար է կիրառել հարկային արտոնություններ՝ նվազեցված կամ գրոյական դրույքաչափի ձևով: Գույքահարկի դրույքաչափերի սահմանման այսպիսի մոտեցումը կարող է ակտիվացնել այնպիսի դրական ազդեցություններ, ինչպիսիք են՝ տնտեսական ճանապարհով այդպիսի շինությունների փոխանցումը դրանք չօգտագործողներից օգտագործողներին, համայնքային բյուջեների եկամտային բազայի ամրապնդումը և տնտեսության իրական հատվածի վաճառքից ստացած գումարների ներհոսքն ուղղակի կամ անուղղակի ձևով:

Մեր կարծիքով՝ չօգտագործվող հասարակական ու արտադրական նշանակության շինությունները անհրաժեշտ է հարկել նաև շահութահարկով, այսինքն՝

համախառն եկամուտը չնվազեցնել այդպիսի շինությունների ամորտիզացիոն մասհանումների չափով, որի բացակայությունը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի թերություններից մեկն է (օրենքի 12-րդ հոդված), իսկ օգտագործման կամ արտադրության մեջ գտնվող հասարակական ու արտադրական նշանակության շինությունները անհրաժեշտ է հարկումից «պաշտպանել» հարկային արտոնություններով: Այդ առումով նպատակահարմար է գույքահարկի և շահութահարկի մասով հարկային այնպիսի նպատակային արտոնությունների սահմանումը, որոնք նպաստում են պետությանն անհրաժեշտ դրական ազդեցությունների ակտիվացմանը և բացասական ազդեցությունների չեզոքացմանը, որոնք կարող են լինել ներդրումների խթանումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և այլն:

Փոխադրամիջոցների գույքահարկի չափը առաջարկվում է սահմանել որպես հարկման բազաներին գործող օրենքին համապատասխանող ձիաուժերի դրամական գումարի և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ուղղիչ գործակիցների արտադրյալ՝ հարկման մնացած մոտեցումները թողնելով անփոփոխ՝ բացառությամբ կազմակերպություններին պատկանող ու օգտագործվող փոխադրամիջոցների գույքահարկի, որոնց գծով նպատակահարմար է, ըստ նրանց օգտագործման ոլորտների, սահմանել հարկային արտոնություններ՝ դրանք կախվածության մեջ դնելով կազմակերպության կատարած աշխատանքների ու մատուցվող ծառայությունների աճի մեծությունից:

• **Հաստատագրված վճարների մասով:** Շահութահարկի, եկամտահարկի և ավելացված արժեքի հարկի տնտեսագիտորեն չարդարացված և հարկման արդյունավետության պահանջի իրականացումը խոչընդոտող հարկային արտոնությունների կասեցման և հարկային օրենսդրության բարեփոխումների չհաջողված փորձ է գործունեության առանձին տեսակների և սահմանված պայմաններին բավարարող առանձին հարկատուների նկատմամբ հաստատագրված վճարների կիրառումը, որը ոչ միայն հակասում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված միասնական հարկային համակարգի արդարացի սկզբունքին¹, այլև առաջացնում է նոր հիմնախնդիրներ՝ պայմանավորված հետևյալ փաստարկներով.

նախ՝ հաստատագրված վճարների դեպքում հարկման օբյեկտ են համարվում ոչ թե եկամուտները, այլ գործունեության առանձին տեսակներ, որոնք, ի տարբերություն գործունեության մնացած տեսակների, տեղափոխվում են հարկման արտոնյալ դաշտ՝ սկիզբ դնելով հարկման սկզբունքներին հակասող անհավասար հարկման² անընդունելի պրակտիկային: Գործունեության տեսակը հարկման օբյեկտ դիտարկելը մեթոդաբանական սխալ մոտեցում է, որի նախադեպը չկա համաշխարհային պրակտիկայում:

Բացի այդ, հարկման ցածր արդյունավետությամբ օժտված գործունեության ոլորտները (վարսավիրական ծառայությունների մատուցում, վիճակախաղերի

¹ Մինչև 01.01.2009 թ. Հայաստանի Հանրապետությունում գործում է «եռաչափ» հարկային համակարգ՝ պարզեցված հարկեր, հաստատագրված վճարներ և «սովորական» հարկեր:

² Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Երևան, «Նաիրի», 2003, էջ 190:

կազմակերպում, ավտոտրանսպորտային միջոցների գազալցում, ավտոկանգառների գործունեություն, դրամական շահումով խաղային ավտոմատների կազմակերպում, բաղնիքների և ցնցողաշարանների կազմակերպում և այլն) հարկման սկզբունքների խախտմամբ հարկման այլ դաշտ տեղափոխելը հարցի լուծման ճիշտ ճանապարհը չէ, մանավանդ որ հարկման արտոնյալ դաշտը խրախուսում է գործունեության այդպիսի ոլորտների ակտիվացումը և հանգեցնում է հարկման արդյունավետության ավելի նվազման: Ուստի անհրաժեշտ է ընտրել հարկման արդյունավետության բարձրացման ու վարչարարության կատարելագործման այլ ուղի:

Երկրորդ՝ հաստատագրված վճարների դեպքում հարկման բազան գործունեության նշված տեսակների համար սահմանված ելակետային տվյալների և ուղղակի գործակիցների որոշակի արտադրյալն է՝ դրամական արտահայտությամբ¹:

Հարկման բազայի նման եղանակով ձևավորումը կառուցված է տնտեսագիտորեն հիմնավորում չունեցող ելակետային տվյալների և չարդարացված ուղղիչ գործակիցների հիման վրա, որոնք ճիշտ չեն արտացոլում հարկատուների ստացած եկամուտների և նրանց կողմից վճարվող հաստատագրված վճարների մեծությունների կախվածությունը: Դրանց միջև առկա կախվածությունն առավել շատ օգուտ բերում է հարկատուներին, քան պետությանը, ինչի պատճառով հարկատուները, օգտվելով հարկային գործող օրենսդրության «սողանքներից», տեղափոխվում են հաստատագրված վճարով հարկման դաշտ: Բացի դրանից, եթե նույնիսկ ուղղիչ գործակիցներն ու ելակետային տվյալները լինեն հիմնավորված ու արդարացված, ապա նույն հաջողությամբ կարելի է պնդել, որ հարկման այդպիսի գործիքները ճկունություն չեն կարող դրսևորել անընդհատ փոփոխվող տնտեսական իրավիճակներում: Ինչ վերաբերում է հաստատագրված վճարով աշխատող հարկատուներին հարկման սովորական ռեժիմին փոխադրելու նպատակով սահմանված սահմանային չափերին (խանութների, կրպակների միջոցով առևտրական գործունեություն իրականացնողների մասով՝ եռամսյակի ընթացքում առևտրական տարածքի 1 մ²-ի հաշվով ապրանքաշրջանառության ծավալի գերազանցումը 310 հազար դրամը, հասարակական սննդի մասով՝ եռամսյակի ընթացքում՝ սպասարկման մակերեսի 1 մ²-ի հաշվով ապրանքաշրջանառության ծավալի գերազանցումը 200 հազար դրամը, բենզինի և դիզելային վառելիքի մեկ մանրածախ կետի միջոցով ամսվա ընթացքում բենզինի քանակի գերազանցումը 10 հազար լիտրը, ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործունեություն իրականացնողների համար ամսական իրացման շրջանառությունը մեկ աշխատողի հաշվով 800 հազար դրամի գերազանցումը), ապա դրանք ցանկալի արդյունք չեն կարող տալ, մանավանդ որ սահմանային չափեր ունեցող գործունեության առանձին տեսակների հաստատագրված վճարի հաշվարկման մոտեցումները նվազեցնում են հարկային

¹ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 205:

եկամուտների չափը:

Հետևաբար հարկման հայեցակարգային ոչ ճիշտ մոտեցումներով հնարավոր չէ զարգացնել տնտեսության շարժիչ ուժ հանդիսացող ՓՄՁ-ները: Եվ պատահական չէ, որ հանրապետությունում ՓՄՁ-ներին բաժին է ընկնում ՀՆԱ-ի շուրջ 40 %-ը, իսկ դրանցում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում կազմում է մինչև 5 %՝ այն դեպքում, երբ այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում են՝ էստոնիայում՝ 70 %-ից ավելի և շուրջ 60 %, Լիտվայում՝ 60 %-ից ավելի և շուրջ 70 %, Լատվիայում՝ շուրջ 60 ու 70 տոկոս, իսկ Եվրամիության երկրներում ՓՄՁ-ին բաժին է ընկնում ՀՆԱ-ի ավելի քան 70 %-ը, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում՝ 50 %-ից ավելին և այլն:

Վերոնշյալ տվյալները խոսում են այն մասին, որ հարկման հատուկ ռեժիմ հանդիսացող հաստատագրված վճարների կիրառման 10-ամյա գործունեությունը չի նպաստել ՓՄՁ-ների զարգացմանը, և, դեռ ավելին, դրանց կիրառմամբ նվազեցվել են պետական բյուջեի հարկային ակնկալվող մուտքերը, որի պատճառը ոչ միայն հարկման հատուկ ռեժիմների չարդարացված մոտեցումներով կիրառումն է, այլև ՓՄՁ-ների դասակարգման չափանիշների ոչ ճիշտ ընտրությունը: Ստեղծված իրավիճակի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խումբ խնդիրները, որոնց վերաբերում են.

առաջին՝ ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշների ճշգրտումը և հստակեցումը, որպեսզի արդյունքաբեր լինի նաև դրա հենքի վրա կառուցվող հարկային քաղաքականությունը:

Բանն այն է, որ ՀՀ-ում ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշների հիմքում դրվել են միայն քանակական ցուցանիշները, այն է՝ աշխատողների թիվը, որը տարբերակված է ըստ տնտեսության ճյուղերի ու բնագավառների: Այս ցուցանիշի կիրառման հիմնական առավելությունն այն է, որ դրա օգտագործումը շատ հարմար է ու հեշտ: Սակայն այս ցուցանիշի կիրառմամբ դժվար է համեմատական վերլուծություններ կատարել ու արդյունքաբեր քաղաքականություն իրականացնել, որի վառ ապացույցն է այն փաստը, որ հանրապետությունում ՓՄՁ-ների նկատմամբ արտոնյալ հարկային քաղաքականություն իրականացնելու հիմքում դրվեց ոչ թե ՓՄՁ-ների դասակարգման հիմքում դրված աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, այլ իրացման շրջանառությունը (պարզեցված հարկի մասով): Եվ պատահական չէ, որ եվրոպական երկրներում լայն տարածում է ստացել ՓՄՁ-ների դասակարգման քանակական ու որակական ցուցանիշների գուգակցումը, ինչպես, օրինակ, Ֆրանսիայում՝ աշխատողների թիվը և հասույթը, Մեծ Բրիտանիայում՝ շրջանառու միջոցների ծավալն ու աշխատողների թիվը և այլն: ՓՄՁ-ների չափի որոշման հաջողված օրինակ և համակցված մոտեցում պետք է համարել 1971 թ. Մեծ Բրիտանիայում Բոլտոնյան զեկույցի ժամանակ կատարված առաջարկությունները, որոնց համաձայն փոքր են համարվում այն ձեռնարկությունները, որոնք բավարարում են ստորև բերված պահանջներին.

- ձեռնարկությունն իր գործունեության ոլորտային շուկայում ունենում է համեմատաբար փոքր մասնաբաժին.

- ձեռնարկության ղեկավարումը ստանձնում է ինքը՝ հիմնադիրը.
- ձեռնարկությունն անկախ է և չի կազմում այլ ձեռնարկության մաս:

Վերոնշյալ ցուցանիշները բովանդակային առումով պետք է ընդունելի և օբյեկտիվ համարել: Սակայն այստեղ խնդիրը ճիշտ չափանիշի (հաշվի առնելով երկրի տնտեսության առանձնահատկությունները) որոշման մեջ է, որի համար անհրաժեշտ է կատարել երկրի տնտեսության լուրջ ուսումնասիրություններ, ինչը հնարավորություն կտա բիզնեսը առավել հստակ դասակարգելու փոքրի, միջինի և խոշորի՝ հիմք ընդունելով համախառն հասույթը և աշխատողների միջին ցուցակային թիվը և, իհարկե, հաշվի առնելով նաև հիմնադրի կողմից ձեռնարկությունն անձամբ ղեկավարելու և ձեռնարկությունն այլ ձեռնարկության մաս չկազմելու պարտադիր պայմանը: Ընդ որում՝ ՓՄՁ-ների դասակարգումը պետք է տալ ըստ ձեռնարկատիրական գործունեության հինգ հիմնական տեսակների՝ արտադրական, առևտրային, ֆինանսական, միջնորդական, ապահովագրական, որպեսզի պետական քաղաքականությունն իր դիրքորոշումները հստակեցնի ոչ միայն ՓՄՁ-ների, այլև գործունեության տեսակների նկատմամբ:

Երկրորդ՝ հարկային հստակ ու իրական խթանների ձևավորումը, քանի որ ՓՄՁ-ների զարգացման գործում կարևոր է ոչ միայն ձեռնարկատերերի դերակատարումը, այլ նաև պետության հովանավորչական քաղաքականության իրականացումը, մանավանդ որ, ի տարբերություն խոշորի, ՓՄՁ-ների համար ծանր է հարկային բեռը, անհավասար է մրցակցային միջավայրը, «անհասանելի են» բանկային վարկերը, իսկ կառավարության կողմից հատկացվող գումարները չեն բավարարում շուկայում առկա նվազագույն պահանջարկը: Չանդրադառնալով ՓՄՁ-ների կայացումն ու զարգացումը խոչընդոտող մյուս հանգամանքներին (գործարարների մասնագիտորեն թերի պատրաստվածությունը, օրենսդրական դաշտում կատարվող անընդհատ փոփոխությունները և այլն)՝ տնտեսական բարեփոխումների ներկա փուլում առաջնահերթությունները պետք է տալ հարկային լծակներին ու գործիքներին, որոնց մասով առաջարկվում է.

- ա) հրաժարվել ՓՄՁ-ների զարգացմանը «միտված» հարկման հատուկ կամ արտոնյալ ռեժիմի՝ հաստատագրված վճարների հաշվարկման ու գանձման հայաստանյան փորձից:
- բ) Նոր ստեղծված ՓՄՁ-ները առաջին երեք տարիներին ազատել եկամտային (շահութահարկ, եկամտահարկ) և գույքային (հողի հարկ, գույքահարկ) հարկերից, իսկ հետագա երկու տարիներին դրանք հարկել 50 %-ով: Սա մոտեցում է, որը տարբեր կերպ է կիրառվում տարբեր երկրներում, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, Ֆրանսիայում այս մոտեցումը կիրառվում է շահութահարկի մասով: Ընդ որում՝ ՓՄՁ-ների համար հարկային պարտավորությունների 5 տարվա ժամկետ առաջարկելու հիմնավորվածությունը պայմանավորված է ոչ միայն արտերկրյա փորձով, այլև գործարարների շրջանում անցկացված հարցումների արդյունքներով, իսկ այդ ժամանակահատվածում այդչափ հարկային արտոնությունները (100 % և 50 %)՝ այն փաստով, որ ՓՄՁ-ների հարկային մուտքերը պետական բյուջեի ընդհանուր հարկային մուտքերում էական

դերակատարում չունեն, որը ներառում է ոչ միայն նոր ստեղծված, այլև երկար ժամանակ գործող ՓՄՁ-ների վճարումները բոլոր հարկատեսակների գծով: Այլ կերպ ասած՝ առաջարկվող հարկային արտոնությունից պետական բյուջեն էական կորուստներ չի ունենա, բայց կշահեն փոքր ու միջին ձեռնարկատերերը և, վերջին հաշվով, տնտեսությունն ու պետությունը:

- Առաջին երեք տարիներին ազատել անուղղակի (ԱԱՀ, ակցիզային հարկ) հարկերից, իսկ հետագա երկու տարիներին դրանք հարկել 50 %-ով՝ հիմք ընդունելով վերոնշյալ փաստարկները: Ընդ որում՝ այս մոտեցումն անհրաժեշտ է կիրառել ներմուծման հարկերի ու հանրապետության ներսում գանձվող անուղղակի հարկերի վրա: Այս դեպքում ՓՄՁ-ների կողմից ներմուծվող ապրանքները կդառնան նաև մրցունակ ու ներքին շուկայում իրենց արժանի տեղը կունենան:

գ) Գործող ՓՄՁ-ներին (նաև նոր ստեղծվածներին).

- ազատել կանխավճարային բոլոր տեսակի մուծումներից, քանի որ այն, ըստ էության, ձեռնարկատիրոջ կողմից պետությանը տրվող «անտոկոս վարկ» է, որը եթե խոշորի համար տանելի է ու թեթև, ապա ՓՄՁ-ների համար անտանելի ու ծանր «բեռ» է:
- Պարզեցնել ու հստակեցնել ՓՄՁ-ների կողմից հարկային մարմիններ ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների ընթացակարգերը (ժամկետների, լրացման ու հաշվարկման)՝ նկատի ունենալով ՓՄՁ-ը ներկայացնող ձեռնարկատերերի ու նրանց կողմից ներգրավված ֆինանսական մասնագետների թերի պատրաստվածությունը, որը պայմանավորված է նաև ֆինանսական միջոցների սղությամբ:
- Տալ արագացված ամորտիզացիայի հարկային արտոնություն, քանի որ դրա կարիքն առավել շատ զգում են ՓՄՁ-ները, իսկ խոշոր բիզնեսին գրկել հարկային այդ արտոնությունից:
- Տալ ԱԱՀ-ի գծով հարկային արտոնություն՝ չհարկվող նվազագույն շեմի մեծությունը դարձնելով 70 մլն դրամ, և այդ արտոնությունից գրկել խոշոր բիզնեսին: ԱԱՀ-ի գծով հարկային արտոնությունների հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելու և հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառելու միջոցով լրացուցիչ լծակներ ու գործիքներ «տեղադրել» «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքում, քանի որ գործողները հիմնականում «սպասարկում են» խոշոր բիզնեսի շահերը:

Անհրաժեշտ է հստակեցնել աճող ֆինանսական միջոցները, որոնց ծավալները բավարար համարել չի կարելի, մանավանդ որ ՓՄՁ-ների համար ոչ միշտ են «հասանելի» դառնում վարկային միջոցները, մասնավորապես՝ կապված բանկային վարկի բարձր տոկոսադրույքների հետ:

• **Շահութահարկի մասով:** Շահութահարկի որոշման մասով մեթոդաբանական սխալ մոտեցում է հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից այսպես կոչված «անհուսալի դեբիտորական պարտքերի» դուրսգրման համար

սահմանված կարգով¹ պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստաֆոնդին կատարված մասհանումները գերազանցող գումարի, ինչպես նաև նախկինում դուրս գրված այսպես կոչված «անհուսալի կրեդիտորական պարտքերի» մարման գումարների նվազեցումները:

Այն, որ անհրաժեշտություն է այսպես կոչված անհուսալի դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի դուրսգրման կարգի սահմանումը, տարակարծություններ քիչ կարող են լինել, քանի որ դա հաշվապահական հաշվառման վարման միջազգային ստանդարտների պահանջն է, որը պարզեցնում է ակտիվների ու պասիվների հաշվառումը, թեթևացնում հաշվապահական հաշվեկշիռը և դրան կից կազմվող ֆինանսական հաշվետվությունը, այդ գծով ձևավորում է առանձնացված պահուստաֆոնդեր, որոնք տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն են տալիս ցանկացած ժամանակ ի հայտ բերելու իրենց համար «դեբիտոր» և «կրեդիտոր» հանդիսացող անձանց՝ նույնիսկ նրանց վերակազմակերպման կամ լուծարման, իսկ ֆիզիկական անձանց պարագայում՝ նաև նրանց մահվան դեպքում: Այսինքն՝ այդպիսի պարտքերն անհուսալի պետք է դիտարկել միայն հաշվապահական հաշվառման վարման տեսանկյունից, քանի որ դրանք, որպես կանոն, վերադարձվում են: Բայց քիչ դեպքերում են գանձված դեբիտորական կամ մարված կրեդիտորական պարտքերն իրենց արտացոլումը ստանում տնտեսվարող սուբյեկտների (առավել ևս պետական մասնակցության պարագայում) հաշվապահական հաշվեկշիռներում, քանի որ ինչպես գանձված դեբիտորական, այնպես էլ մարված կրեդիտորական գումարները կողմերի փոխշահավետ համաձայնությամբ շրջանառվում են ստվերային դաշտում, ինչի համար «պարարտ հող» է ստեղծում համախառն եկամտից օրենսդրությամբ սահմանված վերոհիշյալ նվազեցումը:

Անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի առաջացման պարագայում հարկվող շահույթի հաշվարկման ժամանակ կատարվում են օրենքով սահմանված նվազեցումները, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ժամկետն անցնելուց հետո դրանց հարկման հարցը համարվում է «լուծված», ինչի արդյունքում պետական բյուջեն չի ստանում իրեն հասանելիք մուտքերը: Դա է հանրապետությունում անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մասով ստեղծված փաստացի իրավիճակի պատկերը, որը աստիճանաբար մեծանում է «ձնագնդի» պես և հրատապ լուծում պահանջում: Դա պահանջում է ուժը կորցրած ճանաչել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածն ամբողջությամբ և այսպիսի գումարների հարկումից «զերծ պահել» իրավաբանական անձանց, այն էլ միայն նրանց սնանկացման դեպքերում:

Վերջին դեպքում հարկային մարմիններն ավելի շուտ և ժամանակյին կբացահայտեն սնանկացման ճանապարհին գտնվող բանկերի դեմքը, որոնց ուշա-

¹ Կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ բանկերի և վարկային կազմակերպությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համատեղ:

ցած բացահայտումները, իրենց բոլոր բացասական հետևանքներով, հատկապես վերջին տարիներին գործնականում լայն տարածում են ստացել, մասնավորապես՝ բանկերի պարագայում («Արդշինբանկ», «Կրեդիտ Երևան» և այլ բանկեր):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքն ունի նաև այլ «ծանր բեռ», որը «թաքնված է» հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումներում:

ՀՀ օրենքով հարկվող շահույթը սահմանվում է որպես համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերություն: Սակայն սահմանված նվազեցումները վերաբերում են ինչպես համախառն եկամտին, այնպես էլ դրանց ստացման հետ կապված անհրաժեշտ ու փաստաթղթերով հիմնավորված ծախսերին, որոնց մի մասը երբեմն չարդարացված ու անհասկանալի ձևով նորմավորվում է, իսկ ծախսերի մի այլ մաս չարդարացված չի նորմավորվում՝ ավելացնելով նվազեցումների չափը:

Արդյունքում ստացվում է այնպես, որ հանրապետության շատ հարկատուներ, ունենալով հաշվեկշռային շահույթ (իսկ երբեմն էլ շոշափելի), շահութահարկ չեն վճարում՝ հարկվող շահույթ չառաջանալու պատճառով, քանի որ օրենքով սահմանված նվազեցումներն այնքան ծավալուն և ընդգրկուն են, որ շահութահարկի հարկման բազան վերածվում է փոքր մեծության: Դրանով է պայմանավորված երկրի տնտեսական աճին ոչ ադեկվատ շահութահարկի գանձումների աճը, որից օգտվում են հարկատուները, բայց պետությանը վճարում են իրենց ստացած օգուտներին խիստ անհամամասնական հարկեր:

ա) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի առումով, այսինքն՝ հարկվող շահույթը որոշելու տեսակետից համախառն եկամուտ չեն համարվում կամ դիտարկվում՝

- մասնակիցների կողմից հարկատուի կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները, որոնք ներդրումների խթան հանդիսանալ չեն կարող, քանի որ հայաստանյան ծագում ունեցող գումարներն արդեն ներդրված են, բիզնեսի բազմաթիվ ոլորտներ մենաշնորհված են, իսկ օտարերկրյա ներդրողների համար հանրապետությունը, պատկերավոր ասած, գրեթե օֆշորային երկիր է: Հետևաբար ժամանակն է վերանայելու «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ նշված հարկային արտոնությունը սահմանող դրույթը:

- Արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը, որը օգուտ է բերում հարկատուներին, բայց ոչ պետությանը: Իհարկե, այս հարցում անհրաժեշտ է ցուցաբերել զգուշավորություն, քանի որ կան ռիսկեր, որոնք պետք է կառավարվեն, ինչպես վարվում է կենտրոնական բանկը՝ արտարժույթի տնօրինման տնտեսական նորմատիվներ սահմանելով: Սակայն ռիսկերի կառավարումից հրաժարվելը և հարկային «թաքնված» արտոնություն սահմանելը խնդրի արդարացի լուծման ճանապարհը չէ:

բ) Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

- նախորդ երեք տարիներին ավել ցույց տրված եկամտի և (կամ) պակաս ցույց տրված նվազեցման չափով: Դա նշանակում է, որ նախորդող 4-րդ և ավելի

տարիներին ավել ցույց տրված եկամուտը և (կամ) պակաս ցույց տրված նվազեցումը չեն մասնակցում հարկվող շահույթի հաշվարկին՝ կապված ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված հայցային վաղեմության ժամկետի հետ: Մինչդեռ պետության պարտավորությունների կատարումը, կապված բյուջետային ծախսերի իրականացման հետ, հայցային վաղեմության ժամկետ չունի: Հետևաբար հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի կիրառումը սխալ է, և օբյեկտիվ անհրաժեշտություն է դառնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի վերանայումը:

- Ծերանոցներին, մանկատներին, հիվանդանոցներին և այլ սոցիալ-մշակութային ու առողջապահական հիմնարկներին փոխանցված միջոցների կամ մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0.25 տոկոսը: Դա նշանակում է, որ պետությունը հիշատակված օբյեկտներին ֆինանսական աջակցություն ցույց տալու իր պարտավորությունը փոխանցում է հարկատուների իրագործման խղճին՝ դրանում ոչ միայն համոզված չլինելով, այլև վերահսկողություն չիրականացնելով, ինչի արդյունքում հարկային արտոնությունը դառնում է չհասցեագրված: Նման մոտեցումը հարկման արդյունավետության բարձրացման նկատմամբ պետության անվստահության դրսևորման չարդարացված ձև է և պայմաններ է ստեղծում շահարկումների ու չարաշահումների համար, որոնցից խուսափելու միջոցը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչելն է:

- Համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ ու փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, որը ներառում է նաև ֆակտորինգային ու լիազորագրային գործառնությունների ծախսերը, ինչպես նաև երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային ու վարկային կազմակերպությունների այլ ծառայությունների համար վճարները: Բնական է, որ այլ ծառայությունների վճարների մեջ մտնում են նաև. 1) ծառայությունների և թղթակցային հարաբերությունների դիմաց բանկին և վարկային կազմակերպությանը վճարված միջնորդական վճարները, 2) կանխիկ դրամի, չեկերի, վճարային այլ փաստաթղթերի տեղափոխման դիմաց, ինչպես նաև արժեքների փաթեթավորման համար բանկին և վարկային կազմակերպությանը և նրանց հաճախորդներին պատկանող արժեքների տեղափոխման, պահպանման և առաքման ծախսերը, 3) հաշվարկադրամարկղային և հաշվողական կենտրոնների ծառայությունների վճարները, 4) բանկի և վարկային կազմակերպության գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ վճարային միջոցներ պատրաստելու, թողարկելու, ի պահ ընդունելու և ներդնելու հետ կապված ծախսերը, 5) բաժնետոմսեր, պարտատոմսեր և պարտքի այլ հանձնառություններ թողարկելու հետ կապված ծախսերը, 6) կեղծ թղթադրամների վճարային փաստաթղթերի պատճառով բանկի և վարկային կազմակերպության կրած կորուստները: Մինչդեռ բանկերի և վարկային կազմակերպությունների համախառն եկամտի ստացման հետ կապված վերոհիշյալ ծախսերը, (որոնք, բնականաբար, փաստաթղթերով հիմնավորված են), օրենքի 30-րդ հոդվածի համաձայն, մասնակցում են

նան համախառն եկամտի նվազեցումներին, որը հանդես է գալիս «այլ նվազեցումներին» անվան տակ (հոդված 9): Իրականում նշված ծախսերը համախառն եկամտի նվազեցումներին մասնակցում են երկու անգամ, ինչը կարելի է բնորոշել որպես հարկային արտոնության կրկնակի սահմանում կամ այդպիսի ծախսերի գծով համախառն եկամտի կրկնակի նվազում, որը հակասում է հենց սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին:

Հետևաբար արդարացված պետք է համարել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ բանկերի և վարկային կազմակերպությունների համախառն եկամտի նվազեցումները սահմանող 30-րդ հոդվածի դ), ե), գ), է), ը) և թ) կետերի ուժը կորցրած ճանաչելը:

Հարկ է նշել նաև, որ ծախսերի գծով համախառն եկամտից կատարվող նվազեցումները չարդարացված են նորմավորվում: Այսպես, օրինակ, օրապահիկի ծախսերը (հոդված 19), իսկ բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետախուզական աշխատանքների ծախսերը (որոնք առավել տարողունակ են ու դժվար վերահսկելի), գովազդային, նյութական, ներկայացուցչական, աուդիտորական, իրավաբանական և այլ խորհրդատվական, ինչպես նաև բանկային և վարկային կազմակերպությունների առանձին ծախսեր (որոնք եկամուտներ են բերում նաև ծառայությունների վճարների տեսքով) չեն նորմավորվում, որն արդարացված չէ:

Շահութահարկի հաշվարկման չարդարացված մոտեցումների «ինքնախոստովանություն» պետք է «համարել» 2004 թ. հունվարի 26-ից «նվազագույն շահութահարկի» հաշվարկման ու գանձման օրենսդրորեն սահմանումը¹, որի էությունն այն է, որ որոշված շահութահարկի կանխավճարի գումարը յուրաքանչյուր ամսվա ընթացքում սահմանված մեծության² 1 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուից գանձվում են նվազագույն շահութահարկի ամսական վճարումներ:

Բացի վերոնշյալից, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքին բնորոշ է նաև հարկային արտոնությունների սահմանումը հարկային խտրականության գույքակցմամբ, որը կատարվում է արտասահմանյան խոշոր ներդրողների նկատմամբ: Այսպես, օրինակ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ եթե ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողի փաստացի կատարած ներդրման չափը 1998 թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 500 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է համաձայն ստորև ներկայացված դրույքաչափի սանդղակի:

¹ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 75:

² Նվազագույն շահութահարկը հաշվարկվում է նախորդ ամսվա ընթացքում ապրանքների (բացառությամբ հիմնական միջոցների, ինչպես նաև արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (որը չի ներառում նշված եկամուտների ստացման համար վճարված անուղղակի հարկերը) և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 տոկոսը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ:

**«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածում տրված
դրույքաչափի սանդղակը¹**

<i>Ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրման սահմանված չափա- քանակի լրանալու տարեթիվը</i>	<i>Օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի շահութահարկի նվազեցման չափն ըստ տարիների</i>	
	100 տոկոս	50 տոկոս
1998	1999 և 2000 թթ.	2001-2008 թթ. ներառյալ
1999	2000 և 2001 թթ.	2002-2009 թթ. ներառյալ
2000	2001 և 2000 թթ.	2003-2008 թթ. ներառյալ
2001	2002 և 2003 թթ.	2004-2007 թթ. ներառյալ
2002	2003 և 2004 թթ.	2005-2006 թթ. ներառյալ
2003	2003 և 2005 թթ.	
2004	2004 և 2005 թթ.	
2005	2005 և 2007 թթ.	
2006	2006 և 2008 թթ.	
2007	2007 և 2009 թթ.	

Հարկային այսպիսի արտոնության սահմանման դրական ազդեցությունը օտարերկրյա ներդրումների խրախուսումն է, իսկ բացասականը՝ տեղական ներդրողների շահերի անտեսումը, որի բացասական ազդեցության պատճառով հայաստանյան ծագում ունեցող գումարներն արտահանվում են հանրապետությունից և տարբեր անհասկանալի կազմակերպությունների ու քաղաքացիների անվան տակ նվազեցված չափով «վերադառնում են» հանրապետություն արտասահմանյան ներդրման կարգավիճակով, իսկ գումարների պտույտի (հանրապետությունից արտասահման և արտասահմանից հանրապետություն) արդյունքում նրա մի մասն անհրաժեշտաբար ծախսվում է, իսկ մի այլ մաս էլ արտասահմանում «գտնում է» շրջանառության ոլորտ: Հարկային խտրականության բացասական ազդեցությունները չեզոքացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված հարկային արտոնությունը տարածել նաև տեղական ներդրողների վրա:

ՀՀ հարկային օրենսդրությունում գործող, բայց չարդարացված հարկային արտոնություն է արագացված ամորտիզացիան, երբ հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ ընտրում է հիմնական միջոցների ամորտիզացման այլ ժամկետ, սակայն տվյալ խմբի համար սահմանված ժամկետներից ոչ պակաս, այն դեպքում, երբ համաշխարհային պրակտիկայում այդպիսի արտոնությունների կիրառումն ուղղված է լինում ԳՏԱ-ի արագացմանը, գիտատար ճյուղերում ներդրումների առաջնահերթության ապահովմանը, զբաղվածության ընդլայնմանը և մի շարք այլ խնդիրների լուծմանը:

Հարկ է նշել, որ 1950-70-ական թվականները հարկային տեսությունում և պրակտիկայում դարձան ներդրումները խթանող հարկային արտոնությունների

¹ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 68:

ձևավորման շրջան: Ներդրումները խթանող հարկային արտոնություններից 1980-ական թվականներին տարածված էր, օրինակ, արագացված ամորտիզացիան, որի էությունը հանգում է ամորտիզացիայի բարձրացված գործակիցների օգտագործմանը, որը, որպես կանոն, հանգեցնում է տնտեսական և հարկային ամորտիզացիայի տարբերության և, հետևաբար, հարկվող շահույթի մեծության նվազման: Մակայն այլ է իրավիճակը ՀՀ-ում, որտեղ սահմանված նմանատիպ հարկային արտոնությունը պետությունը չի արժեքավորել, և իրականում բոլոր հարկատուներն առանց պարտավորությունների օգտվում են հարկային այս արտոնությունից, կարծես հանուն չհարկման:

Արագացված ամորտիզացիայի թույլտվության հարկային արտոնության տարածումը բոլոր հարկատուների նկատմամբ ճիշտ չէ: Անհրաժեշտ ենք համարում, որ հանրապետության կառավարության կողմից առանձնացվեն տնտեսության այն ոլորտները, որոնք կարող են ստանալ արագացված ամորտիզացիայի թույլտվության հարկային արտոնություն: Բացի դրանից, անհրաժեշտ է կարևորել նաև արագացված ամորտիզացիայի հարկային արտոնության նպատակները, որոնցից մեկը կարող է լինել, օրինակ, ներդրումների խթանումը: Արագացված ամորտիզացիայի թույլտվության հարկային արտոնության նպատակը անհրաժեշտ է ամրագրել օրենսդրորեն և վերահսկողություն իրականացնել դրանց կատարման նկատմամբ: Ուստի, բնականաբար, փոփոխության կարիք ունի արագացված ամորտիզացիայի հարկային արտոնություն սահմանող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետը:

Եկամտահարկի մասով: «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը տարբերակում է ոչ ռեզիդենտների և ռեզիդենտների հարկումը՝ խախտելով հարկման համընդհանրության սկզբունքը: Հարկման նման մոտեցումը, որն իր արտացոլումն է ստացել նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում, նպաստում է այնպիսի բացասական ազդեցությունների ակտիվացմանը, ինչպիսիք են՝ Հայաստանի քաղաքացիների կողմից օտարերկրացիների և մասնավորապես սիրիացիների ու իրանցիների անվան տակ ձեռնարկատիրական գործունեության ծավալումը, հայաստանյան ծագում ունեցող գումարների մի մասի արտահոսքը արտասահման՝ որպես Հայաստանի քաղաքացի ձեռնարկատիրական գործունեությանը «նպաստող» միջնորդավճար, ինչպես նաև, արտասահմանցիների պարագայում, հարկի մեծության օրենսդրական նվազումը, իսկ առանձին դեպքերում նույնիսկ դրանց գանձման անհնարիությունը: Նշված բացասական ազդեցություններն առավել ցայտուն դրսևորվում են Իրանից և Սիրիայից ներկրվող ապրանքների իրացման ոլորտում, որոնց պարագայում եկամտահարկի համեմատաբար չնչին գումարներ են մուտքագրվում պետական բյուջե, քանի որ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկվող եկամուտը դիտարկվում է որպես հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների (բացառությամբ արտաքին տնտեսական գործունեության¹ հետ կապվածի) և ռեզիդենտների համար օրենքով

¹ Եկամտահարկի և շահութահարկի առումով ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեություն է համարվում բացառապես ոչ ռեզիդենտի անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստան ներկրելու հետ կապված գործունեությունը, որի դեպքում Հայաստան

սահմանված նվազեցումների դրական տարբերություն, որոնց նկատմամբ կիրառվող եկամտահարկի դրույքաչափերը սահմանված են՝ 5 %՝ ապահովագրությունից ստացված ապահովագրական հատուցումների և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից և 10 %՝ ռոյալթիներից, տոկոսներից, գույքի վարձակալությունից, ձեռնարկատիրական գործունեությունից և հայաստանյան այլ աղբյուրներից ստացված եկամուտներից¹: Դա այն դեպքում, երբ ռեզիդենտի եկամտահարկի դրույքաչափը կազմում է 20 % (հարկային գործակալի միջոցով հարկվող եկամուտները 80 հազար դրամը գերազանցելու և հարկային գործակալի միջոցով չհարկվող եկամուտները 960 հազար դրամը գերազանցելու դեպքում):

Փաստորեն ոչ ռեզիդենտները օգտվում են ռեզիդենտներին տրված համախառն եկամտից նվազեցումներ կատարելու իրավունքից, որին գումարվում է նաև արտաքին տնտեսական գործունեությունը չհարկելու արտոնությունը (այսինքն՝ նշված դեպքով կատարվում է համախառն եկամտից ևս մեկ դեպքով նվազեցում), ինչպես նաև ստացված հարկվող եկամտից նվազեցումը, երբ եկամուտները ոչ ռեզիդենտին վճարվում են հարկային գործակալի միջոցով, այսինքն՝ գանձվում է կրկնակի պակաս եկամտահարկ, քան ռեզիդենտի հարկվող եկամտի նույն ծավալի եկամտահարկն է:

Իրավիճակը բոլորովին այլ է, երբ ոչ ռեզիդենտին եկամուտները վճարվում են ոչ հարկային գործակալի միջոցով (ապրանքների ու մատուցվող ծառայությունների մանրածախ իրացումը, օրինակ՝ տոնավաճառներում), և հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտների եկամտահարկի գանձումը, հատկապես շոշափելի գումարների դեպքում, դառնում է երբեմն անհնարին: Դրանց մասին են խոսում օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անհատ ձեռներեցների (ձեռնարկատերերի) հարկային պարտավորությունների մեծ ծավալներն ու դրանց գանձման անհնարինությունը (հանրապետությունից դրանց միտումնավոր բացակայելու պատճառով), որտեղ գուցե իրենց մեղքի բաժինն ունեն ձեռնարկությունների գրանցման պետական ռեգիստրի և ներքին գործերի մարմինները: Բայց փաստն այն է, որ եկամտահարկ վճարող այդպիսի անհատ ձեռներեցները դառնում են «անորսալի» հարկատուներ:

Հարկման այդպիսի արտոնությունների սահմանմամբ ոչ ռեզիդենտ հարկ վճարողների ձևավորումը պետական բյուջեի եկամտային բազան ամրապնդելու տեսանկյունից տնտեսապես արդարացված չէ նաև հարկման արդյունավետության նվազման, հայաստանյան ծագում ունեցող գումարները «միջնորդավճարի» ու գուտ կամ մաքուր եկամտի ձևով արտասահման արտահոսելու պատճառներով:

Դրա հետ մեկտեղ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք «ձեռք են բերում» հարկային այլ արտոնություններ, որոնք կապված են նրանց գործունեության վայրի առանձնահատկությունների հետ, քանի որ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք գործունեություն իրականացնում են ոչ միայն իրենց ստորաբաժա-

տանի հարկային ռեզիդենտն ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը:

¹ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, հոդ. 4, կետ 2, 22 և հոդ. 35:

նումների¹, այլն ձեռնարկատիրական գործակալի² միջոցով: Եթե ոչ ռեզիդենտների գործունեության իրականացման վայրը ստորաբաժանումների պարագայում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման գրանցման վայրն է, իսկ ձեռնարկատիրական գործակալի պարագայում՝ ձեռնարկատիրական գործակալի վայրը, ապա թե՛ մեկի և թե՛ մյուսի բացակայության դեպքերում ոչ ռեզիդենտի գործունեության իրականացման վայր են ոչ ռեզիդենտի՝ ՀՀ-ում գտնվող գրասենյակը, գործակալությունը, հանքահորը, գործարանը, ֆաբրիկան, հանքավայրը, պայմանագրային, շինարարական խորհրդատվական և այլ աշխատանքներ ու մատուցվող ծառայություններ իրականացնելու և դրանք վերահսկելու վայրը: Մակայն բոլոր երեք դեպքերում էլ անհասկանալիորեն ոչ ռեզիդենտի հարկվող շահույթը նվազում է նաև նրա ստորաբաժանման և գործունեության վայրի վրա կատարված ծախսերի և ՀՀ-ում իրականացվող գործունեության կապակցությամբ կրած կորուստների չափով³, ինչը տնտեսապես արդարացված չէ, և ռեզիդենտ հարկատուները հայտնվում են անհավասար հարկման դաշտում: Բացի դրանից, եթե ռեզիդենտը շահութահարկի կանխավճարային մուծումները (որը, ըստ էության, պետությանը հատկացվող անտոկոս վարկ է) կատարում է յուրաքանչյուր ամիս, ապա ոչ ռեզիդենտը՝ կիսամյակը մեկ (եթե նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցում է 2.0 մլն դրամը): Ճիշտ է, երբ ոչ ռեզիդենտների նկատմամբ խստացվում է հարկային ռեժիմը, ապա նվազում է արտասահմանյան գործարարների մուտքը հանրապետություն այն պետություններից, որոնցում հարկման ռեժիմներն իրենց ռեզիդենտների համար ավելի մեղմ են: Ուստի հարկման տեսանկյունից արտասահմանյան գործարարների համար Հայաստանի գրավչության խնդիրը հնարավոր է լուծել միայն հանրապետության ոչ ռեզիդենտների նկատմամբ կիրառվող հարկման ռեժիմն արտասահմանում իրենց ռեզիդենտների նկատմամբ կիրառվող հարկման ռեժիմների համեմատությամբ մեղմացնելու ճանապարհով: Բայց, նկատի ունենալով այն փաստը, որ «Շահութահարկի մասին» և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքները բավականին ազատականացված են նույնիսկ ռեզիդենտ հարկատուների համար և ելնելով ոչ ռեզիդենտների համար այդպիսի հարկային արտոնություններ սահմանելու հետևանքով առա-

¹ Դրանք ՀՀ-ում պետական գրանցում ստացած ոչ ռեզիդենտի առանձնացված ստորաբաժանումներն են:

² Դրանք ռեզիդենտ համարվող իրավաբանական անձը, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններն ու ֆիզիկական անձինք են, որոնք ոչ ռեզիդենտի համար կատարվող գործունեությունը (կապված գնումներ կատարելու և այլ պայմանագրեր կնքելու, երրորդ անձանց հետ գործակալական պայմանագրային հարաբերություններ հաստատելու, լիազորող անձին պատկանող ապրանքները կանոնավոր ձևով կուտակելու, պահեստավորելու և լիազորող անձի անունից այլ անձանց այդպիսի ապրանքներ առաքելու, առևտրական պայմանագրեր կնքելիս կամ գնման պատվերներ կատարելիս լիազորող անձին ներկայացնելու հետ) ոչ ռեզիդենտի կողմից վերահսկվում է հանձնարարության պայմանագրի, լիազորագրային կառավարման պայմանագրի կամ լիազորագրի հիման վրա կամ այլ ձևով: Այս ձևով գործունեություն իրականացնելու դեպքում ոչ ռեզիդենտի գործունեության իրականացման վայր է համարվում ձեռնարկատիրական գործակալի գտնվելու վայրը:

³ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Ե., 2009, էջ 105, 114:

ջացող բացասական ազդեցությունների ակտիվացումներից, անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել շահութահարկի և եկամտահարկի գծով ոչ ռեզիդենտների հարկման տարբերակումը:

Հարկման մոտեցումների կատարելագործման առումով կարևոր քայլ կարող է հանդիսանալ արտադրության բազային գործոններից տնտեսական ճանապարհով հարկման բացառումը: Այդ տեսակետից դրան միտված կարևորագույն քայլ պետք է դառնա եկամտահարկի չհարկվող նվազագույն շեմի բարձրացումը, որը ներկայումս կազմում է 30000 դրամ, և այն բավարար համարել չի կարելի: Բավական է նշել, որ միայն կոմունալ վարձերի (էլեկտրաէներգիա, ջուր, աղբահանություն և այլն), գույքային հարկերի և սպառողի հացի գինը արդեն գերազանցում է չհարկվող նվազագույն շեմի սահմանված մեծությունը: Բացի դրանից, այն տնտեսապես արդարացված չէ նաև այն պատճառով, որ այն գործատուներին ու վարձու աշխատողներին փոխհամաձայնեցված կարգով մղում է գործունեության սովերային դաշտ՝ արհեստականորեն նվազեցնելով ամսական հարկվող եկամտի չափը: Բավական է նշել, որ, համաձայն հաշվետվությունների, որոնք գործատուները ներկայացրել են կենսաթոշակային հիմնադրամ, վարձու աշխատողների 68 տոկոսին վճարած աշխատավարձերը կազմել են ընդհանուր աշխատավարձերի 40 տոկոսը կամ շուրջ 50 մլրդ դրամ¹: Դեռ ավելին, այս աշխատողները կազմել են բնակչության անապահով մասը, ինչի արդյունքում ավելանում է նաև անապահով խավերին տրվող փոխհատուցումների ծավալը, այսինքն՝ եկամտահարկի չհարկվող նվազագույն շեմի տնտեսապես չարդարացված լինելը նոր հիմնախնդիր է առաջացնում և ակտիվացնում այնպիսի բացասական ազդեցություններ, ինչպիսիք են՝ գործատուների կողմից վարձու աշխատողների սովերային վարձատրությունը (քանի որ 20000 դրամից պակասը հատկապես հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների ոլորտներում այն գումարը չէ, որ աշխատողին «կապի» իր աշխատատեղի հետ) և այլն, որոնց արդյունքում պետական բյուջե ոչ միայն պակաս գումարներ են մուտքագրվում, այլև պետական բյուջեից անհրաժեշտից ավելի գումարներ են ծախսվում, իսկ հարկային մարմինների և կենսաթոշակային հիմնադրամի համար ձևավորվում է «ավելորդ» և պակաս արդյունավետ վերահսկողության դաշտ: Հետևաբար անհրաժեշտ է ոչ միայն բարձրացնել եկամտահարկի ամսական չհարկվող նվազագույն սահմանը (շեմը), այլև այն հավասարեցնել ապրուստի նվազագույնին: Ընդ որում՝ անհրաժեշտ ենք համարում եկամտահարկի հաշվարկման մոտեցումների հիմքում դնել ռեզիդենտի ոչ թե անձնական, այլ ընտանիքի բոլոր անդամների եկամուտները, ինչպես արվում է Արևմտյան Եվրոպայի բազմաթիվ երկրներում (Մեծ Բրիտանիա, Նորվեգիա, Գերմանիա, Իտալիա և այլն)², որտեղ եկամտահարկի գումարները տարբեր են լինում միայնակ-

¹ Բարխուդարյան Լ., Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր. Պետական ֆինանսները և աղքատության կրճատումը, Ե., 2002, 33 էջ, էջ 15:

² Русакова И. Г., Кашин В. А., Толкушкин А. Б. и др., Налоги и налогообложение. М., ЮТИТИ, 2000, 495 с.; Стиглиц Дж. Ю., Экономика государственного сектора. Пер. с англ., М. изд-во МГУ, ИНФРА-М, 1997, 720 с., стр. 476.

ների, ամուսնացածների, երեխաներ ունեցողների համար և այլն:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հանրապետությունում «ռեզիդենտների վճարված եկամտահարկը պակասեցվում է հարկի այն գումարի չափով, որը նրանից գանձվել է օտարերկրյա պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան, բացառությամբ այն եկամուտներից օտարերկրյա պետություններում գանձված հարկի գումարի, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման համախառն եկամտից»: Ընդ որում՝ պակասեցվող կամ հաշվանցվող հարկի գումարի չափը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից՝ օրենքի դրույթներին համապատասխան Հայաստանում վճարման ենթակա հարկի գումարը: Բնականաբար հարկման նման ձևակերպումը գործնականում իրագործելը քիչ հավանական է, քանի որ Հայաստանի հարկային ռեզիդենտը հնարավորություն չի ունենա օտարերկրյա պետությունից վերցնելու կամ պահանջելու համախառն եկամտից նվազեցվող եկամուտների վերաբերյալ հայկական հարկային օրենսդրությանը համապատասխանող տեղեկանք (հայկական հարկային օրենսդրությունը չիմանալու կամ դրա անհնարինության պատճառով): Արդյունքում եկամտահարկի հաշվարկման հիմք կարող են հանդիսանալ հարկային ռեզիդենտի ճիշտ կամ սխալ ներկայացվող գրավոր հայտարարությունը և հարկային մարմնի կողմից այն ընդունելու կամ չընդունելու սուբյեկտիվ ցանկությունը, ինչպես նաև համապատասխան երկրի հարկային մարմնի կողմից կատարվող կամ կատարվելիք հարցումը, որը գործնականում քիչ կիրառական է հատկապես ոչ ռուսալեզու պետությունների պարագայում: Դեռ ավելին, Հայաստանի հարկային ռեզիդենտները հանրապետություն են վերադառնում շատ դեպքերում նույնիսկ առանց հարկված գումարի չափի վերաբերյալ տեղեկանք ունենալու, իսկ երբ բանկային փոխանցմամբ հանրապետությունում ստացվում են արդեն հարկված եկամուտները, ապա սկսվում են տարաձայնությունները հարկային ռեզիդենտների և հարկային մարմինների միջև, որի արդյունքը, որպես կանոն, շատ հաճախ լինում է եկամտի կրկնակի հարկումը¹: Վերջինիս պատճառները կապված են ապրանքների, ծառայությունների, կապիտալի, եկամուտների մշտական շարժման և այդ եկամուտները ստացած անձանց տեղաշարժի ու նրանց հարկային կարգավիճակի պարզաբանման հետ², քանի որ մշտական տեղաշարժի մեջ են գտնվում նաև եկամուտներ ստացող անձինք, իսկ տարբեր պետություններում հարկման բազայի ընտրության կամ հարկման ենթակա եկամուտների որոշման մեթոդաբանության մեջ գոյություն ունեն տարբերություններ: Դրա հետ մեկտեղ տնտեսական կյանքի միջազգայնացման գործընթացի ներկայիս զարգացումներն ավելի են խորացնում ու «անտեսանելի դարձնում» կրկնակի հարկման

¹ Կրկնակի հարկումը միննույն հարկատեսակով, հարկման միննույն օբյեկտի նկատմամբ և միննույն ժամանակահատվածում մեկ հարկատուի՝ երկու և ավելի պետություններում միաժամանակ հարկվելն է:

² Fuchs B. Transnationaler Vertus tasgleich bei internationalen Unternehmungen and Konzernen im Steuerrecht. Bern, 1993, S. 256, , pp. 17-19, 164-165.

հնարավորությունները, որոնք առաջանում են այն դեպքերում, երբ՝

1. օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը երկու և ավելի պետություններում ենթարկվում է հարկման այդ պետություններում ստացած միևնույն եկամտի կամ տնօրինվող կապիտալի մասով,
2. տվյալ պետության քաղաքացին, ստանալով եկամուտ կամ տնօրինելով կապիտալ, մեկ այլ պետության մեջ ենթարկվում է հարկման միևնույն օբյեկտների գծով ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ երկրի ազգային օրենսդրությանը համապատասխան,
3. երկուսից ավելի պետություններում միևնույն հարկ վճարողը ենթարկվում է հարկման ստացված ամբողջ եկամտի կամ տնօրինվող կապիտալի մասով:

Բոլոր թվարկված դեպքերում էլ կրկնակի հարկումը ոչ բարենպաստ ներգործություն է ունենում տնտեսական համակարգերի ինտեգրացման, տնտեսական հավասար մրցակցության ծավալման, միասնական շուկայի ստեղծման, ապրանքների ու ծառայությունների և կապիտալի ազատ փոխանակման ու տեղաշարժի վրա:

Վերոհիշյալ ներգործությունների բացասական ազդեցությունները չեզոքացնելու և կրկնակի հարկումը բացառելու կամ կրկնակի հարկման ծանրությունը նվազեցնելու ուղիներ կարող են հանդիսանալ ազգային հարկման մոտեցումների կատարելագործումը և միջազգային հարկային համաձայնագրերի¹ կնքումը, քանի որ միջազգային իրավունքը կրկնակի հարկման նկատմամբ արգելակող ընդհանուր բնույթի կանոններ չի բովանդակում:

Կրկնակի հարկման նշված երկու ուղիները պետք է միմյանց փոխլրացնեն և գործեն մեկը մյուսի հետ փոխկապակցված: Այսպես, եթե ազգային հարկային օրենսդրությամբ հարկային արտոնության տրամադրումը նպատակաուղղվում է հայրենական տնտեսվարող սուբյեկտների համար բարենպաստ պայմանների ձևավորմանը, ապա օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների համար այդ հանգամանքը պետք է պայմանավորված լինի երկու երկրների միջև ֆինանսատնտեսական հարաբերությունների զարգացման աստիճանով:

Միջազգային կրկնակի հարկման բացառման նպատակով միմյանց միջև միջազգային հարկային համաձայնագիր կնքող պետությունները պետք է պարտավորվեն.

- ա) սահմանել կրկնակի հարկման բացառման սխեմա, որը կարող է իրականացվել յուրաքանչյուր պայմանավորվող պետությանը եկամուտների կամ

¹ Միջազգային կրկնակի հարկման համաձայնագրի (կոնվենցիայի) մոդելային փաստաթուղթը երկկողմ հարկային համաձայնագրի նախագիծ է, որը բաղկացած է 30 հոդվածներից: Այս համաձայնագրի նախագիծն օգտագործվում է որպես ուղեցույց շահագրգիռ պետությունների միջև բանակցություններ վարելու և անհրաժեշտ փաստաթղթեր նախապատրաստելու համար, քանի որ կրկնակի հարկման հիմնախնդիրը դիտվում է որպես միջազգային համագործակցության ապահովման կարևոր նշանակություն ունեցող հարց: Միջազգային կրկնակի հարկման համաձայնագրի մոդելը մշակվել ու նախապատրաստվել է ՄԱԿ-ի Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության ֆինանսական հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից (1977, 1980, 1981 թթ. խմբագրությամբ): Куксин И. Н., Российская налоговая практика: история, теория и практика, СПб., Академия МВД России. 1997, стр. 108-109.

գույքի այս կամ այն տեսակի հարկման բացառիկ իրավունքն ամրագրելու միջոցով,

- բ) որոշել կրկնակի հարկման բացառման մեխանիզմներն այն դեպքերում, երբ եկամտի կամ գույքի հարկման իրավունքը թողնվում է տվյալ պետության իրավասությանը,
- գ) պաշտպանել մեկ պետության հարկ վճարողին մեկ այլ պետության մեջ խտրականություն բովանդակող երևույթներից,
- դ) նախատեսել տեղեկատվության փոխադարձ փոխանակում կրկնակի հարկման բացառման նպատակով:

Հարկ է նշել, որ միջազգային հարկման պրակտիկայում լայն տարածում են ստացել կրկնակի հարկումից խուսափելու հետևյալ երեք հիմնական մեթոդները՝ բաշխման, հարկային հաշվանցման և հարկային նվազեցման:

Առաջին՝ բաշխման մեթոդի ժամանակ պետությունը հարկման չի ենթարկում այն եկամուտը կամ հրաժարվում է հարկել հարկման օբյեկտի այն մասը, որը, ըստ հարկային համաձայնագրի, հարկման է ենթարկվել մյուս պետության մեջ: Այս մեթոդն, ըստ էության, պայմանավորվող պետությունների միջև հարկման օբյեկտներն իրար մեջ բաշխելու գործընթաց է, որը գրականության մեջ հայտնի է նաև «հարկից ազատման սկզբունք» անվանումով¹:

Երկրորդ՝ հարկային հաշվանցման մեթոդի ժամանակ պետությունը, հաշվարկելով հարկ վճարողի համախառն եկամուտը, այդ թվում՝ նաև այլ պետություններում ստացվածը, գանձում է կատարում ընդհանուր հաշվարկված հարկի գումարի և այլ պետություններում վճարված հարկի գումարի տարբերության չափով²: Այսինքն՝ եթե բաշխման մեթոդի ժամանակ հարկից ազատումը կիրառվում է ստացված եկամուտների հաշվանցման նկատմամբ, ապա հարկային հաշվանցման մեթոդի ժամանակ՝ միայն հաշվարկված ու վճարված հարկերի նկատմամբ:

Երրորդ՝ հարկային նվազեցման մեթոդը, որը նաև անվանվում է «հարկային զեղչ», ունի հետևյալ բնութագրումը. արտասահմանում վճարված հարկի գումարի չափով նվազեցվում է հարկման ենթակա գումարի չափը, և հետո միայն որոշվում հարկման ենթակա գումարը: Հարկ է նշել, որ հարկային նվազեցումն ուղղակիորեն առնչվում է հարկման բազայի հետ, և այս մեթոդը գործնական կիրառման տեսանկյունից ավելի քիչ շահեկան է հենց հարկ վճարողի համար, քան հարկային հաշվանցումը: Այս առումով հարկ է նկատել, որ մի դեպքում այլ երկրում վճարված հարկի գումարի չափով է նվազեցվում տվյալ պետության մեջ վճարման ենթակա հարկի գումարը, իսկ մյուս դեպքում հիշյալ

¹ Основы налогового права. Под ред. С. Г. Пепеляева. М., Инвест-Фонд, 1995. стр. 144, Налоги и налоговое право. Под ред. А. В. Брызгалина, М., Аналитика-Пресс, 1997, стр. 241.

² Այս մեթոդը գրականության մեջ հայտնի է նաև «հարկավարկային սկզբունք» կամ «հարկային վարկ» կամ «վարկ արտասահմանյան հարկի դիմաց» անվանումներով: Основы налогового права. Под ред. С. Г. Пепеляева. М., Инвест-Фонд, 1995. стр. 144, Налоги и налоговое право. Под ред. А. В. Брызгалина, М., Аналитика-Пресс, 1997. стр. 241, Козырин А., Налоговое право зарубежных стран: вопросы теории и практики. М., Манускрипт, 1993. стр. 44-45:

նվազեցումը կատարվում է հարկման ենթակա եկամտից:

Կրկնակի հարկման բացառման գործընթացներում կարևոր քայլ պետք է համարել.

ա) միջազգային հարկային համագործակցության ընդլայնման ու զարգացման շրջանակներում Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հիմնարկների կողմից նախապատրաստված և հրապարակված «Համաշխարհային հարկային օրենսգրքի հիմունքները» մոդելային փաստաթուղթը¹, որը համարվում է տիպային, նրանում մշակված ու բերված ցուցանիշները կրում են պայմանական, իսկ արտացոլված դրույթները՝ երաշխավորական բնույթ: Դրա հետ մեկտեղ պետությունների համագործակցության համատեքստում «Օրենսգրքում» առանձնակի նշանակություն է տրվում միջազգային հարկային իրավունքի ձևավորմանը և այդ հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերի միասնականացմանն ու համապատասխանեցմանը, իսկ «Օրենսգրքի» կիրառելիության համար անհրաժեշտ նախապայմաններից մեկն է համարվում ընկերությունների շահութահարկի ու քաղաքացիների եկամտահարկի հաշվարկման ու վճարման կարգերի նույնացումը և դրանց միավորումը մեկ ընդհանուր հարկատեսակի՝ եկամտահարկի մեջ, որի դրույքաչափն առաջարկվում է միասնականացնել բոլոր հարկատուների համար և այն սահմանել 30, իսկ արտասահմանյան ներդրողների համար՝ 15 տոկոս, որը, ըստ հեղինակների, հանգեցնելու է ներդրումների խթանմանը և հարկման բազայի ընդլայնմանը:

բ) 1991 թվականի դեկտեմբերի 8-ին ստորագրված Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագիրը, որի դրույթների շրջանակներում մասնակից պետությունները պարտավորվել են ապահովել Խորհրդային Միության կողմից արտասահմանյան պետությունների հետ գույքի և եկամուտների կրկնակի հարկման բացառման մասին նախկինում կնքված համաձայնագրերի պահանջների կատարման ապահովումը: Միջազգային հարաբերություններում նմանաբնույթ համագործակցության ձևավորումը պայմանավորված էր մի կողմից ԱՊՀ անդամ պետությունների տնտեսական ոլորտների ու տնտեսվարող սուբյեկտների փոխկապվածությամբ և ինտեգրացման բարձր մակարդակով, իսկ մյուս կողմից՝ հետխորհրդային տարածքում միասնական շուկայի ձևավորման համար ներդաշնակ հարկային համակարգերի ստեղծման անհրաժեշտությամբ: Բացի այդ, գույքի և եկամտի կրկնակի հարկումից խուսափելու կամ նման դեպքերը բացառելու վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման ժամանակ միասնական մոտեցումներ ցուցաբերելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարները Տաշքենդում 1992 թվականի մայիսի 15-ին ստորագրել են արձանագրություն գույքի և եկամտի կրկնակի հարկումից խուսափելու տիպային համաձայնագրի հաստատման

¹ Ward M. Husce, Donald S. Lubex. The bases of the world Tax lawbook N-Y, 1994. Համաշխարհային հարկային օրենսգրքի դրույթների մեկնաբանությունների մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Бутаков Д., Основы Мирового налогового кодекса. Финансы, 1996, № 8, էջ 23:

մասին: Հիշյալ փաստաթղթով կողմերը պարտավորվել են տվյալ ոլորտին առնչվող հարցերը ինչպես միմյանց միջև, այնպես էլ երրորդ երկրների միջև կանոնակարգել՝ հիմք ընդունելով տվյալ տիպային համաձայնագրի դրույթները:

Ինչպես տեսնում ենք, կրկնակի հարկման բացառման իրական ճանապարհը օտարերկրյա պետությունների (առաջին հերթին՝ հայաշատ) հետ կրկնակի հարկումը բացառող պայմանագրերի կնքումն է, որոնք առկա են Ռուսաստանի Դաշնության (ստորագրվել է 1996 թ. դեկտեմբերի 28-ին և գործողության մեջ է դրվել 1999 թ. հունվարի 1-ից), Ուկրաինայի (ստորագրվել է 1996 թ. մայիսի 14-ին և գործողության մեջ է դրվել 1997 թ. հունվարի 1-ից), Թուրքմենիայի (ստորագրվել է 1997 թ. հունիսի 5-ին և գործողության մեջ է դրվել 2000 թ. հունվարի 1-ից), Վրաստանի (ստորագրվել է 1997 թ. նոյեմբերի 18-ին և գործողության մեջ է դրվել 2001 թ. հունվարի 1-ից), Բելառուսի (ստորագրվել է 2000 թ. հուլիսի 19-ին և գործողության մեջ է դրվել 2002 թ. հունվարի 1-ից) հետ և այլն¹: Բայց քանի որ դա երկարատև ու շարունակական գործընթաց է, ապա նպատակահարմար է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի հարկային ռեզիդենտների՝ Հայաստանից դուրս ստացված եկամտի գումարը չի մտցվում Հայաստանում հայտարարագրվող տարեկան եկամտի ընդհանուր գումարի մեջ, այլ հարկվում է առանձին՝ օտարերկրյա պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան հաշվարկված (գանձված) հարկի և այդ եկամուտներից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հաշվարկված հարկի դրական տարբերության հաշվով, եթե տվյալ օտարերկրյա պետության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի կրկնակի հարկումը բացառող երկկողմ պայմանագիր»: Նման ձևակերպման պայմաններում՝

նախ՝ բացառվում է ստացված եկամտի կրկնակի հարկումը, որը բխում է ոչ միայն հարկման սկզբունքների պահանջներից, այլև դրսում «դառը քրտինքով իր ընտանիքի ու պետության համար եկամուտ աշխատած քաղաքացու շահերից»:

Երկրորդ՝ գանձման ենթակա հարկի հաշվարկը հարկային մարմինները կատարում են միջպետական երկկողմ պայմանագրերի պահանջով հանրապետություն ուղարկվող հարկային անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա՝ բացառելով հարկային մարմինների ու հարկային ռեզիդենտների միջև օրենսդրության անկատարությամբ պայմանավորված տարաձայնությունները:

Երրորդ՝ հարկային ռեզիդենտը «անմեղ մեղավոր» չի դառնում և «անհարկի քաշքշուկների» մեջ չի հայտնվում՝ կապված հանրապետության իշխանությունների՝ միջպետական աշխատանքների ոլորտում ունեցած բացթողումների հետ:

¹ Հայաստանի հարկային համաձայնագրերը, Երևան, ՀՀ պետական եկամուտների նախարարություն, 2002:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (2019 թ.)

Սվետլանա Դալլաբյան

տնտեսագիտության թեկնածու

Նարեկ Սարատիկյան

ՀՀ ԳԱԱ Մ. Բոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի սասփրանտ

Ժամանակակից պայմաններում ցանկացած տնտեսական համակարգի զարգացման տեմպերի անխափանությունը մեծապես կախված է այդ համակարգին բնորոշ մրցակցային առավելությունների կիրառումից: Տնտեսական ռեսուրսների սահմանափակության պարագայում հետզհետե դժվարանում է այդպիսի առավելությունների հնարավորությունը, և առաջին գիծ են մղվում ինովացիոն գործառույթները, որոնց ճիշտ ժամանակին կիրառումը կարող է մեծապես ազդել ինչպես տնտեսության առանձին ճյուղերի, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացման տեմպերի վրա՝ ապահովելով անհրաժեշտ մրցակցային առավելություններ: Ուստի պատահական չէ այն հանգամանքը, որ տարեցտարի տարբեր երկրների կողմից առավել շատ ռեսուրսներ են ուղղվում իրենց ինովացիոն ներուժի զարգացման խթանմանը: Հետևաբար համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլն առանձնահատուկ է նրանով, որ երկրներն իրենց առաջընթացի ճանապարհին շեշտադրում են հատկապես մարդկային ռեսուրսների՝ գլոբալ զարգացումների համարժեք մրցունակ տնտեսություն ձևավորողների դերակատարումը՝ արդյունքում ստեղծելով գիտելիքի վրա հիմնված կամ որ նույնն է՝ ինովացիոն տնտեսություն¹: Անհրաժեշտ է փաստել, որ ինովացիոն տնտեսությունը ձևավորող հիմնական գործոններ են գիտելիքը, մարդկային կապիտալը և նորարարությունները: Նոր տնտեսության պայմաններում բնական ռեսուրսները մղվում են երկրորդ պլան, և առավել բարենպաստ պայմաններ են ստեղծվում ՀՀ տնտեսության համար, որը, չունենալով հարուստ բնական պաշարներ, փոխարենն ունի հարուստ և զարգացած մարդկային կապիտալ, ինչը կարող է հիմք հանդիսանալ մրցունակ ինովացիոն տնտեսություն ստեղծելու համար: Այս համատեքստում Ն. Փաշինյանը ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի կողմից կազմակերպված «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները ՀՀ-ում» թեմայով հանրապետական գիտաժողովի ժամանակ նշեց, որ «թե՛ 25 տարի առաջ աշխարհի ամենաառաջատար, թանկարժեք 20 ընկերություններն այն ընկերություններն էին, որոնք տիրապետում էին նավթի, գազի կամ որևէ նյութական միջոցի, ապա այժմ դա փոխվել է, և դարձել է այնպես, որ հիմա աշխարհի առաջատար ամենահարուստ 20 ընկերությունները նրանք են, որոնք հիմնված են նախկինում բնության մեջ գոյություն չունեցող երևույթների վրա: Սա, կարծում եմ, նոր տնտեսակարգի կարևոր առանձնահատկությունն է, որը մեզ համար լավ լուր է, որովհետև արդի պայման-

¹ Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն, Երևան, 2008. Էջ 54:

ներում ամենաթանկ ընկերությունների շարքում առնվազն կեսը նրանք են, որոնք հիմնվում են մի մատերիայի վրա, որը նախկինում ուղղակի գոյություն չի ունեցել, և դա ընդամենը մարդկային մտքի արտադրություն է: 21-րդ դարում տնտեսության առաջատար շարժիչ ուժը դարձել են տեխնոլոգիաները, որոնք կարող են օգնել մեզ հաղթահարել մեր տրանսպորտային և այլ բազմաթիվ սահմանափակումներ»¹: Այսպիսով, ինովացիոն տնտեսության ձևավորմանը և զարգացմանը նպաստող բոլոր տեսակի մոդելները հնարավոր է տեղայնացնել ՀՀ տնտեսության մեջ և ստանալ բազմագործառության ինովացիոն համակարգ, որն էլ կնպաստի ինովացիոն տնտեսության ձևավորմանը և հեռանկարային զարգացմանը:

ժամանակակից տնտեսության մեջ ինովացիոն գործընթացների ակտիվացումը պայմանավորված է ինովացիոն համակարգերի ձևավորման և զարգացման հետ: Նորարարական գործընթացների արագացման համար անհրաժեշտ է ստեղծել ազգային ինովացիոն համակարգ (ԱԻՀ), որը կհամակցի ազգային տնտեսական միավորները՝ նորարարության հենքի վրա ապահովելով տնտեսական աճ և կենսամակարդակի բարելավում: ԱԻՀ-ի ստեղծումը պետք է նպատակաուղղված լինի պետական կառավարման և բիզնես ոլորտներում իրավահավասար գործընկերային կապերի ստեղծմանը: Ընդ որում՝ պետական կառավարման մարմինների խնդիրներն են գիտատեխնիկական հատվածի և կրթության ոլորտի խթանումը, պետական մակարդակում գիտական արտադրանքների հասանելիության ու դրանց առևտրայնացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, ինչպես նաև ինովացիոն գործունեությունը խթանող ենթակառուցվածքի, մասնագետների պատրաստման ու անձնակազմի մասնագիտական զարգացման համակարգի և իրավական դաշտը կարգավորող հենքի ստեղծումը: Իսկ բիզնես ոլորտի հիմնական խնդիրը նորարարական արտադրանքի ստեղծման և շուկայում դրա առաջխաղացման առևտրային ռիսկերի կառավարումն է²:

Երկրի տնտեսական վերափոխումների իրագործման համատեքստում կարևոր դերակատարում ունի տարածքային ինովացիոն համակարգի (ՏԻՀ) ձևավորումը՝ որպես ԱԻՀ գոյության անհրաժեշտ պայման: Յուրաքանչյուր երկիր բաղկացած է առանձին տարածաշրջաններից, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները, և հետևաբար ԱԻՀ ձևավորման, ինչպես նաև երկրի տնտեսության համահարթ զարգացման համար առավել քան անհրաժեշտ է ստեղծել ՏԻՀ, որը կնպաստի ԱԻՀ-ի ձևավորմանը, ինչն էլ կխթանի ինովացիոն տնտեսության հեռանկարային զարգացմանը և արդիականացմանը: Եվ, ի վերջո, տնտեսության արդիականացումն ի հաշիվ ինովացիոն գործընթացների ապահովվում է տարածքային տնտեսության կայուն զարգացման և մրցունակության միջոցով³:

Տարածքային մակարդակում նորարարության ոլորտում զարգացման ապա-

¹ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/05/21/Nikol-Pashinyan-visit-to-SCI/#prettyPhoto>

² Санду И., Рыженкова Н., Проблемы и стратегии формирования региональных инновационных систем., www.vniiesh.ru/documents/document_9531

³ Н. П. Модебадзе, Региональная инновационная система как фактор устойчивого развития и конкурентоспособности территории, 2014, стр 15.

հովումը ուղղակիորեն փոխկապակցված է տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ, որը ներառում է համախառն տարածքային արտադրանքը, արտադրական ուժն ու ռեսուրսները, տարածքի մրցունակությունը, ներդրումային գրավչությունը, բիզնես ոլորտի ակտիվությունը և այլ գործոններ: Մրցակցային առավելություն և ներուժ ունենալու դեպքում տարածքային միավորները հզորանում են, ընդլայնում ներքին շուկան, խթանում են փոքր և միջին բիզնեսը, ինչպես նաև ընդգրկում են երիտասարդ մասնագետների՝ ոլորտի բարձրորակ մասնագետներ պատրաստելու նպատակով: Այս միտումներն առաջացնում են ազգային ինովացիոն համակարգերը տարածքային ինովացիոն համակարգի բաժանելու անհրաժեշտություն՝ նորարարությունները տարածելու և նորարարական գործունեությունը վերահսկելու համար: Մյուս կողմից՝ տարածքային ինովացիոն համակարգն իր կառուցվածքով, գործոններով ու կապերով բարդ և բազմաշերտ է¹: ՏԻՀ-երի վերաբերյալ առավել հստակ պատկեր ստանալու համար կատարենք որոշակի դիտարկումներ:

Ինովացիոն համակարգը, համաձայն մի հայեցողյան, ոչ թե առանձին գործընթաց է, այլ համակարգ, որտեղ համագործակցում են տարբեր ոլորտներ՝ զեներացնելով գիտելիքը, նորարարությունը և արտադրությունը²: ՏԻՀ-ը բնորոշվում է կազմակերպությունների, գիտելիք ու ինովացիա արտադրող և տարածող կազմակերպությունների (բուհեր, հետազոտական կենտրոններ, ուղեղային կենտրոններ, տեխնոլոգիաների տրանսֆերային կազմակերպություններ) միջև կորպորատիվ գործընթացներով, որոնք նպաստում են ինովացիոն ակտիվության բարձրացմանը և ինովացիոն միջավայրի ձևավորմանը³: Գ. Իցկովիցը և Լ. Լեյդետորֆը ՏԻՀ-ի ներքին մեխանիզմը բնութագրում են որպես եռակողմ համագործակցություն՝ առաջ քաշելով եռաթև մոդելի վարկածը⁴: Վերջինս իր մեջ ներառում է ՏԻՀ-ի հիմնական մասնակիցների (բիզնես ոլորտ, գիտակրթական և պետական հատված) միջև փոխհարաբերություններ: Մեկ այլ մոտեցմամբ՝ ՏԻՀ-ի մասնակիցները համագործակցում են գիտելիքի ստեղծման (զեներացման), տարածման և օգտագործման միջոցով⁵: Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի 9.1 կետի «Արդյունաբերությունը և արտահանման խթանումը» 187 ենթակետի 4-րդ և 5-րդ մասերում առանձնացված են կարողությունների զարգացում և մրցունակ

¹ Абушахманова Ю. В., Современные региональные инновационные системы и их элементы. Экономика России в XXI веке: сборник научных трудов XII Международной научно-практической конференции "Экономические науки и прикладные исследования", г. Томск, 2015 г., с. 8.

² Competitive Regional Clusters. National Policy Approaches OECD. 30 May 2007. Available at: http://www.oecd-ilibrary.org/urban-rural-and-regional-development/competitive-regional-clusters_9789264031838-en (accessed 01.06.15).

³ Regional Innovation Systems: A Critical Synthesis. United Nation University, Institute for New Technologies. UNU-INTECH Publ., 2004-17.

⁴ Ицковиц Г., Тройная спираль университеты-предприятия-государство, Инновации в действии, Томск, с. 201, 238.

⁵ Edquist C., Systems of innovation. The Oxford Handbook of Innovation. Oxford, Oxford University Press, 2005, 656 s., pp.181-208.

կության բարձրացումը, մասնավորապես՝ տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցմանը աջակցելու միջոցով, ինչպես նաև հետազոտությունների և մշակումների խթանում՝ տեխնոպարկերի և արդյունաբերական պարկերի հիմնման և վենչուրային հիմնադրամների ստեղծման միջոցով¹: Այս նկատառումով Հայաստանում ստեղծվել են մի քանի բիզնես ինկուբատորներ և տեխնոպարկեր, որոնք նպատակ ունեն զարգացնելու ինովացիոն համակարգերը մարզերում: Մասնավորապես՝ Գյումրու և Վանաձորի տեխնոպարկերը, ինչպես նաև Կողբում կառուցվող Թումո կենտրոնը: Վերջիններիս ստեղծման գործում խթանող գործոններ կարող են հանդիսանալ համալսարանները, խոշոր արտադրական կենտրոնները և դպրոցները:

ՏԻՀ-ի վերաբերյալ ինչպես նշված, այնպես էլ այլ հեղինակների մոտեցումների դիտարկումների արդյունքում կարող ենք առանձնացնել ՏԻՀ-ի հետևյալ առանձնահատկությունները և դրանց հիմնական էությունը.

1. ՏԻՀ-ը հնարավորություն է ընձեռում մեկ միջավայրում համատեղել գիտական և մասնավոր հատվածը, որի արդյունքում հավասարաչափ զարգանում են երկու ոլորտները,
2. ձևավորված միջավայրը լայն հնարավորություններ է տալիս նոր ապրանքների և ծառայությունների ստեղծմանն ու տարածմանը,
3. այստեղ գլխավոր գործոնը գիտելիքն է,
4. բարձրանում է մարդկային զարգացվածության մակարդակը,
5. ինովացիաները ներգրավվում են ամբողջ տնտեսաքաղաքական գործընթացի մեջ,
6. ՏԻՀ-ը մարզերի համար հանդիսանում է լավագույն լուծում՝ որպես նոր տնտեսական համակարգին ինտեգրվելու միջոց,
7. ՏԻՀ-ը նպաստում է մարզերի հավասարաչափ զարգացմանը:

ՏԻՀ-ի ձևավորման շրջանակներում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սկզբունքները կամ ուղղությունները, որոնց ճիշտ և փոխլրացնող գործունեության արդյունքում կապահովվի բարձր արդյունավետությամբ և մրցունակ ՏԻՀ.

1. գիտության և մասնավոր հատվածի համախմբում,
2. գիտելիքի արտադրություն,
3. գիտելիքի առևտրայնացում,
4. գիտության տարածում,
5. մասնավոր հատվածի արդիականացում ի հաշիվ գիտելիքի,
6. գիտելիքի նպատակադրված և նպատակապահ զարգացում և կիրառում:

Նշված սկզբունքների կիրառման արդյունքում հնարավոր կլինի զարգացնել ՏԻՀ-ը և նպաստել տարածքների հավասարաչափ զարգացմանը: Մակայն այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է պարզել ՀՀ իրավասթենսդրական դաշտի ընձեռած հնարավորությունները, ՀՀ ունեցած ներուժն այս ամենի իրացման և կազմակերպման մեջ, ինչպես նաև գտնել այն հիմնական խնդիրները և

¹ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման «ՀՀ 2014-2025 թթ. հառանկարային զարգացման հեռանկարային ռազմավարական ծրագիր», էջ 58:

խոչընդոտները, որոնք կարող են դանդաղեցնել ՏԻՀ-ի ձևավորման գործընթացը:

Ինովացիոն գործունեության հաջողության գլխավոր բաղադրիչներից է ինովացիոն միջավայրի ձևավորման պետական քաղաքականությունը, որն իրականացվում է ինովացիոն գործունեությունը կարգավորող իրավական դաշտի՝ օրենսդրական և նորմատիվաիրավական մեխանիզմների ստեղծման ճանապարհով: ՀՀ ԱԻՀ ձևավորման համար որպես հիմք է ծառայել ՀՀ ինովացիոն գործունեության հայեցակարգը¹, վերջինս հիմք ընդունելով՝ 2011 թ. փետրվարի 17-ի նիստի N 6 արձանագրային որոշմամբ ընդունվել է «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարություն» հայեցակարգը²:

ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման իրավական հիմքերից է նաև «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը³, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման և իրականացման իրավական և տնտեսական հիմքերը, ինովացիոն գործունեության պետական աջակցության ձևերը: Այսպիսով, կարելի է փաստել, որ ազգային ինովացիոն համակարգ ունենալու ամբողջ փուլային և հաջորդական քայլերի տրամաբանությունը կառուցված է ՀՀ կառավարության կողմից ցուցաբերվող աջակցության, բյուջեից առանձին տողով ֆինանսավորման, ինչպես նաև հետևողական ծրագրային միջոցառումների վրա:

Սակայն այսօր խնդիր կա սահմանելու ինովացիոն տնտեսության ձևավորման միասնական տեսլական և մշակելու համապարփակ ռազմավարություն, որը կինտեգրի գործող և մեկնարկող նախաձեռնությունները մեկ միասնական համատեքստում: Դա կնպաստի կատարվող քայլերի առավել արդյունավետ թիրախավորմանը և կիրարկմանը: Նշյալ խնդիրները խոչընդոտ են նաև ՏԻՀ զարգացման համար:

Ինովացիոն տնտեսության և նոր հասարակարգի ձևավորման ու զարգացման ուղղությամբ ծավալուն քայլեր է ձեռնարկում նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվայնացման վարչությունը: Վարչությունն իր առջև դրված խնդիրները և նպատակներն իրականացնելու համար իր իրավասությունների սահմաններում ներկայացնում է հետևյալ առաջարկությունները⁴.

1. տեղեկատվական հասարակության ձևավորման և զարգացման պետական քաղաքականության, տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացի դիտանցում իրականացնելու,

2. տեղեկատվական հասարակության ձևավորման, տեղեկատվական տեխ-

¹ ՀՀ ինովացիոն գործունեության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2005 թ. հունվարի 20-ի N 2 նիստի արձանագրային որոշում, էջ 5:

² «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարություն» հայեցակարգ, ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի N 6 արձանագրային որոշման հավելված, էջ 8:

³ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 2006.06.28/33(488) հոդ. 679:

⁴ http://hti.am/main.php?lang=1&page_id=705#

նուրգիաների ոլորտի զարգացման և տեղեկատվական անվտանգության քաղաքականության, ինչպես նաև նպատակային ծրագրեր ու միջոցառումներ մշակելու և իրագործելու,

3. տեխնոլոգիական ընկերությունների գործունեությանն աջակցելու և տեխնոլոգիական գործունեության արդյունքի առևտրայնացման քաղաքականության,

4. տեխնոլոգիական զարգացման գործունեություն իրականացնող միջազգային ընկերությունների՝ հայաստանյան շուկա ներգրավելու և հայկական տեխնոլոգիական զարգացման գործունեություն իրականացնող ընկերությունների զլոբալացմանը խթանելու քաղաքականության,

5. թվային տնտեսության և նորարարության ձևավորմանը խթանելու վերաբերյալ:

Վերոնշյալ քայլերը էականորեն կարող են նպաստել ինովացիոն տնտեսության զարգացմանը: Սակայն հարկ է նշել, որ չկա առանձնացված հստակ քաղաքականություն, որը կնպաստի ՏԻՀ ձևավորմանը և զարգացմանը: Բարենպաստ օրենսդրաիրավական դաշտը լրացուցիչ խթան կարող է դառնալ ՏԻՀ զարգացման համար: Փոփոխությունները հիմնականում պետք է վերաբերեն ՓՄՁ հատվածին և գիտակրթական հաստատություններին, որոնք հանդիսանում են ՏԻՀ կարևոր գործոնները: Մասնավորապես՝ առաջարկում ենք՝

- ՓՄՁ հատվածի ինովացիոն և գիտատար ուղղություններում ներգրավված աշխատողների նկատմամբ կիրառել հարկման գրոյական դրույքաչափ կամ կիրառել ցածր հարկման դրույքաչափ 3 տարով: Նման մոտեցումը կնպաստի, որ ՓՄՁ ոլորտը ավելի շատ ներդրումներ կատարի ինովացիոն հատվածի վրա և մինևույն ժամանակ ներգրավի հավելյալ աշխատուժ առանց հարկային բեռի ավելացման:

- Գիտակրթական հաստատություններին ֆինանսական դոտացիաներ հատկացնել՝ հաշվի առնելով նրանց արդյունավետությունը գիտական և ինովացիոն ոլորտում: Այս մոտեցումը նպատակ ունի շահագրգռելու նմանատիպ կազմակերպություններին (դպրոց, քոլեջ, բուհ) որպեսզի նրանք անմիջապես մասնակցություն ունենան ինովացիոն գործընթացներին՝ տալով շոշափելի արդյունքներ, ինչի հաշվին հետագա տարիներին կարող են պետական բյուջեից ակնկալել առավել մեծ ֆինանսական աջակցություն: Մինևույն ժամանակ այն կնպաստի գիտակրթական հաստատությունների և մասնավոր հատվածի սերտ համագործակցությանը:


- Հայրենական արտադրության ինովացիոն ապրանքներից կամ ծառայություններից օգտվելու դեպքում հարկման ենթակա գումարից կատարել նվազեցում այդ գումարի կրկնապատիկի չափով: Այն լրացուցիչ խթան կհանդիսանա հայրենական ինովացիոն արտադրանքի զարգացման և տարածման համար:

- Պետական կարգավիճակ ունեցող բուհերը պարտադիր պետք է ունենան ակտիվ գործող գիտահետազոտական կենտրոններ, որոնց կատարած գիտահետազոտական աշխատանքների արդյունքները պետք է շոշափելի լինեն:

Վերոնշյալ կարգավորումները և որոշումները հիմնականում կարգավորում են ԱԻՀ-ը, ինչի համատեքստում և այն կարգավորող օրենքների շրջանակներում

Էլ պետք է ձևավորվի և զարգանա ՏԻՀ-ը: Մակայն այստեղ առկա է տարբերություն ԱԻՀ-ի և ՏԻՀ-ի միջև: Ինչպես արդեն նշել ենք, ՏԻՀ-ը ձևավորվում և զարգանում է՝ ելնելով տվյալ տարածքի առանձնահատկություններից, հնարավորություններից, աշխարհաքաղաքական իրավիճակից, մշակութային առանձնահատկություններից և առկա ռեսուրսներից: Հետևաբար յուրաքանչյուր ՏԻՀ-ի համար պետք է գործեն յուրովի մոտեցումներ և կարգավորումներ: ՏԻՀ ձևավորման և զարգացմանն ուղղված մեկ միասնական օրենքի կամ կարգավորող որոշումների բացակայությունը այս պարագայում կարելի է դիտարկել որպես հնարավորություն: Այն ենթադրում է, որ յուրաքանչյուր մարզ ինքնուրույն պետք է մշակի ՏԻՀ ձևավորումը և զարգացման քաղաքականություն և ռազմավարություն, ինչը կնպաստի ՀՀ-ում իրարից տարբերվող և գրավչության տարբեր մոտեցումներ (մոդելներ) ունեցող ՏԻՀ-երի ստեղծմանը:

Ըստ Ս. Բիրիկի՝ տարածքային ինովացիոն համակարգի կառուցվածքային մոդելը բաղկացած է երկու ենթահամակարգերից՝ նորարարության ստեղծման և նորարարության առևտրայնացման: Առաջինի շրջանակներում իրականացվում է գիտատեխնոլոգիական գործունեություն, անցկացվում են հիմնարար և կիրառական հետազոտություններ, իսկ երկրորդ ենթահամակարգում իրականացվում է ինովացիոն գործընթացի եզրափակիչ փուլը՝ գիտական և փորձարարական հետազոտություններից անցում կատարելով գաղափարի արտադրական գործընթացում իրագործման ապահովում:




Պատկեր 1. ՏԻՀ կառուցվածքային մոդել¹

¹ Бибик С. Н., Региональные инновационные системы: структура и содержание// Теория и практика общественного развития, 2013, N 5, стр. 292.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն գտնվում է բարդ տնտեսաքաղաքական իրավիճակում, ինչպես նաև առկա են առանձին տարածքների միջև մեծ տարբերություն, մշակվել է ՀՀ բնորոշ ՏԻՀ մոդելը (տե՛ս գծապատկեր 2):

Ձևավորված ՏԻՀ-ը ազդեցություն է թողնում ինչպես միկրո, այնպես էլ մակրոմիջավայրի վրա: Մակրոմիջավայրն իր հերթին փոխազդեցության մեջ է գտնվում արտաքին գործոնների հետ, ինչպիսիք են՝ միջազգային շուկա, ԵՄ, ԵԱՏՄ քաղաքականություն, ինչպես նաև համագործակցություն այլ ՏԻՀ-երի հետ:



Գծապատկեր 2. ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի կառուցվածքային մոդել¹

ՏԻՀ-ի ձևավորման և զարգացման վրա էական ազդեցություն են թողնում տվյալ երկրի և տարածքի քաղաքական և տնտեսական գործունեությունը, ինչպես նաև պատմամշակութային առանձնահատկությունները, իսկ զուտ տարածքային տնտեսության առումով՝ ՏԻՄ-երը, մասնավոր հատվածը և գիտակրթական ոլորտը: Այս բոլոր գործոններից բացի հարկ է նշել, որ ՏԻՀ-ն իրենից ներկայացնում է նաև սոցիալական համերաշխության գրավական և նպատակ ունի նպաստելու սոցիալական համերաշխության ձևավորմանը և զարգացմանը: Այս գործոնների անմիջական մասնակցությամբ հնարավոր է ձևավորել և զարգացնել ՏԻՀ-ը ՀՀ-ում: Հեղինակների կողմից մշակված մոդելը տալիս է այն նախնական և հիմնական մոտեցումները, որոնց կիրառումը հնարավորություն կտա ձևավորել և զարգացնել ՏԻՀ-ը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ՀՀ-ում առկա է բարենպաստ իրավաօրենսդրական դաշտ ինովացիոն տնտեսության զարգացման համար: Առկա է

¹ Մշակվել և ներկայացվել է հեղինակների կողմից:

պետության անմիջական ազդեցությունը ոլորտի կարգավորման գործում: Սակայն մինևույն ժամանակ անհրաժեշտ է պարբերաբար լրամշակել ընդունված օրենքները և որոշումները՝ նոր հնարավորություններ ստեղծելով ոլորտի զարգացման համար: ՀՀ-ն, ունենալով բոլոր նախադրյալները ՏԻՀ նախնական ձևավորման և զարգացման համար, ամբողջությամբ չի օգտագործում ընձեռված հնարավորությունները, ինչի արդյունքում տարածքային տնտեսությունը զերծ է մնում ինովացիոն ռեսուրսների օգտագործումից և ինովացիոն ուղղվածությամբ զարգանալուց:

ԵՏՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ԵՎ ՀՆԱ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՇՈՒՐՋ (2019 թ.)

Եվգենյա Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունում միջպետական համագործակցության ձևերից մեկն էլ ինտեգրացիոն գործընթացներն են: Եվրասիական տնտեսական միությունը միջազգային ինտեգրացիոն տնտեսական միավորում է, որը հիմնադրվել է Եվրասիական տնտեսական ընկերակցության Մաքսային միության հիման վրա՝ 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի ստորագրմամբ: Միության ստեղծման նպատակն էր անդամ պետությունների տնտեսությունների ամրապնդումը, դրանց միջև կապերի սերտացումը, տնտեսության արդիականացումը, համաշխարհային շուկայում տվյալ պետությունների մրցունակության բարձրացումը:

Այդ նպատակները ձևավորում են հարկային բեռի նկատմամբ պահանջները, հարկման ծանրությունը և եկամուտների գանձման ձևերը:

Հարկման ոլորտում անդամ պետությունների համագործակցության սկզբունքներն ամրագրված են ԵՏՄ համաձայնագրի 71-րդ հոդվածում, որը նախատեսում է.

- մի անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքները հարկվում են անուղղակի հարկերով:
- Առևտրային հարաբերություններում չպետք է լինի ոչ մի խտրականություն: Հարկագանձման պայմանները անդամ երկրում, որի տարածքում վաճառվում են այլ անդամ երկրների ապրանքներ, պետք է ոչ պակաս բարենպաստ լինեն, քան վերջիններում են:
- Մրցակցության հավասար պայմանների ապահովման և ապրանքների ազատ տեղաշարժի խոչընդոտների բացառման նպատակով անդամ պետությունները որոշում են փոխադարձ առևտրի վրա ազդող հարկերի վերաբերյալ օրենսդրության մոտեցման ուղղությունները, ձևերը և կարգը, ներառյալ առավել զգայուն ապրանքների վրա ակցիզային դրույքաչափերի ներդաշնակեցումը և փոխադարձ առևտրում ԱԱՀ գանձման համակարգի հետագա կատարելագործումը, այդ թվում՝ նաև տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Հայաստանի, Բելառուսի և Ղազախստանի Հանրապետություններում գործում է հարկման երկաստիճան համակարգ (հանրապետական և տեղական մակարդակներ), իսկ Ռուսաստանի Դաշնությունում և Ղրղզստանի Հանրապետությունում՝ հարկման եռաստիճան մակարդակ (համապետական-դաշնային, տարածաշրջանային և տեղական մակարդակներ)¹:

Համաձայն հարկային օրենսդրության՝ անդամ երկրների՝ գյուղատնտեսական ապրանք արտադրողների հարկման սկզբունքներն ունեն ընդհանուր

¹ ԵՏՄ պաշտոնական կայք, <http://www.eaeunion.org/>

կողմեր. տնտեսության տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար հարկային բեռի մակարդակը զգալիորեն ավելի ցածր է, քան ընդհանուր սահմանված դրույքներով: Միաժամանակ անդամ երկրներում գործում են հիմնական հարկատեսակների տարբեր դրույքաչափեր: Այսպես, 2013 թվականի հունվարի 1-ից Բելառուսի Հանրապետությունում եկամտահարկի դրույքաչափը 24 տոկոսից իջեցվել էր մինչև 18 տոկոսի: Իսկ Ղրղզստանի Հանրապետությունում գործում է եկամտահարկի ամենացածր տոկոսադրույքը՝ 10 տոկոս: Մինչդեռ Ռուսաստանի Դաշնությունում և Ղազախստանում գանձվում է 20 տոկոս եկամտահարկ: Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց եկամտահարկին, ապա այն Ղազախստանի և Ղրղզստանի Հանրապետություններում կազմում է ընդամենը 10 տոկոս, Ռուսաստանի Դաշնությունում՝ 13 տոկոս: Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի հուլիսի 1-ից ՀՀ-ն անցում է կատարել եկամտային հարկի միասնական դրույքաչափի՝ 23 տոկոսի, որն ամենաբարձրն է անդամ երկրների մեջ:

ԵՏՄ երկրները պահպանում են ազգային հարկային օրենսդրության գերակայությունը, սակայն կատարում են համաձայնագրերով նախատեսված ներդաշնակեցման պահանջները: Ձևավորվում են հարկային համակարգերի փոխգործակցման ներդաշնակ կանոններ: Այդ գործընթացի շրջանակներում Ղրղզստանում մշակվում է Հարկային օրենսդրության նոր հրատարակությունը:

Հարկային դրույքաչափի փոփոխությունը և հարկային քաղաքականության բարեփոխումները խնդիր են համարվում ոչ միայն ԵՏՄ անդամ պետությունների համար: Ինչպես նշում են ԶԼՄ-ները, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը ևս մտադիր է հարկային օրենսդրության բարեփոխումներ կատարել: ԱՄՆ կառավարությունը մտադիր է մասսայական կերպով նվազեցնել ընկերությունների, եկամտահարկը և ֆիզիկական անձանց եկամուտներից հարկի դրույքաչափերը՝ հույս ունենալով, որ տնտեսության ակտիվացումը կհանգեցնի հարկման բազայի ավելացման և արդյունքում չի ազդի բյուջեի եկամուտների վրա: Ըստ այդ մտեցման՝ ընկերությունների եկամտահարկը կնվազեցվի 35 տոկոսից մինչև 15 տոկոս: Տվյալ հարկատեսակը կվերաբերի նաև փոքր ու միջին բիզնեսին: Ըստ ԱՄՆ ֆինանսների նախարարի՝ այժմ ԱՄՆ-ում գործում է անմրցունակ և ամենաբարդ հաշվարկվող դրույքաչափը: Նախընտրական ելույթներում նա մեկ անգամ չէ, որ հայտարարել էր, որ առաջնահերթությունների մեջ տեսնում է հարկային բարեփոխումների իրականացումը: Բարեփոխման էությունը բիզնեսի և կապիտալի վրա հարկային բեռի նվազեցումն է: Նման մոտեցումը բավականին տրամաբանական է, քանի որ ԱՄՆ ներկայիս նախագահը հանդիսանում է բիզնես միջավայրի ներկայացուցիչ: Տեսության էությունն այն է, որ շուկայում ապրանքների և ծառայությունների մատակարարումն ապահովող արտադրողների համար հարկերը, ինչպես նաև պետության կողմից կարգավորիչ բեռը նվազեցվի, և դրանով իսկ խթանվեն տնտեսական աճը և զարգացումը: Ցածր հարկերը արտադրողների մոտ ապահովում են ավելի շատ ազատ դրամական միջոցներ, ինչն էլ ենթադրում է, որ դրանք կներդրվեն բիզնեսում և դրա ընդլայնման մեջ: Արդյունքում շահում են շուկայի բոլոր մասնակիցները. ձեռնարկատերը ստանում է ավելի շատ եկամուտ, ընդլայնում է իր բիզնեսը, ստեղծվում են նոր աշխատա-

տեղեր, գործազրկության մակարդակը նվազում է: Ստացվում է, որ հարկային բեռի նվազեցմամբ պետությունը բարձրացնում է ամբողջ հասարակության բարեկեցության մակարդակը: Այսինքն՝ Դոնալդ Թրամփի հարկային քաղաքականության նպատակն է բիզնեսի խթանման միջոցով հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացումը:

Հարկային քաղաքականության ներդաշնակեցման շրջանակներում հարկային բարեփոխումների կենթարկվեն ԵՏՄ անդամ պետությունների ազգային հարկային համակարգերը: Ակցիզային հարկերի գծով տարբերությունները այնքան էլ մեծ չեն՝ բացառությամբ ավտոմոբիլային բենզինի, դիզելային վառելիքի, ակոնոլային խմիչքների:

Ակցիզային հարկի առավել բարձր դրույքաչափեր են գործում Բելառուսում (էթիլային ալկոհոլ, բնական գինի, ավտոմոբիլային բենզին, դիզելային վառելիք), Ռուսաստանում (գարեջուր և ծխախոտ), Հայաստանում (գարեջուր, խաղողի և այլ գինիներ, ալկոհոլ և ալկոհոլային խմիչքներ), Ղրղզստանում (էթիլային ալկոհոլ, ալկոհոլ պարունակող արտադրանք, ծխախոտ), ամենացածր դրույքաչափերը գործում են Ղազախստանում (էթիլային ալկոհոլ, ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք):

ԵՏՄ-ում ակցիզային հարկի դրույքաչափերի ներդաշնակեցման գործընթացի սկսվելով հանրապետություններում ակցիզային հարկի դրույքաչափերը փոխվում են:

Համաձայն Բելառուսի Հանրապետության 2016-2020 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի՝ երկրի հարկաբյուջետային քաղաքականության շրջանակներում կանխատեսվում է կենտրոնացնել բյուջետային միջոցները սոցիալ-տնտեսական գերակա ուղղությունների վրա, պահպանել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածությունը, ավելացնել բյուջետային ծախսերը ինովացիոն զարգացման մեջ, ապահովել անդեֆիցիտ բյուջե, կրճատել պետական պարտքը: Ինչպես նշվում է Բելառուսի կառավարության կայքում, այդ հինգ տարիների ընթացքում երկրի հարկային քաղաքականությունն ուղղված է լինելու հարկային բեռի այնպիսի մակարդակի ապահովմանը, որի դեպքում հնարավոր կլինի խթանել տնտեսական աճը: Ներդրումային և նորարարական գործունեության խթանման նպատակով կանխատեսվում է պահպանել արտոնյալ ռեժիմները և երկարացնել դրանց գործողությունների ժամկետները:

Համաձայն Ղազախստանի Հանրապետության 2016-2020 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կանխատեսումների՝ երկրի հարկային քաղաքականությունը միջնաժամկետ ժամանակահատվածում պետք է ուղղված լինի հարկային համակարգի արդյունավետության, ինչպես նաև ԵՏՄ շրջանակներում հարկային օրենսդրության մրցունակության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է բիզնեսի, հատկապես փոքր և միջին, խթանմանն ու զարգացմանը: ԵՏՄ անդամ պետությունների հարկաբյուջետային քաղաքականությունների հիմնական նպատակները համընկնում են, այն է՝ հարկային համակարգի պարզեցումը, բյուջեի կայուն եկամուտների ապահովումը, հարկման բազայի ավելա-

ցումը (սովորից տնտեսությունների դուրս բերելու միջոցով), բիզնես միջավայրի, ներդրումային և նորարարական գործունեությունների հարկային խթանումը, ինչպես նաև հարկային օրենսդրության մրցունակության բարձրացումը:

ԵՏՄ երկրների ՀՆԱ-ի աճը 2019 թվականի I կիսամյակում անցած տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատած կազմել է 0.9 տոկոս: Հունվար-մարտ ամիսներին ՀՆԱ-ի աճ է գրանցվել միության բոլոր երկրներում: Այստեղ առաջատար դիրքում է Հայաստանի Հանրապետությունը, որն արձանագրել է ՀՆԱ-ի 7.1 տոկոս աճ: Նշենք, որ ՀՆԱ-ի աճի հիմնական շարժիչ ուժը մեր երկրում մնում են ծառայությունների ոլորտը, առևտուրը, զվարճանքի ոլորտները: Հայաստանում բավականին մեծ աճի տեմպ է ստացել նաև տեքստիլ արտադրությունը: 2018 թ. զգալի փոփոխություն տեղի ունեցավ Հայաստանից ապրանքների արտահանման կառուցվածքում: Հանքարդյունաբերության արտադրանքի կրճատմանը զուգահեռ՝ ավանդաբար արտահանվող ապրանքների (օգտակար հանածոների, հատկապես պղնձի) մասնաբաժինը կրճատվեց, մինչդեռ տեքստիլ արտադրանքի, գյուղատնտեսական ապրանքների և թանկարժեք մետաղների (ոսկի և զարդեղեն) մասնաբաժինը մեծացավ: Տեքստիլ արտադրանքի արտահանումը 2018 թ. վերջին, նախորդ տարվա համեմատ, աճեց 65 տոկոսով¹: Միևնույն ժամանակ կապիտալ ապրանքների (օրինակ՝ տրանսպորտային նյութերի և սարքերի) ներկրման ծավալներն աճեցին մոտ 50 տոկոսով՝ զուգակցված ներկրվող ապրանքների բոլոր այլ կատեգորիաներում գրանցված երկնիշ աճի տեմպերով, ինչը պայմանավորված էր ներքին պահանջարկի մեծ աճով: ԵՏՄ-ում (հիմնականում Ռուսաստանում) վաճառված հայկական ապրանքների մասնաբաժինն արտահանման ընդհանուր ծավալում, 2017 թ. 26 տոկոսի համեմատ, 2018 թ. աճեց՝ կազմելով 29 տոկոս: Աճեցին նաև Իրանի Իսլամական Հանրապետություն և Իրաք արտահանվող հայկական ապրանքների ծավալները (համապատասխանաբար՝ 12 և 28 տոկոսով): Միաժամանակ ԵՏՄ երկրներից ներկրվող ապրանքների մասնաբաժինը նվազեց 3 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված 2018 թ. գազի ներկրման ծավալի կրճատմամբ:

ԵՏՄ-ում արդյունաբերական արտադրության ծավալը ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 2.8 տոկոսով և կազմել է 384.9 մլրդ դոլար: Առաջին չորս ամիսներին արտադրությունն աճել է միության բոլոր երկրներում: Ի դեպ, Ռուսաստանի մասնաբաժինը ԵԱՏՄ արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալում կազմել է 88.5 տոկոս, Ղազախստանինը՝ 6.4, Բելառուսինը՝ 4.5 տոկոս, իսկ Հայաստանի և Ղրղզստանի մասնաբաժինները՝ 0.3 տոկոս: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում 2018 թ. առաջին ինը ամսում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, հանքարդյունաբերության արտադրանքը կրճատվեց 7 տոկոսով և այժմ էլ շարունակում է կրճատվել: Հիմնական պատճառը 2018 թ. փետրվարին աշխատանքների կասեցումն էր Թեղուտի պղնձի հանքում, որը գտնվում է Հայաստանի հյուսիսում, ինչպես նաև երկրի հարավ-արևելքում գտնվող Ամուլսարի ոսկու հանքի շինարարության դադարեցումը: Կարևոր է

¹ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, www.armstat.am

նշել, որ 2005 թ. հետո առաջին անգամ 2018 թ. տեղի ունեցավ հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալի կրճատում¹:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալը ԵՏՄ երկրներում 2019 թվականի հունվար–ապրիլ ամիսներին արձանագրել է 1.3 տոկոսի աճ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ: Մակայն Բելառուսում գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը նվազել է 0.6 տոկոսով, իսկ Ռուսաստանում, Ղրղզստանում, Ղազախստանում և Հայաստանում՝ համապատասխանաբար 1.2, 1.8, 3.6 և 0.8 տոկոսով: Իսկ ինչ վերաբերում է միության երկրների ապրանքների արտաքին առևտրի ծավալներին, ապա դրանք երրորդ երկրների հետ հունվար–մարտ ամիսներին կազմել են 172 մլրդ դոլար, արտահանումը՝ 113.7 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ 58.3 մլրդ դոլար: Միության երկրների ապրանքների փոխադարձ վաճառքի ծավալը 2019 թվականի I կիսամյակում կազմել է 13.2 մլրդ դոլար կամ 2018 թվականի նույն ժամանակահատվածի գրեթե 93 տոկոսը:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը ԵՏՄ անդամ երկրների մեջ 2019 թվականի առաջին կիսամյակում ունեցել է ՀՆԱ–ի ցուցանիշի կտրուկ աճ: Մեր Հանրապետությունում, համեմատած անդամ մյուս երկրների հետ, գործում է եկամտային հարկի ամենաբարձր դրույքաչափը, որը 2019 թվականից դարձել է միասնական և կազմում է 23 տոկոս, և որը ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված է աստիճանաբար նվազեցնել՝ 2023 թվականին հասցնելով մինչև 20 տոկոսի: Նշենք նաև, որ Հայաստանն ու Ղրղզստանը Միության մյուս անդամ երկրների համեմատ ունեն արդյունաբերական արտադրության բավականին ցածր մասնաբաժին:

¹ <http://documents.worldbank.org/curated/en/639221552645089932/pdf/135313-WP-ARMENIAN-PUBLIC-14-3-2019-19-24-35-CEUMARARMARMWebrev.pdf>

ՆԵՐԱՌԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԽԹԱՆԻՉ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)¹ (2019 թ.)

Գևորգ Հարությունյան

տնտեսագիտության թեկնածու

2018 թ. Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո նորաստեղծ իշխանությունը ներկայացրեց սոցիալ-տնտեսական զարգացման իր հայեցակարգը, որն ըստ էության հանրապետության զարգացման հնգամյա ծրագիրն է:

Կառավարության տնտեսական քաղաքականության անկյունաքարն է՝ ընդլայնել Հայաստանի տնտեսության մրցակցային առավելությունները և, ստեղծելով գիտելիքի և նորարարության վրա հիմնված ժամանակակից տնտեսական համակարգ, ապահովել Հայաստանի քաղաքացիների համար արժանապատիվ աշխատատեղեր և բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Կայուն ներառական տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է ոչ միայն պետության, այլև հասարակության ակտիվ մասնակցությունը:

ՏՀԶԿ-ի շրջանակներում ներառական տնտեսական զարգացմանը վերաբերյալ զեկույցում ներկայացված են կայուն ներառական տնտեսական զարգացման ծրագրի իրականացման երեք հիմնական բաղադրիչները.

- մարզերի համաչափ զարգացման և աղքատ ընտանիքների սոցիալական ապահովության միջոցով հավասար հնարավորությունների ապահովում,
- աշխատաշուկայի ընդգրկվածության և բիզնեսի դինամիկության ապահովում,
- կառավարության գործունեության թափանցիկության և արդյունավետության ապահովում²:

Նման զարգացման ծրագրերի իրականացման համար պետությունն ունի լայն գործիքակազմ, որտեղ կարևոր դեր է խաղում արդյունավետ հարկային համակարգը: Լինելով պետական կառավարման հիմնական ձևերից մեկը՝ այն նպաստում է երկրի բյուջեի ձևավորմանը և պետության տեխնիկական, սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացմանը³:

Հարկային համակարգի արդյունավետության և տնտեսական աճի միջև առկա կապը մեծացնում է հարկային կարգավորիչների կարևորությունը: Ընդ որում՝ այն կարևորում է հատկապես տնտեսական աճի վրա հարկերի ազդեցության բնույթի բացահայտման հարցը: Նման վերլուծության ելակետն այն է, որ հարկերի ազդեցությունը միջնորդավորված է տնտեսական աճի գործոններով:

Որպես տնտեսական աճի մոդել աշխատանքում օգտագործվում է Մոլտուի


¹ Աշխատանքը բխում է կառավարության ծրագրի հետևյալ դրույթներից. Հարկային համակարգը (էջ 67), ՓՄՁ զարգացումը՝ ներառական տնտեսական աճի նախադրյալ (էջ 48):

² OECD. The framework for policy action on inclusive growth. Paris, 2018, p. 15:

³ Яковлева А. А., Налоговая политика как фактор экономического роста // Журнал «Мир нефтепродуктов», № 10, 2012, մուտքի ռեժիմ. <http://www.epn-consulting.ru/nalogovaya-politika-kak-faktor-ekonomicheskogo-rosta/>

աճի մոդելը, որտեղ տնտեսական աճի գործոններն են կապիտալը, աշխատուժը և գիտատեխնիկական առաջընթացը¹:

Գծապատկեր 1-ում ներկայացված է Սոլոուի աճի մոդելի շրջանակներում տնտեսական աճին անուղղակիորեն ազդող հարկային մեխանիզմները:



Գծապատկեր 1. Հարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսական աճի գործոնների վրա²

Ինչպես երևում է ներկայացված գծապատկերում, հարկային քաղաքականությունն իր հարկային կարգավորիչների շնորհիվ (հարկային դրույքներ, ազատումներ, արտոնություններ, նվազեցումներ և այլն) կարող է ազդել տնտեսական աճի գործոնների բոլոր քաղաքականների վրա:

Բացի տնտեսության կարգավորումից, հարկերը, կատարելով ֆիսկալ գործառույթ, հանդիսանում են հարկաբյուջետային քաղաքականության իրականացման միջոց:

Հաշվի առնելով ՀՀ օրինակը՝ ներկայացնենք կայուն, հավասարակշռված, ներառական տնտեսական զարգացման առավել ընդունելի հարկային խթանիչ մեխանիզմները:

Արդյունավետ հարկային համակարգի կառուցումը ենթադրում է ուղղակի և անուղղակի հարկերի օպտիմալ համադրություն: Տնտեսության կարգավորման համար գերակշռող դեր ունեն ուղղակի հարկերը:

Անուղղակի հարկերը գերազանցապես օգտագործվում են որպես երկրի բյուջեի մշտական եկամտի աղբյուր³: Իսկ նրանց վրա հարկային դրույքների

¹ Solow Robert M., A Contribution to the Theory of Economic Growth // Quarterly Journal of Economics, 70 No. 1, February, 1956, pp. 66-67.

² Կազմված է հեղինակի կողմից՝ հիմնվելով Սոլոուի աճի մոդելի գործոնների վրա:

³ Ишина М. С., Косвенные налоги и их влияние на макроэкономические показатели // Всероссийская государственная налоговая академия Министерства финансов РФ, М., Журнал "Аудит и финансовый анализ", 4/2009, стр. 2, մուտքի ռեժիմ. <http://www.auditfin.com/fin/2009/4/Ishina/Ishina%20.pdf>

տարբերակման քաղաքականությունը հազվադեպ է կիրառվում տնտեսական աճի խթանման համար: Նման քաղաքականությունն ունի նաև իր թերությունը՝ հասցեագրման բացակայություն (շատ դժվար է որոշել անուղղակի հարկ վճարողներին)¹:


Ինչպես շատ երկրներում, Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կազմված է ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությամբ:

Անուղղակի հարկերը ներկայումս Հայաստանի համախմբված բյուջեի հարկային եկամուտների հիմնական աղբյուրներն են: Սույն ուսումնասիրության մեջ, որպես տնտեսության կարգավորման առավել արդյունավետ գործիքների, անդրադարձ է կատարվում ուղղակի հարկերին :

Եկամտային հարկը ՀՀ-ում


Եկամտային հարկի սոցիալական նշանակությունը բավականին մեծ է, և նրա ֆիսկալ գործառույթը համարվում է առավել արդյունավետներից մեկը: Բազմաթիվ զարգացած երկրներում այն առաջինն է բյուջեի հարկային եկամուտներում: ՀՀ-ում ընդհանուր եկամուտների կառուցվածքում ըստ նշանակության այն երկրորդ աղբյուրն է՝ զիջելով ԱԱՀ-ին: Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեում նրա մասնաբաժինը 2017 թվականի տվյալներով կազմում է 26,74 %, իսկ ըստ հարաբերակցության ՀՆԱ-ի նկատմամբ՝ 6,1 %²:

Համեմատության համար դիտարկենք նմանատիպ ցուցանիշների արժեքները անցումային և զարգացած տնտեսություն ունեցող երկրներում (տե ս գծապատկեր 2 և 3):



Գծապատկեր 2. *Եկամտային հարկի և սոցիալական վճարների հարաբերակցությունը ՀՆԱ-ին զարգացած (2016) և զարգացող անցումային տնտեսությամբ երկրներում (2017)³*

¹ Арутюнян Г. А., “Развитие системы прямого налогообложения как фактора экономического роста (по материалам РА)”. Диссертационная работа, Ереван, 2015, стр. 21-22.
² ՀՀ ԱՎԾ / Հայաստանի վիճակագրական տարեգիրք /, Երևան, 2018, 387-390 էջեր:
³ Կազմված է հեղինակի կողմից՝ օգտվելով ներկայացված երկրների ԱՎԾ, նախարարությունների, միջազգային կազմակերպությունների պաշտոնական տվյալներից:



Գծապատկեր 3. *Ջարգացած (2016) և անցումային տնտեսությամբ զարգացող (2017) երկրների եկամտային հարկի և սոցիալական վճարների տեսակարար կշիռները համախմբված բյուջեում¹*


Ներկայացված տվյալներից երևում է, որ զարգացած երկրներում եկամտային հարկի և սոցիալական վճարների դերը զգալիորեն բարձր է անցումային զարգացող երկրների, մասնավորապես Հայաստանի համեմատ: Նմանատիպ երկրների համեմատ ՀՀ ցուցանիշները զիջում են Վրաստանին, Բելառուսին, Ռուսաստանին:

Այս հարկի վերլուծության ժամանակ կարևոր է հաշվի առնել դրույքաչափը: Այսօր Հայաստանում գործում է հարկման պրոգրեսիվ սանդղակ: Մինչև 180,000 դրամ եկամտի դեպքում 23 %, ավել գումարի նկատմամբ կիրառվում է 28 %: Սկսած 2,000,000 դրամից ավել գումարի նկատմամբ սահմանային հարկային դրույքը կազմում է 36 %²: Գործում են նաև սոցիալական վճարներ: Դա շատ է, թե՛ քիչ: Համեմատության համար դիտարկենք անցումային և զարգացած տնտեսություններ ունեցող երկրներում անձնական եկամտի զծով հարկային սահմանային դրույքաչափերը (տե՛ս գծապատկեր 4):

Ինչպես վկայում են տվյալները, Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց եկամուտների միասնական սոցիալական հարկի սահմանային չափը զգալիորեն բարձր է անցումային երկրների համեմատ և հասնում է զարգացած երկրների ցուցանիշներին: Եթե հաշվի առնենք գործատուի կողմից սոցիալական վճարների չափը, ընդհանուր պատկերը փոխվում է: Այնուամենայնիվ, գործատուի կողմից սոցիալական վճարումների հաշվառումը պատշաճ չէ, քանի որ այն չի հանդիսանում աշխատողի համար որպես բեռ: Բացառություն են կազմում անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղվածները: Սակայն նման դեպքերում հաճախ դրույքաչափերը փոխվում են դեպի նվազում:

¹ Կազմված է հեղինակի կողմից՝ օգտվելով ներկայացված երկրների ԱՎԾ, նախարարությունների, միջազգային կազմակերպությունների պաշտոնական տվյալներից:

² ՀՀ Հարկային օրենսգիրք, ընդունված է 04.10.2016 թ., հոդված 150:



Գծապատկեր 4. 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ զարգացած և անցումային տնտեսությամբ զարգացող երկրների եկամտային հարկի և աշխատակցի կողմից սոցիալական վճարների սահմանային դրույքաչափերը¹

Ինչ վերաբերում է տարեկան հարկվող եկամտի մակարդակին, որից հետո կիրառվում է սահմանային հարկային դրույքը, ապա այստեղ անցումային տնտեսությամբ երկրների շարքում առաջատարն է ՀՀ-ն՝ կազմելով 49,200 \$ և հասնելով զարգացած երկրների ցուցանիշներին²:

Զարգացած երկրներում, ի տարբերություն զարգացող տնտեսությունների, կիրառվում է եկամտուների նվազեցման լայն ցանկ, ինչը ի վերջո նվազեցնում է եկամտային հարկի համեմատաբար բարձր դրույքները:

Նոր հարկային օրենսդրական փոփոխություններին համաձայն՝ նախատեսվում է պրոգրեսիվ հարկային համակարգից անցում կատարել համամասնակա-նին, որտեղ ամեն տարի դրույքը կնվազի՝ հասնելով մինչև 20 %-ի³: Ադամ Սմիթի հայեցությամբ նման մոտեցումը համապատասխանում է հարկման սկզբունքնե-րին, մասնավորապես արդարությանը, որը ենթադրում է համընդհանուր և քա-ղաքացիների եկամուտների համամասնորեն հարկում⁴: Նման փոփոխությունը կարող է հանգեցնել հարկային բազայի ընդլայնմանը՝ նվազեցնելով ստվերային տնտեսությունը: Պատմության մեջ կան նման օրինակներ. Ռուսաստանի Դաշ-նությունում 2000-ականների հարկային բարեփոխումները հանգեցրել են ստվե-րից եկամուտների զանգվածային ելքի: Ֆիզիկական անձանց եկամտային հարկի սահմանային դրույքի մինչև 13 % նվազեցման հետևանքով հարկային եկամուտ-ները աճել են ՀՆԱ-ի նկատմամբ 0,7-0,8 %-ով⁵: Նման իրավիճակ նկատվել է նաև

¹ Կազմված է հեղինակի կողմից՝ օգտվելով ներկայացված երկրների հարկային օրենքներից, մի-ջազգային կազմակերպությունների պաշտոնական տվյալներից:

² Հաշվարկված է հեղինակի կողմից՝ օգտվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 150 հոդվածի տվյալներից:


³ Նախագիծ / ՀՀ Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք/ հոդված 27:

⁴ Ադամ Սմիթ, Исследование о природе и причинах богатства народов, 1776, книга 5, глава 2, отдел 2.

⁵ Анисимова Л., Реформа налогообложения доходов населения в России: результаты 2000-2007 гг., М.: ИЭПП, 2008, стр. 14-18.

Վրաստանում: Բարձր եկամտային հարկի դրույքաչափի պայմաններում հնարավոր է հակադարձ գործընթաց. հարուստները կսկսեն խուսափել հարկերից ավելի ինտենսիվ կերպով (նրանք գիտեն, թե ինչպես դա անել), եկամտի գումարը կկրճատվի, իսկ հիմնական հարկային բեռը կընկնի միջին խավի վրա¹: Ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների հարկային բարեփոխումների փորձը ցույց է տալիս աստիճանական անցում դեպի համահարթ հարկային սանդղակ. ժամանակի ընթացքում հարկային բազան ընդլայնվում է սահմանային հարկային դրույքի նվազման հետ համատեղ:

Ըստ «KPMG» կազմակերպության տվյալների՝ 2006-ից մինչև 2018 թվականները եվրոպական և ասիական տարածաշրջաններում եկամտային հարկի սահմանային դրույքները միջինում նվազել են համապատասխանաբար 4.16 և 1.37 %-ով և ըստ 2018 թվականի տվյալների՝ կազմում են համապատասխանաբար 32.18 % և 27.67 % (տե՛ս գծապատկեր 5):



Գծապատկեր 5. *Եկամտային հարկի միջին սահմանային դրույքաչափերը Եվրոպական և Ասիական տարածաշրջաններում, 2006-2018թթ.²*

Բազմաթիվ երկրներում համահարթեցման սանդղակին կտրուկ անցման անհնարինությունը պայմանավորված է երկու հիմնական պատճառներով.

1) Եկամտային հարկի գծով արմատական փոփոխությունների ֆիսկալային բարձր ռիսկերով: Այսօր, ինչպես արդեն նշվել է, զարգացած երկրներում բյուջետային միջոցների ձևավորման մեջ եկամտային հարկի դերը շատ բարձր է,

2) այս հարցում քաղաքական համաձայնության հասնելու անհնարինությամբ³:

¹ Назаров Владимир, “5 доводов против введения прогрессивного подоходного налога”, 03/2011. մուտքի ռեժիմ. <http://m.forbes.ru/article.php?id=64631>

² Կազմված է հեղինակի կողմից՝ ըստ «KPMG» միջազգային կազմակերպության տվյալների/ մուտքի ռեժիմ. <https://home.kpmg/it/it/home/services/tax/tax-tools-and-resources/tax-rates-online.html>

³ Назаров Владимир, “5 доводов против введения прогрессивного подоходного налога”, 03/2011. մուտքի ռեժիմ. <http://m.forbes.ru/article.php?id=64631>

Մակայն այս ամենով մենք ձգտում ենք լուծել միայն հարցի ֆիսկալ կողմը՝ հաճախ հաշվի չառնելով այն փաստը, որ այս հարկը կարող է նաև լինել ներդրումային խթանման գործիք հարկերի նվազեցման զարգացած համակարգի միջոցով:

Այսօր, ինչպես արդեն նշվել է, աշխարհի տարբեր երկրներում, հատկապես զարգացած երկրներում, կիրառվում են ընդհանուր եկամտի նվազեցումներ, որոնցից կարելի է տարբերակել բուժմանը, կրթությանը և ապահովագրությանը ուղղված ծախսերը: Սոցիալապես անապահով ընտանիքների համար գործում է նվազեցման ավելի լայն ցանկ: Այսինքն՝ նման նվազեցումները նպաստում են մարդկային կապիտալի, ապահովագրական ինստիտուտի զարգացմանը, բնակչության անապահով խավի սոցիալական աջակցությանը, ինչը հատկապես կարևորվում է Հայաստանի կառավարության հնգամյա տնտեսական զարգացման ծրագրում: Չնայած դրան, ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի, եկամտային հարկի մասով նվազեցման այս կատեգորիայի ցանկը սուղ է, և դրա մեջ ներառված են բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, ասպիրանտների, միջնակարգ-մասնագիտական և պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողների, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրների՝ պետությունից ստացվող կրթաթոշակները, ինչպես նաև մի շարք այլ տեսակների կրթաթոշակներ: Նվազեցվում են նաև բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսի՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ուսման վարձի փոխհատուցման գումարները¹:

Բնականաբար եկամտային հարկի մասին օրենքի մեջ անհրաժեշտ է ընդլայնել վերը նշված ուղղություններով նվազեցումների ցանկը:

Նվազեցումների ցանկի ընդլայնումը կարող է իր հերթին նվազեցնել հարկվող բազան և հարկային եկամուտները, սակայն հնարավոր է փոխհատուցել այդ նվազեցումները՝ բացահայտելով թաքնված եկամուտները և գույքը, քանի որ ընդհանուր առմամբ սովերային տնտեսության մասնաբաժինը մասնավորապես ֆիզիկական անձանց եկամտի գծով բավականին մեծ է:

ՀՀ ԱՎԾ վերլուծության համաձայն՝ պարզվել է, որ 2017 թվականին Հայաստանում զբաղվածների ընդհանուր թվաքանակում ոչ ֆորմալ զբաղվածների կշիռը կազմել է 44,5 %, ինչը համարժեք է 450207 աշխատատեղի²: Դա վկայում է մեծ քանակությամբ հարկային խուսափումների մասին:

Այսօր ՀՀ-ում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի պայմաններում կարևորվում է անձնական եկամտի և գույքի պարտադիր ընդհանուր հայտարարագրման մասին օրենքի ներդրումը: Այս պրակտիկական տարածված է զարգացած շատ երկրներում, և դրա ներդրման անհրաժեշտությունը դիտարկվում է անցումային տնտեսությամբ բազմաթիվ երկրների կողմից:

Ընդհանուր առմամբ ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի հայտարարա-

¹ ՀՀ Հարկային օրենսգրքը, ընդունված է 04.10.2016 թ., հոդված 147:

² ՀՀ ԱՎԾ / Հայաստանի վիճակագրական տարեգիրք /, Երևան, 2018, էջ 30:

րագրումը իրենից ներկայացնում է հայտարարություն՝ պետական մարմիններին անհրաժեշտ անհատների եկամուտների և գույքի մասին տեղեկատվություն:

Ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի պարտադիր հայտարարագրման մասին օրենքի ներդրումը նպատակ ունի լուծել հետևյալ խնդիրները.

- հակակոռուպցիոն մեխանիզմի բարելավում,
- ստվերային տնտեսության մակարդակի նվազեցում,
- քաղաքացիների կենսամակարդակի մասին տեղեկատվության տիրապետում,
- եկամտային հարկի գծով եկամուտների ավելացում:

ՀՀ-ում եկամուտների և գույքի հայտարարագրումը կիրառվում է 2001 թվականից ի վեր, որը, սակայն, հաճախ դուրս չի եկել պետական մարմինների ղեկավարների գույքի և եկամուտների շրջանակներից:

Անշարժ գույքի և եկամուտների հայտարարագրման ինստիտուտը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ բոլոր անհատները ներգրավված են այս համակարգում:

Շահութահարկը ՀՀ-ում


Շահութահարկի դերը կարևոր է գուտ եկամտի և նրա մի մասի՝ շահույթի բաշխման մեջ, քանի որ սահմանում է տարբեր մակարդակներում դրամական միջոցների ձևավորման համամասնությունները և ընդհանուր սոցիալական կարիքներին հատկացված և կազմակերպությունների ներքին տնտեսական կարիքները բավարարելու համար մասերի ողջամիտ հարաբերակցությունը:

Կազմակերպության շահույթի հարկման կազմակերպչական և գործառնական ներուժի լիարժեք օգտագործման պայմաններում լիովին հնարավոր է օգտագործել այդ ներուժը տնտեսության բարելավման, կազմակերպությունների տնտեսական գործունեության ակտիվացման և վերարտադրության ընդլայնման շնորհիվ գոյության մարտավարությունից անցնել տնտեսական աճի ռազմավարությանը:

Ինչպես ցանկացած այլ հարկ, շահութահարկը կատարում է նաև ֆիսկալ գործառույթ: Շահութահարկի տեսակարար կշիռը համախմբված բյուջեում և հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2017 թվականին կազմել են համապատասխանաբար 8.6 % և 1.9 %¹:

Տվյալ ցուցանիշների արժեքները որոշ զարգացած և անցումային տնտեսությամբ երկրներում ներկայացված են գծապատկեր 6-ում:

¹ ՀՀ ԱՎԾ / Հայաստանի վիճակագրական տարեգիրք /, Երևան, 2018, 387-390 էջեր:




Գծապատկեր 6. Հարկային եկամուտների կառուցվածքը շահութահարկի գծով զարգացած (2016 թ.) և անցումային տնտեսությամբ զարգացող (2017 թ.) երկրներում¹

Ինչպես երևում է գծապատկերից, շահութահարկի դերը հարկային եկամուտների ձևավորման մեջ մեծ չէ ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ անցումային զարգացող տնտեսությամբ երկրներում:

Շահութահարկի համակարգը վերլուծելիս հարկ է հաշվի առնել շահույթի վրա կիրառելի հարկային դրույքը:

Ներկայումս Հայաստանում կիրառվում է 20 տոկոսանոց համահարթ դրույքաչափ: Համեմատության համար դիտարկենք օտարերկրյա պետություններում շահութահարկի սահմանային դրույքաչափերը (տե՛ս գծապատկեր 7):



Գծապատկեր 7. 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ զարգացած և անցումային տնտեսությամբ զարգացող երկրների շահութահարկի սահմանային դրույքաչափերը²

¹ Գազնված է հեղինակի կողմից՝ օգտվելով ներկայացված երկրների ԱՎԾ, նախարարությունների և միջազգային կազմակերպությունների պաշտոնական տվյալներից;


² Գազնված է հեղինակի կողմից՝ օգտվելով ներկայացված երկրների հարկային օրենքներից և միջազգային կազմակերպությունների պաշտոնական տվյալներից;

Ինչպես երևում է, առավելագույն ցուցանիշը ամրագրված է Ֆրանսիայում՝ 33 %, իսկ ամենացածրը՝ Իռլանդիայում՝ 12.5 %: Անցումային երկրների շարքում առավելագույն արժեքը կազմում է 20 %, այդ թվում՝ ՀՀ-ում, իսկ ամենացածրը՝ 10 %՝ Ղրղզստանում:

Նկատենք նաև, որ տվյալ դրույքները միայն արտացոլում են շահութահարկի սահմանային դրույքաչափերը: Չարգացած երկրներում և նույնիսկ անցումային տնտեսությամբ որոշ երկրներում կիրառվում են ՓՄՁ-ների հարկման ցածր դրույքներ:

Հարկ է նաև նշել, որ շահութահարկը շատ երկրներում եկամտի նվազեցվող կետ է: Շատ երկրների տվյալներ ցույց են տալիս, որ իրավաբանական անձանց հարկային բեռը դինամիկորեն անընդհատ նվազում է: Ընդհանուր առմամբ դա բազմաթիվ երկրների կողմից ներդրումային գործունեության խթանման ակտիվ քաղաքականության արդյունք է՝ հիմնականում ձեռնարկությունների վրա հարկային բեռի նվազեցման միջոցով¹:

Ըստ «KPMG» կազմակերպության տվյալների՝ 2006-2018 թթ. եվրոպական և ասիական տարածաշրջաններում շահութահարկի սահմանային դրույքաչափերը նվազել են համապատասխանաբար 4.22 և 7.78 %-ով (տե՛ս գծապատկեր 8):



Գծապատկեր 8. Շահութահարկի միջին սահմանային դրույքաչափերը Եվրոպական և Ասիական տարածաշրջաններում 2006-2018թթ.²

Ինչպես երևում է նույն գծապատկերից՝ եվրոպական տարածաշրջանում 2018 թվականի միջին սահմանային շահութահարկի դրույքը, որը կազմում է 19.48 %, ավելի ցածր է ասիականի դրույքաչափից 1.73 %-ով: 2006-ի տվյալներով

¹ Жигульский Г.В., Изменение налоговой нагрузки на промышленное предприятие при реализации инноваций // Вестник НГУ, серия: Социально-экономические науки, том 11, выпуск 4, 2011, стр. 48.


² Կազմված է հեղինակի կողմից՝ ըստ «KPMG» միջազգային կազմակերպության տվյալների/մուտքի ռեժիմի <https://home.kpmg/it/it/home/services/tax/tax-tools-and-resources/tax-rates-online.html>.

այդ տարբերությունը կազմել է 5.29 %: Այն նաև խոսում է հարկերի դրույքաչափերի միավորման միտման մասին:

Ներկայումս աշխարհի բազմաթիվ երկրներում շահութահարկի դերի նվազման հետ համատեղ շեշտը դրվում է եկամտային հարկի վրա:

Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ այն երկրներում, որտեղ ցածր շահութահարկի դրույքաչափ է կիրառվում՝ միաժամանակ կենտրոնանալով եկամտային հարկի վրա, ստվերային տնտեսության բաժինը զգալիորեն ցածր է:

Նայելով անցումային և զարգացած տնտեսություններով երկրների եկամտային հարկի և շահութահարկի դրույքների կորերին՝ կարելի է տեսնել, որ զարգացած երկրներում ստվերային տնտեսությունը շատ ավելի ցածր է, քան անցումային տնտեսությամբ երկրներում (տե՛ս գծապատկեր 9):



Գծապատկեր 9. *Ձարգացած և անցումային տնտեսությամբ զարգացող երկրների եկամտային հարկի և շահութահարկի դրույքների կորերի հաստատմը*¹

Նկատենք, որ աշխարհում նկատվող շահութահարկի դրույքի նվազեցման միտումները հիմնականում պայմանավորված են բարձր դրույքաչափի բացասական ազդեցությունների բացահայտմամբ: Շահութահարկի բարձր դրույքի բացասական ազդեցությունը ներդրումների, ձեռնարկատիրության, աշխատավարձի, մրցունակության և ընդհանրապես բարձր տնտեսական աճ ապահովելու վրա, մասնավորապես անցումային տնտեսությամբ երկրներում, դիտարկվում է աշխարհի հեղինակավոր տնտեսագետների գիտական աշխատանքներում²: Հարցը դիտարկելիս հարկ է հաշվի առնել լայն տարածում գտած շահութահարկի ամբողջական վերացման և միայն շահաբաժինների տեսքով բաշխված

¹ Գրաֆիկների այսպիսի մեկնաբանության հեղինակն է՝ Բագրատյան Գ. Ա., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր;

² Alex Brill, New tax plan for economic growth // American Enterprise Institute, 01.2012; Andrei Shleifer, Effects of corporate taxes on investment and entrepreneurship, Harvard University, 03.2008; Fritz Foley, Corporate taxes and wages, Harvard Business School, 12.2007; Dhammika Dharmapala, Corporate taxes and international portfolio investment, University of Connecticut, 03,2008.

շահույթի հարկման մոտեցման տեսակետը: Այս մոտեցումն ուղղված է ներդրումային քաղաքականության լիարժեք ազատականացմանը և սպառման սահմանափակմանը:

Այդ գաղափարն առաջարկվել է ՌԴ-ում 1992 թ. խորհրդարանական փորձագետների կողմից, և այն արտացոլված էր «Ձեռնարկությունների եկամտահարկի մասին» ՌԴ օրենքում, որը, սակայն, գործնականում չի գտել իր ուրույն տեղը: Իսկ, օրինակ, Էստոնիայում գործում է բաշխվող շահույթի հարկ՝ միաժամանակ վերաբաշխվող շահույթի հարկման բացակայությամբ:

Այնուամենայնիվ, այս մոտեցման բացասական հետևանքների վերաբերյալ փաստարկներն ավելի համոզիչ են:

Սույն հարցի շուրջ հեղինակը կիսում է Մարտիրոս Պետրոսյանի տեսակետները: Նրա կարծիքով՝ ներդրումային քաղաքականության լիարժեք ազատականացումը, որը հանգեցնում է արտադրական ներուժի արագացված կուտակմանը, չի դրդում ձեռնարկությանը դրա ռացիոնալ օգտագործմանը, ինչի մասին վկայում են փաստացի վիճակագրական տվյալները: Արտադրական ներուժի ռացիոնալ օգտագործումը կախված է տնտեսվարման ողջ մեխանիզմից և, առաջին հերթին, շահույթի հարկումից¹:

Չնայած որոշ երկրներում հաջողված եզակի փորձին՝ ձեռնարկատիրական ոլորտում նման հարկման արմատական փոփոխությունները կարող են և չարդարացնել ակնկալվող տնտեսական արդյունքը: Այնուամենայնիվ, շահութահարկի դրույքաչափի մանիպուլյացիան պետք է լինի տնտեսական զարգացման կարևոր խթանիչ գործիքների զինանոցում:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ՓՄՁ-ների աջակցման միջոցառումների համակարգի մշակումն ու ընդունումը ընկած են երկրի տնտեսության հավասարակշռված ներառական կայուն զարգացման հիմքում: Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ-ները կարևոր դեր են խաղում ՀՆԱ-ի ստեղծման մեջ աշխատունակ բնակչության զբաղվածության ապահովման գործում²: Միևնույն ժամանակ Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման մակարդակը զիջում է թե՛ զարգացած, թե՛ զարգացող մի շարք երկրների: 2017 թ. տվյալների համաձայն՝ ՀՆԱ-ում ՓՄՁ-ների տեսակարար կշիռը կազմում է ընդամենը 28 %, իսկ այս ոլորտում զբաղվածների բաժինը՝ 26 %, ինչը զգալիորեն ցածր է զարգացած երկրների համեմատ³: Հայաստանում ՓՄՁ-ի ոլորտը լուրջ տնտեսական և ֆինանսական աջակցման կարիք ունի, այդ թվում՝ հարկային ոլորտում:

ՀՀ-ում ՓՄՁ-ների համար գործում են հատուկ հարկային ռեժիմներ: Ըստ նոր հարկային օրենսգրքում փոփոխությունների՝ միկրո բիզնեսի համար կիրառվելու է հատուկ հարկային ռեժիմ, որը ենթադրում է յուրաքանչյուր աշխատակցի համար հաստատագրված վճար: Նման հարկային ռեժիմները ուղղված

¹ Петросян М. Е., Налогообложение и формирование рыночного механизма в промышленности, Ереван, «Айастан», 1992, стр. 18-20.

² Пансков В. Г., Налоговое стимулирование инвестиционной активности, Финансы, М., 2007, 11, стр. 31. Режим доступа: <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/SSPE/UNPAN028598.pdf>

³ Հայկական բիզնես կոալիցիա, ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, Երևան, 2018, էջ 4;

են հարկերի հաշվարկի, հաշվապահական հաշվառման պարզեցմանը և ընդհանուր հարկային բեռի նվազեցմանը: Այնուամենայնիվ, դրանք բարդացնում են հարկային համակարգը և լի են բազմաթիվ խնդիրներով, մասնավորապես՝ ստեղծում են տարբեր մակարդակներում և արտադրանքի տարբեր ծավալների պայմաններում տնտեսական գործակալների միջև կապի ձևավորման խոչընդոտ: Ավելին, դրանք սողանք են ստեղծում սովետային տնտեսության ձևավորման համար: Հետևաբար ուսումնասիրելով ՀՀ-ում հարկային համակարգի բարեփոխման խնդիրը՝ նպատակահարմար է ստեղծել միասնական հարկային համակարգ: Այս նպատակով նախընտրելի է կիրառել արևմտավերոպական հարկային օրենսդրության փորձը, որտեղ ՓՄՁ-ներին հարկային արտոնությունները տրվում են ոչ թե առանձին հարկային ռեժիմների շրջանակներում, այլ որպես հարկային քաղաքականության առանձին ընդգծված տարր: Այսինքն՝ առաջարկվում է հարկային արտոնությունները տրամադրել առանձին հարկատեսակների մասով, մասնավորապես՝ ընդհանուր հարկային արձակուրդ:

Շահութահարկի դրույքաչափերի շահարկման մեխանիզմը ձեռնարկությունների նկատմամբ հարկային բեռի նվազեցման կարևոր գործիք է: Արագացված ամորտիզացիայի մեթոդի կիրառումը զգալի ազդեցություն ունի նորարարության և ներդրումների վրա¹: Այն նվազեցնում է ձեռնարկության շահույթը և, հետևաբար, շահութահարկի չափը, սակայն ավելացնում է ներդրումային ռեսուրսները: Մեկ այլ հավասարապես կարևոր փաստարկ արագացված ամորտիզացիայի օգտին այն է, որ նոր հիմնական միջոցների վերադարձը ավելի շատ է և նվազում է ֆիզիկական մաշվածության հետ համատեղ:

Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ արագացված ամորտիզացիայի քաղաքականությունը նպատակաուղղված է տնտեսության մեջ ներդրումային միջավայրի բարելավմանը և ներդրումների խրախուսմանը անմիջապես հիմնական միջոցներում: Հետևաբար կարելի է խոսել ներդրումների և ամորտիզացիոն ֆոնդի չափի միջև ուղղակի կապի մասին, երբ վերջինի միջոցները ուղղակիորեն ծախսվում են սարքավորումների նորացման վրա²:

Առաջին հայացքից թվում է, որ արագացված ամորտիզացիայի քաղաքականությունը բացասաբար կանդրադառնա բյուջեի վրա՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ձեռնարկությունների ծախսերը կաճեն, իսկ հարկվող եկամուտը կնվազի: Այնուամենայնիվ, ամորտիզացիոն ներդրումները փոխհատուցում են կապիտալի ներդրումները կապիտալի մեջ շահույթի հաշվին, և, միևնույն ժամանակ, հետագայում, արտադրողականության աճի շնորհիվ, կստեղծվեն հարկվող բազայի ընդլայնման պայմաններ, ինչը կհանգեցնի բյուջեի համալրմանը: Բացի այդ, ամորտիզացիոն մասհանումների պատճառով ծախսերի ավելացումն աննշան է և հազվադեպ է գերազանցում ձեռնարկությունների ընդհանուր արտադրական ծախսերի 15 %-ը: Միևնույն ժամանակ նման աճ նկատվում է միայն դրա կիրառման առաջին տարվա ընթացքում: Մի քանի տարի անց

¹ Արագացված ամորտիզացիան փաստացի ֆիզիկական արժեզրկումից առաջ ակտիվների արժեքի դուրս գրման արագացված մեթոդն է:

² Тюрина А. Д., Теория организации. Конспект лекций, М., ЭКСМО, 2008, стр. 36.

հաշվարկված արագացված ամորտիզացիան կբաշխվի ավելի մեծ քանակությամբ սարքավորումների վրա (ներառյալ նոր ձեռք բերվածը կուտակված ամորտիզացիոն գումարի միջոցով և այն, ինչ իրականում գործում է, բայց որի համար մասհանումները դադարել են): Դա հանգեցնում է ընդհանուր արտադրական ծախսերի կարգավորմանը¹: Հարկ է նաև նշել, որ հնացած սարքավորումներն են, որ առաջացնում են ծախսերի մեծ աճ, քանի որ զգալիորեն կրճատվում է կապիտալ ռեսուրսների օգտագործման վերադարձը²:

Արագացված ամորտիզացիայի քաղաքականությունը լայնորեն կիրառվում է աշխարհի շատ երկրներում, հատկապես՝ զարգացած երկրներում: Այսօր հավասարաչափ ամորտիզացիոն մասհանումների փոխարեն շատ օտարերկրյա պետություններ նախընտրում են դեգրեսիվ ամորտիզացիոն մեթոդը:

Այս մեթոդի էությունն է՝ որոշակի սկզբունքի միջոցով սահմանել սկզբնական արժեքից մասհանումների կարգը (օրինակ՝ առաջին տարում՝ 40 %, երկրորդում՝ 25 %, երրորդում՝ 15 % և հետագայում՝ 5 %): Վերջին տարիներին արտասահմանում դեգրեսիվ ամորտիզացիոն մասհանումների քաղաքականությունը նպատակաուղղված էր առաջին տարվա համար նախատեսված մասհանումների ավելացմանը (Մեծ Բրիտանիայում այն կազմում է սկզբնական արժեքի մինչև 90 %-ը)³:

Անկախ արդյունավետությունից՝ արագացված ամորտիզացիայի քաղաքականությունը ՀՀ-ում ճանաչում և կիրառություն չի գտել:

ՀՀ-ում կիրառվում է հիմնական միջոցների ամորտիզացիայի գծային մեթոդը:

Ընդհանրապես ՀՀ-ում գործող ձեռնարկությունների ամորտիզացիայի դերը գործնականում, որպես հիմնական միջոցների բնական վերարտադրության աղբյուր, կորցրել է իր արդիականությունը:

Վերջին տասնամյակում նման ամորտիզացիոն քաղաքականությունը հանգեցրել է փոխառու միջոցների մասնաբաժնի ավելացմանը հիմնական կապիտալի իրական վերարտադրության ֆինանսավորման մեջ, ինչը խոչընդոտում է զարգացմանը:

Տնտեսական գրականության մեջ լայնորեն հայտնի են դարձել ամորտիզացիոն մասհանումների գծային, մնացորդի նվազեցման, օգտակար ծառայության տարիների թվերի գումարի միջոցով արժեքի մասհանումների մեթոդները⁴:

Ամորտիզացիոն մասհանումները, ըստ մնացորդի նվազեցման մեթոդի, երբ արագացման գործակիցը հավասար է առնվազն 2-ի, և օգտակար ծառայության տարիների թվերի գումարի միջոցով արժեքի մասհանումների մեթոդի, կարող են զգալիորեն արագացնել ամորտիզացիոն մասհանումները հիմնական միջոցների շահագործման սկզբնական փուլում: Այսինքն՝ այն թույլ է տալիս ընկերու-

¹ Осипов В. А., Ускоренная амортизация как фактор инновационного развития предприятий, Владивостокский государственный университет экономики и сервиса, ЭКО, № 5, 2014, стр. 9.

² Тюрина А. Д., Теория организации. Конспект лекций, М., ЭКСМО, 2008, стр. 37.

³ Осипов В. А., Ускоренная амортизация как фактор инновационного развития предприятий, Владивостокский государственный университет экономики и сервиса, ЭКО, № 5, 2014, стр. 4.

⁴ Касьянова Г. Ю., Амортизация основных средств: бухгалтерская и налоговая, 4-е издание, М., АБАК, 2011, стр. 19-38.

թյուններին արագացնել հիմնական միջոցների վերարտադրման գործընթացը: Օրինակ՝ այն ստեղծում է հնարավորություն կրճատել կորուստները հիմնական միջոցների վաղաժամկետ դուրսգրման դեպքում՝ վերջիններս թարմացնելու նպատակով:

Ամորտիզացիոն մասհանումների տարբեր մեթոդների կիրառման նպատակահարմարությունը կախված է ինչպես տնտեսական գործունեության բնույթից, այնպես էլ օգտագործվող հիմնական միջոցների բնութագրերից: Օրինակ՝ գծային մեթոդը նպատակահարմար է կիրառել այն հիմնական միջոցների դեպքում, երբ ժամանակն է հանդիսանում ծառայողական կյանքը սահմանափակող հիմնական գործոն և ոչ թե հնացած լինելը: Մաշվածության նվազեցման այլ մեթոդների կիրառումը արդյունավետ է միայն այն դեպքում, եթե կան արտադրության ընդլայնման իրական անհրաժեշտություն և հիմնական միջոցների ձեռքբերման իրական հնարավորություն: Եթե արագացված ամորտիզացիայի միջոցով ստացված գումարը կրկին չներդրվի հիմնական միջոցների թարմացման մեջ, ապա ազդեցությունը կլինի միայն բացասական (արտադրության ծախսերը կավելանան, ձեռնարկության նորարարական զարգացման էֆեկտը տեղի չի ունենա)¹:

Այս առումով ամորտիզացիոն քաղաքականության ազատականացումը առավել ռացիոնալ մոտեցումն է, այսինքն՝ ձեռնարկության հնարավորությունը ինքնուրույն ընտրելու իր համար առավել ընդունելի ամորտիզացիոն մասհանումների մեթոդը:

Շահութահարկի մեխանիզմի բարելավմանն ուղղված նման միջոցառումները զգալիորեն կբարձրացնեն այդ մեխանիզմի արդյունավետությունը:

¹ Осипов В. А., Ускоренная амортизация как фактор инновационного развития предприятий, Владивостокский государственный университет экономики и сервиса, ЭКО, № 5, 2014, стр. 10.

ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՀՀ ՇՈՒԿԱՅԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (2019 թ.)

Սոնա Մարգարյան

1-ին կարգի տնտեսագետ

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընթացող ինտեգրացիոն գործընթացների նպատակներից մեկը անդամ երկրների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Հայաստան, Ղրղզստան) զարգացման ռեսուրսների համադրումն է և միասնացումը, որի նպատակը այն կազմող սուբյեկտների ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումն է ու միջազգային շուկաներում նրանց շահեկան դիրքավորումը: Այս տեսակետից նոր ձևավորվող և ամրապնդվող ինտեգրացիոն կազմավորման կարևորագույն նախաձեռնություններից մեկը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տնտեսավարող ազգային շուկայական սուբյեկտների ինտեգրումն է միասնական տեխնոլոգիական պլատֆորմների մեջ, որոնք թույլ կտան ձևավորել մրցունակության յուրահատուկ փնջակապեր (կլաստերներ)՝ միտված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում նոր, մրցունակ արտադրանքի և ծառայությունների մատուցմանը:

Վերը նշված նպատակների իրականացումը բխում է 2014 թ. ԵԱՏՄ հիմնադրման պայմանագրահենքից և դրանից բխող նորմատիվ մի շարք ակտերից¹: Ըստ այդմ՝ ԵԱՏՄ տեխնոլոգիական պլատֆորմները պետք է ապահովեն ազգային և համաշխարհային գիտատեխնիկական նվաճումների ներգրավման, անդամ երկրների գիտական ներուժի հավաքագրման համակարգված աշխատանքը՝ ուղղված մրցունակ նորարարական ապրանքների և տեխնոլոգիաների ստեղծմանը և արդյունաբերական արտադրության մեջ ներդրմանը²: Համաձայն ԵԱՏՄ շրջանակներում մշակված մոտեցումների՝ ինտեգրացիոն միավորման տեխնոլոգիական պլատֆորմների զարգացման նպատակը գիտատեխնիկական և նորարարական հենքի վրա բոլոր շահառու կողմերի (գործարար հանրություն, գիտություն, պետություն, հասարակական կազմակերպություններ) համագործակցության արդյունավետության մակարդակի բարձրացումն է՝ հիմնված անդամ երկրների ազգային արդյունաբերական համալիրների ներուժի փոխշահավետ համադրման և միասնացման վրա:

Հարկ է նկատել, որ միասնական տեխնոլոգիական պլատֆորմների գաղափարը բավականին մեծ հաջողությամբ կիրառվում է Եվրոպական միության երկրների արդյունաբերական և նորաստեղծական ներուժի արդյունավետ հա-

¹ Տե՛ս «Положение о функционировании евразийских технологических платформ».
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=113532>

² <http://www.eurasiancommission.org>

մադրման համատեքստում: Եվրոպական միության երկրների կողմից տեխնոլոգիական պլատֆորմի առաջին հաջողված փորձը վերաբերում է օդագնացության ոլորտին: Դա այսպես կոչված «ACARE» պլատֆորմն է, որի հիման վրա մշակվել է «Ուղեգիծ-2050» նախագիծը: Այն նպատակ ունի ռազմավարական հետազոտությունների և նորաստեղծությունների հիման վրա մշակել 40-ամյա ապագային միտված արդյունավետ, անվտանգ, հուսալի ու մատչելի օդային հաղորդակցության ապարատներ ու համակարգեր¹: Ակնհայտ է, որ այդպիսի համատեղ նախագծի մշակման ու զարգացման ծրագիրը պայմանավորված էր օդատիեզերական բնագավառի գիտատեխնոլոգիական, հետազոտական, ինժեներական, փորձարարական նմուշների առևտրայնացման և դրանց հիման վրա հաջող շուկայական ներածման մասշտաբային հիմնախնդիրների հետ կապված ռիսկերը նվազեցնելու, ծախսերը կիսելու և բոլոր շահագրգիռ կողմերի միջև դրանք շատ թե քիչ համաչափ բաշխելու անհրաժեշտությամբ²:

Ընդհանուր առմամբ թե՛ եվրոպական և թե՛ եվրասիական փորձագետների շրջանում տիրապետող է այն մտայնությունը, որ տեխնոլոգիական պլատֆորմները դեպի պահանջարկի բավարարմանը միտված նորամուծական քաղաքականության գործիքներ են: Այդ պատճառով տեխնոլոգիական պլատֆորմների ձևավորման նախաձեռնողները և շահագրգիռ կողմերը առաջին հերթին պետք է լինեն նորաստեղծական կարողություններ ունեցող և երկարաժամկետ ու հեռանկարային պահանջարկին միտված խոշոր ընկերություններն ու կորպորացիաները³: Մյուս կողմից՝ այդօրինակ նպատակներին կողմնորոշված մշակումները և տեխնոլոգիական հետազոտությունները կարող են հաջողություն ունենալ, եթե դրանցում ներգրավված լինեն նորամուծություններին առնչվող բազմաթիվ այլ կառույցներ (գիտական, հետազոտական, փորձարարական, մարքետինգային, լոգիստիկ, առևտրային ցանցեր, փորձագիտական և խորհրդատվական կառույցներ, ֆինանսական կազմակերպություններ և այլն), ու այս ամենը պետք է հզոր իրավօրենսդրական և ինստիտուցիոնալ աջակցություն ունենա:

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների գիտական, նորարարական, կրթական, ինժեներական և արտադրական ներուժն ու կարողությունները հաշվի առնելով՝ միասնական տեխնոլոգիական հարթակներ ձևավորելու նախաձեռնությունները վերաբերում են ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների զարգացման հիմնական միտումներին և մարտահրավերներին: Ըստ այդմ՝ ԵՄՄՍ անդամ երկրների մշակված համատեղ գործողության փաստաթղթերում որպես տեխնոլոգիական պլատֆորմների ձևավորման հիմք ընդունվել են տեխնոլոգիաների զարգացման հետևյալ ժամանակակից ուղղությունները.

- բժշկական, կենսաբժշկական, դեղագործական տեխնոլոգիաներ,
- տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաներ,
- ֆոտոնիկա,

¹ <https://www.acare4europe.org/>

² <https://www.acare4europe.org/documents/acare-success-stories-0>

³ Edler J., Georghiou L. (2007) Public Procurement and Innovation – Resurrecting the Demand Side // Research Policy, v. 36, p. 949–950.

- օդատիեզերական տեխնոլոգիաներ,
- միջուկային և ռադիացիոն տեխնոլոգիաներ,
- էներգետիկա,
- տրանսպորտի տեխնոլոգիաներ,
- մետալուրգիական տեխնոլոգիաներ և նոր նյութեր,
- բնական ռեսուրսների արդյունահանման և նավթագազային տեխնոլոգիաներ,
- քիմիա և նավթաքիմիա,
- էլեկտրոնիկա և մեքենաշինության տեխնոլոգիաներ,
- բնապահպանական զարգացման տեխնոլոգիաներ,
- արդյունաբերական տեխնոլոգիաներ,
- գյուղատնտեսական, սննդի արդյունաբերության կենսատեխնոլոգիաներ:

Տեխնոլոգիական պլատֆորմների կազմավորման և զարգացման միջազգային փորձը հուշում է, որ այդօրինակ հարթակները ձևավորվում են առաջին հերթին հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքները առևտրայնացնելու և տեխնոլոգիական փոխանցումների հոսքերի վերածելու համար: Այդ գործընթացները ավելի կամ պակաս չափով կարող են հաջողություն ունենալ, եթե ինստիտուցիոնալ առումով ուժեղ օժանդակություն ստանան: Մյուս կողմից՝ փորձը ցույց է տալիս, որ տեխնոլոգիական պլատֆորմները կարող են հաջողություն ունենալ, եթե դրանց առաջումը հարուցվի «ներքնից», այն է՝ շուկայի սուբյեկտների՝ ընկերությունների, գիտահետազոտական կառույցների, համալսարանների, ֆինանսական-միջնորդ հաստատությունների (ներդրումային, վենչուրային հիմնադրամներ, բանկեր և այլն) և այլ գործընկերների կողմից: Բացի այդ՝ պետական կամ մունիցիպալ կարգավորման մարմինները իրենց քաղաքականության ուղղակի և անուղղակի գործիքակազմերով պետք է օժանդակեն հորիզոնական (շուկայական) կապերի սիներգետիկ համալիրին՝ հանձինս տեխնոլոգիական պլատֆորմների: Վերջիններս, որպես այն կազմող բաղադրիչների սիներգետիկ ու կառուցվածքայնորեն փոխլրացնող, արդյունավետորեն փոխներգործող (համագործակցող) ամբողջություն, իրենց ռեսուրսները, կարողություններն ու ջանքերը պետք է մեկտեղեն ու համադրեն՝ սկզբունքորեն նոր արտադրանք կամ տեխնոլոգիաներ (ընդհանրապես՝ նոր համակցություններ) ստեղծելու և առևտրայնացնելու ուղղությամբ:

ԵՍՏՄ երկրների ինտեգրացման հենքի վրա մշակված գիտատեխնոլոգիական համագործակցության հիմնական ուղղությունների շրջանակներում անդամ երկրների ներգրավվածության տարբեր համակցություններով արդեն ձևավորել են 12 տեխնոլոգիական պլատֆորմներ, որոնք նպատակ ունեն մշակել ընտրված ուղղությանը (տեխնոլոգիային) համապատասխան հետազոտությունների, մշակումների և նորաստեղծության երկարաժամկետ ու հեռանկարային պլաններ: Հայաստանի մի շարք արտադրական, հետազոտական և փորձարարական կազմակերպություններ ներառված են նշված 12 տեխնոլոգիական պլատֆորմներից 3-ում: Այդ երեք պլատֆորմներն են՝

1. «Ֆոտոնիկա»,
2. «Եվրասիական գերհսկա համակարգիչ»,
3. «Մետալուրգիական տեխնոլոգիաներ և նոր նյութեր»:

«Ֆոտոնիկա» տեխնոլոգիական պլատֆորմը ներառում է Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Հայաստանի մի շարք կազմակերպություններ: Մասնավորապես՝ նրա կազմում ընդգրկված են Բելառուսի «Օպտիկա և լազերներ» գիտատեխնիկական ընկերակցությունը (Մինսկ), Ղազախստանի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը (Աստանա), ՌԴ լազերային ընկերակցությունը (Մոսկվա) և Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող «Բնսուլ» (Երևան) ընկերությունը: Նշված կազմակերպությունները իրենց կարողությունները մեկտեղել են՝ մեկ միասնական հարթակում ֆոտոնիկայի և լազերային տեխնոլոգիաների նոր նմուշների ստեղծման ու դրանց հիման վրա արտադրության արդիականացման նպատակով: Այդ տեխնոլոգիաները վերաբերում են արդյունաբերության նյութերի լազերային մշակմանը, լազերային-օպտիկական չափումներին և ախտորոշմանը, անվտանգության ֆոտոնային համակարգերի մշակմանը, ֆոտոնային գեոդեզիային և նավիգացիային, ֆոտոնային նանոտեխնոլոգիաներին:

Նկատենք, որ լազերային տեխնոլոգիաների զարգացումը Հայաստանում սկիզբ էր առել դեռևս խորհրդային տարիներին և հետանկախական ժամանակահատվածում բախվել շատ մեծ բարդությունների: Նրա թե՛ կրթական, թե՛ ինժեներական և արտադրական բազան զգալիորեն քայքայվել էր, իսկ պահպանվածն էլ («ԼՏ-Պիրկալ»)՝ մասամբ դարձել երկրի ռազմական կարիքներից ածանցյալ հարթակ: Նոր պայմաններում, փաստորեն, հնարավորություն է ստեղծվել վերականգնել տեխնոլոգիական մշակումների այդ բնագավառը և ինտեգրվել ավելացված արժեքի միջազգային շղթաներին:

Հայաստանյան ընկերությունների ներգրավվմամբ ԵՄՏՄ մյուս տեխնոլոգիական պլատֆորմը «Մետալուրգիայի տեխնոլոգիաներ և նոր նյութեր» նախագիծն է, որին որպես հիմնադիր անդամակցում է ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը: Այս ընկերությունից բացի, նշված պլատֆորմին հարում են ռուսական երկու, բելառուսական չորս և ղազախական երկու ընկերություն: Նշված հաստատությունների միջև գիտագործնական և արտադրական կապեր եղել են դեռևս խորհրդային ժամանակահատվածում, որոնք, սակայն, շուկայական-ազատական ռեֆորմների ժամանակահատվածում կորավել էին: Նոր պայմաններում հնարավորություն է ստեղծվել, համադրելով ռեսուրսներն ու կարողությունները, մետաղագործության և նոր նյութերի բնագավառում տեխնոլոգիական ճեղքումներ իրականացնելու և միջազգային շուկաներ նոր արտադրանքներով մուտք գործելու համար:

ԵՄՏՄ տեխնոլոգիական մշակումների և նորամուծությունների շուկայում հեռանկարային համարվող ինտեգրացիոն հարթակներից մեկն էլ գերհամակարգիչների ստեղծման նպատակին միտված տեխնոլոգիական պլատֆորմին հարելն է: Տեխնոլոգիական պլատֆորմում մեկական ռուսական, բելառուսական և ղազախական ընկերության կողքին տեղ է գտել նաև ՀՀ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի Հայ-հնդկական ինֆորմացիոն-տեխնոլոգիական

կենտրոնը: Տեխնոլոգիական այս պլատֆորմը նպատակ ունի, գործի դնելով նշված գործընկերների միջև գիտական, նորաստեղծական, կոմունիկացիոն և հետազոտական կապերը, ստեղծել գերժամանակակից համակարգիչ և նրանից ածանցված հեռահար մատչելիության կամ այսպես կոչված «գրիդ-ցանցեր», որոնք թույլ կտան մեծաքանակ տվյալների հիման վրա իրականացնել այսպես կոչված «ամպային հաշվարկներ»:

Հայաստանի Հանրապետության պարագայում ԵԱՏՄ երկրների տեխնոլոգիական պլատֆորմների մեջ ներգրավվածությունը շահեկան կարող է լինել բազմաթիվ տեսանկյուններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. նախ՝ այդպիսի հարթակների մեջ ներգրավվածությունը հնարավորություն կտա իրականացնել ավելի արդյունավետ արդյունաբերական քաղաքականության, դիվերսիֆիկացնել տնտեսությունը և զարգացնել այն ճյուղերն ու բնագավառները, որոնք ունեն նորամուծական և առևտրայնացման ներուժ և կարողություններ:
2. Չարգացնել ու առավել նպատակաուղղված դարձնել համալսարանական, ակադեմիական և կորպորատիվ սեզմենտի հետազոտական և գիտական այն ստորաբաժանումները, որոնք ի վիճակի են իրականացնել միջազգային մակարդակի հետազոտություններ և մշակումներ:
3. Տեխնոլոգիական պլատֆորմների շրջանակներում մշակված տեխնոլոգիաների և նոր կոմբինացիաների հիման վրա ստեղծել բարձրտեխնոլոգիական, մրցունակ և բարձր եկամտաբեր նոր աշխատատեղեր՝ այդպիսով զգալիորեն նպաստելով գործազրկության մակարդակի իջեցմանը:
4. ՀՀ ընկերություններին և հետազոտական կառույցներին դուրս գալ ԵԱՏՄ և երրորդ երկրների շուկաներ ու շահեկանորեն դիրքավորվել դրանցում, ընդ որում՝ ձեռք բերելով նոր գործընկերներ և զարգացման նոր հնարավորություններ:
5. ԵԱՏՄ երկրներում իրականացնել արդյունավետ տարածքային քաղաքականություն և տեխնոլոգիական պլատֆորմների զարգացման միջոցով նպաստել ոչ այնքան զարգացած տարածաշրջանների զարգացմանը:

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2019 թ.)

Լիլիթ Պետրոսյան

1-ին կարգի տնտեսագետ

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն ստվերային տնտեսության գնահատման տարբեր մեթոդներ, որոնցից առավել լայն կիրառություն է ստացել ստվերային տնտեսության գնահատման MIMIC մեթոդը, որը հնարավորություն է տալիս համակարգել ստվերային տնտեսության ազդեցությունը սոցիալ-տնտեսական զարգացման, բնակչության կենսամակարդակի բարելավման գործում: Հարկ է նշել, որ MIMIC մեթոդը (Multiple Indicators and Multiple Causes) թարգմանաբար նշանակում է բազմաթիվ ինդիկատորների և պատճառների մեթոդ: Վերջինս նկարագրում է դիտարկվող փոփոխականների միջև գոյություն ունեցող վիճակագրական նշանակալի կապեր¹: Տարբեր հեղինակների կողմից հաշվարկվել են ստվերային տնտեսության ծավալները՝ դրա հիմքում դնելով զուտ ստվերային տնտեսության մասշտաբների գնահատման գաղափարը: Սույն հոդվածում MIMIC մեթոդը դիտարկվել է որպես գործիք՝ գնահատելու ստվերային տնտեսության ազդեցությունը բնակչության կենսամակարդակի վրա:

Հոդվածում դիտարկվել է ՀՀ ստվերային տնտեսության մոդելը՝ ըստ յուրաքանչյուր գործընթացի ենթափուլերի: Գծապատկեր 1-ի համաձայն՝ ՀՀ-ում ստվերային տնտեսության մասշտաբները հաշվարկվել են MIMIC մեթոդի հիման վրա՝ ըստ հետևյալ ցուցանիշների, որտեղ՝

η_t -ն՝ ստվերային տնտեսության չափն է (մլն դրամ),

X_{1t} -ն՝ հարկային բեռն է (այն հաշվարկվել է հարկային եկամուտներ/ ՀՆԱ հարբերակցությամբ),

X_{2t} -ն՝ գործազրկության մակարդակն է (հազ. մարդ),


X_{3t} -ն՝ ինքնազբաղվածության մակարդակն է (հազ. մարդ),

X_{4t} -ն՝ աշխատուժի կառավարման մակարդակն է (այն հաշվարկվել է պետական աշխատողների թվի և տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցությամբ),

γ_{1t} -ն՝ անվանական ՀՆԱ-ն է՝ շուկայական գներով (մլն դրամ),

γ_{2t} -ն՝ կանխիկ փողի մասն է փողի զանգվածում (մլն դրամ):

¹ Dell'Anno R., Shneider F., “ Estimating the underground economy by using MIMIC models: A response to T. Breusch's critique”, Johannes Kepler University of Linz, 2006, pp. 4-5.



Գծապատկեր 1. ՀՀ ստվերային տնտեսության MIMIC մեթոդի բովանդակությունը¹

ՀՀ-ում ստվերային տնտեսության, հարկային բեռի, կանանց գործազրկության, տղամարդկանց գործազրկության, ինքնազբաղվածության, աշխատուժի կառավարման մակարդակների, կանխիկ փողի, անվանական ՀՆԱ-ի ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 1-ը) միջև կապը բացահայտելու համար առաջարկվել են հետևյալ վարկածները.

վարկած 1. ՀՀ-ում ստվերային տնտեսության, հարկային բեռի, գործազրկության, ինքնազբաղվածության և աշխատուժի կառավարման մակարդակների միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ՝ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$SH = y_0 + y_1TB + y_2 UNW + y_3 UNM + y_4SE + y_5ML + \xi_t \quad (1)$$

որտեղ՝

SH-ը՝ ստվերային տնտեսության չափն է (մլն դրամ),

TB-ն՝ հարկային բեռն է (այն հաշվարկվել է հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությամբ),

UNW-ն՝ կանանց գործազրկության մակարդակն է (հազ. մարդ),

UNM-ը՝ տղամարդկանց գործազրկության մակարդակն է (հազ. մարդ),

SE-ն՝ ինքնազբաղվածության մակարդակն է (հազ. մարդ),

ML-ը՝ աշխատուժի կառավարման մակարդակն է (այն հաշվարկվել է պետական աշխատողների թվի և տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցությամբ),

$y_0, y_1, y_2, y_3, y_4, y_5$ -ը՝ անկախ փոփոխականների ճկունության գործակիցներն են,

ξ_t -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

¹ Գծապատկեր 1-ը կազմվել է հեղինակի կողմից:

2000-2017 թթ. սովերային տնտեսության, հարկային բեռի, կանանց և տղամարդկանց գործազրկության, ինքնազբաղվածության և աշխատուժի կառավարման մակարդակների, անվանական ՀՆԱ-ի և կանխիկ փողի ցուցանիշները ՀՀ-ում¹

	Սովերային տնտեսության ծավալ (մլն դրամ)	Հարկային բեռ (գործակից)	Կանանց գործազրկության մակարդակ (մլն դրամ)	Տղամարդկանց գործազրկության մակարդակ (մլն դրամ)	Ինքնազբաղվածության մակարդակ (մլն դրամ)	Աշխատուժի կառավարման մակարդակ (գործակից)	ՀՆԱ (մլն դրամ)	Կանխիկ փող (մլն դրամ)
2000	0.6677	0.316258	99.5	54.5	50.8	0.233693	1031338	59486
2001	0.8006	0.31467	91.3	47.2	55	0.221931	1175877	65037
2002	0.9129	0.3214	85.7	41.7	60	0.230465	1362472	88556
2003	0.9499	0.30529	81.6	37.1	62.7	0.209185	1624643	91997
2004	1.024	0.3072	76.3	32.3	64.9	0.190723	1907945	98569
2005	1.1133	0.31603	63.1	25.9	66.2	0.181719	2242881	144311
2006	1.2456	0.31667	60.7	23.9	58.2	0.18141	2656190	211469
2007	1.4976	0.34982	55.2	19.8	46	0.179938	3149283	325849
2008	1.8941	0.16781	56.4	18.3	348	0.187403	3568228	315949
2009	1.6167	0.16021	59.8	24.7	290.3	0.215111	3141651	282441
2010	1.7304	0.1659	55.1	23.7	325.5	0.194014	3460203	304324
2011	1.7332	0.16724	49.2	20.2	349.8	0.180512	3777946	349407
2012	1.8537	0.20588	45.4	16.9	334	0.18776	4266461	384065
2013	1.8443	0.22441	41.3	14.6	350.3	0.182296	4555638	384467
2014	1.7009	0.2275	47.3	18.5	398	0.182016	4828626	348359
2015	1.699	0.2304	53	23.9	370.5	0.197736	5043633	345507
2016	1.5099	0.2332	53.1	27.4	351.2	0.199054	5067294	390918
2017	1.4198	0.21269	50.7	26	372.2	0.201186	5568902	445155

177

¹ ՀՀ Վիճակագրական կոմիտե, տարեգրքեր, 2018 թ., 2012 թ., 2008 թ., 2005 թ., Զբաղվածություն, էջեր 55-60,51-56,51-54,49-51, <https://www.armstat.am/file/doc/99510748.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99471438.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99456288.pdf>, <https://www.armstat.am/file/doc/523.pdf>, ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ, Հայաստանի ազգային հաշիվները, 2018 թ., 2014 թ., էջեր 35. 27, https://www.armstat.am/file/article/hah_18_2.pdf, https://www.armstat.am/file/article/hah_14_2+.pdf: ՀՀ Վիճակագրական կոմիտե, տարեգրքեր, 2018 թ., 2012 թ., 2008 թ., 2005 թ., Ֆինանսներ, էջեր 408, 399, 388, 416, <https://www.armstat.am/file/doc/99510818.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99471508.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99456358.pdf>, <https://www.armstat.am/file/doc/537.pdf>:

Վարկած 1-ի թեստավորում

Վարկած 1-ի հավաստիությունը ստուգելու համար իրականացվել է թեստավորում փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 9 համակարգչային ծրագրի միջոցով¹: Հաշվարկների հիմքում որպես էնդոգեն փոփոխականներ դիտարկվել են 2000-2017 թթ. ստվերային տնտեսության, հարկային բեռի, կանանց և տղամարդկանց գործազրկության, ինքնագրադավաճության և աշխատուժի կառավարման մակարդակների վիճակագրական տվյալները, որոնց հիման վրա իրականացվել է ռեգրեսիոն և կոռելյացիոն գնահատում: Մինչ մոդելի գնահատելը տվյալները հարթեցվել են՝ դրանք լոգարիթմելով կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիա ստանալուց խուսափելու նպատակով:

(1) տնտեսաչափական մոդելում վիճակագրական շարքերը 17 են, իսկ դա նշանակում է, որ ստացված արժեքները գրեթե մոտ են իրականությանը:

Աշխատանքում իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, համաձայն որի՝ բացահայտվել են ընտրված գործոնների և ստվերային տնտեսության ցուցանիշի դիպուկության աստիճանը: Ավելին, նշանակալից դրական կապ է ստացվել հետևյալ գործոնների միջև (աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները²

	SH	TB	UNW	UNM	SE	ML
SH	1.000000					
TB	-0.749628	1.000000				
UNW	-0.939154	0.604818	1.000000			
UNM	-0.932316	0.548567	0.943658	1.000000		
SE	0.828866	-0.882522	-0.787485	-0.655377	1.000000	
ML	-0.684606	0.215671	0.755093	0.839661	-0.324360	1.000000

- հարկային բեռի 1 % փոփոխությունը նվազեցրել է ստվերային տնտեսությունը 0.74 տոկոսային կետի չափով, որը պայմանավորված է ուղղակի և անուղղակի հարկային բեռի մասով հարկային համակարգում դեռևս գոյություն ունեցող բացթողումներով,
- կանանց գործազրկության մակարդակի 1 % փոփոխությունը նվազեցրել է ստվերային տնտեսությունը 0.93 տոկոսային կետի չափով՝ պայմանավորված նրանով, որ զբաղված կանայք իրենց գործունեությունը ծավալում են հիմնականում ոչ ֆորմալ հատվածում (տնային տնտեսուհիներ),
- տղամարդկանց գործազրկության մակարդակի 1 % փոփոխությունը նվազեցրել է ստվերային տնտեսությունը 0.93 տոկոսային կետի չափով՝ կապված

¹ Eviews-ը Micro TSP փաթեթի Windows տարբերակն է, որն, ըստ էության, էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է, <http://www.eviews.com/>:

² Հաշվարկվել է հեղինակի կողմից:

գրադված տղամարդկանց՝ ոչ ֆորմալ հատվածում (գրանցված և չգրանցված աշխատանք) ծավալած գործունեության հետ,

- ինքնագրադվածության մակարդակի 1 % փոփոխությունը ավելացրել է ստվերային տնտեսությունը 0.82 տոկոսային կետի չափով՝ պայմանավորված ոչ ֆորմալ հատվածում տնտեսվարող սուբյեկտների կողմից ծավալվող գործունեությամբ, ինչը հաստատում է ստվերային ոլորտի բարձր մակարդակի առկայությունը,
- կառավարման մակարդակի 1 % փոփոխությունը նվազեցրել է ստվերային տնտեսությունը 0.68 տոկոսային կետի չափով, որը պայմանավորված է տնտեսության կառավարման ցածր մակարդակով:

Վերլուծությունները հիմնավորում են, որ դրանց միջև իրոք գոյություն ունի նշանակալից դրական կոռելյացիա: Հարկ է նշել, որ առկա է թե՛ դրական և թե՛ բացասական նշանակալից կոռելյացիա մյուս դիտարկվող գործոնների միջև ևս: Մասնավորապես՝ նշանակալից բացասական կապ է ստացվել դիտարկվող ցուցանիշներից ինքնագրադվածության և կառավարման մակարդակների միջև՝ -0.32:

Հետևաբար իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքները հաստատում են, որ դիտարկվող գործոնների և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալից փոխկապվածություն:

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքում ստացված արդյունքները արտացոլված են աղյուսակ 3-ում, որտեղ y_0 , y_1 , y_2 , y_3 , y_4 , y_5 -ը անկախ փոփոխականների գործակիցներն են, որոնց վիճակագրական հատկություններն են՝ t -վիճականի և Prob.¹: Իսկ մոդելի որակական հատկանիշները ըմբռնելու համար տրվել են դրանց R^2 -ի, ճշգրտված R^2 -ի արժեքները²:

Աղյուսակ 3

Ստվերային տնտեսության, հարկային բեռի, կանանց և տղամարդկանց գործազրկության, ինքնագրադվածության և աշխատուժի կառավարման մակարդակների հաշվարկային արդյունքները ըստ MIMIC մեթոդի³

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C(1)	2.747121	1.870027	1.469027	0.1675
C(2)	-0.270657	0.180469	-1.499738	0.1595
C(3)	-0.246442	0.377241	-0.653275	0.5259
C(4)	-0.531768	0.220377	-2.412990	0.0327
C(5)	0.034073	0.078901	0.431850	0.6735
C(6)	0.165196	0.488109	0.338441	0.7409

¹ Елисеєва И. И., Эконометрика: М., 2009, с. 25-28.

² Магнус Я. Р., Катышев П. К., Пересецкий А. А., Эконометрика. Начальный курс. Издательство "ДЕЛО", Москва, 2004, с. 67.

³ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

R-squared	0.960683	Mean dependent var	0.292010
Adjusted R-squared	0.944301	S.D. dependent var	0.322247
S.E. of regression	0.076053	Akaike info criterion	-2.053581
Sum squared resid	0.069408	Schwarz criterion	-1.756791
Log likelihood	24.48223	Hannan-Quinn criter.	-2.012658
F-statistic	58.64189	Durbin-Watson stat	1.474293
Prob(F-statistic)	0.000000		

Աղյուսակ 3-ի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ դիտարկվող գործոնների և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալից փոխկապվածություն, քանի որ դետերմինացիայի գործակիցը (R^2) 0.96 է, այսինքն՝ կախյալ փոփոխականի փոփոխության շուրջ 96 %-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 4 %-ը՝ պատահական սխալներով: Սա նշանակում է, որ 96 %-ի դեպքում ստվերային տնտեսության տատանումները կարող են բացատրվել մեր կողմից դիտարկվող գործոնների ազդեցությամբ, իսկ դետերմինացիայի ճշգրտված գործակիցը (ճշգրտված R^2) 0.94 է, այսինքն՝ 94 %, ինչը ցույց է տալիս, թե դետերմինացիայի ճշգրտման գործակիցը ինչպիսի ազդեցություն է ունեցել դետերմինացիայի գործակցի վրա, և քանի որ գնահատված մոդելում դետերմինացիայի ճշգրտված գործակիցը մոտ է դետերմինացիայի գործակցին, ուստի դա նշանակում է, որ ունենք «որակյալ» ռեգրեսիոն վերլուծություն:

Արդյունքում (1) գծային ռեգրեսիայի հավասարման արժեքները արտացոլվել են (2) բանաձևում՝

$$SH=2.747121-0.270657TB-0.246442UNW-0.531768UNM+0.034073SE+0.165196ML+\xi, \quad (2)$$

Ըստ այդմ՝ (2) տնտեսաչափական մոդելի և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության արդյունքում հիմնավորվել է՝

- հարկային բեռի (TB) մեկ տոկոսային կետի փոփոխությունը նվազեցնում է ստվերային տնտեսությունը (SH) հարկային բեռով պայմանավորված 0.27 տոկոսային կետի չափով, որն էլ ստվերային տնտեսություն առաջացնող առանցքային գործոն է համարվում, քանի որ հարկային բեռի մեծացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում ոչ ֆորմալ հատվածում աշխատելու համար,

- կանանց գործազրկության մակարդակի (UNW) մեկ տոկոսային կետի փոփոխությունը բերում է ստվերային տնտեսության (SH) կանանց գործազրկությամբ պայմանավորված 0.24 տոկոսային կետի նվազմանը, որը բացատրվում է նրանով, որ ոչ բոլոր կանայք են իրենց գործունեությունը ծավալում տնտեսության ֆորմալ հատվածում,

- տղամարդկանց գործազրկության մակարդակի (UNM) մեկ տոկոսային կետի փոփոխությունը բերում է ստվերային տնտեսության (SH) 0.53 տոկոսային կետի նվազմանը, ինչը բացատրվում է ՀՀ-ում ընտանիքի եկամուտների հիմնական աղբյուր հանդիսացող տղամարդկանց աշխատանքով,

- Ինքնազբաղվածության մակարդակի (SE) մեկ տոկոսային կետի փոփոխությունը բերում է ստվերային տնտեսության (SH) ինքնազբաղվածության մակարդակով պայմանավորված 0.03 տոկոսային կետի ավելացման, քանի որ ինքնազբաղվածությունը ընդհանուր աշխատուժի մեջ դիտարկվում է որպես ոչ ֆորմալ տնտեսության որոշիչ,

- կառավարման մակարդակի (ML) մեկ տոկոսային կետի փոփոխությունը բերում է ստվերային տնտեսության (SH) կառավարման մակարդակով պայմանավորված 0.16 տոկոսային կետի ավելացման, քանի որ որքան բարձր է կառավարման մակարդակը, այնքան տնտեսվարող սուբյեկտները ձգտում են գործել ստվերում:

Կառավարման բարձր մակարդակը ենթադրում է առևտրային արգելքներ կամ աշխատանքային սահմանափակումներ, որոնք կարող են հանգեցնել պետական հատվածում աշխատուժի գնի բարձրացման, ինչի հետևանքով էլ մարդիկ կձգտեն աշխատել ստվերային հատվածում, այլ ոչ թե պետական հատվածում:

Վարկած 2. ՀՀ-ում անվանական ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$GDP = y_0 + y_1 SH + \varepsilon_t \quad (3)$$

որտեղ՝

SH-ը՝ ստվերային տնտեսության չափն է (մլն դրամ),

GDP-ն՝ անվանական ՀՆԱ-ն է, շուկայական գներով (մլն դրամ),

y_0 , y_1 -ը՝ անկախ փոփոխականների ճկունության գործակիցներն են,

ε_t -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

Վարկած 2-ի թեստավորում

Վարկած 2-ի հավաստիությունը ստուգելու համար իրականացվել է թեստավորում փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 9 համակարգչային ծրագրի միջոցով¹: Բացի այդ՝ հաշվարկման համար դիտարկվել են 2000-2017 թթ. անվանական ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության տարեկան վիճակագրական տվյալները, իրականացվել են համապատասխան ռեգրեսիոն և կոռելյացիոն վերլուծություններ: Մինչ մոդելի գնահատելը բոլոր տվյալները լոգարիթմվել են՝ կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիա ստանալուց խուսափելու համար:

Ներկայացված տնտեսաչափական մոդելում վիճակագրական շարքերը 17 են, իսկ դա նշանակում է, որ ստացված արժեքները գրեթե մոտ են իրականությունը:

Աշխատանքում իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, համաձայն որի՝ բացահայտվել է ընտրված գործոնի և ստվերային տնտեսության ցուցանիշի դիպուկության աստիճանը: Ավելին, նշանակալից դրական կապ է ստացվել անվանական ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության միջև՝ 0.91 (աղյուսակ 4):

¹ Eviews-ը Micro TSP փաթեթի Windows տարբերակն է, որն, ըստ էության, էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է, <http://www.eviews.com/> :

Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները¹

	GDP	SH
GDP	1.000000	
SH	0.914675	1.000000

Վերլուծությունները հիմնավորում են, որ դրանց միջև իրոք գոյություն ունի նշանակալից դրական կոռելյացիա:

Հետևաբար իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքները հաստատում են, որ դիտարկվող գործոնի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալից փոխկապվածություն:

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքում ստացված արդյունքները արտացոլված են աղյուսակ 5-ում, որտեղ $y_0, y_1, y_2, y_3, y_4, y_5$ -ը անկախ փոփոխականների գործակիցներն են, որոնց վիճակագրական հատկություններն են՝ t -վիճականի և Prob.²: Իսկ մոդելի որակական հատկանիշները ըմբռնելու համար տրվել են դրանց R^2 -ի, ճշգրտված R^2 -ի արժեքները³:

Անվանական ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության հաշվարկային արդյունքները ըստ MIMIC մեթոդի⁴

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C(1)	14.43117	0.071733	201.1798	0.0000
C(2)	1.516438	0.167527	9.051921	0.0000
R-squared	0.836630	Mean dependent var		14.87398
Adjusted R-squared	0.826420	S.D. dependent var		0.534252
S.E. of regression	0.222586	Akaike info criterion		-0.062572
Sum squared resid	0.792709	Schwarz criterion		0.036359
Log likelihood	2.563144	Hannan-Quinn criter.		-0.048930
F-statistic	81.93727	Durbin-Watson stat		0.296719
Prob(F-statistic)	0.000000			

¹ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

² Елисеєва И. И., “Эконометрика”, М., 2009, с. 25-28.

³ Магнус Я. Р., Катышев П. К., Пересецкий А. А., Эконометрика. Начальный курс. Издательство “ДЕЛО”, Москва, 2004, с. 67.

⁴ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

Աղյուսակ 5-ի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալից փոխկապվածություն, քանի որ դետերմինացիայի գործակիցը (R^2) 0.83 է, այսինքն՝ կախյալ փոփոխականի փոփոխության շուրջ 83 %-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 7 %-ը՝ պատահական սխալներով: Մա նշանակում է, որ 83 %-ի դեպքում ստվերային տնտեսության տատանումները կարող են բացատրվել մեր կողմից դիտարկվող գործոնների ազդեցությամբ, իսկ դետերմինացիայի ճշգրտված գործակիցը (ճշգրտված R^2) 0.82 է, այսինքն՝ 82 %, ինչը ցույց է տալիս, թե դետերմինացիայի ճշգրտման գործակիցը ինչպիսի ազդեցություն է ունեցել դետերմինացիայի գործակցի վրա, և քանի որ գնահատված մոդելում դետերմինացիայի ճշգրտված գործակիցը և դետերմինացիայի գործակիցը նույնն են, ուստի դա նշանակում է, որ ունենք «որակյալ» ռեգրեսիոն վերլուծություն:

Արդյունքում (3) գծային ռեգրեսիայի հավասարման արժեքները արտացոլվել են (4) բանաձևում՝

$$GDP = 14.43117 + 1.516438SH + \varepsilon_i \quad (4)$$

Ըստ այդմ՝ (4) տնտեսաչափական մոդելի և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության արդյունքում հիմնավորվել է, որ ստվերային տնտեսության (SH) մեկ տոկոսային կետի փոփոխությունը բերում է անվանական ՀՆԱ-ի (GDP) 1.51 տոկոսային կետի ավելացման, որը պայմանավորված է նրանով, որ տնտեսության ստվերային հատվածի աճը բերում է ներդրված ռեսուրսների, հատկապես՝ աշխատուժի արտահոսքի պաշտոնական տնտեսությունից, որն էլ բացասական ազդեցություն է ունենում տնտեսական աճի վրա:

Վարկած 3. ՀՀ-ում կանխիկ փողի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$M = y_0 + y_1SH + \varepsilon_i \quad (5)$$

որտեղ՝

M -ը՝ կանխիկ փողի մասն է փողի զանգվածում (մլն դրամ),

SH -ը՝ ստվերային տնտեսության չափն է (մլն դրամ),

y_0, y_1 -ը՝ անկախ փոփոխականների ճկունության գործակիցներն են,

ε_i -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

Վարկած 3-ի թեստավորում

Վարկած 3-ի հավաստիությունը ստուգելու համար իրականացվել է թեստավորում փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 9 համակարգչային ծրագրի միջոցով¹: Բացի այդ, հաշվարկման համար դիտարկվել են 2000-2017 թթ. կանխիկ փողի և ստվերային տնտեսության տարեկան վիճակագրական տվյալները, իրականացվել են համապատասխան ռեգրեսիոն և կոռելյացիոն վերլուծություններ: Մինչ մոդելի գնահատելը անհրաժեշտ է տվյալները հարթեցնել,

¹ Eviews-ը Micro TSP փաթեթի Windows տարբերակն է, որն, ըստ էության, էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է, <http://www.eviews.com/> :

ուստի բոլոր տվյալները լոգարիթմվել են՝ կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիա ստանալուց խուսափելու համար:

Ներկայացված տնտեսաչափական մոդելում վիճակագրական շարքերը 17 են, իսկ դա նշանակում է, որ ստացված արժեքները գրեթե մոտ են իրականությանը:

Աղյուսակ 6

Շտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները¹

	M	SH
M	1.000000	
SH	0.947224	1.000000

Աշխատանքում իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, համաձայն որի՝ բացահայտվել է ընտրված գործոնի և ստվերային տնտեսության ցուցանիշի դիպուկության աստիճանը: Ավելին, նշանակալից դրական կապ է ստացվել կանխիկ փողի և ստվերային տնտեսության միջև՝ 0.94 (Աղյուսակ 6).

Վերլուծությունները հիմնավորում են, որ դրանց միջև իրոք գոյություն ունի նշանակալից դրական կոռելյացիա:

Հետևաբար իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքները հաստատում են այն, որ դիտարկվող գործոնի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալից փոխկապվածություն:

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքում ստացված արդյունքները արտացոլված են աղյուսակ 7-ում, որտեղ $y_0, y_1, y_2, y_3, y_4, y_5$ -ը անկախ փոփոխականների գործակիցներն են, և որոնց վիճակագրական հատկություններն են՝ t -վիճականի և Prob.²: Իսկ մոդելի որակական հատկանիշները ըմբռնելու համար տրվել են դրանց R^2 -ի, ճշգրտված R^2 -ի արժեքները³:

Աղյուսակ 7

Կանխիկ փողի և ստվերային տնտեսության հաշվարկային արդյունքները ըստ MIMIC մեթոդի⁴

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C(1)	11.68154	0.073628	158.6563	0.0000
C(2)	2.032342	0.171953	11.81917	0.0000
R-squared	0.897234	Mean dependent var		12.27501
Adjusted R-squared	0.890811	S.D. dependent var		0.691405
S.E. of regression	0.228467	Akaike info criterion		-0.010414
Sum squared resid	0.835152	Schwarz criterion		0.088516

¹ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

² Елисеєва И. И., ‘Эконометрика’, М., 2009, с. 25-28.

³ Магнус Я. Р., Катышев П. К., Пересецкий А. А., Эконометрика. Начальный курс. Издательство "ДЕЛО", Москва, 2004, с. 67.

⁴ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

Log likelihood	2.093723	Hannan-Quinn criter.	0.003227
F-statistic	139.6928	Durbin-Watson stat	0.824074
Prob(F-statistic)	0.000000		

Աղյուսակ 7-ի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ կանխիկ փողի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալից փոխկապվածություն, քանի որ դետերմինացիայի գործակիցը (R^2) 0.89 է, այսինքն՝ կախյալ փոփոխականի փոփոխության շուրջ 89 %-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 11 %-ը՝ պատահական սխալներով: Սա նշանակում է, որ 89 %-ի դեպքում ստվերային տնտեսության տատանումները կարող են բացատրվել մեր կողմից դիտարկվող գործոնների ազդեցությամբ, իսկ դետերմինացիայի ճշգրտված գործակիցը (ճշգրտված R^2) 0.89 է, այսինքն՝ 89 %, ինչը ցույց է տալիս, թե դետերմինացիայի ճշգրտման գործակիցը ինչպիսի ազդեցություն է ունեցել դետերմինացիայի գործակցի վրա, և քանի որ գնահատված մոդելում դետերմինացիայի ճշգրտված գործակիցը մոտ է դետերմինացիայի գործակցին, ուստի դա նշանակում է, որ ունենք «որակյալ» ռեգրեսիոն վերլուծություն:

Արդյունքում (5) գծային ռեգրեսիայի հավասարման արժեքները արտացոլվել են (6) բանաձևում՝

$$M = 11.68154 + 2.032342SH + \varepsilon_t \quad (6)$$

Ըստ այդմ՝ (6) տնտեսաչափական մոդելի և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության արդյունքում հիմնավորվել է, որ ստվերային տնտեսության (SH) մեկ տոկոսային կետի փոփոխությունը բերում է կանխիկ փողի (M) 2.03 տոկոսային կետի ավելացման, որը պայմանավորված է նրանով, որ տնտեսվարող սուբյեկտները իրենց բոլոր գործարքները գերադասում են կատարել կանխիկ փողով, որի շրջանառությունն ավելի դժվար է վերահսկվում: Սովորաբար շրջանառության մեջ կանխիկ փողի աճը բերում են տնտեսության ստվերային հատվածի աճ:

Դիտարկված վարկաձևերի համաձայն դրական կապ է հայտնաբերվել կանխիկ փողի, անվանական ՀՆԱ-ի, ինքնազբաղվածության, ինչպես նաև աշխատուժի կառավարման մակարդակի և ՀՀ տնտեսության ստվերային հատվածի միջև:

ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (2019 թ.)

Անուշ Սարգսյան

կրտսեր գիտաշխատող

Երկրները տարբերվում են ներդրողների համար գրավչություն ներկայացնող պայմաններով և հնարավորություններով: Օտարերկրյա ձեռնարկությունները հակված են ներդրումներ իրականացնել այն երկրներում, որտեղ առկա է ներդրումային բարենպաստ միջավայր՝ մակրոտնտեսական կայունություն, սեփականաշնորհման գործընթացների պարզություն, օրենքների և իրավական ակտերի կանխատեսելիություն, թափանցիկություն, բարձրորակ, սակայն միևնույն ժամանակ ոչ թանկ աշխատուժ, զարգացած ենթակառուցվածքներ և հեռահաղորդակցության հնարավորություններ: Հարկային արտոնությունները ևս դրական են ազդում եմ ներդրողների որոշումների վրա, սակայն վերը նշված գործոնների բացակայության պարագայում միայն հարկային արտոնությունների տրամադրումը որևէ ազդեցություն չի կարող ունենալ: Ուստի ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը կենսական է օտարերկրյա ներդրողների համար երկրի գրավչությունը բարձրացնելիս:

Համաշխարհային բանկի փորձագետների կողմից յուրաքանչյուր տարի իրականացվում է 190 երկրների ձեռնարկատիրական գործունեության ընդլայնմանը նպաստող, ինչպես նաև սահմանափակող իրավական նորմերի գնահատում, որը հնարավորություն է տալիս քանակական ցուցանիշների միջոցով գնահատել ձեռնարկատիրական գործունեության համար իրավական նորմերի բարենպաստության և սեփականության իրավունքի պաշտպանվածության մակարդակը: 2018 թ. իրականացված հետազոտությունն ընդգրկում է 10 ցուցանիշ՝ «Ձեռնարկությունների գրանցում», «Շինարարության թույլտվության տրամադրում», «Էլեկտրամատակարարման համակարգին միացում», «Սեփականության գրանցում», «Վարկերի ստացում», «Փոքր բաժնետերերի պաշտպանություն», «Հարկում», «Միջազգային առևտուր», «Պայմանագրերի կիրարկում» և «Անվճարունակության հարցերի կարգավորում»:

Յուրաքանչյուր տարի հաշվարկված ցուցանիշների և իրականացրած հետազոտությունների հիման վրա առանձնացվում են ամենաշատ բարեփոխումներ կատարած 10 երկրները, որոնց կազմը ցույց է տալիս է, որ ձեռնարկատիրական գործունեության կարգավորումը կարող է բարելավվել ինչպես խոշոր ու զարգացած, այնպես էլ փոքր և աղքատ երկրներում. այստեղ որոշիչ դեր է կատարում պետական գործիչների կամքը: Այսպես, 2019 թ. տարեկան հաշվետվության մեջ (ցուցանիշների հաշվարկն իրականացվել է 2018 թ. մայիսի 1-ի դրությամբ) ընդգրկված ամենաշատ բարեփոխումներ իրականացրած 10 երկրների շարքում էին ինչպես աշխարհի խոշորագույն տնտեսությունները՝ Չինաստանն ու Հնդկաստանը, այնպես էլ աֆրիկյան Ջիբութի պետությունը և Աֆղանստանն ու Թուր-

քիան, որոնք առաջին անգամ էին հայտնվել այդ ցանկում¹:

Քանի որ Համաշխարհային բանկի կողմից գործարարությամբ զբաղվելու դյուրինության գործակիցները երկրի ներդրումային միջավայրի միջազգայնորեն ընդունված կարևորագույն բնութագրիչներ են, մի շարք երկրներ թիրախավորում են այդ գործակիցների բարելավումն ու հետագոտվող 190 երկրների շարքում առավել բարձր հորիզոնականի զբաղեցումը՝ ակնկալելով, որ դա կհանգեցնի օտարերկրյա ներդրումների զգալի ներհոսքի: Առանձին ցուցանիշների գծով զբաղեցրած հորիզոնականի բարելավումը կամ վատթարացումը կարող է պայմանավորված լինել ոչ միայն տվյալ երկրում տեղի ունեցած փոփոխություններով, այլ նաև մյուս երկրներում փոփոխությունների արդյունքում դրանց տեղաշարժերով: Զբաղեցրած հորիզոնականների փոփոխությունը կարող է նաև ցուցանիշների գնահատման մեթոդաբանության մեջ կատարված փոփոխությունների հետևանք լինել: Ուստի թիրախային պետք է լինի ոչ թե ինչ-որ ցուցանիշով դիրքի բարելավումը, այլ տվյալ ոլորտում զարգացմանը խոչընդոտող գործոնների վերացումը և խթանմանը նպաստող կարգավորումների իրականացումը:

Համաշխարհային բանկի՝ գործարարությամբ զբաղվելու դյուրինության 2019 թ. հաշվետվության համաձայն՝ ՀՀ-ն զբաղեցնում է 41-րդ հորիզոնականը՝ Էսպես զիջելով ինչպես հարևան Վրաստանին (6-րդ հ.) և Ադրբեջանին (25-րդ հ.), այնպես էլ ԵԱՏՄ անդամ երկրներից Ղազախստանին (28-րդ հ.), ՌԴ-ին (31-րդ հ.) և Բելառուսին (37-րդ հ.): Ինչպես արդեն նշվեց, այս ցուցանիշի հիմքում ընկած են 10 ցուցանիշներ: Նախ ներկայացնենք ՀՀ զբաղեցրած հորիզոնականները յուրաքանչյուր ցուցանիշի գծով և ապա պարզենք դրանցից մի քանիսի բարելավման հնարավորություններն ու անհրաժեշտ միջոցները:

Աղյուսակ 1

2019 թ. Գործարարությամբ զբաղվելու դյուրինության հաշվետվության համաձայն ՀՀ զբաղեցրած հորիզոնականները ըստ առանձին ցուցանիշների²

Ցուցանիշի անվանումը	Զբաղեցրած հորիզոնականը
Զեռնարկությունների գրանցում	8
Շինարարության թույլտվության տրամադրում	98
Էլեկտրամատակարարման համակարգին միացում	17
Սեփականության գրանցում	14
Վարկերի ստացում	44
Փոքր բաժնետերերի պաշտպանություն	51
Հարկում	82
Միջազգային առևտուր	46
Պայմանագրերի կիրարկում	24
Անվճարունակության հարցերի կարգավորում	95

¹ World Bank Group, Doing Business 2019, Training for Reform, 16th edition, p. 6-7.

² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ <http://www.doingbusiness.org> կայքում առկա տվյալների հիման վրա:

Ինչպես ակներև է աղյուսակ 1-ից, ՀՀ-ն ամենահետընթաց դիրքերը զբաղեցնում է «Շինարարության թույլտվության տրամադրում» և «Անվճարունակության հարցերի կարգավորում» ցուցանիշների գծով, ուստի հենց այդ ցուցանիշների բարելավման նպատակով մեր կողմից իրականացվել է հետազոտություն առկա թերությունների բացահայտման և դրանց վերացմանն ուղղված քայլերի ձեռնարկման համար: Ուսումնասիրվել են ինչպես ՀՀ, այնպես էլ ԵԱՏՄ անդամ մյուս երկրների համապատասխան ցուցանիշները և դրանցում իրականացված բարեփոխումները, որոնք կարող են ուղենիշ ծառայել ՀՀ-ում բարեփոխումներ ձեռնարկելիս:

«Շինարարության թույլտվության տրամադրում» ցուցանիշը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով՝

- գործընթացների քանակը, ժամկետները և արժեքը,
- պահեստի կառուցման և շինարարական կառույցների որակի գնահատման հետ առնչվող ծախսերը,
- հսկողության որակը և անվտանգության մեխանիզմները:

ՀՀ-ում շինարարության թույլտվություն ստանալու համար կառավարության իրավասու մարմինն են ներկայացվում դիմում, օրենքով սահմանված տեղական տուրքը վճարելու մասին անդորրագիր, նախագծային փաստաթղթերը, փորձաքննության դրական եզրակացությունը: Շինարարության թույլտվությունը տրամադրվում է 3-15 օրյա ժամկետում՝ կախված օբյեկտների կատեգորիայից (առանձին օբյեկտների համար՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված ժամկետում)¹: Շինարարության թույլտվության համար գործընթացների թիվը 20 է, որն ամենաշատն է ԵԱՏՄ երկրների կազմում, ինչպես նաև ցածր է շինարարության որակի հսկողության գործակիցը՝ 9՝ հնարավոր 16-ից. որքան բարձր է այս գործակցի արժեքը, այնքան արդյունավետ են հսկողության որակն ու անվտանգության ապահովման մեխանիզմները:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ երկրների «Շինարարության թույլտվության ստացում» ցուցանիշով զբաղեցրած հորիզոնականները 2014-2018 թթ.

	2014	2015	2016	2017	2018
ՀՀ	81	62	81	89	98
Բելառուս	51	34	28	22	46
Ղազախստան	154	92	22	52	35
Ղրղզստան	42	20	32	31	29
ՌԴ	156	119	115	115	48

Աղյուսակ 2-ից ակնհայտ է, որ ՀՀ-ն ԵԱՏՄ երկրներին զգալիորեն զիջում է այս ցուցանիշով, միաժամանակ աչքի է ընկնում ՌԴ թոփաքային առաջընթացը 2018 թ. նախորդ տարվա համեմատությամբ: Վերջինս գլխավորապես թույլտվության ստացման գործընթացի պարզեցման արդյունք է. օրենսդրորեն կրճատվել են շի-

¹ www.e-permits.am

նարարության և օբյեկտների շահագործման թույլտվության տրամադրման ժամկետները, մեծացվել է շինարարության որակի հսկողությունը՝ կիրառելով ռիսկայնության հիման վրա շինարարական օբյեկտների ստուգումների մոտեցումը: Դիրքի բարելավման հարցում որոշիչ դեր է հատկացվում շինարարության ոլորտում մատուցվող ծառայությունների էլեկտրոնային ձևով հասանելիությանը (Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում այս ոլորտի հետ առնչվող ավելի քան 50 գործընթաց հասանելի են էլեկտրոնային եղանակով): Այս ցուցանիշի գծով առաջընթաց է գրանցվել նաև Ղազախստանի կողմից՝ պայմանավորված մի շարք բարեփոխումներով: Շինարարության թույլտվությունը տրամադրելիս վերացվել է հողատարածքի տոպոգրաֆիկական (տեղագրական) նկարահանման իրականացման պահանջը, վերացվել են նաև բնապահպանական և արդյունաբերական անվտանգության, սանիտարա-համաճարակաբանական հսկողության կրկնակի փորձաքննությունները, կրճատվել են առաջին կարգի բարդության, այդ թվում՝ նոր կառույցների, անշարժ գույքի պետական գրանցման ժամկետները:

«Շինարարության թույլտվության տրամադրում» ցուցանիշով ՀՀ դիրքերի բարելավման նպատակով անհրաժեշտ է էլեկտրոնային եղանակով ավելի մեծ քանակով գործընթացների իրականացման հնարավորության ստեղծում և թույլտվության ստացման համար գործընթացների քանակի (ներկայումս այն կազմում է 20) կրճատում, ինչը, սակայն, չպետք է անդրադառնա շինարարական աշխատանքների որակի վրա, բայց միաժամանակ էապես կոյուրինացնի և կարագացնի թույլտվության ստացումը:

Ներկայումս այս ցուցանիշով ՀՀ զբաղեցրած ցածր հորիզոնականը պայմանավորված է շինարարության որակի նկատմամբ պատշաճ հսկողության բացակայությամբ: ՀԲ փորձագետների կողմից հաշվարկվող իրավաբանական պատասխանատվության և ապահովագրության մակարդակի ինդեքսը 0 է՝ հնարավոր 2-ից, իսկ մասնագիտական որակավորման մակարդակի ինդեքսն ընդամենը 1 է՝ հնարավոր 4-ից¹: Ոլորտը կարգավորող օրենքում առկա են որոշակի թերություններ: Մասնավորապես՝ օրենքը չի սահմանում, թե ով է պատասխանատու կառուցվածքային թերությունների և խնդիրների համար շինությունը շահագործման հանձնելուց հետո: Օրենքով սահմանված չեն գոյություն ունեցող շինարարական նորմերին ճարտարապետական նախագծերի համապատասխանությունը հաստատող մասնագետի նկատմամբ որակավորման պահանջները: Շինարարության ոլորտում անհրաժեշտ գլխավոր փոփոխությունը պետք է լինի որակի նկատմամբ հսկողության խստացումը, որը պետք է իրականացվի շինարարության բոլոր փուլերում (շինարարությունը սկսելուց առաջ, ընթացքում, շինարարության ավարտից հետո) պարտադիր ստուգումների միջոցով՝ հաշվի առնելով ռիսկի գործոնը:

«Անվճարունակության հարցերի կարգավորում» ցուցանիշով ևս ԵԱՏՄ և մի շարք այլ երկրների համեմատությամբ ՀՀ-ն գտնվում է հետին դիրքում: Այս ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվում գործընթացի հետ կապված ժամա-

¹ Armenia. Economy profile, Training for Reform, Doing Business, 2019, p. 14.

նակային և ֆինանսական ծախսումները, ինչպես նաև գործընթացի վերջնական արդյունքը (հաշվարկվում է պարտքի վերադարձի գործակից յուրաքանչյուր ծախսված դոլարից), որի բոլոր մասնակիցները հանդիսանում են տեղական ձեռնարկություններ: Հետազոտության շրջանակներում գնահատվում է նաև ձեռնարկության վերակազմակերպման և լուծարման գործընթացների նկատմամբ կիրառվող նորմատիվա-իրավական բազայի արդյունավետությունը: Այս ցուցանիշով երկրների վարկանիշը բնութագրող բալերը իրենցից ներկայացնում են պարտքի վերադարձի և նորմատիվա-իրավական բազայի արդյունավետության գործակիցների գծով բալերի թվաբանական միջինը:

Աղյուսակ 3

ԵԱՏՄ երկրների «Անվճարունակության հարցերի կարգավորում» ցուցանիշով զբաղեցրած հորիզոնականները 2014-2018 թթ.

	2014	2015	2016	2017	2018
ՀՀ	69	71	78	97	95
Բելառուս	68	69	69	68	72
Ղազախստան	63	47	37	39	37
Ղրղզստան	157	126	130	119	82
ՌԴ	65	51	51	54	55

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, ԵԱՏՄ երկրներից ամենաբարենպաստ դիրքում գտնվում է Ղազախստանը, որտեղ շարունակում են իրականացվել ոլորտի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ: Ղազախստանը թույլ է տալիս պարտատերերին նախաձեռնել վերակազմակերպման գործընթաց և խրախուսում է ակտիվների վաճառքը, ինչպես նաև բարելավել է սնանկության ռեժիմը, պաշտպանություն է տրամադրվում այն պարտատերերին, որոնք դեմ են քվեարկել վերակազմակերպման գործընթացին: Ի լրումն դրան՝ պարտատերերին վարկառուի վերաբերյալ տեղեկատվության ավելի մեծ հասանելիություն է տրամադրվում սնանկության վարույթի ընթացքում, և հնարավորություն է տրվում բողոքարկել իրենց իրավունքներին առնչվող որոշումները: Ղրղզստանը անվճարունակության հարցերի կարգավորումն ավելի դյուրին է դարձրել անվճարունակության վարույթի ընթացքում նպաստելով պարտապանի բիզնեսի հետագա շարունակությանը, ինչպես նաև պարտատիրոջը տրամադրելով պարտապանի ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն ստանալու ավելի մեծ հասանելիություն:

Նորմատիվա-իրավական բազայի արդյունավետության գործակիցը իրենից ներկայացնում է անվճարունակության գործով արտադրության բացման, պարտապանի ունեցվածքի կառավարման, վերակազմակերպման գործընթացի և պարտատիրոջ մասնակցության գործակիցների հիման վրա երկրին տրված բալերի հանրագումարը, որը տատանվում է 0-ից 16 միջակայքում, ընդ որում՝ բարձր արժեքները ցույց են տալիս, որ անվճարունակության հարցերի կարգավորման համակարգը ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում կենսունակ ձեռնարկությունների վերականգնման և ոչ կենսունակ ձեռնարկությունների լու-

ծարման համար: «Անվճարունակության հարցերի կարգավորում» ցուցանիշով ՀՀ ցածր հորիզոնական զբաղեցնելու մեջ որոշիչ է վերը նշված գործակցի ցածր արժեքը՝ 7,5: Այսինքն՝ ՀՀ-ում անհրաժեշտ է ձեռնարկությունների սնանկության և վերակազմակերպման գործընթացը կարգավորող օրենսդրական ակտերում կատարել փոփոխություններ և իրականացնել միջոցառումներ այն դյուրինացնելու համար: Փոփոխություններն իրականացնելիս պետք է հաշվի առնել ստորև նշված նկատառումները.

- «Մնանկության մասին» ՀՀ օրենքով չի նախատեսվում, որ սնանկության գործընթացը կարող է նախաձեռնել պարտատերը. նշվում է միայն պարտապանի նախաձեռնության մասին:
- Օրենքը չի ապահովում պաշտպանություն այն պարտատերերի համար, որոնք դեմ են քվեարկում վերակազմակերպման գործընթացին:

Վերը նշված երկու ցուցանիշների գծով բարեփոխումների իրականացման հետ միասին խիստ կարևորվում է քաղաքացիական ծառայություն իրականացնող անձանց վերապատրաստումը, որն ընձեռում է նոր հմտությունների ձեռքբերման և արդեն իսկ առկա գիտելիքների նորացման հնարավորություն, բարձրանում է աշխատանքի արդյունավետությունն, ու բարելավվում՝ հաճախորդների սպասարկման կարողությունը: Հաճախորդների սպասարկում իրականացնող պետական ծառայության աշխատակիցների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ներդնել սպասարկման որակի վերահսկման և գնահատման մեխանիզմ, որը լայնորեն կիրառվում է մասնավոր հատվածում և զգալիորեն նպաստում սպասարկող անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Ձեռնարկությունների կողմից իրականացվող գործունեության ընդլայնմանը խոչընդոտող գործոնների բացահայտման և մասնավոր ու պետական ոլորտների արդյունավետ համագործակցության նպատակով անհրաժեշտ է կազմակերպել մասնավոր և պետական հատվածների ներկայացուցիչների (ղեկավարների մակարդակով) պարբերական հանդիպումներ, որոնց ընթացքում ձեռնարկատերերի կողմից կներկայացվեն իրենց առջև ծառայող հիմնական խնդիրները, տվյալ ոլորտում ներդրումների իրականացմանը խոչընդոտող գործոնները, կբացահայտվեն պետական մարմինների կողմից մատուցվող ծառայություններում առկա թերությունները, և պետական ոլորտի ներկայացուցիչների անմիջական ներգրավվածության արդյունքում դրանք հնարավորինս արագ լուծում կստանան: Նման հանդիպումները կարող են կազմակերպվել յուրաքանչյուր ոլորտի ձեռնարկությունների ներկայացուցիչների և համապատասխան ոլորտի նախարարների կամ փոխնախարարների մակարդակով՝ միաժամանակ ներգրավելով ֆինանսական հաստատությունների և հարկային մարմինների ներկայացուցիչներին, որոնք անմիջապես կտեղեկանան, թե ինչ դժվարություններ են առաջանում ֆինանսավորման հայթայթման և հարկային ոլորտի հետ կապված: Նման հանդիպումների արդյունքում ձեռք բերված տեղեկատվության հիման վրա իրականացվող փոփոխությունները ավելի նպաստավոր պայմաններ կստեղծեն

պոտենցիալ ներդրողների համար՝ դյուրինացնելով նրանց համար պարտադիր գործընթացների անցումը:

Նմանատիպ հանդիպումների հաջող փորձ է դիտարկվել Հարավային Կորեայում, որտեղ հանդիպումներ էին կազմակերպվում արտահանում իրականացնող ձեռնարկությունների հետ՝ արտահանման խթանմանը խանգարող գործոնների բացահայտման և դրա ընդլայնմանը նոր լիցք հաղորդելու նպատակով: Իհարկե, մի շարք ինստիտուցիոնալ մեխանիզմներ աջակցում էին այս համագործակցության ներքին գործընթացներին, սակայն ինչպես ընդգծում է Յ. Վ. Ռին, «առանց արտահանման նպատակային ցուցանիշների համակարգի և առևտրի խթանմանն ուղղված ամենամսյա հանդիպումների՝ քիչ հավանական է թվում, որ արտահանման խթանման ամբողջ համակարգը այդքան արդյունավետ կլիներ, որ տարատեսակ խթաններն այդքան լավ կաշխատեին և, ի վերջո, որ Կորեայի արտահանումը կլիներ այն, ինչ կա»¹: Կարծում ենք, որ ամենամսյա հանդիպումների կազմակերպումը և առկա խնդիրների բարձրաձայնումը հենց սկզբնական մակարդակում իրենց դրական ազդեցությունը կունենան ոլորտի կարգավորման արդյունավետության վրա:

Այսպիսով, վերը նշված երկու ցուցանիշների գծով առաջարկվող փոփոխությունները մի կողմից թույլ կտան կատարելագործել այդ ոլորտների կարգավորման գործընթացը և կբարելավեն ՀՀ դիրքերը տվյալ ցուցանիշների հաշվարկման ժամանակ՝ մեծացնելով ՀՀ-ում ներդրումներ կատարելու գրավչությունը: Իսկ քաղաքացիական ծառայություն իրականացնող անձանց վերապատրաստումը և պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների ամսական հանդիպումները կապահովեն այդ երկու հատվածների արդյունավետ հաղորդակցություն՝ վերացնելով զարգացմանը խոչընդոտող գործոններն ու առկա թերությունները:

¹ Y. W. Rhee, B. Ross-Larson, G. Pursell - "Korea's Competitive Edge, Managing the Entry into World Markets", A World Bank Research Publication, 1984.

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ¹ (2019 թ.)

Լիանա Ազատյան

գիտաշխատող

Արդի տնտեսության պայմաններում ծառայությունների ոլորտը բազմաթիվ երկրների համար դարձել է տնտեսությունների գերակա ճյուղերից մեկը: Զբոսաշրջությունը նույնպես համարվում է բարձր եկամտաբեր, զարգացող կարևորագույն ճյուղ, որի դերը տարեցտարի մեծանում է, և նկատելի է նրա ազդեցության աճը երկրների տնտեսությունների վրա:

Զբոսաշրջությունը համարվում է Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից, և որպես բազմադարյա պատմություն և հարուստ մշակույթ ունեցող երկիր՝ Հայաստանը զգալի հաջողություններ է գրանցել զբոսաշրջային այցելությունների տեսանկյունից: Մեր երկիր ժամանած զբոսաշրջիկների թիվը, 2016 թ. տվյալներով, վաղուց հատել է 1 մլնի սահմանը: Մեկ զբոսաշրջիկը Հայաստանում անց է կացնում միջինը 17 օր և ծախսում է միջինը 367 հազ դրամ: Զբոսաշրջիկների ամենամեծ հոսքը դեպի Հայաստան լինում է Ռուսաստանից՝ 21,7 %, Իրանից՝ 17 % և ԱՄՆ-ից՝ 9,6 %: Քիչ չեն զբոսաշրջիկները նաև Գերմանիայից՝ 6,3 %, Ֆրանսիայից՝ 5,3 % և Իտալիայից՝ 3,1 %: Առաջին տասնյակում են նաև Վրաստանը՝ 3,3 %, Մեծ Բրիտանիան՝ 3,1 %, Ուկրաինան՝ 2,3 % և Կանադան՝ 2,1 %²:

Զբոսաշրջությունը Հայաստանում 2018 թ. ընթացքում 2017 թ. համեմատ աճել է 10,5 %-ով, ընդ որում՝ միայն 2018 թ. չորրորդ եռամսյակում Հայաստան այցելությունների թիվը կազմել է 376 573, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է շուրջ 16,8 %-ով³:

Երկար ժամանակ Հայաստանը հայտնի է եղել մշակութային և պատմական տուրիզմի տեսակներով, սակայն այժմ շեշտադրում է արվում նաև արկածային, գյուղական և էթնոտուրիզմին:

Ագրոզբոսաշրջությունը իրենից ներկայացնում է հանգիստ գյուղական շրջանում: Զբոսաշրջիկները որոշ ժամանակ վարում են գյուղական կենսաձև, ծանոթանում են տեղի մշակույթին և ավանդույթներին, մասնակցում են գյուղատնտեսական աշխատանքներին, և գյուղական կենցաղին հաղորդակցվելու

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հիմնարար ուղենիշներ: 5.10 Գյուղատնտեսություն-նպաստել գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնմանը և ագրոտուրիզմի զարգացմանը, էջ 51:

² [WWW.ampop.am](http://www.ampop.am), 2016 թ. Տնտեսություն, տուրիզմը Հայաստանի տնտեսությունում:

³ ԶԵԿՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 1-Ի N 581-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ԵՎ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, Հավելված ՀՀ Կառավարության 2019 թ. փետրվարի 28-ի N141-Ա, որոշման ծրագիր, <http://www.gov.am/files/docs/3188.pdf>, էջ 28:

լավագույն հնարավորություններ են ստեղծվում:

Գյուղատնտեսական զբոսաշրջության զարգացումը գյուղում կյանքի բարելավման, սոցիալական ենթակառուցվածքների զարգացման և մշակութային կյանքի աշխուժացման խթան է: Վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերը հնարավորություն են տալիս ագրոզբոսաշրջությանը Հայաստանի տնտեսության առաջատար ոլորտներից մեկը դառնալու համար:

Հաշվի առնելով ագրոզբոսաշրջության կարևորությունը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը դեռևս 2009 թվականից այն դասել է ոլորտի կարևորագույն ուղղությունների շարքը և առաջարկել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը ծրագրային առաջարկությունների շարքում ներառել նաև այս հարցը:

Հայաստանն ունի աշխարհագրական բարենպաստ դիրք, գեղատեսիլ բնություն, պատմամշակութային հուշարձաններ, հարուստ բուսական աշխարհ, ավանդական հյուրասիրություն և խոհանոց, որոնք կարևոր գործոններ են տուրիզմի զարգացման համար: Ի տարբերություն տուրիզմի մյուս տեսակներին՝ ագրոտուրիզմը համեմատաբար մատչելի է, ինչն այն ավելի գրավիչ է դարձնում զբոսաշրջիկների համար, և նրանք հաճախ ցանկություն են հայտնում այցելել Հայաստանի գյուղական համայնքները: Մեր ժողովրդին բնորոշ են բարեհամբույր վերաբերմունքը և հյուրասիրությունը, որոնք նույնպես կարևոր պայման են զբոսաշրջիկներին գրավելու առումով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի պատմամշակութային կոթողները սփռված են երկրի ամբողջ տարածքում և հիմնականում գտնվում են մարզերում, ապա զբոսաշրջիկներին կարելի է առաջարկել համատեղել պատմամշակութային տուրիզմը և ագրոտուրիզմը:

Այս ոլորտի զարգացումը կնպաստի մարզերի համաչափ զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և գյուղերի սոցիալական խնդիրների լուծմանը: Այն յուրաքանչյուր գյուղացու հնարավորություն է տալիս իր տնտեսությունը զարգացնելու, ընդլայնելու և ավելի բազմազան դարձնելու համար: Ոլորտի զարգացումը մեծ ներդրումներ չի պահանջում, և որպես ներդրող հիմնականում կարող է հանդես գալիս տվյալ բնակավայրի համեմատաբար ունևոր խավր: Նրանք, իրենց բիզնեսի զարգացմանը զուգընթաց, այս գործընթացում կարող են ներգրավել նաև տվյալ գյուղի մյուս բնակիչներին: Օրինակ՝ կարող են, իրենց խոհանոցում զբոսաշրջիկների համար սնունդ պատրաստելու նպատակով, նրանցից գյուղմթերք գնել, ինչը կնպաստի նաև համագյուղացիների տնտեսության զարգացմանը:

Ագրոտուրիզմը իրենից ներկայացնում է ակտիվ հանգիստ, որի ընթացքում զբոսաշրջիկները ծանոթանում են գյուղական տարածքներին, տարածաշրջանի մշակույթին, խոհանոցին, ապրելակերպին և ավանդույթներին: Նրանք հնարավորություն են ստանում ծանոթանալու գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, օգտվում են առողջ սննդամթերքից և ունենում են ոչ սովորական ժամանցի հնարավորություններ:

Ագրոտուրիզմի զարգացմանը նպաստում է նաև այն գործոնը, որ քաղա-

քային բնակչությունն ունի առողջ ապրելակերպի համար բնական միջավայրից և էկոլոգիապես մաքուր սննդամթերքից օգտվելու անհարժեշտություն: Այստեղ կա նաև գյուղից քաղաք տեղափոխված բնակչության կարոտախտի գործոնը:

Վերջին տարիներին զբոսաշրջային ոլորտում ենթակառուցվածքների զարգացումը, մարզերում հյուրանոցային տնտեսությունների կառուցումը, ավտոմայրուղիների բարեկարգումը, ճոպանուղիների գործարկումը նախադրյալներ ստեղծեցին Հայաստանը որպես զբոսաշրջային երկիր դիտարկելու տեսանկյունից: Հաշվի առնելով հատկապես ճոպանուղիների կառուցման, որոշների նորոգման և վերագործարկման հանգամանքը՝ ձմեռային տուրիզմը նախընտրող հատկապես դահուկային սպորտի սիրահար զբոսաշրջիկներին կարելի է առաջարկել նաև այցելել տվյալ տարածաշրջանի գյուղական համայնքներ և ծանոթանալ պատմամշակութային կոթողներին, գյուղաբնակների կենցաղին, ավանդույթներին և խոհանոցին, որն, ինչ խոսք, նաև կնպաստի այդ տարածաշրջանների զարգացմանը:

Ձմեռային զբոսաշրջությունը նախընտրողների համար Հայաստանը շատ հարմար երկիր է: Տուրերը կազմակերպվում են դեպի ամենազեղեցիկ լեռնային շրջաններ՝ Եղեգիս, Թեղենիս, Հատիս, Ծաղկունյաց լեռներ և Դիլիջան ազգային պարկ, Ծաղկաձոր, Ջերմուկ ու Ենոքավան: 2017 թվականին Աշոցքում առաջին անգամ դահուկային վազքի երկօրյա փառատոն անցկացվեց: Սա նշանակում է, որ ագրոտուրիզմը կարելի է կազմակերպել ամբողջ տարվա ընթացքում՝ անկախ եղանակային պայմաններից:

Մշակութային, էկո և ագրոտուրիզմի համակցությունը վերածվում է զբոսաշրջային հետաքրքիր արդյունքի: Տուրիստական գործակալություններից մի քանիսն աշխատում են զբոսաշրջության այդպիսի փաթեթների տրամադրման ուղղությամբ, քանի որ դրա պահանջարկը մեծ է և փոխշահավետ:

ՀՀ-ում այժմ գործում են ագրոտուրիզմում ներգրավված ավելի քան 200 հյուրանոցային տնտեսություն: Բացի հյուրանոցներից մեր երկրում զարգանում է նաև զբոսաշրջային տների ցանցի ձևավորումը: Հյուրանոցների և հյուրատների ստեղծումը նպաստում է տեղի բնակչության աշխատատեղերի ավելացմանը՝ ոչ գյուղատնտեսության զբաղվածության ավելացման առումով:

2013 թ. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ) քայլեր է ձեռնարկել Հայաստանում հյուրատների զարգացման (B&B) ուղղությամբ: Կենտրոնի մասնագետները ընտրել են երեք թիրախային վայր՝ Վայոց ձորի՝ Արենի, Աղավնաձոր համայնքները, Տավուշի մարզի Իջևան քաղաքը և Լոռու մարզի Սանահին, Օձուն, Դսեղ և Հաղպատ համայնքները: Այդ մարզերում կազմակերպվել են հնգօրյա դասընթացներ, որոնց մասնակցել են 28 հյուրատների ներկայացուցիչներ:

Օրինակ՝ Լոռու մարզի Դսեղ գյուղում կա մի հյուրատուն, որի հիմնադիրը տեղի բնակիչ է: Այն հիմնվել է 2006 թ., և տարեցտարի ավելանում է հյուրընկալվող զբոսաշրջիկների քանակը: Սակայն ինչպես նշում է հյուրատան տերը, այստեղ էլ անհրաժեշտ են ներդրումներ՝ բակը ընդլայնելու, ջրավազան կառուցելու, էքսկուրսիաներ կազմակերպելու նպատակով միկրոավտոբուս ձեռք բերելու

համար: Իհարկե, ցանկալի կլիներ՝ այս ոլորտում լինել պետական աջակցություն, օրինակ՝ գրանտներ տրամադրելու տեսքով, քանի որ այսպիսի մարդիկ ստեղծում են աշխատատեղ ոչ միայն իրենց և իրենց ընտանիքի անդամների, այլ, հատկապես տուրիզմի ակտիվ սեգմենտին, նաև համագյուղացիների համար:

Ագրոտուրիզմը հնարավորություն է տալիս գյուղաբնակներին, օգտվելով իրենց բնակավայրի ռեսուրսներից, լինել ինքնագրադված և իրենց ստեղծած բարիքները իրացնել, կլինի դա թարմ գյուղմթերք, պահածոներ և նույնիսկ ձեռքի արհեստագործական աշխատանք:

Գյուղական համայնքներում տուրիզմի զարգացմանը նպաստում են նաև տարբեր ուղղվածությամբ փառատոները, օրինակ՝ Արենիում՝ զինու, Սարդաբապատում՝ տոլմայի, Ախթալայում՝ խորովածի և այլն:

Վայոց ձորն իր բնական և պատմական ժառանգությամբ, մեծաքանակ քարանձավներով, ջրվեժներով, վանքերով, ամրոցներով և հին կամուրջներով Հայաստանի ամենահարուստ մարզերից մեկն է, որտեղ առկա են զբոսաշրջության, ձիարշավի, լեռնային հեծանվավազքի, քարանձավների այցելության, վրանային ճամբարների պայմաններ և հնարավորություններ: Այս ամենը հիանալի երաշխիք է մարզում զբոսաշրջության զարգացման և ընդլայնման համար: Նշենք, որ «Միլենիում» կրթական հետազոտական ասոցիացիան (Երևան) և «Վայուն զարգացման հիմնադրամը» (Լեհաստան) Վայոց ձորի Եղեգնաձորի տարածաշրջանում իրականացնում են «Տուրիզմը՝ որպես տարածաշրջանի զարգացման հնարավորություն» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Լեհաստանի արտաքին գործերի նախարարության կողմից: Դրա իրականացման առաջին փուլում ուսումնական այց է կազմակերպվել Լեհաստան, որի ընթացքում Հայաստանից մեկնած մասնագետներն ու շահագրգիռ անձինք փորձի փոխանակման և ագրոզբոսաշրջության զարգացման հեռանկարային ուղիներին ծանոթանալու հնարավորություն են ստացել¹:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջային ենթակառուցվածքների մեծ մասը կենտրոնացված է մայրաքաղաքում, ինչը չի կարող նպաստել մարզերում ոլորտի զարգացմանը և եկամուտների համաչափ բաշխմանը: Օրինակ՝ հյուրանոցների մեծ մասը, որ ունի բազմաթիվ հնարավորություններ՝ զբոսաշրջիկների պահանջների բավարարման համար, գտնվում է մայրաքաղաքում: Բանկային քարտերի սպասարկումը նույնպես իրականացվում է Երևանում, իսկ մարզերում հիմնականում դրա հնարավորությունը կա մարզկենտրոններում:

Այս մասին նշվում է զբոսաշրջության մրցունակության զեկույցում, որտեղ տուրիզմի ծառայությունների ենթակառուցվածքների ոլորտում Հայաստանը 140 երկրների շարքում զբաղեցրել է 74-րդ հորիզոնականը: Ինչ վերաբերում է ավտոճանապարհներին, ապա կարող ենք ասել, որ վերջին տարիներին զգալի ներդրումներ են կատարվել այս ուղղությամբ, կառուցվել են նոր ճանապարհներ, և վերանորոգվել են հները, սակայն մրցունակության տեսանկյունից վեր-

¹ Սուվարյան Յու., Շահնազարյան Ն. և այլք, Զբոսաշրջության մրցունակությունը և զարգացման ուղղությունները ՀՀ-ում 2012-2013 թթ. ԵՊՏՀ, «Տնտեսագետ», Երևան, 2014, էջ 106-107:

գետնյա տրանսպորտի ենթակառուցվածքով Հայաստանը 60-րդ, ճանապարհների որակի առումով՝ 80-րդ, իսկ համացանցի հասանելիությամբ՝ 68-րդ տեղում է¹:

Հայաստանը ընդգրկված է ագրոտուրիզմի ոլորտում ծառայությունների որակական չափանիշների բարելավման, միասնական չափորոշիչների մշակման CerTour համակարգում: Այստեղ ընդգրկված են մի շարք այլ երկրներ, և այն կիրառվում է Եվրոպայում: Այս ծրագրի նպատակն է խթանել ագրոտուրիզմը՝ միասնական չափորոշիչների և հավաստագրման գործընթացի ներդրմամբ:

CerTour ծրագիրը ներառում է նաև մարդկային կարողությունների զարգացման չափանիշներ, որոնց համապատասխանելու համար գյուղացիական տնտեսությունների հետ անց են կացվում դասընթացներ կարողությունների զարգացման առումով:

«Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» IRTD ծրագրի շրջանակներում Հայաստանի տարածաշրջանում ուսումնասիրվել են 920 գյուղեր, կազմվել է յուրաքանչյուրի համար անձնագիր, որտեղ ներառված են տվյալներ գյուղի բնակչության, բնության, պատմամշակութային կոթողների և այլնի մասին: Այս կազմակերպության միջնորդությամբ ցուցաբերվել է աջակցություն, և կատարվել են ներդրումներ մի շարք գյուղացիական տնտեսություններում՝ ստեղծելով ագրոզբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ: Ծրագրի շրջանակներում Իջևանում, Գավառում, Վայոց ձորում և Գյումրիում ստեղծվել են հետազոտական կենտրոններ:

Բերենք մի քանի օրինակներ, որտեղ IRTD ծրագրի շրջանակներում կատարվել են ներդրումներ. Իջևանի Աչաջուր համայնքում՝ «Դավթյանների գինու բակ» հյուրատունը, որտեղ կան խաղողի այգիներ, և զբոսաշրջիկին առաջարկվում է սպիտակ գինու համտես: Հյուրատնից ոչ շատ հեռու է գտնվում Մակարավանքը: Վայոց ձորի տարածաշրջանի Արենի համայնքում է գտնվում «Ստեփանյանների գինու մառանը», որտեղ առաջարկում են Արենի տեսակի գինու համտես: IRTD ծրագիրը «Gastro yard»-ի շրջանակներում, որն առաջարկում է օգտվել տվյալ տարածաշրջանի խոհանոցից, Արագածոտնի Տեղեր համայնքում զբոսաշրջիկներին առաջարկում է, խոհանոցին ծանոթանալուց բացի, զբաղվել նաև կավագործությամբ և սեփական ձեռքերով որևէ բան պատրաստել: Արշալույս համայնքում գործում է «Khachatur Art School»-ը, որտեղ կա մառան, կատարվում է գինու հյուրասիրություն, բացի դրանից պատրաստում են նաև երաժշտական գործիքներ և նվագում են: Այստեղ գտնվող Բյուրական համայնքում գործում է «Handmade Paper Art Galeri»-ն, որտեղ զբոսաշրջիկներին ցույց են տալիս թուղթ ստանալու արվեստը. զբոսաշրջիկները կարող են ոչ միայն մասնակցել այդ պրոցեսին, այլև հետո կարող են նկարել այդ թղթերի վրա կամ հատուկ սարքերով թղթերի վրա դաջվածքներ կատարել:

«Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» IRTD ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նոր՝ «Start me up» ծրագիրը, որի նպատակն է ագրոտուրիզմը զարգացնել նաև այն գյուղերում, որտեղ տուրիզմն

¹ Jennifer Blanke and Thea Chiesa, „The Travel and Tourism Competitiveness Report 2013: Reducing Barriers to Economic Growth and Job Growth”, World Economic Forum (WEF), Geneva, 2017, p. 101.

ընդհանրապես բացակայում է¹:

Հայաստանում ազրոտուրիզմի զարգացման ընթացքում ծագած խնդիրների լուծման, ենթակառուցվածքների զարգացման, կառավարման արդիական համակարգի ներդրման հարցում կարևորվում է միջազգային փորձի ուսումնասիրությունը: Ինչպես վկայում է միջազգային փորձը, այս ոլորտի զարգացումը հիմնականում կախված է պետության կողմից վարվող զբոսաշրջային քաղաքականության արդյունավետությունից:

Այն երկրներում, որտեղ զբոսաշրջության ոլորտը գտնվում է զարգացման բարձր մակարդակի վրա, և գործող կազմակերպությունները մրցունակ են, հիմնախնդիրները լուծվում են ինքնուրույն: Այդպիսի երկրներում առկա են զբոսաշրջության զարգացած ենթակառուցվածքներ, ապահովագրական, ծառայությունների մատուցման և անվտանգության ապահովման զարգացած համակարգ: Այդպիսի երկիր է համարվում ԱՄՆ-ն:

Որոշ երկրներում կան զբոսաշրջության տեսչություններ, որոնք ունեն լայն լիազորություններ և անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ: Սրանք հիմնականում զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրներն են, որտեղ զբոսաշրջային ենթակառուցվածքները զարգացնելու համար անհրաժեշտ են մեծածավալ ֆինանսական միջոցներ: Դրանք են Եգիպտոսը, Հունաստանը և այլն: Երկրների մեկ այլ խմբում զբոսաշրջության պետական կարգավորման գործառույթն իրականացվում է բազմաֆունկցիոնալ գերատեսչությունների կողմից (Իսպանիայում՝ զբոսաշրջային քաղաքականության հիմնախնդիրներով զբաղվում է Էկոնոմիկայի նախարարությունը, Ֆրանսիայում՝ տնտեսական քաղաքականության նախարարությունը, Իտալիայում՝ արտադրական գործառույթների նախարարությունը)²: Այս մոդելը կիրառվում է Հայաստանում:

Զբոսաշրջիկները հիմնականում ցանկություն են հայտնում այցելել պատմամշակութային կոթողներով հարուստ, յուրօրինակ բնություն և գեղեցիկ ճարտարապետություն ունեցող զարգացած երկրներ: Աշխարհում գրանցված զբոսաշրջիկների 90 %-ից ավելին բաժին է ընկնում ԱՄՆ-ին և Եվրոպային: Օտարերկրյա զբոսաշրջիկների այցելությունների 75 %-ը և դրանից ստացվող արտարժույթի մուտքերի 82 %-ը բաժին է ընկնում 12 երկրների: Դրանք են՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Հոլանդիան, Բելգիան, Իտալիան, Շվեյցարիան, Շվեդիան, Դանիան, Ավստրիան, Իսպանիան և Ճապոնիան³:

Այժմ ներկայացնենք զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումները մի շարք զարգացած երկրներում:

Այս ոլորտում Ֆրանսիան համարվում է առաջատարներից մեկը, և այս երկիրը ներկայացնում է La Franse ասոցիացիան, որը գործում է 1987 թվականից: Ասոցիացիայի ֆինանսավորման 60 %-ը կատարվում է պետական բյուջեից: Երկրում զբոսաշրջության կարգավորման, ներդրումների կառավարման, մի-

¹ «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» IRTD ծրագրի թիմակիցների հանդիպումը ՀՀ տուրօպերատորների հետ: ՄՄԿ-ի հայաստանյան գրասենյակ, 2019 թ., մարտի 27:

² Темный Ю. В., Темная Л. Р., Экономика туризма, М., Финансы и статистика, ИНФРА-М, 2010, с. 17-18.

³ World Travel & Tourism Council. www. Wttc.org.

ջազգային հարաբերությունների և գործարարության հարցերով զբաղվում են տրանսպորտի և հասարակական աշխատանքների նախարարության կազմում գործող զբոսաշրջության վարչությունը և զբոսաշրջության հարցերով պետական քարտուղարությունը:

Ֆրանսիայում ագրոտուրիզմով սկսել են զբաղվել 1960–ական թվականներից: Տարիներ շարունակ հազարավոր զբոսաշրջիկներ մեկնում են Ֆրանսիայի մարզեր՝ բնության գրկում հանգստանալու և նոր տպավորություններ ստանալու ակնկալիքով: Ֆրանսիացի ֆերմերները զբոսաշրջիկներին առաջարկում են՝

- մասնակցել պանրի և գինու պատրասման գործընթացին,
- կերակրել անասուններին,
- սնվել սեփական արտադրության սննդամթերքով,
- զբաղվել ձկնորսությամբ, հավաքել սունկ և հատապտուղներ,
- մասնակցել տեղաբնակների կենցաղին:

Իտալիայում արտադրական գործունեության նախարարության կազմում է գործում զբոսաշրջային գործունեության դեպարտամենտը, որն իրականացնում է տեղեկատվագովազդային, մարքեթինգային գործունեություն:

Իտալիայում գյուղաբնակները իրենց տները և ֆերմաները վերածնափոխեցին՝ դրանք դարձնելով առավել հարմարավետ զբոսաշրջիկների համար: 20-րդ դարի 70-ական թվականներին ստեղծվեցին տնտեսություններ, որոնք, բացի գինու և ձիթապտղի յուղի արտադրությունից, զբաղվում էին նաև տների վարձույթով: 1985 թ. ագրոտուրիզմը պաշտոնապես ընդունվեց Իտալիայում, այն ստանում էր պետական աջակցություն, և որոշ ծրագրերի տրվեցին հատուկ գրանտներ: Երկրում ագրոտուրիզմով զբաղվելու համար ֆերմերները անցնում են 100-ժամյա հատուկ դասընթացներ: Դասընթացների ժամանակ ֆերմերները ստանում են օրենքի, կառավարման, հաշվապահական, սանիտարահիգիենիկ և այլ ստանդարտների իմացություն և այլն: Այսօր իտալական ագրոտուրիզմը արդեն ձևավորված շուկա է: Ամեն տարի մոտ երկու միլիոն մարդ գալիս է գյուղատնտեսական և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, ինչը զգալի շահույթ է տալիս երկրի բյուջեին:

Իսպանիայում զբոսաշրջության ոլորտի կառավարման խնդիրներով զբաղվում է առևտրի, զբոսաշրջության և փոքր բիզնեսի պետական քարտուղարությունը, որը գործում է էկոնոմիկայի նախարարության կազմում: Ագրոտուրիզմը Իսպանիայում ներկայումս զարգանում է արագ տեմպերով, և այս տեսակի հանգստի պահանջարկը ամեն տարի աճում է ինչպես օտարազգի զբոսաշրջիկների, այնպես էլ երկրի բնակիչների շրջանում: Այսպիսի հանգստի պահանջարկի աճի հետ աճում է նաև գյուղացիական տների, վիլլաների, հյուրանոցների, ֆերմաների, ամրոցների, պալատների, մատուռների և նույնիսկ վանքերի սեփականատերերի առաջարկը: Ներկայումս նրանց սեփականատերերը միավորվում են ասոցիացիաներում՝ իրենց առջև խնդիր դնելով գյուղական զբոսաշրջային վայրերի դասակարգումը՝ կախված նրանց կողմից մատուցվող ծառայությունների մակարդակից, և հետագայում վերահսկվում է դրանց համապատասխանությունը հաստատված չափանիշներին:

Գերմանիայում զբոսաշրջության ոլորտի զարգացման խնդիրներով զբաղվում են էկոնոմիկայի նախարարությունը, զբոսաշրջության ազգային կոմիտեն, զբոսաշրջության հարցերով խորհուրդը: Ագրոտուրիզմը Գերմանիայում տարեց-տարի աճ է գրանցում, ինչը զարմանալի չէ: Այս երկիրն ունի գեղեցիկ լանդշաֆտներ, զարգացած գյուղատնտեսություն, կանոնավոր կազմակերպվող տոնավաճառներ, փառատոներ և ազգային տոներ: Ինչպես գիտենք, գերմանացիները գնահատում են կարգ ու կանոնը, ուստի գյուղի բնակիչներին հյուրընկալող համակարգը մտածված է ամենայն մանրամասնությամբ: Նրանք գնահատում են ոչ միայն բնակարանի վիճակը, այլև սննդի որակը և հանգստի «հետաքրքիր» կազմակերպումը: Զբոսաշրջիկները կարող են ոչ միայն բնակվել հյուրատներում, այլ ցանկության դեպքում մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին: Այստեղ մեծ ուշադրություն են դարձնում զբոսաշրջիկի սննդային և հիգիենիկ անվտանգությանը, օրինակ՝ ֆերմերը իրավունք չունի զբոսաշրջիկին վաճառել իր կովի կաթը:

Գյուղական զբոսաշրջության ոլորտում կա գործունեության երկու տեսակ՝ դուստր և ձեռնարկատիրական, ինչն էլ պայմանավորում է նրանց հարկման չափը: Տեղակայման համար մինչև 8 տեղ տրամադրող ֆերմայի գործունեությունը համարվում է դուստր ձեռնարկություն, իսկ ավելի քան 8 տեղ զբաղեցնող՝ ձեռնարկատիրական: Գյուղացիական զբոսաշրջության փորձագետները համարում են, որ Գերմանիայում գյուղացիների մոտ կեսը զբաղվում է զբոսաշրջիկների հյուրընկալմամբ՝ որպես փոքր կոմունալ տնտեսություն, և այդ միջոցով ունեն լրացուցիչ դրամական մուտքեր, իսկ սեփականատերերի մեկ այլ հատվածի համար սա իրական բիզնես գործունեություն է:

Հունաստանը զբոսաշրջային առաջատար երկրներից մեկն է, որտեղ կարևորագույն քայլը Համահունական զբոսաշրջային պալատի ստեղծումն էր: Այն աջակցում է հայրենական արտադրությանը, փոքր և միջին բիզնեսին: Հունաստան ժամանող զբոսաշրջիկներին հետաքրքրում են ոչ միայն պատմամշակութային կոթողները, այլ նաև ագրոտուրիզմը՝ առաջարկելով զբաղվել ակտիվ տուրիզմով, ձկնորսությամբ, որսորդությամբ, կազմակերպվում են սպորտային միջոցառումներ, ինչպես նաև փառատոներ, տոնավաճառներ:

Ստորև աղյուսակում բերված են մի շարք տվյալներ եվրոպական երկրներում զբոսաշրջության վերաբերյալ:

Աղյուսակ

Եվրոպական որոշ երկրների զբոսաշրջության 2017 թ. մի շարք ցուցանիշներ¹

Երկրներ	Ժամանած զբոսաշրջիկների քանակը, մլն մարդ	Զբոսաշրջային մուտքերը, մլրդ ԱՄՆ դոլար
Ֆրանսիա	86,9	69,894
Իտալիա	58,3	44,548
Իսպանիա	81,8	68,437
Գերմանիա	37,5	56,173
Հունաստան	27,2	18,820

¹ Мировой атлас данных Knoem, <https://knoema.com/atlas/France/Tourism-receipts>

Համեմատության համար նշենք, որ ըստ Knoem-ի տվյալների՝ 2017 թ. Հայաստան ժամանողների թիվը կազմել է 1,5 մլն, իսկ զբոսաշրջային մուտքերը կազմել են 1140 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների մեծ մասը հիմնականում նախընտրում է իր հանգիստը կազմակերպել Երևանում, լավագույն դեպքում՝ մեկ օրով մեկնել որևէ մարզ և վերադառնալ: Նրանց դեպի մարզերը ուղղորդելու նպատակով կարելի է քաղաքի հյուրանոցների սպասասարահներում տեղադրել մարզերի պատմամշակութային կոթողների, հյուրատների գովազդային բուկլետներ՝ տպագրված տարբեր լեզուներով:

Ոլորտի զարգացմանը կնպաստի նաև գյուղական բնակավայրերում ժամանցի տարբեր վայրերի ստեղծումը: Օրինակ՝ զբոսաշրջիկներին կարելի է առաջարկել իրենց հարսանյաց արարողությունը կազմակերպել Հայաստանում՝ հայկական ավանդույթներով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոլորտում կատարված յուրաքանչյուր ներդրում հիմնականում դրական արդյունք է ապահովելու և նպաստելու է երկրի ինչպես գյուղացիական, այնպես էլ ընդհանուր տնտեսության զարգացմանը:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԹԱՐՄԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ¹

Ռուզաննա Ալոյան

կրտսեր գիտաշխատող

Ցանկացած երկրում, այդ թվում՝ նաև ՀՀ-ում ագրարային ոլորտը եղել և մնալու է տնտեսության առաջատար ճյուղերից մեկը, քանի որ առանց սովյալ ոլորտի և գյուղի զարգացման դժվար է հասնել հանրապետության ողջ տնտեսության բարելավմանը:

Ելնելով վերջին տարիներին Հայաստանի գյուղատնտեսության մեջ ստեղծված ծանր իրավիճակից և հաշվի առնելով ՀՀ սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վրա ագրարային ոլորտի ունեցած վճռորոշ ազդեցությունը՝ 1991 թ. սկսվեցին այդ ոլորտի տնտեսական բարեփոխումները՝ նպատակ ունենալով այն դարձնել մասնավոր սեփականություն և շուկայական հարաբերություններով կարգավորվող բնագավառ: Արդյունքում հողերի մասնավորեցումն ուղեկցվել է նախկին 859 կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին և միջտնտեսային կազմակերպություններին պատկանող գյուղատնտեսական տեխնիկայի սեփականաշնորհմամբ:

Հողի սեփականաշնորհումից հետո ձևավորվեցին շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, ընդ որում՝ մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատարածք, այդ թվում՝ 1.1 հա վարելահող². դրանք իրենց հերթին բաժանվում են 3-4 հողակտորների, ինչը հնարավորություն չի ընձեռում իրականացնել տնտեսավարում և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառում: Հողի սեփականաշնորհումը չի զուգորդվել մեքենայական հավաքակայանների լիարժեք մասնավորեցմամբ:

Տնտեսությունների փոքր չափերը և ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի բարձր գները թույլ չեն տալիս ֆերմերներին ձեռք բերել սեփական տեխնիկա:

Գյուղատնտեսության զարգացման հիմնարար ուղղություններից մեկը համալիր մեքենայացումն է: Վերջինս ագրարային ոլորտի մրցունակության բարձրացման, գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ավելացման և ճյուղի ներուժի լիարժեք օգտագործման հիմնական գործոններից է:

ՀՀ կառավարության 2019 թ. ծրագրի համաձայն՝ գյուղատնտեսության զարգացման և արդյունավետության բարձրացման գործում առանձնակի կարևորվում է մեքենատրակտորային համակազմի թարմացումը:

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հիմնարար ուղենիշներ: 5.10 Գյուղատնտեսություն-նպատակ գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնմանը և ագրոտուրիզմի զարգացմանը, էջ 51:

² ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգ, ՀՀ կառավարության 03.11.2011 թվականի որոշումը, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=62706>

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական արտադրության սպասարկման կազմակերպման գործընթացն անմխիթար վիճակում է, և տեխնիկական հագեցվածության համակարգը կատարելագործման կարիք ունի:

Լուրջ խնդիրներ են ծառայել գյուղատնտեսության տեխնիկական ապահովման և սպասարկման ծառայությունների բնագավառում: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է: Նորմայով նախատեսված ութ տարվա փոխարեն, օրինակ, տրակտորների 32.8 %-ը շահագործվում է 26-30 տարի, 46.2 %-ը՝ 11-25 տարի, ինչի պատճառով ցածր են սարքինության մակարդակը և արտադրողականությունը, հետևաբար բարձր են շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները: Տվյալները վկայում են, որ տրակտորների միայն 5-6 %-ն է համապատասխանում նորմատիվային շահագործման ժամկետներին (մինչև 10 տարի)¹:

Վերջին 22 տարվա ընթացքում տեխնիկական միջոցների ներմուծման խմբաքանակների կտրուկ կրճատման պատճառով գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի տարիքը մեծացել է, տեխնիկայի գերակշռող մասի համար անցել է ամորտիզացիոն նորմաներով սահմանված ժամանակահատվածը: Բացի ՉԺՀ-ի, Ճապոնիայի և Հնդկաստանի կառավարությունների դրամաշնորհների հաշվին և «Գյուղատնտեսական բարեփոխումներին աջակցության» ԾԻԳ-ի կողմից իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում ներկրված գյուղատնտեսական տեխնիկայից այլ ներկրումները զգալիորեն քիչ են եղել:

Փոքր խմբաքանակով տրակտորներ են ներմուծվել նաև «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի «Զրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում (մատչելի մեխանիզմներով գյուղատնտեսությունում տնտեսվարողներին է տրամադրվել 32 միավոր անվավոր տրակտոր):

Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քայտուղերի գերաճախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում է նորոգման և տեխսպասարկման աշխատանքները:

Երկար տարիներ տեխնիկական նոր միջոցներով գրեթե չհամալրվելու, եղածը բարոյապես և ֆիզիկապես մաշվելու, ժամանակին չնորոգվելու, տեխնիկական խնամքով չապահովվելու հետևանքով աստիճանաբար նվազել է գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակը:

ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին վերջին տարիների տվյալները ներկայացված են աղյուսակում:

¹ «Գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը», ՀՀ կառավարության 04.11.2010 թվականի որոշումը, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=56957>:

ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի վիճակը 2013-2018 թթ.¹

(հունվարի 1-ի դրությամբ)

Հ/հ	Անվանումներ	2013			2014			2015		
		Առկա քանակը, հատ	Որից՝ սարքին վիճակում, հատ	Սարքինության մակարդակը, %	Առկա քանակը, հատ	Որից՝ սարքին վիճակում, հատ	Սարքինության մակարդակը, %	Առկա քանակը, հատ	Որից՝ սարքին վիճակում, հատ	Սարքինության մակարդակը, %
1	Տրակտորներ	14683	11625	79.2	14783	11656	78.8	15025	11862	78.9
2	Բեռնատար ավտոմեքենաներ	15294	11610	75.9	15251	11576	75.9	15063	11383	75.6
3	Հացահատիկահավաք կոմբայններ	1362	1005	73.8	1355	1011	74.6	1356	1007	74.3
4	Տրակտորային կցասայլեր	6075	5284	87.0	6099	5339	87.5	6130	5337	87.1
5	Տրակտորային խոտհնձիչներ	1971	1693	85.9	2030	1798	88.6	2031	1714	84.4
6	Տրակտորային շարքացաններ	347	246	70.9	1856	1619	87.2	405	295	72.8
7	Կերահավաք կոմբայններ	432	364	84.3	376	272	72.3	425	362	85.2
8	Տրակտորային գութաններ	3809	3425	98.9	3843	3385	88.1	3904	3447	88.3
9	Կուլտիվատորներ	2210	1898	85.9	2244	1876	83.6	2279	1926	84.5
10	Հավաքիչ-մամլիչներ	1524	1314	86.2	1575	1356	86.1	1664	1397	84.0

շարունակություն

(հունվարի 1-ի դրությամբ)

Հ/հ	Անվանումներ	2016			2017			2018		
		Առկա քանակը, հատ	Որից՝ սարքին վիճակում, հատ	Սարքինության մակարդակը, %	Առկա քանակը, հատ	Որից՝ սարքին վիճակում, հատ	Սարքինության մակարդակը, %	Առկա քանակը, հատ	Որից՝ սարքին վիճակում, հատ	Սարքինության մակարդակը, %
1	Տրակտորներ	15115	11891	78.7	15239	11960	78.5	15413	12085	78.4
2	Բեռնատար ավտոմեքենաներ	15066	11583	76.9	15049	11509	76.5	15069	11518	76.4
3	Հացահատիկահավաք կոմբայններ	1355	1012	74.7	1358	1031	75.9	1352	1047	77.4
4	Տրակտորային կցասայլեր	6142	5336	86.9	6195	5365	86.6	6214	5379	86.6

¹ Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2013-2018 թթ., Հայաստանի վիճակագրական կոմիտե, Երևան, 2018 թ., 12 էջ:

5	Տրակտորային խոտհնձիչներ	2080	1756	84.4	2112	1772	83.9	2143	1802	84.1
6	Տրակտորային շարքացաններ	1857	1578	85.0	4884	1599	84.9	1899	1636	86.2
7	Կերահավաք կոմբայններ	407	303	74.4	421	308	73.2	428	314	73.4
8	Տրակտորային գութաններ	3949	3461	87.6	3900	3398	87.1	3956	3443	87.0
9	Կուլտիվատորներ	2269	1922	84.0	2318	1949	84.1	2337	1959	83.8
10	Հավաքիչ-մանիչներ	1700	1422	83.6	1738	1484	85.4	1755	1515	86.3

Հայաստանի Հանրապետությունում առկա գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի վերլուծությունը ցույց է տվել, որ տեխնիկական միջոցների միջին սարքինության մակարդակը կազմում է շուրջ 79.0 %: 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում մասնավորապես տրակտորների 78.4, բեռնատար ավտոմեքենաների 76.4, հացահատիկահավաք կոմբայնների 77.4, տրակտորային կցասայլերի 86.6, տրակտորային խոտհնձիչների 84.1, կերահավաք կոմբայնների 73.4, շարքացանների 86.2, գութանների 87 և կուլտիվատորների 83.8 տոկոսն է գտնվում տեխնիկապես սարքին վիճակում:

Նշենք, որ գոյություն ունեցող տեխնիկական միջոցները ֆիզիկապես և բարոյապես մաշված են, և տեխնիկայի հզորությունը չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին: Չնայած 2018 թ. 2016 թ. համեմատ տրակտորների քանակը ավելացել է 298-ով, այնուամենայնիվ օգտագործման աստիճանը նվազել է 3 %-ով, հացահատիկահավաք կոմբայնների քանակը պակասել է 3-ով, իսկ օգտագործման աստիճանը բարձրացել է 2.7 %-ով:

Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացման գործում առկա դժվարությունները հիմնականում պայմանավորված են տեխնիկական շահագործող սուբյեկտների և գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորություններով, ներմուծվող մեքենայացման միջոցների բարձր գներով, գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների բացակայությամբ:

Ներկայումս ՀՀ-ում լիարժեք չի գործում նաև գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման և տեխնիկական սպասարկման համակարգը, ինչի հետևանքով նվազում է դրանց սարքինության մակարդակը:

ՀՀ գյուղատնտեսությունում մինչև հիմա էլ գերակշռող են խորհրդային ժամանակներից մնացած բարոյապես և ֆիզիկապես մաշված մեքենաները, որոնք հիմնականում օգտագործվել են մեծ հողակտորների վրա և այժմ նպատակահարմար չեն փոքր տնտեսություններում արտադրություն կազմակերպելու համար: Տնտեսությունների փոքր չափերի պատճառով սեփական մեքենաներ ունենալը այնքան էլ նպատակահարմար չէ գյուղացիների համար, բացառությամբ երբ մի քանի արտադրողներ համատեղ են օգտագործում գյուղատնտեսական տեխնիկան: Ներկայումս պահանջարկ կա ավելի փոքրածավալ՝ 25-50 ձիաուժ ունեցող տրակտորների և օժանդակ գործիքների (հերկող, ցանող, սրկող,

հնձող տեխնիկայի) համար:

Գաղտնիք չէ, որ շատ ֆերմերներ և գյուղացիական տնտեսություններ չեն կատարում գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգում, քանի որ թանկարժեք պահեստամասեր գնելու համար մշտապես առկա է ֆինանսական միջոցների պակաս: Գյուղացիական տնտեսությունները յուրաքանչյուր տարի շրջանառու միջոցների խիստ կարիք են զգում, իսկ գործող բանկային համակարգի կողմից վարկավորման պահանջները շատ խիստ են:

Հանրապետությունում գոյություն ունեն գյուղատնտեսական տեխնիկայի միջոցների սպասարկումների և նորոգումների բնագավառում ծառայած մի շատ խնդիրներ.


1. գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի ցածր վճարունակության պատճառով նրանց կողմից հիմնականում չեն պահպանվում նորոգումների և տեխնիկական սպասարկումների անցկացման սահմանված պահանջներն ինչպես պարբերականության, այնպես էլ աշխատանքների ամբողջական կատարման առումով,
2. մի շարք գործոններով (սպասարկումների բարձր գներ, ցածր որակ, մասնագիտացված եզակի ընկերությունների հեռավորություն և այլն) պայմանավորված՝ գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերը հիմնականում չեն դիմում տեխնիկական սպասարկումների և նորոգումների գործառույթ իրականացնող տնտեսվարողների, այլ գերադասում են այն կատարել իրենց ուժերով,
3. հանրապետության համայնքներում կազմալուծվել և չեն գործում նախկին տնտեսությունների նորոգման արհեստանոցները, և չեն ձևավորվում նման գործառույթ ունեցող գործող կառույցներ,
4. տեխնիկական միջոցների ծառայության ժամկետներն անցել են սահմանված նորմաները, նորոգումների ու տեխնիկական սպասարկումների ծախսերը զգալիորեն բարձր են, իսկ հետևանքը այդ աշխատանքների ցածր արդյունավետությունն է:

Այդ վիճակի բարելավման համար գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործումը պայմաններ կստեղծի ձևավորելու գործուն մեխանիզմ գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների իրականացման համար: Ուստի այս բնագավառի զարգացման համար խիստ կարևոր է մեքենասարքավորումների վարձակալման համակարգի, մասնավորապես՝ լիզինգային հարաբերությունների ձևավորումը: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը բարենպաստ ներդրումային դաշտ ունեցող երկիր չէ, ինչի համար պահանջվում է ավելի ճկուն և համակողմանի մոտեցում ինչպես միջոցների ձեռքբերման, այնպես էլ դրանց արմատավորման հարցում, ուստի ամենարժեքներն էլ և ամենաերաշխավորված մեթոդը համարվում է լիզինգը, որն արտադրողներին հնարավորություն է տալիս ձեռք բերել նոր սարքավորումներ և առաջադիմական տեխնոլոգիաներ առանց դրանց արժեքներին համապատասխան դրամական միջոցների առկայության:

Լիզինգը հնարավորություն կընձեռնի անհրաժեշտ սարքավորումներ ստա-

նալ՝ առանց զգալի դրամական միջոցների միանվագ ծախսման, որն անխուսափելի է սովորական գնման ժամանակ¹:

Լիզինգի կազմակերպման առավել բնորոշ նկարագիրը պատկերված է գծապատկերում:



Գծապատկեր. Լիզինգային գործարքի կառուցվածքը

Մեքենատրակտորային համակազմի թարմացման ուղղությամբ իրականացվող արդյունավետ և առաջադիմական ուղի պետք է համարել պետական աջակցությունը: Նշենք, որ պետությունը նախատեսում է «Ագրոսպասարկում» ընկերությանը բյուջետային երաշխիք 2.100.000 դոլար գումար տրամադրել՝ տրակտորներ և հարակից գյուղատնտեսական սարքավորումներ գնելու նպատակով, որով «Ագրոսպասարկում» ընկերությունը կնքված պայմանագրի հիման վրա գյուղատնտեսական մեքենաներ ձեռք կբերի Մինսկի տրակտորների գործարանից, «Բոբրույսկ ագրոմաշ» և «Լիդսելմաշ» ընկերություններից:

Կներկրվեն 100 հատ 82 ձիաուժ ունեցող տրակտորներ (1 տրակտորի գինը մոտավորապես 15 հազ. 150 դոլար է), 20 հատ հավաքիչ-մամլիչներ (1 միավորի գինը 9230 դոլար է), 20 հատ կցովի և կախովի կուլտիվատորներ (1 միավորի գինը 1095 դոլար է), 40 հատ երեքխոփանի գուրթաններ (1 հատի արժեքը 836 դոլար է), 15 հատ խոտհնձիչներ (1 հատի արժեքը 775 դոլար է), 10 հատ հացահատիկային շարքացաններ (1 հատի արժեքը 4986 դոլար է): Միայն ներկրման համար կպահանջվի 240 հազ. դոլար²:

Բարձրացել են գյուղտեխնիկայի շուկայական գները: Դեռևս չի կիրառվում էժան և օգտագործված, սակայն շահագործման պիտանի գյուղտեխնիկայի ներմուծումը արտերկրից, ինչպես, օրինակ, ավտոմեքենաների դեպքում:

Նոր տեխնիկայի գնի բարձրացման պայմաններում առաջնային պլան է մղվում երկրորդային տեխնիկայի շուկան, քանի որ առաջատար երկրների ֆերմերների հիմնական մասը տրակտորների և գյուղատնտեսական տեխնիկայի զգալի մասը ձեռք է բերում հենց տեխնիկայի երկրորդային շուկայից: Օրինակ՝

¹ Գ. Կիրակոսյան, Հ. Ղուշյան, Ի. Տիգրանյան, «Տնտեսագիտական բացատրական բառարան», Երևան 1999, էջ 176:

² http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20130614_6&flag=am

ԱՄՆ-ի տրակտորների երկրորդային շուկան երեք անգամ գերազանցում է նոր մեքենաների շուկային: Դրանից բացի՝ օգտագործված տեխնիկան հաճախ մասնատվում և իրացվում է որպես պահեստամասեր: Արևմտաեվրոպական երկրների ֆերմերները գյուղատնտեսական աշխատանքների շուրջ 50 %-ն իրականացնում են երկրորդային շուկայից ձեռք բերվող տեխնիկայի միջոցով: Օգտագործված տեխնիկայի հիմնական իրացնողները միջնորդային կազմակերպություններն են, որոնք հնարավորություն ունեն տեխնիկան որակապես նախապատրաստել իրացման համար, իրականացնել որակյալ տեխնիկական սպասարկումներ¹:

ՀՀ-ում տեխնիկական միջոցների համալրումը և նորացումը իրականացվում են չափազանց դանդաղ տեմպերով, ինչը խոչընդոտվում է մի շարք գործոններով, մասնավորապես՝

- գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության պատճառով սեփական միջոցներով տեխնիկական միջոցների ձեռքբերման անհնարինությունը,
- դրամաշնորհային ծրագրերով հանրապետություն ներկրվող տեխնիկական միջոցների փոքր խմբաքանակները (տարեկան 50-100 միավոր),
- տեխնիկական միջոցների մատակարարման մատչելի մեխանիզմների (լիզինգ, ապրանքային վարկեր) կիրառման գրեթե բացակայությունը²:

Ստեղծված իրավիճակում հանրապետության գյուղատնտեսության բնագավառում տեխնիկական քաղաքականության հիմնական ուղղությունները կարող են հանդիսանալ՝

- տարածաշրջանների բնակլիմայական պայմանների առանձնահատկություններից և մշակահողերի մեծությունից ելնելով՝ մշակել գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ առաջադիմական տեխնոլոգիաների և մեքենասարքավորումների նախագծեր, որ հնարավորություն կընձեռեն գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին ստանալ համեմատաբար էժան և մրցունակ արտադրատեսակներ,
- պետական հովանավորչություն կիրառել անհրաժեշտ քանակի գյուղատնտեսական մեքենաներով ապահովման գործընթացներում,
- խթանել օտարերկրյա ներդրողներին գյուղատնտեսական մեքենաներ ու սարքավորումներ արտադրող համատեղ կազմակերպությունների ստեղծման նպատակով:

Այսպիսով՝ ՀՀ գյուղատնտեսությունում մեքենատրակտորային հավաքակազմի թարմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումներն են՝

1. մատչելի պայմաններով տեխնիկական միջոցների ներմուծման նպատակով գյուղատնտեսական տեխնիկա արտադրող, մատակարարող, ինչպես նաև ֆինանսական ընկերությունների հետ պետական մակարդակով բանակցությունների վարում և պետական երաշխիքների տրամադրմամբ տեխնիկայի ներմուծման հնարավորությունների ստեղծում:

¹ <http://bargu.by/3356-organizaciya-vtorichnogo-rynka-selskohozyaystvennoy-tehniki.html>

² Ծպնեցյան Հ. Ս., Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում: Երևան, հեղինակային հրատարակություն, 2005 թ., էջ 53-54.

2. Դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման ակնկալիքով տարբեր երկրների համար հայտերի մշակում, նախապատրաստում, ներկայացում և հետևողական բանակցությունների վարում:
3. Լիզինգային մեխանիզմների կիրառման հնարավորությունների ընդլայնում: Մասնավորապես՝
 - ստեղծել լիզինգային գործունեության ծավալման բարենպաստ պայմաններ, որոնք կհանգեցնեն լիզինգային ընկերությունների թվի ավելացմանը, նրանց գործունեության շրջանակների ընդլայնմանը, ինչպես նաև օտարերկրյա լիզինգային ընկերությունների մուտքի ապահովմանը տեղական շուկա,
 - ՀՀ վարկային շուկայում զարգացնել լիզինգային գործառնությունները, որոնք շատ երկրներում դարձել են ներդրումային քաղաքականության կարևորագույն բաղկացուցիչ,
 - լիզինգի վերաբերյալ օրենսդրական ակտերի ընդունում,
 - լիզինգային գործարքներն ազատել ավելացված արժեքի հարկից, շահութահարկից (ֆինանսական լիզինգի ժամանակ առաջին երեք տարվա ընթացքում):
4. Ավելացնել վարկային ծրագրերին մասնակցող բանկերի թիվը: Գյուղտեխնիկայի ձեռքբերման համար տրամադրվող վարկերի գծով կիրառել մի մեխանիզմ, որի դեպքում այդ տրամադրվող գումարը կտրվի ոչ թե անմիջապես ֆերմերին, այլ կփոխանցվի գյուղատնտեսական տեխնիկա արտադրող կամ վաճառող կազմակերպությանը: Այս մեխանիզմը հնարավորություն կտա տրամադրվող վարկերը դարձնել ավելի նպատակային և ապահովել հնարավորինս մեծ արդյունք (նշենք, որ այսօր ՀՀ-ում տրամադրվող գյուղատնտեսական վարկերի մի մասը նպատակային չի օգտագործվում):
5. Անհրաժեշտ է հիմնավորապես համալրել կամ փոխել նորոգման արհեստանոցների հաստոցների կազմն ու անվանացանկը, արհեստանոցները ապահովել ինժեներատեխնիկական անձնակազմով և նորոգման մասնագետներով: Նպատակահարմար է հանրապետության մարզային կենտրոններում ունենալ մեքենատրակտորային համակազմի վերականգման ու հիմնական նորոգման կենտրոնական արհեստանոցներ, իսկ դրանք էլ, իրենց հերթին, մարզի տարածաշրջանում պետք է ունենան ընթացիկ նորոգման օժանդակ (դուստր) ձեռնարկություններ: Խոշոր գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում նպատակահարմար է ունենալ մեքենատրակտորային համակազմի սպասարկման կետեր:
6. Անհրաժեշտ է հանրապետությունում ունենալ ոչ մեծ գործարան՝ ներկայումս չգործող մեխանիկական որևէ գործարանի հենքի վրա:
7. ՀՀ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների երկրորդային շուկայի զարգացումը:
8. Դիմել ԿԳ նախարարությանը՝ որակյալ մասնագետներ ունենալու նպատակով մարզերում վերականգնելու նախկին գործող պրոֆտեխնիկական հաստատությունները:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արմինե Զախարյան

տնտեսագիտության թեկնածու

Ժամանակակից տնտեսական պայմաններում պետությունը, համարվելով բաժնետոմսերի խոշոր փաթեթների սեփականատեր, հանդես է գալիս որպես տնտեսավարող սուբյեկտ, որի նպատակն է ինչպես պետական սեփականության արդյունավետ կառավարումը, այնպես էլ ընդհանուր ներդաշնակ ձեռնարկատիրական միջավայրի ստեղծումը: Պետական կապիտալի մասնակցության և կառավարման վրա ազդելու չափանիշների տեսանկյունից կարելի է առանձնացնել երեք տեսակի բաժնետիրական ընկերություններ¹.

- **100 % պետությանը պատկանող կապիտալով ԲԸ-ներ**, որոնց միակ բաժնետերը պետությունն է, և նրա կառավարչական որոշումները չեն սահմանափակվում մյուս բաժնետերերի կողմից: Այս տեսանկյունից այդ ԲԸ-ների և պետական ձեռնարկությունների միջև տարբերություն չկա:

- **ԲԸ-ներ, որոնցում բաժնետոմսերի հսկիչ ծրարը կամ «ոսկե» բաժնետոմսը պատկանում է պետությանը:** Այս տեսակի ԲԸ-ներն ավելի հեռանկարային են, քան ՊԲԸ-ները: Բաժնետոմսերի հսկիչ ծրարը պետությանը հնարավորություն է տալիս սեփականատիրոջ իրավունքներն իրականացնել ԲԸ կառավարման մարմիններում (բաժնետերերի ընդհանուր ժողով, ընկերության խորհուրդ) իր ներկայացուցիչների միջոցով, քանի որ ԲԸ խորհրդի անդամների առնվազն 51 %-ը պետք է լինեն պետության ներկայացուցիչները: Բաժնետիրացված ձեռնարկության կառավարման վրա ավելի պակաս ազդեցություն ունի «ոսկե» բաժնետոմսը: Այն կառավարությանը ոչ մի իրավունք չի տալիս մասնակցելու ձեռնարկության ղեկավարման կամ շահույթների բաշխման գործում, սակայն հնարավորություն է տալիս ընկերության կարևորագույն հարցերի վերաբերյալ բաժնետերերի կողմից որոշում ընդունելու դեպքում դնել արգելք: «Ոսկե» բաժնետոմսը լուծում է հետևյալ խնդիրները.

- պետության կողմից ընկերության կառավարման լծակների պահպանում,
 - մասնավորեցվող բաժնետիրական ընկերություններում օտարվող բաժնեմասի մեծացման արդյունքում պետական բյուջեի մուտքերի ավելացում,
 - մասնավորեցման ժամանակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ ներդրումային հետաքրքրության ավելացում:
- «Ոսկե» բաժնետոմսը հանդիսանում է պետության քաղաքական և հասարա-

¹ Մարկոսյան Ա. Խ., Պետական ձեռնարկությունների ապապետականացման կառավարում. մեթոդաբանություն, ռազմավարություն և արդյունքներ, Ե., «Լույս», 1997թ., էջ 240:

կական շահերի պաշտպանության գործիք և կարող է մարվել բաժնետիրոջ հատուկ պահանջով:

• **ԲԸ-ներ, որոնցում պետության բաժնետոմսերը հսկիչ ծրար չեն ձևավորում:** Այդ ընկերություններում պետության ներկայացուցիչը սովորաբար խոշոր ներդրողներից մեկն է և իր գործունեությամբ ազդում է ընկերությունում ընդունվող որոշումների վրա՝ կազմելով «խումբ» մյուս ներդրողների հետ: Այսինքն՝ չտիրապետելով հսկիչ ծրարին, պետության ներկայացուցիչը թեև ԲԸ-ին չի կարող թելադրել իր կամքը, սակայն շատ դեպքերում կարող է որոշիչ ազդեցություն ունենալ բաժնետերերի ժողովի կողմից ընդունվող որոշումների վրա:

Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից մշակված «Պետական ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքների»¹

- պետական ընկերությունների իրավական և նորմատիվ հիմքերը պետք է ապահովեն պետական և մասնավոր հատվածի ընկերությունների միջև շուկայական մրցակցության հավասար պայմաններ:
- Պետությունը պետք է գործի որպես իրազեկ և ակտիվ սեփականատեր և մշակի սեփականության իրավունքի իրացման հստակ և շարունակական քաղաքականություն:
- Պետությունը և պետական ընկերությունները պետք է ճանաչեն բոլոր բաժնետերերի իրավունքները:
- Պետության քաղաքականությունը պետք է ամբողջությամբ ճանաչի պետական ընկերությունների պարտավորությունները բոլոր շահագրգիռ կողմերի հանդեպ:
- Պետական ընկերությունները պետք է պահպանեն թափանցիկության անհրաժեշտ մակարդակ:
- Պետական ընկերությունների տնօրենների խորհուրդները պետք է օժտված լինեն անհրաժեշտ իշխանությամբ, լիազորություններով և օբյեկտիվությամբ՝ կառավարիչների գործունեության ռազմավարական կառավարման և վերահսկողության գործառույթի իրականացման համար:

Ինչպես հայտնի է, պետական ընկերությունները մասնավոր ընկերությունների հետ միասին հանդիսանում են կայուն արդյունաբերական զարգացման կարևորագույն գործոններ: Սեփականության այլ ձևերի տնտեսվարող սուբյեկտներից պետական ընկերությունները տարբերվում են նրանով, որ վերահսկողության տեսանկյունից բոլոր պետական ընկերությունները այս կամ այն չափով վերահսկվում են կառավարության կողմից: Պետական ընկերությունները հետապնդում են ոչ միայն առևտրային նպատակներ, այլև ոչ առևտրային՝ ազգաբնակչության զբաղվածությունը, սոցիալական ոլորտի ֆինանսավորումը, արդյունաբերության ցածր շահութաբեր և նախապես վնասաբեր (սակայն սոցիալապես կարևոր) ճյուղերում գործունեությունը և այլն:

¹ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից մշակված «Պետական ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքները», <http://www.oecd.org/daf/ca/corporategovernanceofstate-ownedenterprises/45885495.pdf>

Համաշխարհային տնտեսական փորձը վկայում է, որ պետական ընկերությունները շահույթի ստացման հարցում ոչնչով չեն տարբերվում սեփականության այլ ձևեր ունեցող ընկերություններից:


Շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տնտեսվարող սուբյեկտները ձգտում են հնարավոր նվազագույն ծախսերով ստանալ առավելագույն շահույթ և խուսափել հնարավոր վնասներից: Գոյություն ունեն տնտեսական գործունեության ոլորտներ, որտեղ կապիտալի վերադարձի ժամանակահատվածը բավականին երկար է, ներդրումների ծավալը մեծ է, սոցիալականացման մակարդակը բարձր է, և տնտեսական արդյունավետությունն ակներև չէ, ինչը, ընդհանուր առմամբ, կարող է բերել վնասների: Մասնավոր ընկերությունը չի ցանկանում աշխատել այսպիսի ոլորտներում, քանի որ նրա համար կարևոր և միակ չափանիշն է շուկայական գերիշխող դիրքերի և տնտեսական արդյունավետության ապահովումը: Այսինքն՝ գոյություն ունեն տնտեսական ճյուղեր և ուղղություններ, որտեղ մասնավոր ընկերությունը պարզապես չի մտնի, չնայած որ այս ոլորտները և նրանց արտադրանքը կենսապես կարևոր են հասարակության համար: Տվյալ իրավիճակում առաջացող հիմնախնդիրները լուծում են պետական ընկերությունները:

Պետական ընկերությունները սովորաբար «կրում են» մեծ սոցիալական բեռ, որպես կանոն՝ ունեն ցածր տնտեսական արդյունավետություն և միաժամանակ զբաղեցնում են կենտրոնական դիրքեր ազգային տնտեսությունում: Բացի այդ, պետական ընկերությունները սովորաբար գտնվում են ռեսուրսների տեղաբաշխման վայրերում, քաղաքական և վարչական կենտրոններում, «զգայուն» (օրինակ՝ սահմանամերձ) գոտիներում, որպեսզի կառավարությանը հարմար լինի իրականացնել իր մակրոկառավարման գործառնությունը: Պետական ընկերությունները, զբաղվելով տնտեսական գործունեությամբ, միաժամանակ նաև պետք է իրենց վրա վերցնեն կառավարության վարչական գործառնությունների մի մասը և նպաստեն մակրոտնտեսական կարգավորման քաղաքականության հաջող իրականացմանը: Պետական ընկերությունների նպատակները բազմաբնույթ են և կոչված են լուծելու ազգաբնակչության հնարավորինս բարձր կենսամակարդակի ապահովման խնդիրը: Պետական ընկերությունը ազգային տնտեսության սուբյեկտ է և կառավարության կողմից մակրոկարգավորման իրականացման հիմնական միջոց: Դրանք սոցիալական պատասխանատվություն են կրում ինչպես իրենց ներսում, այնպես էլ նրանից դուրս (կրթություն, առողջապահություն, շրջակա միջավայր, բնակարանաշինություն, հանգիստ, ժամանց և այլն):

Պետական ընկերությունների տնտեսական գործունեության կառավարման գործընթացում միաժամանակ կարևորվում են և՛ սոցիալական արդարությունը, և՛ տնտեսական արդյունավետությունը, որոնց միաժամանակյա ապահովումը բավականին բարդ գործ է:

Նշանակալի է պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների դերը տնտեսության մեջ: Ստորև բերված գծապատկեր 1-ի տվյալները պատկերացում են տալիս պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառ-

ված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակի վերաբերյալ:




Գծապատկեր 1. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը (1998-2018 թթ.)¹

Գծապատկեր 1-ից ակներև է, որ 1998-2018 թթ. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակը նվազել է 700-ով և կազմել 154, ինչը արդյունք է ինչպես ընկերությունների մասնավորեցման, այնպես էլ նրանց սնանկացման և լուծարման: Լուծարվող ընկերությունների մի մասը երկու անգամ մասնավորեցման ներկայացված և գնորդների մոտ հետաքրքրություն չառաջացրածներն են, իսկ մյուս մասը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով չնախատեսված իրավական կարգավիճակ ունեցող, չաշխատող, ֆինանսատնտեսական վատ ցուցանիշներ ունեցող կամ գործունեության հեռանկարներ չունեցող ընկերություններ են:

Ստորև բերված գծապատկեր 2-ը տվյալներ է պարունակում մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:


¹ ՀՀ պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 1998-2018 թթ. տարեկան արդյունքներով ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների և վերլուծության (մոնիտորինգի) վերաբերյալ ամփոփ հաշվետվություն, <https://www.stateproperty.am/page/48>



Գծապատկեր 2. Մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված կազմակերպությունների թիվը (2001-2018 թթ.)¹

2018 թ. 2001 թ. համեմատությամբ մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված առևտրային կազմակերպությունների թիվն ավելացել է 387-ով և կազմել 423: Ինչ խոսք, լուծարված ընկերությունների թվաքանակի ավելացումը բացասական երևույթ է, սակայն եթե այն տեղի է ունենում շուկայի սանիտարական գործառույթի գործողության հետևանքով, ապա դա կարելի է համարել դրական:

Այժմ անդրադառնանք պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների թվաքանակին (տե՛ս գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեզիստրում գրանցված պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների քանակն՝ ըստ պետության մասնակցության չափի (1994-2018 թթ.)²

Տվյալները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության պետական ռեզիստրում գրանցված պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրա-

¹ Պետական գույքի կառավարման կոմիտեի 2001-2018 թթ. գործունեության հաշվետվություն, <https://www.stateproperty.am/page/48>

² Պետական գույքի կառավարման կոմիտեի պաշտոնական կայքի տվյալներով, <https://www.stateproperty.am/page/48>

կան ընկերությունների թվաքանակում հիմնականում գերակշռում են ամբողջությամբ պետական (ՊԲ=100 %) և 75 % ու ավելի բաժնեմասով (75 %<ՊԲ<100 %) պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունները: Դա կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը նպատակ ունի Հայաստանի տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի հսկիչ ծրարը «պահել իր ձեռքում», ինչը կառավարության համար ամուր լծակներ է ստեղծում այդ ոլորտները կարգավորելու և կառավարության որդեգրած քաղաքականությունը կյանքի կոչելու համար:

Այժմ անդրադառնանք նաև պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեությանը ստորև բերված աղյուսակ 1-ի միջոցով:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում 50 % և ավելի պետական բաժնետոմսերով ընկերությունների բնութագիրը (2015-2018 թթ.)¹

h/h	Անվանումը	2015	2016	2017	2018
1.	Մոնիտորինգի ենթարկված ընկերությունների թիվը	194	189	142	148
2.	Շահույթով աշխատած ընկերությունների թիվը	154	150	117	114
3.	Վնասով աշխատած ընկերությունների թիվը	34	33	21	30
4.	Շահույթ կամ վնաս չձևավորած ընկերությունների թիվը	6	6	4	4
5.	Շահույթի ծավալը	8 947800000	2 466273000	5434805100	10944714500
6.	Վնասի ծավալը	10 900633000	12178826000	14456198700	8319775300
7.	Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	203 879466000	171 469 778000	99948660700	186628287500
8.	Ընդամենը ընթացիկ ակտիվներ	198 459 111000	155 253 646000	476354044400	200726200000
9.	Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	194 295 021000	171937 159000	161401202300	64200142000
10.	Աշխատողների քանակը	25 605	24 688	22 113	22 914
11.	ՀՀ պետական բյուջե շահութաբաժիններ վճարած ընկերությունների թիվը	125	160	-	-

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից իրականացված մոնիտորինգի արդյունք-

¹ ՀՀ պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2015-2018 թթ. տարեկան արդյունքներով ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների և վերլուծության (մոնիտորինգի) վերաբերյալ ամփոփ հաշվետվություն, <https://www.stateproperty.am/page/48>

ներին համապատասխան՝ 2018 թ. 2015 թ. համեմատությամբ շահույթով աշխատած ընկերությունների թիվը նվազել է 40-ով, վնասով աշխատած ընկերությունների թիվը՝ 4-ով, շահույթ կամ վնաս չձևավորած ընկերությունների թիվը՝ 2-ով, ընկերությունների շահույթի ծավալն ավելացել է 1 996 914 500 դրամով, վնասի ծավալը նվազել է 2 580 857 700 դրամով, ընթացիկ պարտավորությունները նվազել են 17 251 178 500 դրամով, ընթացիկ ակտիվներն ավելացել են 2 267 089 000 դրամով, աշխատողների քանակը նվազել է 2691-ով: 01.01.2017 թ. դրությամբ ՀՀ պետական բյուջե շահութաբաժիններ են վճարել 160 ընկերություն՝ 1 440 815 000 դրամի չափով: Հասկանալի է, որ նշված բոլոր ցուցանիշների բարելավումը լուրջ խնդիր է ինչպես պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների, այնպես էլ ողջ հասարակության համար:


Պետական ընկերությունների շահութաբերությունը, որպես կանոն, ցածր է մասնավորներից: Շահույթը չի հանդիսանում պետական ընկերությունների գործունեության առաջնային նպատակը, իսկ վնասները փոխհատուցվում են բյուջեից: Այդ պատճառով պետական հատվածը զարգացած երկրներում դարձել է էժան ծառայությունների մատակարարը, մասնավորապես՝ տրանսպորտային, փոստային, էլեկտրաէներգիայի և հումքի՝ նվազեցնելով ծախսերը մասնավոր հատվածում: Նրան է պատկանում տնտեսությունում կայունացնող դերը՝ գնաճին հակազդելու, տնտեսական միջավայրում մրցակցության խթանման և համաշխարհային շուկայում ազգային արտադրանքի մրցունակության համար պայմանների ստեղծման միջոցով¹:

Այժմ ներկայացնենք պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեության վիճակը 2018 թ.՝ ըստ ընկերությունների թվաքանակի (տե՛ս գծապատկեր 4):

Տվյալները վկայում են, որ 2018 թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից մոնիտորինգի ենթարկած 148 ընկերություններից 114-ը (77.02 %) աշխատել է շահույթով, 30-ը (20.28 %)՝ վնասով, իսկ 4 ընկերություն (2.7 %) շահույթ կամ վնաս չի ձևավորել:

Հայաստանում պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացումը մեծապես պայմանավորված է նրանց գործունեության վերապրոֆիլավորմամբ, տեխնոլոգիական արտադրությունների կազմակերպմամբ, գործունեության արդիականացմամբ, ինչպես նաև թողարկվող տեխնոլոգիական արտադրանքի ռացիոնալ օգտագործմամբ: Վերջինս հատկապես հրատապ խնդիր է ռազմաարդյունաբերության, թեթև արդյունաբերության, քիմիական արդյունաբերության, բնապահպանության ու ընդերքի օգտագործման ոլորտներում, որոնք ունեն զարգացման առաջնահերթ կարիք և հնարավորություն են ընձեռում առավել արդյունավետ կերպով իրագործել պետական կառավարման գործառույթը:

¹ В. Дасковский, В. Киселев, О мерах и формах государственного участия, Экономист, N 8, 2011, с. 36.



■ արական և շահույթով ■ արական և վնասով ■ շահույթ/վնաս/չեն ձևավորել


Գծապատկեր 4. Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեության վիճակը 2018 թ.¹

Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների ներդրումային և ինտելեկտուալ գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության ակտիվացումը մեծապես պայմանավորված են նաև կորպորատիվ կառավարման մշակույթի առկայությամբ և, հատկապես, բաժնետերերի իրավունքների պաշտպանությամբ: Ժամանակակից աշխարհում ներդրումային գործունեություն իրականացնելու համար ներդրողները մեծ ուշադրություն են դարձնում տվյալ երկրում գործող ընկերությունների ֆինանսական թափանցիկության ապահովման և կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանման հարցերին²: Ներդրումային որոշումների կայացման համար կորպորատիվ կառավարման զարգացած մշակույթի և գործարարության թափանցիկ ֆինանսական համակարգի առկայությունը դառնում է վճռորոշ գործոն: Հետևաբար ՀՀ ընկերությունները մեծ ուշադրություն պետք է արժանացնեն կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանն ու գործունեության թափանցիկության ապահովմանը:

Ակնհայտ է, որ պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում կորպորատիվ կառավարման պատշաճ մակարդակի ապահովումը մեծապես կարող է նպաստել բաժնետիրական կապիտալի ներգրավման գործընթացի դյուրինացմանը՝ հատկապես արժեթղթերի շուկայի միջոցով: Վերջինս կարող է հանգեցնել նաև Հայաստանի ֆոնդային բորսայի կապիտալիզացիայի մակարդակի բարձրացմանը և հետագա զարգացմանը: Հայաստանի ֆոնդային բորսայի կապիտալիզացման ցուցանիշը 2008-2018 թթ. ընթացքում որոշակիորեն աճել է, և այդ աճը հատկապես ինտենսիվ է եղել 2013-2018 թթ. ընթացքում (գծապատկեր 5):


¹ ՀՀ պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2018 թ. տարեկան արդյունքներով ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների և վերլուծության (մոնիտորինգի) վերաբերյալ ամփոփ հաշվետվություն, <https://www.stateproperty.am/page/48>

² Евдокимова Л. О., Направления развития менеджмента корпоративных структур России // Сб. научных трудов Института экономики и права Российской академии управления. СПб, 2007, с. 175-177.



Գծապատկեր 5. ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացումը 2008-2018 թթ. ընթացքում¹

Ինչպես տեսնում ենք, 2018 թ. 2008 թ. համեմատությամբ Հայաստանի ֆոնդային բորսայի կապիտալացման ցուցանիշն ավելացել է 91 749 402 514 դրամով (կամ 1,7 անգամ): Նկատենք, որ ՀՖԲ-ի կապիտալացման ցուցանիշն ինտենսիվորեն աճել է 2012-2018 թթ. ընթացքում, ինչը կարելի է համարել դրական: Միաժամանակ նշենք, որ բաժնետոմսերի շուկայի զարգացման վրա ազդում է ոչ թե ճգնաժամը, այլ միանգամայն այլ գործոններ²: Ասվածը հիմնավորելու համար նշենք, որ բաժնետոմսերով իրականացված գործարքների ծավալների տոկոսային հարաբերությունն ընդհանուր գործարքների ծավալում 2018 թ. կազմել է ընդամենը 2.68 %: Ինչ վերաբերում է գործարքների ծավալի և շուկայի կապիտալացման հարաբերակցություններին համախառն ներքին արդյունքին (ՀՆԱ), ապա նրանք նույնպես փոքր-ինչ ավելացել են նախորդ տարիների համեմատ, ինչի մասին է վկայում գծապատկեր 6-ը:



Գծապատկեր 6. Գործարքների ծավալի և շուկայի կապիտալացման հարաբերակցությունները համախառն ներքին արդյունքին (ՀՆԱ)՝ 2008-2018 թթ. ընթացքում³

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի ֆոնդային բորսայի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա: <https://amx.am/am/9/trading/13/monthly-bulletins>

² Меликян А., Фондовый рынок особо не пострадал, Экономическая газета “Деловой экспресс”, 5-12 февраля, 2010, N 04 (854), с. 4.

³ Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ Հայաստանի ֆոնդային բորսայի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա: <https://amx.am/am/9/trading/13/monthly-bulletins>

Ինչպես վկայում են գծապատկեր 6-ի տվյալները՝ բերված երկու ցուցանիշն էլ մի փոքր ավելացել են, սակայն շարունակում են փոքր կամ աննշան մնալ: Համեմատության համար նշենք, որ զարգացած երկրներում ՀՆԱ-ի և շուկայի կապիտալացման ցուցանիշները համադրելի մեծություններ են: Այս ամենը խոսում է այն մասին, որ արժեթղթերի շուկան շարունակում է մնալ թերզարգացած, և ավելին, այն պարզապես գրեթե կապ չունի հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների հետ: Բորսայական գործարքների տոկոսի բարձրացումը նշանակում է, որ բաժնետոմսերով իրականացված գործարքների մեծ մասը դարձել է ավելի վերահսկելի և թափանցիկ, ինչի հետևանքով բարձրացել է արդար գնագոյացման և արդյունավետ շուկայի ստեղծման հավանականությունը:

Հաշվի առնելով, որ պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների հանդեպ ազգաբնակչության վստահության մակարդակն ավելի բարձր է, քան մասնավորների նկատմամբ, իսկ մասնավոր ընկերություններն էլ դեռ ամբողջությամբ պատրաստ չեն կառավարման գործառույթը տարանջատել սեփականությունից, ինչպես նաև այն, որ 2018 թ. տվյալներով պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների 77 տոկոսն աշխատել է շահույթով, կարող ենք նշել, որ պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների կողմից թողարկված բաժնետոմսերը կարող են որոշակի հետաքրքրություններ կայացնել ազգաբնակչության համար: Բացի այդ, որպես օրինակ ունենալով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքը¹, համաձայն որի՝ ֆիզիկական անձինք վճարում են որոշմանիշային վճարներ 1000 դրամ գումարի չափով, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների բաժնետոմսերը նույնպես կարող են պարտադիր կերպով վաճառվել ֆիզիկական անձանց (օրինակ՝ տարեկան կտրվածքով 1 բաժնետոմս՝ 10 000 դրամ անվանական՝ արժեքով)՝ վաճառքն իրականացնելով արժեթղթերի շուկայի միջոցով: Արդյունքում պետական և պետական մասնակցությամբ ընկերությունները կներգրավեն որոշակի չափով բաժնետիրական կապիտալ, որը կուղղվի ինովացիոն գործունեությանը՝ միաժամանակ ապահովելով ֆիզիկական անձանց համար որոշակի եկամուտներ և ստեղծելով տնտեսության զարգացման որոշակի նախապայմաններ:

Անշուշտ, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների՝ վերը նկարագրված օրինակին կարող են հետագայում հետևել նաև մասնավոր ընկերությունները, ինչը հնարավորություն կընձեռի ամբողջ հանրապետության մասշտաբով խթանել ինովացիոն և ներդրումային գործունեությունը և ապահովել կայուն տնտեսական աճ երկարաժամկետ հեռանկարում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել պետական և պետական մասնակ-

¹ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 95 (1275).1, 30 դեկտեմբերի 2016 թ.:

ցությամբ ընկերությունների ինովացիոն գործունեության խթանման հետևյալ ուղիները.

- կառավարչական որակյալ կադրերի ընտրություն և կառավարման որակի բարելավում,
- վնասով աշխատող պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների վերակազմակերպում,
- ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծում,
- պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նպատակային դոտացիաների տրամադրում,
- ինովացիոն և ներդրումային արդյունավետ նախագծերի մշակում և իրացում,
- ինովացիոն արտադրանքների համար պահանջարկի ձևավորում, այդ թվում՝ նաև պետական պատվերի միջոցով,
- կորպորատիվ կառավարման հիմնական սկզբունքների ներդրում,
- գործունեության թափանցիկության անհրաժեշտ մակարդակի ապահովում և այլն:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների ինովացիոն գործունեության խթանումը կնպաստի բնակչության կենսամակարդակի բարելավմանը, ինովացիոն արտադրության ծավալների ընդլայնմանը, տնտեսության պետական կառավարման գործառույթի արդյունավետության բարձրացմանը, հարկային եկամուտների ծավալների ավելացմանը, ընկերությունների գործարար համբավի բարձրացմանը, արժեթղթերի շուկայի որոշակի աշխուժացմանը, տնտեսության երկարատև կայուն զարգացմանը և տարածաշրջանային համագործակցության ակտիվացմանը:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (2019 թ.)

Մերի Մանուչարյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից է, որը վերջին տարիներին ապահովում է երկրի համախառն ներքին արդյունքի շուրջ 15 տոկոսը: Այն բացառիկ է երկրի պարենային անվտանգության ապահովման գործում, թեև անընդհատ ենթարկվում է անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցությանը, որի հետևանքով հանրապետության տարբեր շրջաններում ամեն տարի միջին հաշվով ոչնչանում է բերքի 20-25 %-ը:

Վերջին տարիների տվյալներով, էներգետիկ արժեքով գնահատված, առաջնահերթ պարենամթերքների շուրջ 55-65 տոկոսն ապահովվում է սեփական արտադրության հաշվին:

Գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՀ համախառն ներքին արդյունքում 2014-2018 թթ. միջին տվյալներով կազմել է 16.1 %¹: Ոլորտում զբաղված է (2018 թ.) հանրապետության ընդհանուր զբաղվածների 24.6 %-ը կամ 225.4 հազար մարդ²: Իր նշանակությամբ ճյուղը բացառիկ է երկրի բնակչության պարենային ապահովության ու պարենային անվտանգության գործում:

Գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ ջրային ռեսուրսների սակավությունը լուրջ խնդիր է շատ երկրների համար: Որոշ գոտիներում առանց ոռոգման ջրի գյուղատնտեսությունը վարելը գրեթե անհնար է: Նույնիսկ այն վայրերում, որտեղ տարվա որոշ ամիսներին մեծ քանակությամբ տեղումներ են դիտվում, չորային ժամանակահատվածում մշակաբույսերը կարող են ջրի պակաս զգալ: Օրգանական գյուղատնտեսության հիմնական նպատակներից է ֆերմերային տնտեսության մեջ առկա բնական ռեսուրսների կայուն և նպատակային օգտագործումը: Ջրային ռեսուրսների պահպանումը, հավաքումն ու ամբարումը կարևոր են հատկապես օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերների համար³:

Օրգանական գյուղատնտեսության հիմնական սկզբունքներն են՝

1) բույսերի տեսակների և սորտերի ընտրասերման, տոհմային անասնաբուծության բարելավման, ինչպես նաև մարդկանց գործունեությամբ պայմանավորված ռիսկերի նվազեցման արդյունքում կենսաբազմազանության պահպանման համար նպաստավոր միջավայրի ձևավորումը:

¹ Պարենային ապահովություն և աղքատություն, 2019 թ. հունվար-հունիս, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Երևան, 2019, էջ 9:

² Նույն տեղում, էջ 12:

³ Օրգանական գյուղատնտեսության ուղեցույց, Երևան, 2018, էջ 45:

2) բնական ճանապարհով (ցանքաշրջանառության կիրառում, օրգանական պարարտացում, հողատարման դեմ պայքարում անտառաշերտերի ստեղծում և այլն) հողի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական կազմի բարելավումը, բերրիության պահպանումը.

3) գյուղատնտեսական մթերքի վերամշակման այնպիսի եղանակների և տեխնոլոգիաների ընտրությունը, որոնք կապահովեն դրանց կենսաբանական արժեքի առավելագույն պահպանումը.

4) շրջակա միջավայրի աղտոտման բացառումը՝ սինթետիկ քիմիական նյութերի օգտագործման դադարեցումը, գյուղատնտեսական գործունեության ընթացքում էկոլոգիապես բարենպաստ տեխնոլոգիաների կիրառումը.

5) բուսաբուծության և անասնապահության ոլորտների ներդաշնակեցումը.

6) հորմոնների, հորմոնալ պատրաստուկների, ինչպես նաև կենդանի վերափոխված օրգանիզմների, գենային ինժեներիայի ու ժամանակակից այլ կենսատեխնոլոգիաների և իոնային ճառագայթման մեթոդների կիրառման բացառումը¹:

Օրգանական գյուղատնտեսության նշված սկզբունքների հիման վրա IFOAM-ը առանձնացնում է օրգանական գյուղատնտեսության կայունության հիմնական նպատակները:

Տնտեսական անվտանգություն		Ցածր ներդրումներ
Թողարկվող արտադրանքի բավարար քանակություն		Բարձր և կայուն էկամտաբերություն
Ապրանքների ավելի բարձր գին		Նվազագույն արտաքին ազդեցություն
Բարենպաստ աշխատանքային պայմաններ		Տեղական ռեսուրսների լավագույն օգտագործում
Պարենամթերքի երաշխավորված ապահովում		Էկոհամակարգի հավասարակշռություն
Տեղական կարիքների բավարարում		Քիմիական աղտոտիչների բացակայություն
Ագրոարտադրության աշխատողների գենդերային հավասարակշռություն		Հողերի բարձր բերրիություն
Հարգանք տեղական մշակույթի նկատմամբ		Մաքուր ջրի պահպանում
Բավարար որակական և համային հատկանիշներ		Կենսաբազմազանության պահպանում
		Անասնապահության պայմանների բարելավում
	Արտադրվող ապրանքների անվտանգություն	Բնական ռեսուրսների պահպանություն

Գծապատկեր 1. Օրգանական գյուղատնտեսության կայունության հիմնական նպատակները²

¹ ՀՀ օրենքը օրգանական գյուղատնտեսության մասին, ՀՕ-23-Ն, ընդունված է 2008 թ. ապրիլի 8-ին:

² IFOAM Training Manual on Organic Agriculture in the Topics, Edited by Frank Eyhorn, Marlene Heeb, Gilles Weidmann, p. 28.

Կապված ջերմաստիճանի գլոբալ բարձրացման հետ և հաշվի առնելով, որ եղանակային պայմանների փոփոխությունները դառնում են առավել անկանխատեսելի, կլիմայի փոփոխությունների և գյուղատնտեսության միջև կապի հիմնախնդիրը դառնում է առանցքային այն իմաստով, թե ինչ դեր է խաղում օրգանական գյուղատնտեսությունն այս խնդրի լուծման ու կլիմայի գլոբալ տաքացման հետևանքները մեղմելու գործում: Ածխածնի կլանումը, վառելիքի սպառման կրճատումը, որի արդյունահանումը քայքայում է բնական պաշարները, և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը, հնարավորություն են տալիս օրգանական գյուղատնտեսությանը առաջնային դեր խաղալ էներգիայի սպառումը նվազեցնելու և մեղմելու էներգիայի արտանետումների բացասական հետևանքները:

Մեր կյանքը շատ առումներով կախված է կլիմայից: Երկրի բնական օրենքներն ու ֆիզիկական գործընթացները կարգավորում են կլիման և Երկիր մոլորակը դարձնում հարմարավետ վայր մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքի համար: Սակայն մեր մոլորակի կլիման փոխվում է հենց հիմնականում մարդկանց մեղքով: Կլիմայի փոփոխություններն անցյալում պայմանավորված են եղել բնական գործոններով: Մեր օրերում պատճառը գերազանցապես մարդկային գործոնն է՝ կապված էներգիայի աղտոտող աղբյուրների ինտենսիվ օգտագործման, անտառահատումների և այլ միջամտությունների հետ: Արդեն իսկ տեսանելի են կլիմայի փոփոխության հետևանքները. ջերմաստիճանը բարձրանում է, սառցադաշտերը հալչում են, բարձրանում է ծովի մակարդակը: Փոփոխություններից են ծայրահեղ եղանակային երևույթների, օրինակ՝ երաշտների, ցիկլոնների և ջրհեղեղների դեպքերի ավելացումը, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում մարդկանց և գյուղատնտեսության համար, մարդկանց զրկում են գոյամիջոցներից, ինչպես նաև մեծացնում են բույսերի և կենդանիների տեսակների անհետացման վտանգը: Մեր էկոհամակարգերը բարդ են և փոխկապակցված, հետևաբար որևէ տեսակի անհետացումն իր բացասական ազդեցությունն է ունենում բազմաթիվ այլ տեսակների վրա: Կլիմայի փոփոխությունը կարող է հանգեցնել անսպասելի փոփոխությունների և խախտել այս հավասարակշռությունը: Սակայն հուսադրող է նաև այն, որ մարդիկ ի վիճակի են իրենց գործողություններով մեղմել կլիմայի հետագա փոփոխությունը, և դրա մեջ յուրաքանչյուր մարդ կարող է ունենալ իր ներդրումը¹:

Հայաստանը հատկապես խոցելի է կլիմայի փոփոխությունների նկատմամբ, ընդ որում՝ գյուղատնտեսությունը կլիմայի նկատմամբ չափազանց զգայուն ոլորտ է, և հետևաբար Հայաստանի գյուղական բնակչությունը և նրա ապրուստի միջոցները խոցելի են կլիմայի փոփոխությունների պատճառով:

Հայաստանը խոցելի էկոհամակարգերով լեռնային երկիր է, ունի երաշտների և ջրային ռեսուրսների անհամաչափ բաշխվածության պատմություն, ենթարկվում է երոզիայի և տարերային աղետների, ինչը երկիրն առավել զգա-

¹ Կլիմայի փոփոխություն. մարտահրավերի հաղթահարման կրճանջան, Երկրորդ հրատարակություն, Երիտասարդության և ՄՄԿ-ի գլոբալ դաշինք (ՅՈՒՆԿԵՄ/ՄՄԿ), FAO 2019, էջ 6:


յուն է դարձնում շրջակա միջավայրի գլոբալ փոփոխությունների նկատմամբ: Կլիմայի ապագա կանխատեսումները ցույց են տալիս, որ Հայաստանը ենթակա կլինի¹.

- միջին ջերմաստիճանի բարձրացման՝ մինչև 2030 թ. 1° C -ով, մինչև 2070 թ.՝ 2° C-ով և մինչև 2100 թ.՝ 4° C-ով, ընդ որում՝ 2050 թ. այն կգտնվի 1,5° C–3° C միջակայքում:
- Տեղումների նվազման՝ մինչև 2030 թ. 3 %-ով, մինչև 2070 թ.՝ 6 %-ով և մինչև 2100 թ.՝ 9 %-ով, սակայն կանխատեսումները կարող են զգալի տատանվել ըստ ամիսների և ըստ կլիմայի մոդելի:
- Գետային հոսքի նվազման՝ մինչև 2030 թ. 6,7 %-ով, մինչև 2070 թ. 14,5 %-ով և մինչև 2100 թ.՝ 24,4 %-ով՝ 1961 – 1990 թթ. ելակետային ժամանակահատվածի համեմատ:
- Ձնածածկույթի նվազման՝ 2030 թ. 7 %-ով, 2070 թ.՝ 16-20 %-ով և 2100 թ.՝ 20 – 40 %-ով:
- Գյուղատնտեսական արտադրության համար առավել սահմանային և ռիսկային միջավայրի, քանի որ ջերմաստիճանի բարձրացումը և տեղումների նվազումը բերքի և արոտավայրերի աճի կրիտիկական փուլում կառաջացնեն խոնավության մեծ դեֆիցիտ:
- Ջերմաստիճանի բարձրացման հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերի, անտառների և գյուղատնտեսական կենդանիների՝ վնասատուների և հիվանդությունների նկատմամբ խոցելիության ավելացման:
- Կլիմայի փոփոխությունը ոլորտի համար կատեղծի ռիսկեր, բայց նաև հնարավորություններ. երկուսն էլ անհրաժեշտ է գնահատել:

Հայաստանում գյուղատնտեսության ոլորտը հատկապես վտանգված է՝ պայմանավորված շրջակա միջավայրի արդեն առկա դժվարություններով և նոր մարտահրավերներով: Մինչև 2030 թ. ակնկալվում է ռոտզում պահանջող վայրերում ջերմաստիճանի բարձրացում և տեղումների նվազում, հողից գոլորշիացման ավելացման հետևանքով հողի երկրորդային աղակալում (աղ-ջուր հարաբերակցության մարդածին ավելացում), տեղատարափ անձրևներ ու հեղեղումներ, որոնց հետևանքով կուժեղանա ջրային էրոզիան, իսկ երաշտներն ու խորշակները կուժեղացնեն հողի հողմային էրոզիան: Ձմռանը անասնակերի նվազման պատճառով կենդանիների արածեցումը կարող է ավելի վաղ սկսել և ուշ ավարտվել, որն էլ կարող է ավելացնել արոտավայրերի դեգրադացիան: Ակնկալվում է, որ հողի խոնավությունը կնվազի 10-30 %-ով, գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի խոնավապահովվածությունը՝ 7-13 %-ով, իսկ հողի ջրային դեֆիցիտը կավելանա 25-30 %-ով: Հետևաբար նախալեռնային և ստորին լեռնային շրջաններում անջրդի, անձրևաջրերով սնվող հողագործությունը կարող է նվազել: Կլիմայի ընդհանուր փոփոխությունից բացի, կանխատեսվում է, որ տեղի կունենան եղանակային լուրջ իրադարձություններ, մշակաբույսերի հիվանդությունների

¹ Կլիմայի փոփոխությունը և գյուղատնտեսությունը, երկրի մասին զեկույց, 2012 թ. հունիս, www.worldbank.org/eca/climateandagriculture:

բռնկումներ և վնասատուների տարածում: Տարբեր արտակարգ իրադարձությունների նկատմամբ հատկապես խոցելի վայրերի քարտեզը ներկայացված է գծապատկեր 2-ում՝ ըստ մարզերի:



Գծապատկեր 2. ՀՀ մարզերի խոցելիությունը հիդրոդերևութաբանական վտանգավոր երևույթների նկատմամբ՝

Հիդրոմետ ծառայության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կլիմայական գլոբալ փոփոխությունների հետևանքով ՀՀ-ի տարածաշրջանում տեղի են ունեցել հետևյալ կլիմայական փոփոխությունները.

- ցրտահարության դեպքերի թիվը աճել է, ինչը կարող է ունենալ հետևյալ բացատրությունը. ջերմաստիճանի բարձրացումը Արարատյան դաշտում միջին տարեկան կտրվածքով առավել նկատելի է մարտ ամսվա ընթացքում, որով պայմանավորված՝ վեգետացիան ավելի վաղ է սկսվում, ուստի ապրիլին ջերմաստիճանի կտրուկ նվազումը բերում է ցրտահարության դեպքերի հաճախացմանը,
- կարկտահար օրերի թիվը ընտրված պայմաններում նվազել է, ինչը կարող է պայմանավորված լինել կարկտաբեր ամպամածություն ձևավորող բարձրադիր ցիկլոնների ներթափանցման դեպքերի կրճատմամբ, ինչպես նաև մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործությամբ,
- հորդառատ տեղումների կրկնելիությունն ունի աճի միտում, ինչը պայմանավորված է հորդառատ տեղումներ առաջացնող մթնոլորտային գործընթացների հաճախացմամբ:

¹ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը վնաս պատճառող բնական և մարդին աղետների ռիսկերի նվազեցման ուղեցույց», Երևան, 2015, էջ 23:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների գումարային քանակը աճել է 32 դեպքով, որը կազմում է բազմամյա միջին արժեքի 20 %-ը:

Աշխարհի տարբեր երկրներում օրգանական և ավանդական գյուղատնտեսության վարման բազմաթիվ համեմատական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ էկոլոգիական անվտանգության տեսանկյունից օրգանական գյուղատնտեսության վարումը առավել արդյունավետ է: Ի տարբերություն ավանդական գյուղատնտեսության, որի դեպքում պեստիցիդների օգտագործման մեծ ծավալները հողի, ջրի և մթնոլորտային օդի աղտոտման պատճառ են դառնում, օրգանական գյուղատնտեսությունը գրեթե ամբողջությամբ սահմանափակում է դրանց օգտագործումը: Օրգանական գյուղատնտեսության հաջորդ կարևոր առավելությունը հողի պահպանությունն ու խնամքն է: Ընդ որում՝ խնամքը իրականացվում է հողի օրգանական նյութի բարձր մակարդակի, կենսաբանական ակտիվության խթանման, սննդատարբերի ավելի հավասարակշռված շրջապատայտների և հողի էրոզիայի ավելի ցածր ռիսկերի շնորհիվ: Մյուս կարևոր առավելությունն այն է, որ օրգանական գյուղատնտեսությունը նպատակ ունի նպաստելու կենսաբազմազանության մակարդակի բարձրացմանը, ինչի արդյունքում օրգանական ֆերմերային տնտեսություններն ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծում բուսական և կենդանական բազմազանության համար: Այնուհանդերձ հարկ է նշել, որ օրգանական գյուղատնտեսությունը զերծ չէ այնպիսի խնդիրներից, ինչպիսիք են՝ ջրային ռեսուրսների աղտոտումը և սննդային շղթաներում հիվանդածին մանրէների առկայությունը՝ կապված օրգանական պարարտանյութերի ավելի հաճախակի օգտագործման հետ, որից զերծ չէ նաև ավանդական գյուղատնտեսությունը: Հետազոտությունները վկայում են, որ օրգանական գյուղատնտեսության վարման դեպքում, ընդհանուր առմամբ, ավելի քիչ էներգիա է օգտագործվում ինչպես 1 հա-ի, այնպես էլ միավոր արտադրանքի հաշվով: Սակայն դժվար է կատարել հստակ եզրակացություններ, քանի որ հետազոտությունները տարբերվում են ինչպես ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությամբ, այնպես էլ ուսումնասիրության օբյեկտի առանձնահատկություններով:

Օրգանական գյուղատնտեսության ոլորտում կիրառվող մեթոդները որոշ չափով կրճատում են վառելիքի օգտագործումը, որով էլ նվազեցվում է շրջակա միջավայրին հասցվող վնասը:

Օրգանական գյուղատնտեսությունը առաջարկում է կառավարման այնպիսի մեթոդներ, որոնք կօգնեն ֆերմերներին հարմարվել կլիմայի փոփոխությանը՝ ագրոէկոհամակարգի ուժեղացման, բուսաբուծության և անասնաբուծության զանազանեցման, ինչպես նաև ֆերմերների հիմնական գիտելիքների և գործնական փորձի կուտակման միջոցով, ինչը կօգնի լավագույնս դիմակայել և մեղմել կլիմայի փոփոխությունները:

FAO-ն զարգացնում է օրգանական գյուղատնտեսության ուղղությունը՝ որպես վերականգնվող էներգիայի արտադրողականությունն առավելագույնի հասցնելու

և ազրոէկոհամակարգերում սննդանյութերի և էներգիայի հոսքերի հավասարակշռության օպտիմալացման այլընտրանքային մոտեցում: Կյանքի ցիկլի ուսումնասիրությունն ու գնահատումը ցույց են տալիս, որ ավանդական արտադրական համակարգում վնասակար նյութերի արտանետումները միշտ էլ զգալիորեն բարձր են, քան օրգանական համակարգերում: Ածխածնի օքսիդի և մեթանի արտանետումները վարելահողերի, ինչպես նաև անասունների արոտավայրերի համար չոր տորֆային հողերը կարող են մնալ անցյալում՝ շնորհիվ օրգանական գյուղատնտեսության: Ամբողջ աշխարհում վերցված հողի բազմաթիվ նմուշներ ցույց են տալիս, որ օրգանական պարարտանյութերի օգտագործումը, հանքային պարարտանյութերի համեմատ, հանգեցնում է ավելի շատ օրգանական ածխածնի արտադրությանը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է մթնոլորտից ավելի շատ քանակի ածխածնի երկօքսիդի կլանմանը հողի կողմից: Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ժամանակ ջերմոցային գազերի առավել քիչ արտանետումները, ածխածնի արտադրման ավելացումը կենսաբազմազանության պահպանման և շրջակա միջավայրի այլ գործոնների լրացուցիչ առավելությունների հետ միասին մեծ առավելություններ են տալիս օրգանական գյուղատնտեսությանը և դրա մեթոդներին տալիս են զգալի ներուժ՝ դիմակայելու և հարմարվելու կլիմայի փոփոխություններին

Այսպիսով, օրգանական գյուղատնտեսությունը շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող առավել տարածված ուղղություններից է, որը պետք է զարգացնել՝ հետագա աղետալի երևույթները կանխելու կամ գոնե մեղմելու համար:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Գոհար Ոսկանյան

տնտեսագիտության թեկնածու

Տնտեսության ցանկացած ճյուղի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է համապատասխան որակյալ մասնագետների առկայությամբ: Հայաստանի Հանրապետության տնտեսության ագրարային հատվածում անցած տասնամյակում տեղի են ունեցել համակարգային փոփոխություններ: Հողի, գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների և գյուղատնտեսական մթերքների իրացման ու հումքի վերամշակման ոլորտներում իրականացված սեփականաշնորհման արդյունքում հանրապետության ագրոպարենային ոլորտում բացարձակ գերակշռող դեր է ստացել մասնավոր հատվածը: Այս ամենը որոշակի նախադրյալներ է ստեղծել գյուղատնտեսական արտադրության աճի ու զարգացման համար: Սակայն, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, ակնկալվող արդյունքները դեռևս բավարար չեն: Ագրոպարենային ոլորտում կուտակված հիմնախնդիրներն անմիջականորեն կապված են ագրարային գիտակրթական համակարգում կուտակված և հրատապ լուծում պահանջող խնդիրների հետ:

Կարևորելով գիտակրթական համակարգի դերն ու նշանակությունը՝ նոր տեխնոլոգիաների և գիտական հենքի վրա հիմնված մրցունակ և արդյունավետ գյուղատնտեսություն ստեղծելու ճանապարհին ՀՀ կառավարությունը խնդիր է դրել ստեղծել կրթական, գիտահետազոտական, արդյունաբերական կլաստերներ և նպաստել գյուղատնտեսության և ագրարային ոլորտի կրթական, գիտական, գիտաարտադրական և խորհրդատվական կենտրոնների համագործակցության խրաջանը¹:

ՀՀ-ում 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ 1076900 մարդ² ապրել է գյուղում, որը կազմում է ՀՀ բնակչության (2972700 մարդ) 36.2 %-ը: Նշենք, որ գյուղաբնակների հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ: Համաձայն Համաշխարհային բանկի պաշտոնական կայքի տվյալների՝ 1991 թ. գյուղատնտեսությունում զբաղվածները կազմել են ընդհանուր զբաղվածների ավելի քան 43 %-ը, իսկ 2018 թ. այդ ցուցանիշը կազմել է մոտավորապես 26 %: Հայաստանում այդ ցուցանիշները կազմել են 1991 թ.՝ 38.66 %, իսկ 2018 թ.՝ 33.24

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 8 փետրվարի 2019 թվականի N 65-Ս, 70 էջ, էջ 51, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

² Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Երևան, 2018, 10 էջ, էջ 7 https://www.armstat.am/file/article/nasel_01.01.2018.pdf

%:¹ Նշված ցուցանիշների նվազման միտումները կարելի է բացատրել երկու հիմնական հանգամանքով.

1. գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում նվազել է գյուղատնտեսության ոլորտի աշխատողների պահանջարկը, քանի որ ձեռքի աշխատանքը փոխարինվել է մեքենայացված աշխատանքով,
2. նվազել է գյուղատնտեսության ոլորտում աշխատելու գրավչության մակարդակը:

Հայաստանի պայմաններում գերակշռող է 2-րդ տարբերակը: Ընդհանուր առմամբ ՀՀ աշխատանքի շուկայում առկա են մի շարք խնդիրներ, այդ թվում՝ բարձր գործազրկություն, ցածր աշխատավարձ, թաքնված զբաղվածություն, ըստ մարզերի՝ աշխատաշուկայի և տնտեսության անհավասարաչափ զարգացում, աշխատաշուկայի ենթակառուցվածքների թույլ զարգացում, աշխատաշուկայի քաղաքականության մեջ ֆինանսական լծակների թույլ կիրառում և աշխատավարձի անհավասարություն՝ ըստ մարզերի, տնտեսական գործունեության տեսակների և սեռի: Աշխատավարձի խթանիչ դերը տնտեսության շատ ոլորտներում շեշտակիորեն նվազել է²: Առավել հրատապ խնդիր է աշխատանքի արտադրողականության բարձրացումը, որից կախված են գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրության տեմպերը և իր արտադրանքներով բնակչության պահանջ-մունքների լրիվ բավարարումը: Աշխատանքի արտադրողականության բարձրացումը աշխատանքի գործընթացում ցանկացած փոփոխությունն է՝ ուղղված տվյալ արտադրանքի արտադրության համար անհրաժեշտ ժամանակի կրճատմանը³: Գյուղատնտեսական արտադրության և աշխատանքի վերջնական արդյունքի արդյունավետության բարձրացումն անմիջականորեն կախված է կադրերի որակավորման մակարդակից և աշխատանքային ռեսուրսների օգտագործման աստիճանից⁴:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը հանրապետության ագրոպարենային համակարգի համար մասնագետներ պատրաստող միակ բուհն է: Համալսարանի շատ շրջանավարտներ իրենց գործունեությամբ հայտնի են հանրապետությունում⁵: Համալսարանի առաքելությունը կրթության և գիտության կադրային և նյութական ռեսուրսների կենտրոնացմամբ ու որակյալ կրթություն ապահովելու միջոցով Հայաստանում և տարածաշրջանում ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող և դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն դառնալն է⁶:

¹ <https://data.worldbank.org/indicator/SL.AGR.EMPL.ZS>

² Գործազրկությունը և աշխատավարձի անհավասարությունը ՀՀ-ում / Ս. Մելքումյան և ուրիշներ. Եր., Տնտեսագետ, 2014, 84 էջ («Ամբերդ» մատենաշար), էջ 5:

³ Հայաստանի Հանրապետության ագրարային աշխատանքի էկոնոմիկա/ Լ. Լ. Հակոբյան, Ե., Լիմուշ, 2014, 342 էջ, էջ 9-36:

⁴ Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ/Ս. Հ. Համբարձումյան, Եր., ԵՊՀ հրատ., 2016, 276 էջ, էջ 118:

⁵ <https://anau.am/hy/about-us/info>

⁶ <https://anau.am/hy/about-us/mission>

Մինչդեռ ներկայումս ագրարային համալսարանի որոշ մասնագիտությունների գծով ընդունելությունն իրականացվում է դպրոցի ավարտական վկայականի գնահատականների հիման վրա՝ առանց ընդունելության քննություններ հանձնելու:

Հաշվի առնելով գիտության նվաճումները ագրարային ոլորտում՝ նոր մասնագետների պատրաստման անհրաժեշտություն է առաջանում: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի առաջարկն ու պահանջարկը բավականին անհավասարակշռված են՝ ի տարբերություն այլ ոլորտների: Մա բացատրվում է նրանով, որ աշխատանքը գյուղատնտեսության ոլորտում գրավիչ չէ և քիչ վարձատրվող է: Հաճախ գյուղատնտեսության ոլորտում զբաղված անձինք նախընտրում են տեղափոխվել շինարարության, արդյունաբերության կամ ծառայությունների ոլորտները: Այնուամենայնիվ գյուղատնտեսության ոլորտի մասնագետների կարիք միշտ եղել է ու կլինի: Գյուղում որակյալ աշխատուժի պակասը, հատկապես գյուղատնտեսության ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդ մասնագետների, դառնում է ավելի ու ավելի ակնհայտ: Գյուղատնտեսների մոտավորապես 70 %-ը չունի հատուկ մասնագիտական կրթություն, տեխնոլոգիաների և մենեջմենթի վերաբերյալ գիտելիքներ, իսկ նրանց մասնագիտացումը չի համապատասխանում գյուղատնտեսության նոր պահանջներին: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում աշխատող մասնագետների ընդամենը 5 %-ն ունի բարձրագույն կրթություն¹:

Մասնագիտության ընտրության և աշխատանքի ընդունման հարցում կարևոր գործոններից մեկն աշխատավարձն է: Որքան բարձր է աշխատավարձը, այնքան ավելի մեծ է հետաքրքրությունը տվյալ մասնագիտության նկատմամբ: Աղյուսակ 1-ում ներկայացված է միջին ամսական աշխատավարձն ըստ կազմակերպության չափի և տնտեսության ոլորտների: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսությունն ամենացածր վարձատրվող ոլորտն է, իսկ ամենաբարձր վարձատրվողը՝ արդյունաբերությունը: 2017 թ. համեմատ 2018 թ. բոլոր ոլորտներում, բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի, նկատվել է միջին ամսական աշխատավարձի աճ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ մեր երկրում միջին աշխատավարձն ամենաբարձրը տեղեկատվության և կապի ոլորտում է: Երկրորդ տեղում ֆինանսական և ապահովագրական ոլորտն է: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտների միջին անվանական աշխատավարձը 118.14 հազար դրամ է²: Տարեկան միջին անվանական աշխատավարձը մեկ անձի հաշվով կազմում է 1417680 դրամ (2892 ԱՄՆ դոլար, հաշվարկը կատարվել է 1 ԱՄՆ դոլար=490.18 ՀՀ դրամ փոխարժեքով): Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Կանադայում համալսարանը նոր ավարտած գյուղատնտեսության

¹ Klupsas F., Serva E., Changes of specialist and qualified employee demand in agrarian sector of Lithuania, ISSN 1822-6760. Management theory and studies for rural business and infrastructure development. 2009. Nr. 17 (2). Research papers.

² <https://b24.am/economy/68256.html>

ուրորտի երիտասարդ մասնագետը ստանում է տարեկան 49000-67500 ԱՄՆ դոլար, իսկ միջին տարիքի մասնագետը՝ տարեկան 69000-102000 ԱՄՆ դոլար¹:

Աղյուսակ 1

**Միջին ամսական աշխատավարձն ըստ կազմակերպության չափի
և տնտեսության ոլորտների, հունվար-դեկտեմբեր²**

	1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններ			որից՝ 50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններ		
	2017 թ., դրամ	2018 թ., դրամ	%, 2018 թ./ 2017 թ.	2017 թ., դրամ	2018 թ., դրամ	%, 2018 թ./ 2017 թ.
Ընդամենը	166 004	172 727	104.0	199056	210322	105.7
Գյուղատնտեսություն	120 530	118 090	98.0	126 536	126 054	99.6
Արդյունաբերություն	199 460	205 337	102.9	232 354	241 930	104.1
Շինարարություն	179 935	185 007	102.8	212 846	216 522	101.7
Ծառայություններ	158 434	165 420	104.4	190 001	202 102	106.4

Կան մասնագիտություններ, որոնք միշտ եղել են արդիական ագրարային ոլորտում (ագրոնոմ, տեխնոլոգ, ագրոինժեներ, գենետիկ-սելեկցիոներ, անասնաբույժ, անասնատեխնիկ): Գլոբալացման, ավտոմատացման և մրցակցության մշտական աճի պայմաններում ի հայտ են եկել լավ տրամաբանություն, կազմակերպչական կարողություններ, խորը գիտելիքներ ունեցող մասնագետներ, որոնք տիրապետում են նաև SS և բիոտեխնոլոգիայի վերաբերյալ գիտելիքների (ագրոնոմ-տնտեսագետ, գյուղատնտեսական էկոլոգ, ագրոինֆորմատիկ/ագրոկիբեռնետիկ և այլն)³: Այս մասնագիտությունների ցանկին կցանկանայի ավելացնել նաև գյուղատնտեսության ապահովագրողի մասնագիտությունը, որն աստիճանաբար ավելի արդիական է դառնում, և վստահաբար կարելի է նշել, որ ապագայում մեծ

¹ <https://www.eco.ca/career-profiles/agriculture-specialist/>

² https://www.armstat.am/file/article/sv_01_19a_142_.pdf էջ 75

³ <https://intalent.pro/article/agroprofessii-trendy-nastoyashchego-s-proekciy-v-budushchee.html>

պահանջարկ է վայելելու հատկապես ՀՀ-ում: Այս հանգամանքը կարելի է հիմնավորել նրանով, որ ներկայումս ՀՀ-ում գործնական քայլեր են կատարվում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման ուղղությամբ:

ՀՀ գիտակրթական համակարգը լուրջ բարեփոխումների կարիք ունի, որի իրականացման համար կարևոր է առաջատար գիտակրթական համակարգեր ունեցող երկրների փորձի ուսումնասիրումը: Քանի որ հնարավորություն եմ ունեցել անձամբ այցելել Պորտուգալիայի Ավեյրուի համալսարան և ծանոթանալ նրա գործունեությանը, կանդրադառնամ հենց այդ համալսարանի փորձին: Նշեմ, որ համալսարանն ընդամենը 45 տարեկան է, բայց ունի բավականին առաջադեմ և հետաքրքիր գիտակրթական համակարգ¹:

Ավեյրուի համալսարանի տեխնոլոգիայի փոխանցման բաժինը (The Technology Transfer Unit of the University of Aveiro (UATEC)) համալսարանի բաղկացուցիչ մասն է: Նրա կարգախոսն է՝ «Համագործակցություններ, որոնք ապագան դարձնում են ավելի լուսավոր»: Այս բաժնում տեղեկացա, որ աշխատակիցները կապ են ստեղծում հետազոտողների և տարբեր կազմակերպությունների միջև՝ հնարավորություն տալով գիտնականներին վաճառել և գործածության մեջ դնել իրենց գիտական արդյունքները, իսկ կազմակերպություններին՝ անմիջապես համալսարանից ձեռք բերել նորագույն գիտական նվաճումները²: Տեխնոլոգիայի փոխանցման բաժնի գործունեության հիմնական խնդիրն է աջակցել համալսարանին՝ հասնելու իր գերակա նպատակին՝ լինել գիտելիքի ստեղծման և տարածման ազգային կենտրոն: Դրված խնդիրը լուծելու համար բաժինն իրականացնում է հետևյալ գործառնությունները.

1. մտավոր սեփականության կառավարում,
2. շուկայում նոր տեխնոլոգիաների խրախուսում և արժևորում,
3. համալսարան – տնտեսություն կապի ստեղծում,
4. համագործակցության խթանում և տեխնոլոգիայի վրա հիմնված ընկերության ստեղծման աջակցություն:

UATEC-ն հիմնադրվել է 2006 թ., և նրա հիմնական նպատակը գիտելիքի արժևորումն է: Որպես արդյունք, այն մասնակցում է տարատեսակ միջոցառումների, ինչպիսիք են start-up-երը, spin-off-երի ստեղծումը, բիզնես պլանները, ֆինանսավորվող հետազոտական ծրագրերը, համագործակցության պայմանագրերը, IP-ի պաշտպանությունը, լիցենզավորումը, մարքեթինգի կազմակերպմանը և այլն³:

Ավեյրուի համալսարանի և Գիտության ու տեխնոլոգիայի մշակույթի ազգային գործակալության համագործակցության արդյունքում հիմնադրվել է գիտության ֆաբրիկան՝ (The Fábrica Centro Ciência Viva de Aveiro), որի հիմնական նպատակն է գիտության տարածումը և գիտական ու տեխնոլոգիական մշակույթի խթանումը: Ֆաբրիկայի գործունեության ծրագիրը ներառում է դիվերսիֆիկացված գործողություններ տարբեր ձևաչափերով՝ թույլ տալով տարբեր տարիքի

¹ <https://www.ua.pt/>

² <https://anau.am/hy/about-us/2657-2018-12-21-10-49-22>

³ Technology transfer unit, Universidade de Aveiro, Portugal, www.ua.pt/uatec

անձանց ավելի մոտ կանգնել գիտությանը: Ֆաբրիկան բաղկացած է մի քանի բաժիններից (ցուցասարահներ, լաբորատորիաներ, ռոբոտավորման բաժին, մաթեմատիկայի, կենսաբանության և այլ բաժիններ):¹ Գիտության ֆաբրիկայի համակարգող Պատվո Կառվալիոն նշեց, որ ֆաբրիկայում երեխաները խաղերի միջոցով ծանոթանում են գիտության տարբեր բնագավառների հիմնական դրույթներին, իսկ մեծահասակներն իրենք են պատրաստում տարատեսակ գիտական աշխատություններ, օրինակ՝ ռոբոտներ²:

Կարևորելով գիտակրթական համակարգի դերը գյուղատնտեսության զարգացման գործում՝ որոշ երկրներում մշակվել են համապատասխան իրավական ակտեր: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության տնտեսության առաջ խիստ խնդիր է դրված գտնել տնտեսական աճի ու զարգացման նոր ուղղություններ, որոնցից մեկը պետք է լինի բարձր տեխնոլոգիաները և գլոբալ մրցունակ ագրոարդյունաբերական համալիրը (ԱԱՀ): Այս ուղղությամբ աջակցությունը պահանջում է ԱԱՀ-ի գիտատեխնիկական քաղաքականության կատարելագործում, մեթոդաբանական, ինֆորմացիոն և փորձագիտական որակի բարելավում՝ համապատասխան կառավարչական որոշումների ապահովման համար: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է բարձրացնել ճյուղի կարգավորման գործիքների կիրառման արդյունավետությունը: Բացի այդ, անհրաժեշտ է մեծացնել ագրարային կրթության և ագրարային գիտության ֆինանսավորումը, որն այսօր միանշանակ գտնվում է ոչ բավարար մակարդակի վրա: Հաշվի առնելով այս ամենը՝ ՌԴ գյուղատնտեսության նախարարությունը և Ազգային հետազոտական համալսարանը 2016 թ. մշակել են «Ռուսաստանի Դաշնության ագրոարդյունաբերական համալիրի գիտատեխնոլոգիական կանխատեսում մինչև 2030 թ.» փաստաթուղթը: Վերջինս ներառում է հետևյալ հիմնական դրույթները.

1. համաշխարհային ագրոարդյունաբերական համալիրի զարգացման գլոբալ մարտահրավերները,
2. Ռուսաստանի ագրոարդյունաբերական համալիրի արդի վիճակը,
3. ՌԴ ԱԱՀ-ի զարգացման գիտատեխնոլոգիական սցենարները,
4. ԱԱՀ-ում գիտատեխնոլոգիական քաղաքականության բարելավումը:

Նշված փաստաթղթում հստակ նշված են անհրաժեշտ միջոցառումները, ժամկետները, կատարողները և սպասվելիք արդյունքները: Ներկայացվել են նաև այն իրավական ակտերը, որոնք անհրաժեշտ են նշված միջոցառումներն իրականացնելու համար:³

Կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ գիտակրթական համակարգի միջոցով ագրարային ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է նախ լուծել ագրարային ոլորտի կրթական և գիտական համակարգերում առկա խնդիրները, որոնք կնպաստեն

¹ <http://www.ua.pt/fabrica/page/22057>

² <https://anau.am/hy/about-us/2657-2018-12-21-10-49-22>

³ Прогноз научно-технологического развития агропромышленного комплекса Российской Федерации на период до 2030 года, Москва, 2017, 137 с.,

<https://www.hse.ru/data/2017/02/06/1167349282/Прогноз%20научно-технической%20сферы.pdf>

ուլորտի կայունությանն ու զարգացմանը: Կարևոր ենք դիտում «Գիտակրթական համակարգի միջոցով մինչև 2030 թ գյուղատնտեսության զարգացման» հայեցակարգի մշակումը, որտեղ կներկայացվի հիմնական միջոցառումների ցանկը՝ ըստ կատարողների և ըստ ժամկետների: Մասնագետների անընդհատ կատարելագործվելը, հմտությունների ու գիտելիքների ավելացումը դարձել են ժամանակի պահանջը: Գյուղատնտեսական կրթության համալսարանները պետք է ուսումնասիրեն փոփոխվող գյուղատնտեսության, մարդկային կյանքի սոցիալական և այլ ոլորտների պահանջները և կատարեն առաջարկություններ լավ և որակյալ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ, որը կարտահայտվի կառուցվածքային փոփոխություններով և կրթական ծրագրերի փոփոխություններով¹: Դիմորդները պետք է ընդունվեն Հայաստանի ազգային ագրարային համալսարան ոչ թե նրա համար, որ ընդունելության քննություններ չկան, այլ՝ որ ցանկանում են դառնալ ագրարային ոլորտի որակյալ մասնագետներ: Համալսարան ընդունվելու համար պետք է դիմորդները մասնակցեն հարցազրույցի կամ հանձնեն ոչ բարդ, դպրոցական ծրագրին համապատասխան քննություններ: ՀՀ բուհերում պետք է գործի «ընդունվելը հեշտ, ավարտելը դժվար» սկզբունքը: Համալսարան ընդունվելու և դիպլոմ ստանալու հիմնական նպատակը պետք է լինի որակյալ մասնագետ դառնալը, որն իր գործունեությամբ կկրի պատասխանատվություն ոլորտի զարգացման համար և կնպաստի դրան: Բոլոր գիտական կենտրոնները, որոնք իրականացնում են գյուղատնտեսության ոլորտին նվիրված հետազոտություններ, պետք է համագործակցեն ինչպես միմյանց, այնպես էլ միջազգային կառույցների հետ, որոնցից է, օրինակ, CGIAR-ը (The Consultative Group on International Agricultural Research): Հիմք ընդունելով Ավելյորուի համալսարանի փորձը՝ գիտական կենտրոններին կամ համալսարանին կից առանձնացված կառույցի ստեղծումը թույլ կտա կապ հաստատել հետազոտողների և ֆերմերների միջև: Այստեղ տեղին է մեջ բերել լեհական այն հայտնի ասացվածքը, որ «Եթե ֆերմերն աղքատ է, այդպիսին է նաև ամբողջ երկիրը»²: Մասնավորապես մեր երկրի համար, երբ բնակչության 36.2 %-ն ապրում է գյուղում, և զբաղված բնակչության 33.2 %-ը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում, պետք է բոլոր ջանքերն ուղղել հենց այս ոլորտի զարգացման ուղղությամբ:

¹ Восканян Г. В., О некоторых вопросах, связанных со специалистами аграрного сектора Армении, Фундаментальные и прикладные научные исследования: актуальные вопросы, достижения и инновации: сборник статей XXI Международной научно-практической конференции. – Пенза: МЦНС «Наука и Просвещение», 2019., 234 с., с. 90-92.

² <https://www.pinterest.com/pin/28710516348254299/>

ԻՆՈՎԱՑԻՈՆ START-UP-ԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԽԹԱՆՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ¹ (2019 թ.)

Շողեր Պողոսյան

տնտեսագիտության թեկնածու

Ներկայումս մարդկության առջև ծառայած հիմնական խնդիրներից մեկը մարդկային կարիքների անսահմանությունն է և այն սահմանափակ ռեսուրսները, որոնցով բավարարվում են այդ կարիքները: Հետևաբար ժամանակակից աշխարհի զարգացման բնորոշ առանձնահատկությունն է առաջատար երկրների անցումը նորարար հասարակության ձևավորմանը, գիտելիքների վրա հիմնված նորարարական տնտեսության կառուցմանը: Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ տնտեսական աճի ռազմավարական մոդելը դրանց հիման վրա վերջին տեխնոլոգիաների ինտենսիվ հետազոտությունն ու մշակումն է, բարձր տեխնոլոգիաների ոլորտի միջազգային շուկաներ դրանց մուտքը, ինչը նպաստում է մրցունակության բարձրացմանը և ազգային արդյունաբերության առաջատար դիրքի ապահովմանը: Ավելին, մտավոր ռեսուրսները ոչ միայն որոշում են երկրի տնտեսական աճի հեռանկարները, այլ նաև ծառայում են որպես երկրի տնտեսական անկախության և բարեկեցության մակարդակի ցուցիչ: Հիրավի, այսօր ամենահաջող բիզնես գաղափարները կարող են արագ փոխել համաշխարհային տնտեսության և հասարակության շարժի ուղղությունը: Այս առումով ինովացիոն ստարտափերը (մեկնարկային ընկերություններ) կարևոր դեր են խաղում տեխնոլոգիական տնտեսության կայացման գործում:

Դիտարկենք այն առավելությունները, որոնք Իսրայելում գործում են նորարարական արտադրանք ներկայացնող ստարտափերի համար և տանենք գույժահեռներ անցումային տնտեսությամբ երկրների միջև: Իսրայելում փոքր ընկերությունների երկու երրորդը նոր շուկա է մտնում նորարարական արտադրանքով, այն դեպքում, երբ ավելի մեծ ընկերությունների մեջ այդ մասնաբաժինը կազմում է 48 %: Բացի դրանից, բոլոր նոր ընկերությունները (սահմանված են որպես ավելի քան հինգ տարի առաջ ստեղծված ընկերություններ) միջազգային շուկա են մտել առնվազն մեկ նոր ապրանքով, ինչը բացատրում է այն փաստը, որ Իսրայելում սկսնակները համբավ ունեն, որպես այս երկրում տնտեսական աճի առանցքային օղակներից մեկը: Իրականում համաշխարհային շուկա մտնող ընկերությունների շրջանում նոր նորարարական արտադրանք ունեցող նոր և փոքր ընկերությունների մասնաբաժինը հասնում է շատ ավելի քիչ արդյունքների, քան խոշոր և արդեն վաղուց գոյություն ունեցող ընկերություններինը: Շատ կարևոր է, որ ստարտափն ունենա նորարարական միտք և յուրահատուկ բիզնես մոդել, քանի որ կան մոդելներ, որոնք սոցիալական լուրջ խնդիր են լուծում, և դրանք հնարավոր է բացառիկ դարձնել: Եվ եթե այն հաջողությամբ զարգանա,

¹ Կառավարության ծրագիր, 7.1 – Բարձր տեխնոլոգիաներ, էջ 63:

ապա ամենուր կարող է կիրառելի դառնալ: Իսրայելը համարվում է «ստարտափերի երկիր»: Ընդամենը 8 միլիոն բնակչություն ունեցող երկրում, որը կազմում է աշխարհի բնակչության մոտ 0.1 %-ը, մեկ շնչի հաշվով բաժին է ընկնում ավելի շատ ստարտափ, քան աշխարհի ցանկացած այլ երկրում¹: Իսրայելյան ստարտափերի հիմնական բնորոշ գծերն են.

1. ստարտափերը վերահսկվում են իսրայելցիների կողմից: 82 %-ը ունի գլոբալ գրասենյակներ, սակայն 91 %-ը դեռևս գտնվում է Իսրայելի ղեկավարների վերահսկողության ներքո՝ ի տարբերություն արտերկրից վարձված օտարերկրյա ղեկավարների:

2. Ամերիկյան վենչուրային կապիտալը շատ կարևոր է դեր ունի ստարտափերի համար: Ընկերությունների 99 %-ը ստացել է օտարերկրյա (հիմնականում ամերիկյան) վենչուրային կապիտալիստների ֆինանսավորում:

3. Հիմնադիրները նախկինում են հիմնել ընկերությունը: Ստարտափերի 63 %-ը, որը ներկայումս ընդլայնվում է, գտնվում է իսրայելական ձեռնարկատերերի ենթակայության ներքո՝ իրենց կողմից հիմնադիր փորձով:

Աշխարհի դասի նորարարություններ (ինովացիաներ) առաջարկող նորաստեղծների բացակայությունը ցույց է տալիս, որ անցումային տնտեսությամբ երկրները դժվարանում են հասնել առաջադեմ տեխնիկական ձեռքբերումների մակարդակին, քան տնտեսապես զարգացած երկրները, ինչպիսին է Իսրայելը²: Սա կարելի է բացատրել մի շարք գործոններով, որոնք սահմանափակում են նորարարական ստարտափերի (start-up-երի) զարգացումը: Այս գործոնները ներառում են մասնագիտացված ֆինանսավորման պակաս (օրինակ՝ հրեշտակ ներդրողներ, սերմնացան ֆինանսավորում և վենչուրային կապիտալ), որակյալ անձնակազմի բացակայություն, նոր ընկերությունների՝ շուկա մուտք գործելու բարձր խոչընդոտներ, մտավոր սեփականության իրավունքի թույլ պաշտպանություն և այլն:

Անցումային տնտեսությամբ երկրների զարգացումը և հետագայում դրանց զարգացման տեմպերի աճը աշխարհի մակարդակով նորարարական արտադրանք արտադրող նոր ընկերությունների առաջադեմ տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ կդառնան ավելի ու ավելի նկատելի: Այս փոփոխությունը պահանջում է տնտեսական պայմանների բարելավում, որը պետք է ավելի բարենպաստ լինի ինովացիոն ստարտափերի զարգացման համար:

Առհասարակ ինովացիոն գործընթացը նոր գաղափարներ ստեղծելու մտահաղացումն է, դրա բարելավումը (հետազոտություն և մշակում) և նոր գաղափարների առևտրայնացումը: Շատ հաճախ այդ գաղափարները կյանքի չեն կոչվում՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով (դրանց մեծ մասը բախվում է ֆինանսական դժվարությունների, գիտահետազոտական խմբերի, ռե-


¹ <https://hbr.org/2015/09/how-israeli-startups-can-scale>

² ДВИЖУЩИЕ СИЛЫ ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ЕБРР, Доклад о переходном процессе за 2014 год, стр. 74 .

<https://www.ebrd.com/downloads/research/transition/tr14cr.pdf>

<https://www.odi.org/sites/odi.org.uk/files/odi-assets/events-presentations/1746.pdf>

սուրսների անբավարարության հետ), կամ էլ առժամանակ դադարեցվում են: Ջարգացող երկրներում, տեխնոլոգիաների փոխանցման դժվարությունների հետ կապված առաջացող խնդիրների բացը ստացել է տեխնոլոգիաների «մահվան հովիտ» անվանումը (գծապատկեր 1), այն ընդգրկում է գյուտի և նոր արտադրանքի ստեղծման միջև ընկած բացը¹: Տեխնոլոգիաների մահվան հովիտը բնորոշ է նաև ՀՀ-ին, որին կարելի է վերագրել այն, որ շատ start up-եր մեր երկրում ֆինանսավորման պատճառով դադարեցվում են: Այս երևույթը բնորոշ է մի խումբ երկրների, որտեղ թույլ են զարգացած կամ բացակայում են վենչուրային ֆոնդերը, հրեշտակ ներդրողները, քրաուդֆանդինգը²:



Գծապատկեր 1. Տեխնոլոգիաների «մահվան հովիտ»

Աղյուսակ 1-ում ներկայացնենք համեմատական վերլուծություն R&D (հետազոտություն և մշակում) ոլորտի Հայաստանի և Իսրայելի միջև, քանի որ վերջինս R&D առաջատարն է աշխարհում:

¹ <https://www.forbes.com/sites/martinzwillig/2013/02/18/10-ways-for-startups-to-survive-the-valley-of-death/#1e75bbae69ef>

² Crowdfunding-ը ֆինանսների հայթայթման հարմարավետ հարթակ է, որի միջոցով ստարտափերը կարողանում են շատ կարճ ժամանակում ստանալ անհրաժեշտ ներդրումներ՝ իրենց ապրանքը միջազգային շուկա դուրս բերելու համար:

R&D աճին նպաստող հիմնական գործոնները

R&D աճին նպաստող հիմնական գործոնները	Հայաստան	Իսրայել
Ուժեղ R&D հիմք	ուժեղ զարգացած	ուժեղ զարգացած
Տաղանդավոր աշխատուժ	ուժեղ զարգացած	ուժեղ զարգացած
R&D մասնագիտացումներ	լավ զարգացած	ուժեղ զարգացած
Աջակցություն արտերկրյա գործընկերներից	ուժեղ զարգացած	ուժեղ զարգացած
Աշխարհի խոշոր ընկերությունների R&D կենտրոններ, ներդրումներ	թույլ զարգացած	ուժեղ զարգացած
R&D համակարգող մարմին, ֆինանսական խթաններ, ներդրումների խթանում	թույլ զարգացած	ուժեղ զարգացած
Վենչուրային ֆոնդեր, քրաուդֆանդինգ	թույլ զարգացած	ուժեղ զարգացած
START-UP-երին օժանդակություն (բիզնես, մարքեթինգ, օրենսդրություն)	թույլ զարգացած	ուժեղ զարգացած
Տեխնոլոգիաների փոխանցում, R&D առևտրայնացում	թույլ զարգացած	ուժեղ զարգացած

R&D զարգացման համար անհրաժեշտ գործոնների առկայությանը և դրանց համեմատությունը Հայաստանի և Իսրայելի օրինակով. գնահատման համար վերցվել է թույլ զարգացած, լավ զարգացած և ուժեղ զարգացած սանդղակը:

Զարգացման տեսանկյունից շատ կարևոր է, որ R&D աշխատանքներով զբաղվեն հենց տեղական ընկերությունները կամ բուհերը, քանի որ այդ պարագայում միայն համապատասխան նորարարություններից ստացված օգուտները կմնան մեր երկրում, հակառակ դեպքում օտարերկրյա մասնաձյուղով ընկերությունները գիտահետազոտության արդյունքները փոխանցում են այլ երկրում գործող մայր ընկերություններին: Ներկայացնենք R&D ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում:

R&D վրա կատարված ներքին ծախսերի մասնաբաժինը տոկոսային համամասնությամբ ՀՆԱ-ի նկատմամբ 2000-2017 թթ.¹

Տարիներ	ՀՆԱ (մլն դրամ շուկայական գներով)	R&D վրա կատարված ներքին ծախսեր (մլն դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)
2000	1031338.3	1904,2	0,18
2001	1175876.8	3290,9	0,28
2002	1362471.7	3440,9	0,25
2003	1624642.7	3894,5	0,24
2004	1907945.4	4045,1	0,21
2005	2242880.9	4814,4	0,21
2006	2656189.8	5691,5	0,21

¹ Ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, 2015, 2018 <https://www.armstat.am/am/?nid=12&id=01001>

<i>Տարիներ</i>	<i>ՀՆԱ (մլն դրամ շուկայական գներով)</i>	<i>R&D վրա կատարված ներքին ծախսեր (մլն դրամ)</i>	<i>ՀՆԱ-ի նկատմամբ (%)</i>
2007	3149283.4	6013,1	0,19
2008	3568227.6	7425,1	0,21
2009	3141651.0	8473,4	0,27
2010	3460202.7	7987,9	0,23
2011	3777945.6	9276,6	0,25
2012	4266460.5	9713,2	0,23
2013	4555638.2	9355,7	0,21
2014	4828626.3	10912	0,23
2015	5043633.2	11929,9	0,24
2016	5067293.5	11074,4	0,22
2017	5568901.5	11867,6	0,21

Ինչ վերաբերում է R&D (հետազոտություններ և մշակումներ) ծախսերին, դրանք վերջին տարիներին զգալի ավելացել են, ինչը դրական միտում է, սակայն ընդհանուր առմամբ տոկոսային համամասնությամբ ՀՆԱ-ի նկատմամբ Հայաստանը զգալի զիջում է առաջատար երկրներին և համեմատելի է միայն ցածր միջին եկամտով երկրների հետ:

Աղյուսակ 2-ի տվյալների հիման վրա ներկայացնենք ՀՆԱ-ի և R&D (հետազոտություններ և մշակումներ) ծախսերի կախվածությունը կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության միջոցով¹.

$$Y = a_0 + a_1 * X + \varepsilon$$

որտեղ Y-ը համապատասխան տարիների ՀՆԱ-ի վերցված ցուցանիշներ են, a_0, a_1 -ը՝ մոդելի ազատ անդամները, X-ը՝ R&D ծախսեր, իսկ ε -ը՝ մոդելի պատահական սխալը:

Գործակից	Std. Error	t-վիճականի	R ²
$a_0=6.145280$	0.093764	65.53960	0.962143
$a_1=0.978921$	0.048544	20.16550	

Ինչպես երևում է, մոդելը լավ որակի է, այդ մասին է վկայում դետերմինացիայի գործակցի մեկին մոտ լինելը՝ $R^2=0.96$, ինչպես նաև ստանդարտ սխալների 0-ին մոտ լինելը: Արդյունքում ունենք դրական կոռելյացիա և տեղադրելով համապատասխան արժեքները՝ կստանանք.

$$Y = 6.145280 + 0.97821 * X + \varepsilon$$

Հաշվարկման արդյունքում բացահայտվել է, որ ծախսի 1 տոկոսային կետի փոփոխությունը բերում է ՀՆԱ-ի 0.97 տոկոսային կետի ավելացման:

¹ Գնահատումը կատարվել է EViews համակարգչային փաթեթի միջոցով:

Հաշվարկներում ներառենք նաև ժամանակի գործոնը (քանի որ ՀՆԱ-ն ժամանակի ընթացքում փոփոխության է ենթարկվում՝ կախված գնաճից), և ռեգրեսիոն հավասարումը կունենա հետևյալ տեսքը.

$$Y=a_0+a_1*x+a_2*t+\varepsilon$$

Ըստ այդմ, ժամանակի գործոնը հաշվի առնելով, բացահայտվել է, որ ժամանակի փոփոխությունը 1 միավորով բերում է 0.26 գործակցով ՀՆԱ-ի ավելացման.


Գործակից	Std. Error	t-վիճականի	R ²
a ₀ =6.337344	0.146295	43.31900	0.967987
a ₁ =0.978921	0.243557	2.394442	
a ₂ =0.269075	0.162608	1.654742	

$$Y=6.337344+0.97821*x+0.269075*t+\varepsilon$$

a₂ գործակցի դրական արժեքը ցույց է տալիս, որ փոփոխական t-ի դեպքում ժամանակի ընթացքում ՀՆԱ-ի ծավալը մեծանալու միտում ունի:

Այսպիսով, առանց համապատասխան խոշոր ներդրումների անհնար է արդյունավետորեն զարգացնել գիտության ոլորտը, հետևաբար նաև տնտեսությունը:

Ներկայացնենք տնտեսության և R&D համագործակցությունն հնարավոր տարբերակները¹:



Գծապատկեր 2. *Տնտեսության և R&D համագործակցությունն հնարավոր տարբերակները*

Նախ՝ գիտությունը կարելի է մեկնաբանել որպես հասարակության տնտեսական համակարգի բաղադրիչ: Այնուհետև դրա գոյությունը և զարգացումը պետք է համակցել տնտեսության զարգացման հետ: Վերջինս կլանում է գիտության ձեռքբերումները և կարգավորում է իր զարգացումը ներքին պահանջներին

¹ Алексеев. М. Ю., НИОКР и инновационное развитие страны, Вестник Чувашского университета, 2011, # 4, стр. 341-342.

համապատասխան: Այսինքն՝ այս դեպքում ենթադրվում է, որ գիտության հետ կապված՝ գոյություն ունի տնտեսական կայունություն (գծապատկեր 2, Ա):

Երկրորդ՝ կարելի է ենթադրել, որ գիտությունը դեռևս անկախ է տնտեսությունից: Գիտնականների ջանքերի մի մասը ուղղված է ազգային տնտեսության կարիքների բավարարմանը, որոնցից մի քանիսը ներկայացնում են նոր գիտելիքներ, որոնք կարող են այժմ ունենալ ոչ անմիջական գործնական նշանակություն, բայց վաղ թե ուշ դրանք կգտնեն իրենց արտացոլումը մասնավորապես հատուկ տեխնոլոգիաների միջոցով և պետք է օգտագործվեն ի շահ հասարակության (գծապատկեր 2, Բ):

Երրորդ՝ կա տեսակետ, որ գիտությունը արժեք է և պետք է զարգանա անկախ տնտեսական իրավիճակից. ցանկացած հուսալի գիտական արդյունք չափազանց կարևոր է մեր միջավայրի և մարդկային քաղաքակրթության առաջընթացը հասկանալու համար (գծապատկեր 2, Գ):

Վերը նշված համագործակցության հանգամանքի կարևորությունը ընդգծելու համար Tomson Reuters ընկերությունը «Ինովացիայի վիճակը 2016 թ.» հաշվետվությունում նույնիսկ կիրառում է collaboration (համագործակցահիմովացիա) նորաբանությունը՝ ըստ էության ակնկալելով, որ այսօր համագործակցությունը և ինովացիան սերտ միահյուսված են մեկ գործընթացում, որ առանց մեկը մյուսի անհնար է¹:

Այն երկրները, որոնք հաջողության են հասել սեղմ ժամկետում բարձր տեխնոլոգիաների ոլորտում, հիմնականում հիմնվել են զարգացման այնպիսի մոդելների վրա, ինչպիսիք են՝

- տարածաշրջանային ծավալման հարթակ,
- բարձր տեխնոլոգիաների հանգուցային կենտրոն,
- տեղեկատվական հասարակության և ինովացիոն մշակույթի ձևավորում:

Վերը նշված յուրաքանչյուր մոդել կարող է ծառայել ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացման համար, և անկախ զարգացման մոդելի ընտրությունից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արտադրանքը անհրաժեշտ է հնարավորինս լավ դիրքավորել շուկայում: Սակայն ներկայումս առավել իրատեսական է տեղեկատվական հասարակության, ինովացիոն մշակույթի և տարածաշրջանային ծավալման հարթակի ձևավորումը, որոնք կարող են նպաստել լուրջ ներդրումների մուտքը Հայաստան: Դրան կարող է նպաստել նաև ներկայիս կառավարության նախաձեռնությունը՝ օտարերկրյա նորեկ ընկերություններին (որտեղ աշխատում է 20 հոգի) հարկային արտոնություններ տալը, քանի որ վերջիններս կարող են իրենց հետ բերել նոր տեխնոլոգիաներ, նոր մշակույթ և, ինչո՞ւ չէ, նաև կրթական և համագործակցության նոր մոդելներ²: Իսկ բարձր տեխնոլոգիաների

¹ DISRUPTIVE, GAME-CHANGING INNOVATION, 2016 State of Innovation, p. 77
http://ttaturkey.org/upload/articles-useful-links/Distrutive_Game_Changing_Innovation_Report2016.pdf

² «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին (ՀՕ-245-Ն) Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

հանգուցային կենտրոն դառնալու համար պահանջվում է R&D ոլորտի ծախսերի ավելացում, սակայն այս ցուցանիշով Հայաստանը բավական հետ է մնում առաջատարից՝ Իսրայելից:

Մեր երկրի այս ոլորտի զարգացման ուղղությունը պատկերացնելու համար ներկայացնենք ՀՀ տեխնոլոգիական ոլորտի առավելությունները՝

- բարձր որակավորում ունեցող աշխատուժ,
- աշխատավարձերի ցածր մակարդակ,
- կառավարության նախաձեռնությունը՝ օտարերկրյա նորեկ ընկերություններին (որտեղ աշխատում է 20 հոգի) հարկային արտոնություններ տալը,
- կառավարության նախաձեռնությունը՝ ուղղված ինժեներական քաղաք և տեխնոպարկեր կառուցելու,
- բարձր որակի և միջազգային ստանդարտներին համապատասխան արտադրանք,
- օտարերկրյա խոշոր ընկերությունների առկայությունը հայկական SS շուկայում,
- գնային մրցունակություն,
- հեռահաղորդակցության զարգացած մակարդակ:

ՀՀ տեխնոլոգիական ոլորտի վերը նշված առավելություններից երևում է, որ Հայաստանը պետք է կարողանա օգտագործել իր տեխնոլոգիական առավելությունները և զարգացնել այդ ոլորտը: Կառավարության առաքելությունը պետք է դառնա քաղաքացիների բարեկեցությունն ու տեխնոլոգիաների վրա հիմնված աճի խթանումը: Պետական կառավարման համակարգը կարող է դառնալ հաջող նորարարության օրինակ քաղաքացիների, գործարարների, ինչպես նաև բարենպաստ միջավայր՝ նորարարության համար: Ներկայումս Հայաստանի մրցունակ նորարարական տնտեսության ստեղծումը կառավարության առաջնահերթ խնդիրն է, այն է՝ ներքին տնտեսության անցումը դեպի նորարարական զարգացման ճանապարհ, հիմնարար նոր տնտեսական քաղաքականության զարգացմանը, որի առաջնահերթությունները պետք է լինեն՝ կրթություն, գիտություն, բարձր տեխնոլոգիաների արտադրություն, իսկ իրականացման հիմնական մեխանիզմը պետք է լինի հանրային-մասնավոր համագործակցությունը:

Հիմնական խնդիրները, որոնց հետ բախվում են ստարտափերը, կապված են ֆինանսավորման հետ: Ստարտափերը ցանկալի ֆինանսավորում հաճախ չեն ստանում իրենց ներկայանալի չլինելու պատճառով: Ստեղծել են ապրանք ու չգիտեն՝ ինչպես այն վաճառել: Հաճախ ներդրողները հենց այդ հարցն են տալիս ստարտափերի հիմնադիրներին, ինչին վերջիններս պատասխան չունեն: Ներկայացնում են բյուջե, որտեղ ծախսերի 85 %-ը նախատեսում են աշխատավարձերի համար, իսկ մնացած 15-ը՝ շուկաներ ներգրավելու համար: Այնինչ, մասնագետի կարծիքով, պետք է լիներ հակառակը¹:

Ստարտափերը խնդիր ունեն մարքեթինգի կիրառման հետ կապված, ար-

¹ Կարեն Վարդանյան, Հայաստանում գործող «Սպրինտ» քրաուդֆանդինգ ներդրումային ֆոնդի ղեկավար, <https://b24.am/business/74969.html> «Սպրինտ» քրաուդֆանդինգ ներդրումային ֆոնդն առաջարկում է ֆինանսավորում կարճ ժամանակահատվածում,

դյունքում չեն կարողանում արագ վաճառել պրոդուկտը: Հաճախ նաև ստարտափերը չեն ներկայացնում sensitivity analysis (զգայունության վերլուծություն) կոչվածը: Իսկ ֆինանսական դաշտում ներդրողները մեծ ուշադրություն են դարձնում հենց կորուստների սահմանին: Չնայած այն հանգամանքին, որ ստարտափը կարող է ունենալ շատ լավ թիմ և գաղափար, սակայն ներդրման տեսանկյունից կարևոր է ներկայացնել հենց ռիսկերի վերլուծությունը: Ներդրողը դրանով պատկերացում է կազմում այն մասին, թե որքանով է ստարտափի հիմնադիրը տեղյակ իր պրոդուկտի մասին:

Հայաստանում անհրաժեշտ է բարենպաստ միջավայր ստեղծել մասնավոր հատվածի, պետության, հասարակական կազմակերպությունների և տարբեր հիմնադրամների միջև համագործակցության համար.

- հարկ է ապահովել տեխնոլոգիաների անխափան փոխանցման գործընթացը՝ մահվան հովտում չհայտնվելու և ամեն մի գաղափար կյանքի կոչելու համար:

- Պետության առաջնային խնդիրներից պետք է լինեն ինովացիոն ու հետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացումը և ներդրումը, տեխնոլոգիաների փոխանցումը, ինչպես նաև արտոնագրումը կազմակերպող ու համակարգող ենթակառուցվածքների ձևավորումն ու զարգացումը:

- Աշխատանքներ տանել մտածելակերպը փոխելու ուղղությամբ: Շատ հաճախ, սոցիալական վիճակից ելնելով, ինովացիոն ստարտափ գաղափար կրողները նախընտրում են բարձր վարձատրվող աշխատանք՝ հետին պլանում թողնելով ստարտափի կյանքի կոչելու գաղափարը, որի կիրառման արդյունքը կարող է ավելին լինել, քան իր բարձր վարձատրվող աշխատանքը:

- Համագործակցության շրջանակներում անհրաժեշտ է հայաստանյան և արտասահմանյան հայ գործարարների, ինչպես նաև միջազգային նշանակություն ունեցող վենչուրային և հետազոտողական հիմնադրամների, փորձագիտական կենտրոնների առաջնորդների հետաքրքրությունը սնեռել դեպի հայաստանյան ինովացիաներ, որոնք մեծ պոտենցիալ ունեն՝ դառնալու մրցունակ միավորներ և իրենց զարգացմամբ նպաստելու նորարարական մոտեցումների վրա հիմնվող գործարար, ինովացիոն մշակույթի ձևավորմանը:

- Կազմակերպել, որ ստարտափերը հաճախակի անհատական հանդիպումներ ունենան հետաքրքրվող ներդրողների հետ, ինչպես նաև աջակցել բանակցությունների վարման ընթացքում փոխհամագործակցության ընդլայնմանը:

- Հնարավորինս համապարփակ աջակցություն ցուցաբերել ստարտափերին ինչպես բուն արտադրանքի մշակման, այնպես էլ ներդրողների հետ հարաբերությունների հաստատման, պրոդուկտը շուկա հանելու, մարքեթինգը զարգացնելու ուղղությամբ:

- Հաշվի առնելով սփյուռքի մեծ ներուժը ստարտափերի ֆինանսավորման գործում՝ առավել կարևոր է տեղական ինովացիոն մասնագիտացված քրաուդֆանդինգ հարթակների առկայությունը և դրանց կարգավորումը իրավական

մակարդակով¹: Այն հնարավորություն կընձեռի նորաստեղծ ստարտափերին ավելի քիչ ծախսումներով իրենց գաղափարները ներկայացնել (հասանելի դարձնել) տեղական շուկային, իսկ մեր սփյուռքի գործընկերները պատրաստ կլինեն ներդրումներ կատարել հենց տեղական ստարտափերում, այնուհետև, կատարելագործելով գաղափարները, դուրս գալ միջազգային հարթակներ մեծ ներդրումներ ներգրավելու ակնկալիքով: Տեղական ինովացիոն հարթակի առկայությունը թույլ է տալիս զգալի նվազեցնել գաղափարի ներկայացման մարքեթինգային ծախսերը:

- Անհրաժեշտ է կրթական համակարգի փոփոխություն իրականացնել՝ խնդիր դնելով ոչ միայն որակյալ գիտելիք մատուցելը, որը ներկայումս պարտադիր է, բայց ոչ բավարար, այլև պատրաստել ինքնատիպ ու ստեղծագործ մարդկանց, փոխել մոտեցումը թե՛ դպրոցում, թե՛ բուհում, հնարավորության սահմաններում խրախուսել ստարտափի ոլորտում կրթական ծրագրերի իրականացման գործընթացը՝ ընդգրկելով նաև հիմնադրամներին: Ստարտափը պատվերներ կատարող չէ, ուստի ստարտափ ստեղծողը պետք է հասկանա, թե որտեղ կարող է կիրառել իր գաղափարը, որն իր հերթին անընդհատ ձևափոխվում ու զարգանում է:

¹ ԱՄՆ-ում գոյություն ունի համապատասխան JOBS Act (Jump our Business Startups), որը դիտարկում է քրաուդֆանդինգ հարթակներում միջոցների ներգրավման պայմանների մեղմացումը և առավելագույն միջոցների ներգրավումը: ["The JOBS Act: Encouraging Startups, Supporting Small Businesses"](http://www.whitehouse.gov/the-press-office/2012/04/05/jobs-act-encouraging-startups-supporting-small-businesses). whitehouse.gov. 2012-04-05. Retrieved 2015-11-21.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ (2019թ.)

Տարևիկ Շահինյան

կրտսեր գիտաշխատող

Տնտեսության ճյուղերի արմատական փոփոխությունները և միաժամանակ գործունեության զարգացման նոր հնարավորությունների առաջացումն արդեն այսօր անհնար է պատկերացնել առանց հեղափոխական նորարարական տեխնոլոգիաների:

Տարբեր գիտական դպրոցների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում տեխնոլոգիական վերափոխումների հետ կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունների հեղափոխությունը: Ամենատարածվածը տեղեկատվատեխնոլոգիական մոտեցումն է, որն իրենից ներկայացնում է ՏՀՏ ենթակառուցվածքներում իրականացված ներդրումների միջոցով թվային տնտեսության ձևավորում:

«Թվային տնտեսություն» հասկացությունը գիտական աշխատություններից զանգվածային լրատվամիջոցներ է տեղափոխվել համեմատաբար վերջերս՝ վերջին 5-6 տարիների ընթացքում: Ներկայումս հասկացությունը լայնորեն օգտագործվում է, այդ թվում՝ պետական կառավարման ոլորտում:

Ըստ Համաշխարհային բանկի՝ թվային տնտեսությունը, ընդհանուր իմաստով, թվային տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործման վրա հիմնված տնտեսական, սոցիալական և մշակութային հարաբերությունների համակարգ է: Նկատենք, որ գիտական գրականության մեջ «թվային տնտեսություն» հասկացության և ոչ մի միասնական սահմանում գոյություն չունի: Օրինակ՝ Gartner-ի վերլուծաբանների կարծիքով՝ թվային տնտեսությունը կազմակերպություններում թվային ապրանքների, ծառայությունների և ակտիվների հետ կապված արժեքների ստեղծումն է, սպառումն ու կառավարումը: Իսկ ահա Boston Consulting Group-ի խորհրդատուները կարծում են, որ թվային տնտեսությունը տնտեսական համակարգի բոլոր մասնակիցների՝ անհատների, խոշոր ընկերությունների և պետության կողմից առցանց հաղորդակցության ու նորարարական թվային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների օգտագործումն է: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) փորձագետներն էլ իրենց հերթին առավել մեծ ուշադրություն են դարձնում առևտրին. «Թվային տնտեսությունը էլեկտրոնային առևտրի միջոցով ապրանքների և ծառայությունների առքն ու վաճառքը հեշտացնող շուկաների ամբողջություն է, որոնց հիմքում ընկած են թվային տեխնոլոգիաները»:

«Թվային տնտեսություն» հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է Նիկոլաս Նեգրոպոնտեի կողմից 1995 թվականին, երբ Մասաչուսեթսի տեխնո-

¹ Ефимушкин В. А., Ледовских Т. В., Щербакова Е. Н., Инфокоммуникационное технологическое пространство цифровой экономики, Телекоммуникации и транспорт, № 5, том 11, 2017, стр. 15-20.

² Цифровизация экономики (обзор), № 4 (77), БИТ, 2018.

լոգիական ինստիտուտում (ԱՄՆ) ձևակերպեց «Էլեկտրոնային տնտեսության» իր հայեցակարգը¹:

Այսպիսով, թվային տնտեսությունը, իր լայն իմաստով, պարզապես նշանակում է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն արտադրության, կառավարման, կապի և զվարճանքի ոլորտներում: Փորձառությունը ցույց է տալիս, որ ներկայումս տնտեսական գործունեության որևէ ոլորտ՝ գյուղատնտեսությունից մինչև մետալուրգիա, բժշկությունից մինչև բնակարանային և կոմունալ ծառայություններ, չի կարող գործել առանց «համակարգչայնացման», որն էլ դեպի «թվայնացում» տանող առաջին քայլերից է:

Թվային փոխակերպման գաղափարն արդեն իսկ լայն տարածում է գտել ամբողջ աշխարհում: Ծառայությունների թվայնացումն առավել հեշտ է, իսկ ազդեցությունն ամենից շատ նկատելի է առևտրի, ֆինանսական հատվածի, պետական կառավարման և կրթության ոլորտներում: Այն բիզնեսի համար ևս շահավետ է: Թվային տնտեսության առավելություններից խոսելիս հարկ է նշել, որ այն նվազեցնում է վճարումների արժեքը և բացում է եկամտի նոր աղբյուրներ: Առցանց ռեժիմում ծառայությունների արժեքն ավելի ցածր է, քան ավանդական տնտեսության պայմաններում, ինչն էլ հիմնականում պայմանավորված է վաճառքի խթանմանն ուղղված ծախսերի ավելի ցածր մակարդակով: Բացի այդ, թվային աշխարհում ապրանքներն ու ծառայությունները կարող են արագ մուտք գործել համաշխարհային շուկա և դառնալ հասանելի աշխարհի ցանկացած վայրում: Առաջարկվող արտադրանքը կարելի է գրեթե ակնթարթորեն ձևափոխել՝ նպատակ ունենալով բավարարել սպառողի սպասելիքները կամ կարիքները: Թվային տնտեսությունն ավելի լայն հնարավորություններ է ընձեռում սպառողներին (տեղեկատվական, կրթական, գիտական, ժամանցային): Իսկ թվայնացման կարևոր բաղադրիչը նորարարական տեխնոլոգիաների տեղեկատվական անվտանգության ապահովումն է, ինչն էլ պայմանավորում է թվային տնտեսության նկատմամբ հասարակության վստահությունը:

Թվային տնտեսության հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է նրանով, որ գիտնականները, միջազգային կազմակերպությունները, մասնավորապես Համաշխարհային բանկի «Համաշխարհային զարգացման մասին զեկույց 2016, թվային շահաբաժիններ» զեկույցը ցույց է տալիս, որ երկրների տնտեսական զարգացման հարցում տեղեկատվական տեխնոլոգիաների դերն ու կարևորությունը տարեցտարի ավելի է մեծանում աշխարհի բոլոր երկրներում: Զեկույցներում ընդգծում են, որ «Համաշխարհային ցանցը» ներկայումս արդեն իսկ հասանելի է մոլորակի ողջ բնակչության մոտ 40 %-ի համար: Իսկ ապրանքների և ծառայությունների վաճառքի, հանրային ծառայությունների մատուցման, քաղաքացիների կրթության համար թվային տեխնոլոգիաների օգտագործումն ամբողջ հասարակությանը թույլ կտա ստանալ այսպես կոչված «թվային շահաբաժիններ», որոնք էլ ընկալվում են որպես ազգային բարեկեցության և նյութա-

¹ Negroponte N., Being Digital // Paper book edition. MTI. NY. USA. 1996.

կան շահույթի աճ, ինչպես նաև պետական կառավարման թափանցիկություն¹:

Բնականաբար, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման մակարդակը տարբեր է տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրների համար:

Այսօր աշխարհի տարբեր երկրներում թվային տնտեսության զարգացման առավել ճշգրիտ ցուցանիշներից մեկն է համընդհանուր կապի ինդեքսը (Global Connectivity Index - GCI), որն ուսումնասիրվում և գնահատվում է Huawei Technologies Co չինական հաղորդակցության ընկերության կողմից: Ուսումնասիրությունն իրականացվում է աշխարհի արդեն ավելի քան 50 երկրների շրջանակներում, իսկ գնահատումը՝ չափորոշիչների 2 խմբերից (թվային տնտեսության վերափոխմանը նպաստող արտադրողականության և տեխնոլոգիական չափորոշիչներ) ընտրված 40 ցուցանիշների միջոցով²:

Վերջին հինգ տարիների ընթացքում համընդհանուր կապի ինդեքսը հետամուտ է եղել SՀՏ ենթակառուցվածքներում իրականացված ներդրումային միտումներին, ինչպես նաև թվային հասունության և տնտեսական աճի միջև փոխհարաբերություններին: 2018 թվականին ընկերությունն ընդլայնել է ուսումնասիրությունների շրջանակը՝ 50 երկրներից հասցնելով 79-ի: Ձեկույցում երկրները բաժանվում են 3 խմբերի՝ համաձայն SՀՏ ներդրման և զարգացվածության մակարդակների:

Աղյուսակ 1

Երկրների դասակարգումն ըստ SՀՏ ներդրման և զարգացվածության մակարդակների³

<i>Երկրի դասը</i>	<i>Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (ԱՄՆ դոլար)</i>	<i>GCI ինդեքսի գրանցած արդյունքը</i>
Սկսնակներ	<i>3700</i>	<i>20-34</i>
Հաջող ներդրողներ	<i>16300</i>	<i>35-55</i>
Առաջատարներ	<i>54100</i>	<i>56-85</i>

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, թե ինչպես են այդ 79 երկրները տեղակայել լայնաշերտ ցանցեր և ներդրումներ կատարել այնպիսի տեխնոլոգիաներում, որոնք նպաստում են արդյունաբերության, քաղաքների և կառավարության թվային փոխակերպմանը:

Ցավոք, ընկերության կողմից ուսումնասիրված երկրների շարքում դեռևս բացակայում է Հայաստանի Հանրապետությունը: Աղյուսակի միջոցով ներկայացնենք բարձր արդյունքներ գրանցած առաջին 25 երկրները, ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներից ցանկում ընդգրկված Ռուսաստանի Դաշնության, Բելա-

¹ Кунгуров Д., Россиян ждет цифровая экономика / Д. Кунгуров // Утро.ру. - 04.12.2016. - URL: <https://utro.ru/articles/2016/12/04/1307336.shtml>

² Global Connectivity Index 2018 // Huawei. -URL: https://www.huawei.com/minisite/gci/assets/files/gci_2018_whitepaper_en.pdf?v=20180914

³ Աղբյուրը՝ Global Connectivity Index 2018 // https://www.huawei.com/minisite/gci/assets/files/gci_2018_whitepaper_en.pdf?v=20180914

ռուսի և Ղազախստանի գրանցած արդյունքները: Իսկ ներկայացված երկրներից Չինաստանն ու Թուրքիան հավակնում են ԵԱՏՄ անդամակցմանը:

Աղյուսակ 2-ում ներկայացված են նաև մեր կողմից ուսումնասիրվող 30 երկրների ՀՆԱ-ի ցուցանիշները (մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն): Ստացված պատկերից ակնհայտ է, որ առաջատար քառյակում ներկայացված երկրները բավարարում են երկրների դասակարգման վերոնշյալ չափորոշիչներից 2-ին էլ և համարվում են առաջատար՝ համաձայն S2S ներդրման և զարգացվածության մակարդակների: Ցանկը սահմանափակող երկրները, որոնց թվում է նաև Ռուսաստանի Դաշնությունը, համապատասխան GCI ինդեքսի, դասակարգվում են որպես հաջող ներդրողներ, սակայն ունեն ՀՆԱ ցածր մակարդակ: Հարկ է նշել, որ ակնհայտ շեղումները նկատելի են հենց միջին արդյունքներ գրանցած երկրների մոտ, որոնք հավակնում են ընդգրկվել հաջող ներդրողների ցանկում:

Ինչպես արդեն նշել ենք, Huawei Technologies Co ընկերության փորձագետների կողմից ՀՀ-ն չի ուսումնասիրվել, և չի հաշվարկվել ՀՀ GCI ինդեքսը, իսկ ահա 2017 թվականի ընթացքում, ընթացիկ գներով հաշվարկված, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 3937 հազ. ԱՄՆ դոլար: Միայն ՀՆԱ-ի ցուցանիշով Հայաստանը ներառվում է սկսնակների ցանկում:

Աղյուսակ 2

**Համընդհանուր կապի ինդեքսն¹ ու մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն²
(ընթացիկ գներով, ԱՄՆ դոլար) 2017 թվականի ընթացքում**

	<i>Զբաղեցրած դիրքը</i>	<i>Երկիրը</i>	<i>Գրանցած արդյունքը</i>	<i>Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն</i>
1	1	ԱՄՆ	76	59532
2	2	Սինգապուր	75	57714
3	3	Շվեդիա	71	53442
4	4	Շվեյցարիա	69	80190
5	5	Ֆինլանդիա	68	45703
6	6	Միացյալ Թագավորություն	67	39720
7	7	Դանիա	66	56308
8	8	Նիդեռլանդներ	65	48223
9	9	Ճապոնիա	64	38424
10	10	Հարավային Կորեա	63	29743
11	11	Նորվեգիա	63	75505
12	12	Ավստրալիա	62	53800
13	13	Գերմանիա	62	44470
14	14	Նոր Զելանդիա	61	42941
15	15	Լյուքսեմբուրգ	61	104103
16	16	Կանադա	61	45032

¹ Տվյալները՝ Global Connectivity Index 2017 // Huawei. -URL:

<https://www.huawei.com/minisite/gci/en/country-rankings.html>

² Տվյալները՝ <https://knoema.ru/atlas/topics/Экономика/Национальные-счета-Валовой-внутренний-продукт/ВВП-на-душу-населения-в-текущих-ценах-долл-США>

	Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Գրանցած արդյունքը	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն
17	17	Իռլանդիա	60	69331
18	18	Ֆրանսիա	60	38477
19	19	Ավստրիա	60	47291
20	20	Բելգիա	59	43324
21	21	Իսպանիա	53	28157
22	22	ԱՄԷ	52	40699
23	23	Էստոնիա	51	19705
24	24	Պորտուգալիա	51	21136
25	25	Լիտվա	50	16681
26	29	Չինաստան	48	8827
27	34	Ռուսաստանի Դաշնություն	45	10743
28	44	Բելառուս	42	5728
29	47	Ղազախստան	41	9030
30	52	Թուրքիա	39	10546

Տնտեսության թվային հատվածի ընդլայնման հիմնական պատճառը գործարքային հատվածի աճն է, որը զարգացած երկրներում կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 70 %-ը: Այս ոլորտը ներառում է պետական կառավարումը, խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների ֆինանսավորումը, մեծածախ և մանրածախ առևտուրը, ինչպես նաև տարատեսակ կոմունալ, անձնական և սոցիալական ծառայությունների մատուցում: Ինչպես գիտենք, տնտեսական վերլուծության մեջ ՀՆԱ-ն բնութագրում է տնտեսության միավորների արտադրական գործունեության վերջնական արդյունքը և չափում այդ միավորների կողմից վերջնական սպառման համար արտադրված ապրանքների և ծառայությունների արժեքը (ՀՆԱ = սպառում + ներդրումներ + պետական ծախսեր + զուտ արտահանում (զուտ արտահանում = արտահանում - ներմուծում)): ՀՆԱ-ի միջոցով հնարավոր է պատկերացում կազմել ուսումնասիրվող երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, գնահատել կյանքի որակը, դիտարկել երկրի տնտեսության վիճակը տարբեր ժամանակաշրջաններում, համեմատել տարբեր երկրների հետ:

Տնտեսության թվայնացման և ՀՆԱ-ի միջև նկատելի սերտ կապն էլ հանդիսանում է ՀՀ-ում տնտեսության թվայնացման կարևորագույն նախապայման: ՀՀ-ում թվային տեխնոլոգիաների օգտագործման մակարդակի բարձրացումը ուղղակի ազդեցություն կունենա նաև ՀՆԱ-ի մակարդակի բարձրացման վրա: Նման փոխազդեցության պարագայում նորարարական տեխնոլոգիաները մուտք կգործեն ՀՀ տնտեսության բոլոր ճյուղեր՝ ապահովելով դրանց զարգացումն ու կայուն տնտեսական աճ:

Այսպիսով, անկախ բոլոր դժվարություններից, ՀՀ կառավարությունը պետք է ձեռնամուխ լինի տնտեսության թվայնացմանը, քանի որ արդեն այսօր համաշխարհային տնտեսությունում ռազմավարական դիրքերն ամրապնդելու միակ եղանակը դա է:

The Boston Consulting Group-ը ուսումնասիրել է մի շարք առաջատար երկրների ՀՆԱ-ում թվային տնտեսության մասնաբաժինը 2010-2016 թթ. համար: Ստորև ներկայացնենք 2010 և 2016 թվականների արդյունքներն ու աճի դինամիկան:

Աղյուսակ 3

G-20 երկրների ՀՆԱ-ում թվային տնտեսության մասնաբաժինը 2010, 2016 թթ. համար (%)¹

№	Երկիրը	2010 թ.	2016 թ.
11	Մեծ Բրիտանիա	8,3	12,4
22	Հարավային Կորեա	7,3	8
33	Չինաստան	5,5	6,9
44	Եվրոպական Միություն	3,8	5,7
55	Հնդկաստան	4,1	5,6
66	Ճապոնիա	4,7	5,6
77	ԱՄՆ	4,7	5,4
88	Մեքսիկա	2,5	4,2
99	Սաուդյան Արաբիա	2,2	3,9
110	Ավստրալիա	3,3	3,7
11	Կանադա	3	3,6
112	Արգենտինա	2	3,3
113	Ռուսաստանի Դաշնություն	1,9	2,8
114	Հարավային Աֆրիկա	1,9	2,5
115	Բրազիլիա	2.2	2,4

Ինչպես կարելի է նկատել, Ռուսաստանի Դաշնությունը G-20 երկրների ցանկի վերջին հորիզոնականներում է: Թվային տնտեսության աճը ՀՆԱ-ի նկատմամբ 2010-2016 թթ. կազմել է 1,1-ից 1,6 անգամ: 2010-2016 թվականների ընթացքում ՀՆԱ-ում թվային տնտեսության մասնաբաժնի ամենամեծ աճը գրանցվել է Մեծ Բրիտանիայում, Արգենտինայում և Սաուդյան Արաբիայում: Համաձայն McKinsey & Company ընկերության հետազոտության՝ Ռուսաստանի Դաշնությունը նախատեսում է մինչև 2025 թվականը մեծացնել ՀՆԱ-ի ծավալը 19-34 %-ով՝ ի հաշիվ տնտեսության թվայնացման²:

Տնտեսության արմատական փոփոխությունների մասին է վկայում այն փաստը, որ շատ պետություններ արդեն իսկ մշակում և կիրառում են թվային տնտեսության զարգացման պետական ռազմավարություններ: Օրինակ՝ ԱՄՆ-ի Digital Economy նախագիծը, Չինաստան-ի Internet Economy-ն, Գերմանիայի՝ Industrie 4.0-ն և Ռուսաստանի Դաշնության Цифровая экономика-ն:

¹ Տվյալները՝ Report // The Internet Economy in the G-20// http://image-src.bcg.com/Images/The_Internet_Economy_G-20_tcm9-106842.pdf

² McKinsey & Company // Цифровая Россия: новая реальность // <https://www.mckinsey.com/~media/McKinsey/Locations/Europe%20and%20Middle%20East/Russia/Our%20Insights/Digital%20Russia/Digital-Russia-report.ashx>

Համաշխարհային բանկի փորձագետների կողմից մշակվել է «Մինչև 2025 թվականը ԵԱՏՄ թվային օրակարգ (հեռանկարներ և առաջարկություններ)» ուսումնասիրությունը, որում թվային տնտեսությունը ներկայացվում է որպես երկրների զարգացման հիմնական գործոն¹:

ՀՀ կառավարությունը նույնպես տեխնոլոգիական ոլորտի զարգացումը համարում է գերակա ուղղություն, ուստի կարևորում է նաև նորարարական տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը տնտեսության տարբեր ոլորտներում:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ թվային տեխնոլոգիաների ներդրումը նոր հնարավորություններ է ստեղծում երկրների սոցիալ-տնտեսական զարգացման համար: Տնտեսության թվայնացման շնորհիվ ՀՀ տնտեսության կարևոր ձեռքբերումների շարքին կարելի է դասել հետևյալները.

- աշխատուժի արտադրողականության բարձրացումը, ինչպես նաև ներկա սոցիալական կարիքների բավարարման համար անհրաժեշտ աշխատանքային ժամանակահատվածի կրճատումը,
- տեղեկատվության հասանելիության և որոշումների կայացման ավտոմատացման շնորհիվ բիզնեսի պլանավորման և կառավարման արդյունավետության բարձրացումը,
- տնտեսական գործունեության թափանցիկության բարձրացումը, մրցակցային պայմանների բարելավումն ու ստվերային գործարքների հայտնաբերման և կանխարգելման հնարավորությունները,
- տնտեսության հիմնական ոլորտների զարգացումն ու ՀՆԱ մակարդակի նշանակալի աճը,
- միջանձնային և միջգերատեսչական փոխգործակցության աշխարհագրության ընդլայնումը, հեռահար հաղորդակցության, ուսուցման, ծառայությունների մատուցման և զբաղվածության հնարավորությունների զարգացումը,
- սոցիալ-տնտեսական համագործակցության տարածքային խոչընդոտների վերացումը,
- տարատեսակ ծառայությունների թվայնացման միջոցով կյանքի որակի բարելավումը, համացանցի և դրա ընձեռած հնարավորությունների լայն տարածումն ու օգտագործումը («խելացի» տներ, «խելացի» քաղաքներ),
- տեղեկատվության, ինչպես նաև գիտական ու մշակութային արժեքների հեռահար հասանելիության միջոցով ինտելեկտուալ զարգացման մակարդակի բարձրացումը:

¹ Цифровая повестка Евразийского экономического союза до 2025 года: перспективы и рекомендации // <http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/Oбзор%20ББ.pdf>

ՍԻՆԳԱՊՈՒՐԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Լիլիթ Սարգսյան

տնտեսագիտության թեկնածու

Անկախության 50-ամյա ժամանակահատվածում Սինգապուրն արձանագրեց տնտեսական աճի աննախադեպ ցուցանիշ: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 500 դոլարից աճեց՝ դառնալով 55000 դոլար, ինչը իսկական տնտեսական հրաշք է:

Ինչպե՞ս կարողացավ Սինգապուրը հասնել նման հաջողության:

Հանգամանորեն վերլուծելով Սինգապուրի պատմությունը՝ մենք առանձնացրել ենք այն հիմնասյուները, որոնց վրա Սինգապուրը կառուցեց իր տնտեսական հրաշքը:

Սինգապուրի տնտեսական հաջողությունը կառուցվել է յոթ հիմնասյուների վրա: Հարկ է արձանագրել մի շատ կարևոր հանգամանք. այդ հիմնասյուներից գրեթե բոլորը կիրառվել են նաև Հայաստանում: Այդուհանդերձ, Սինգապուրում դրանք հաջողվել են, իսկ Հայաստանում՝ ոչ, ուստի պարզենք, թե ինչն է ընկած այս հաջողությունների և ձախողումների հիմքում:

Առաջին՝ կոռուպցիայի դեմ ակտիվ պայքար, որի ընթացքում կիրառվել է երկու գործիք. անխտիր պատժվեցին կոռուպցիոն մեխանիզմներում մեղադրվող անձինք, և էականորեն բարձրացվեցին պատասխանատու պետական պաշտոնյաների աշխատավարձերը:

Նորանկախ Հայաստանում նույնպես եղան կոռուպցիայի դեմ պայքարի դրսևորումներ, սակայն դրանց անարդյունավետ մեխանիզմները չտվեցին ցանկալի արդյունք: Ի պատիվ ներկայիս կառավարության՝ պետք է նշել, որ այժմյան քաղաքականությունն առավել հարում է Սինգապուրի գործիքակազմին: Այնուամենայնիվ հարկ է առանձնացնել հնարավոր երկու ծուղակ, որոնցից խուսափելով միայն Սինգապուրի կառավարությունը կարողացավ հասնել հաջողության: Առաջինը ժողովրդավարության ծուղակն է: Պետական պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացումը, անկասկած, առաջացնելու է ժողովրդի դժգոհությունը: Այդուհանդերձ, ընկրկելու պարագայում մենք կարող ենք կորցնել պետական պաշտոններում լավագույն մասնագետներին ներառելու հնարավորությունը: Երկրորդը մեղալի երկու կողմերի անհամադրելիության ծուղակն է: Տվյալ դեպքում մեղալի մի կողմում պետական պաշտոնյայի աշխատավարձի չափն է, մյուս կողմում՝ փորձառությունն ու մասնագիտական որակները: Սինգապուրը կարողացավ գտնել դրանց լավագույն համադրությունը և հաջողեց:

Երկրորդ՝ տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարությունների մշակում և ճշգրիտ իրագործում. տվյալ պարագայում շատ մեծ դեր ունեցան ռազմավարությունների հստակությունն ու ճիշտ թիրախների որոշումը, որոնցից բխեց նաև արդյունավետ մարտավարությունների մշակումը:

Նորանկախ Հայաստանում ևս մշակվում էին տնտեսական զարգացման ռազմավարություններ, սակայն լավագույն դեպքում դրանք թերակատարվում էին,

իսկ վատագույն դեպքում՝ հակասում միմյանց, և առաջանում է երկու ծուղակ, որոնցից խուսափելով՝ Մինգապուրը գրանցեց հաջողություն: Առաջինը անորոշության ծուղակն է. ռազմավարությունները պետք է ունենան հստակորեն չափելի և ճիշտ ընտրված թիրախներ, որոնք հնարավորություն կտան ընտրելու ճիշտ մարտավարություն: Ներկայումս ՀՀ տնտեսության համար, թերևս, մեծ վտանգ կա այս ծուղակում հայտնվելու: Մասնավորապես՝ ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019 - 2024 թվականների (բաժին 5.11 - 5.13), Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020 - 2024 թվականների (բոլոր բաժինները) և այլ ռազմավարություններում մեծամասամբ առկա չեն չափելի թիրախներ: Երկրորդը ջայլամի ծուղակն է. տվյալ պարագայում եթե մենք ճիշտ չենք գնահատում առկա վիճակը կամ թիրախավորում ենք մոլորության մեջ գցող իրավիճակ, ապա ձախողվելու ենք: Մասնավորապես՝ երբ նշում ենք, որ հնգամյա ռազմավարության իրականացմամբ ՀՀ-ն պետք է դառնա լավագույն ներդրումային միջավայր ունեցող 15 երկրներից մեկը, և դա նույնականացնում ենք Doing business վարկանիշային աղյուսակում 15-րդ հորիզոնականը գրավելու հետ, ապա սա մոլորություն է¹: Մինգապուրը կարողացավ շրջանցել այս ծուղակները և հաջողեց:

Երրորդ՝ պետական կառավարման համակարգում գործառույթների կրկնության բացառումը. Մինգապուրը կարողացավ կառուցվածքային փոփոխությունների շնորհիվ հասնել նրան, որ յուրաքանչյուր գործառույթի համար պատասխանատու լինի պետական միայն մեկ մարմին:

Նորանկախ Հայաստանում հաճախադեպ էր գործառույթների կրկնությունը, ուստի տվյալ գործառույթները լավագույն դեպքում թերակատարվում էին: Ահա թե ինչու Մինգապուրի զարգացման ազգային գործակալությունը հաջողությամբ իրագործեց արտահանման խրախուսման քաղաքականությունը, իսկ Զարգացման հայկական գործակալությունը՝ ոչ:

Չորրորդ՝ ժամային գոտու արտոնության ճիշտ կիրառում: Սրա շնորհիվ Մինգապուրը դարձավ աշխարհի ֆինանսական խոշորագույն կենտրոններից երրորդը: Այս առանձնահատկությունը Հայաստանը չունի, ուստի և այն կիրառելի չէ Հայաստանի պարագայում:

Հինգերորդ՝ ավտորիտար կառավարում: Մինգապուրում ավտորիտար կառավարումն անխուսափելի էր մարդկանց մտածողության փոփոխության համար: Այդ նպատակով, օրինակ, սահմանվեց տուրք թքելու դեմ: Ավտորիտար կառավարումը մասամբ կարելի է կիրառել նաև ՀՀ-ում՝ հասարակության ինքնագիտակցության որոշակի մակարդակի հասնելու համար:

Վեցերորդ՝ աղքատության դեմ պայքարի յուրօրինակ մեխանիզմ: Տվյալ դեպքում աղքատության հաղթահարումն իրականացվում էր ոչ թե սոցիալական նպաստների տրամադրմամբ, այլ աղքատների համար պայմաններ ստեղծելով,

¹ 2019 թ. Doing business-ի տվյալներով՝ Լիտվան զբաղեցնում է 14-րդ հորիզոնականը, Ադրբեջանը՝ 25-ը, իսկ, օրինակ, Ճապոնիան՝ 39-ը, Բելգիան՝ 45-ը, Լյուքսեմբուրգը՝ 66-ը: Արդյոք սա նշանակում է, որ վերջին 3 երկրները ներդրումային ավելի քիչ գրավչություն ունեն, քան Ադրբեջանն ու Լիտվան:

որպեսզի նրանք ինքնուրույն դուրս գան աղքատության ճիրաններից: Ի տարբերություն նորանկախ Հայաստանի կառավարության՝ ներկայիս կառավարությունը ևս որդեգրել է աղքատության հաղթահարման սինգապուրյան մոտեցումը՝ զերծ մնալով նպաստների անհուսալի համակարգից:

Յոթերորդ՝ ներդրումների ներգրավման և արտահանման խթանման ակտիվ քաղաքականության իրագործում. գործիքները բազմաթիվ էին՝ ներդրումային և արտահանման հարթակներ, մեկ պատուհանի ստեղծում, հարկային բարեփոխումներ, միջազգային ցուցահանդեսներին թիրախային ոլորտների մասնակցության աջակցություն և այլն:

Ամփոփելով՝ նշենք, որ Սինգապուրի տնտեսական հաջողությունը կերտած յոթ հիմնասյուներից հինգը ամբողջությամբ և մեկը մասամբ կարող են կիրառվել նոր Հայաստանում:

Սինգապուրի փորձից նշենք նաև մի քանի կիրառական գործիքներ, որոնք կարող են հաջողությամբ գործարկվել Հայաստանում.

1. տնտեսական ռազմավարությունների մշակում միայն խոր SWOT վերլուծության հիման վրա (ներկայիս ռազմավարությունները ներառում են շատ մակերեսային SWOT վերլուծություն: Իրականում այդ վերլուծությունն այնքան ծավալուն պետք է լինի, որ չի կարող ներառվել ռազմավարության շարադրանքում),

2. ներդրումային արդյունավետ հարթակի գործարկում (investmentprojects.am-ի վերափոխման եղանակը նշված է վերլուծության մեջ՝ հիմնվելով Սինգապուրի փորձի վրա),

3. ներդրողների խնդիրներով զբաղվող մեկ պատուհանի ներդրում (թեպետ 2019 թ. դեկտեմբերին ստեղծվել է, այդուհանդերձ ներդրումային հարթակի սխալները չկրկնելու համար վերլուծությունում նշել ենք դրա ստեղծման արդյունավետ եղանակը սինգապուրյան օրինակով):

ՄԱԼԱՅՁԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄՈՂԵԼԸ

Քրիստինե Բաղդասարյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Մալայզիայի «տնտեսական հրաշքի» իրականացման մեջ մեծ է նախկին վարչապետ Մահաթհիր Մուհամմադի վաստակը, որը էապես նպաստեց Մալայզիայում հավասարակշռված բազմաշակութային հասարակության ձևավորմանը: Նախկին վարչապետի կարևոր ձեռքբերումը քաղաքական և խորհրդարանական կայուն համակարգի ստեղծումն էր, որտեղ բոլոր հիմնական էթնիկ խմբերը՝ մալայացիները, չինացիները և հնդիկները, կարողացան միավորվել կոալիցիաներում, ընդ որում՝ նման կոալիցիաներ ստեղծվեցին ոչ թե ընտրություններից հետո, այլ դրանցից առաջ: Ստեղծելով կոալիցիաներ՝ կուսակցությունները ընտրությունների ժամանակ ստանում են բոլոր էթնիկ խմբերի ավելի մեծ աջակցությունը: Դրա շնորհիվ իշխանության եկող կուսակցությունը վայելում է երկրի բնակչության բացարձակ մեծամասնության աջակցությունը: Էթնիկ խմբերը համամասնորեն ստանում են իրենց տեղերը կառավարությունում: Ամենամեծ էթնիկ խումբը ստանում է առավելագույն քանակով պորտֆելներ: Ինչպես ցույց է տվել այս համակարգի փորձը, իշխանությունը կիսելու պատրաստակամությունը նվազեցնում է կոնֆլիկտային իրավիճակների հավանականությունը:

Մալայզիայի տնտեսական հրաշքի ուղին ամենահետաքրքիրը և ուսանելիներից մեկն է աշխարհում: Մալայզիան աննախադեպ տնտեսական առաջընթաց ունեցավ Մահաթհիր Մուհամմադի մշակած «Մալայզիական պլանի» շնորհիվ, որի հիմքում ընկած էր այսպես կոչված «կորպորատիվ ազգայնականության» գաղափարը՝ տնտեսության բարձր տեխնոլոգիական ոլորտներում կորպորացիաների ստեղծումը: Նման կորպորացիաների համար այս փուլում առաջնայինը ոչ թե եկամուտն էր, այլ ամբողջ հասարակության շահի և բարգավաճման ուղղությամբ աշխատանքը: Պետությունը, իր հերթին, հանդես էր գալիս ոչ թե որպես ղեկավար, այլ որպես հավասար գործընկեր: Այս ամենի արդյունքում երկիրը վառելիքաէներգետիկ և գյուղատնտեսական հումքի մատակարարից վերածվեց արագ զարգացող արդյունաբերական պետության:

Հենց Մահաթհիր Մուհամմադն առաջարկեց մուսուլմանական երկրների ինտեգրում և միասնական շուկայի ձևավորում այսպես կոչված «ոսկե դինարի» հիման վրա, որն իրական արժեքային բովանդակություն ունեցող պայմանական արժույթ է:

«Ասիական վագրերի», այդ թվում՝ նաև Մալայզիայի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ տնտեսության արդիականացումը իրականացվել է արևմտյան և ազգային զարգացման մոդելների համադրմամբ: Որպես Մալայզիայի արդիականացման նախաձեռնող՝ Մահաթհիր Մուհամմադն իրականաց-

րեց բնակչության մտածելակերպի, առևտրի նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն, ինչպես նաև կրթության մակարդակի բարձրացմանն ուղղված բարեփոխումներ: Նա որպես թիրախ ընտրեց մի քանի հիմնական ուղղություն, և դրանց շուրջ սկսեցին պտտվել բոլոր մյուս բարեփոխումները: Հիմնական նպատակակետերն էին.

- բնակչության շրջանում աղքատության վերացում՝ անկախ ազգային պատկանելությունից և ռասայից,

- տնտեսական գործունեության որոշակի ոլորտներում ռասայական մենաշնորհի վերացում, քանի որ երկար ժամանակ առևտրի ոլորտի գերակշիռ մասը Մալայզիայի չինական համայնքի ձեռքում էր, մինչդեռ մալայացիները պատմականորեն զբաղված էին գյուղատնտեսության ոլորտում,

- տնտեսական մշակույթի վերափոխում, որն ուղղված էր առևտրի և տեխնոլոգիաների բնագավառներում նոր հմտությունների ձեռքբերմանը,

- նոր մտտեցումների և արժեքների յուրացում:

Մահաթհիր Մուհամմադի նոր տնտեսական քաղաքականությունը նախատեսում էր տնտեսության վերակազմավորում՝ ազգային հարստության առավել համաչափ բաշխվածության հասնելու համար: Այսպիսով՝ Մալայզիայի նոր տնտեսական քաղաքականության հիմքը կրթությունն ու մասնագիտական վերապատրաստումն էին:

Մալայզիան հումքի արդյունահանման և արտահանման վրա հիմնված տնտեսություն ունեցող երկրից վերածվեց առաջընթաց տեմպերով զարգացող պետության, որտեղ արդյունաբերության և ծառայությունների ոլորտի բաժինը ՀՆԱ-ում կազմում է 90 %: Այսօր արդյունաբերական ապրանքների մասնաբաժինը ընդհանուր արտահանման 85 %-ն է: Մալայզիայում շահագործվող ավտոմեքենաների 80 %-ը տեղական արտադրության է:

Մահաթհիր Մուհամմադը առաջին հերթին սահմանազատեց կրոնն ու քաղաքականությունը, այնուհետև ձեռնամուխ եղավ երկրի զարգացմանը: Դրա շնորհիվ, ժամանակակից ձեռքբերումներին, տնտեսական աճին և բարձր կենսամակարդակին զուգահեռ, մալայզիական հասարակությանը հաջողվել է պահպանել իր կրոնական ու մշակութային ավանդույթները: Մահաթհիր Մուհամմադը քննադատում էր «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»՝ շեշտելով, որ զարգացող երկրների ժողովուրդներին անհրաժեշտ են, առաջին հերթին, ոչ թե հռչակագրային իրավունքներ, այլ տնտեսության իրական առաջընթաց:

Մալայզիայի կառավարության առաջնային խնդիրների լուծումը, որը հետագայում բերեց «տնտեսական հրաշքի», պայմանավորված էր պետության իրականացրած կառուցողական բարեփոխումներով, որոնցով էականորեն բարելավվել է մալայզիական ժողովրդի կյանքի որակը, և լուծվել են հրատապ սոցիալական խնդիրներ, օրինակ՝ գործազրկության մակարդակի կրճատումը, ինչը 2018 թվականին կազմել է 3.33 տոկոս:

Մալայզիայի «տնտեսական հրաշքը» պայմանավորած է ոչ միայն տնտեսական գործիքների և մեխանիզմների մշակմամբ և կիրառմամբ, այլև գաղափարական մոտեցումներով, որոնք վերցվել են իսլամի ուսմունքից:

Ըստ էության, ուսանելի է մալայզիական տնտեսության արդյունաբերականացման նոր տնտեսական քաղաքականության գործարկման մոդելը, որի իրականացումը նախատեսում է ապահովել ներմուծման ուղղվածությունից անցում դեպի արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության: Այն ուղղված է նաև քաղաքային և գյուղական համայնքներում սոցիալական և տնտեսական զարգացման ընդլայնմանը և ֆինանսական համահարթեցմանը:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի գիտության և տեխնոլոգիաների ոլորտում նորարարությունների հետևողական քաղաքականությունը, որը սահմանված է կրթության ոլորտի զարգացման հնգամյա ծրագրում՝ հաշվի առնելով տնտեսության և հասարակության իրական հնարավորությունները: Մինևույն ժամանակ ինչպես Մալայզիայում, այնպես էլ, ակնկալվում է, նաև ՀՀ-ում, ռազմավարությունների և ծրագրերի մշակողները լավատեղյակ են տնտեսության փոխակերպման նոր հնարավորություններին, մասնավորապես՝ տնտեսության անցմանը արդյունաբերականից դեպի տեղեկատվական տնտեսության կամ նորամուծական տնտեսության զարգացմանը: Այդ փոխակերպումը հաջողվում է միայն այն ժամանակ, երբ այս գործընթացում ներգրավված են լինում բոլոր ստեղծարար ուժերը՝ պետությունը, հանրային (հասարակական) և ոչ պետական (ոչ կառավարական) ոլորտները, ինչպես նաև սոցիալական բոլոր շերտերի ստեղծագործական մասը:

Եզրափակելով՝ ցանկանում եմ արձանագրել, որ Մալայզիայի «տնտեսական հրաշքի» մեխանիզմը հնարավոր է կիրառել նաև Հայաստանում՝ այն զուգակցելով ինտեգրման ներկայիս և ազգային գաղափարախոսության առաջնահերթություններին:

«ՃԱՊՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Սվետլանա Դալլաքյան

տնտեսագիտության թեկնածու

«Ճապոնական տնտեսական հրաշքը» դասվում է աշխարհում տեղի ունեցած տնտեսական հրաշքերի շարքը և ունի իր առանձնահատկությունները: Այն սովյալ երկրի որոշակի ժամանակաշրջանում ու աշխարհաքաղաքական որոշակի միջավայրում տեղի ունեցած տասնյակ գործոնների համադրման արդյունք է՝ իր էությունը բացառիկ, և ենթակա չէ արհեստական ընդօրինակման:

Այս առումով ընդունված ակադեմիական կարծիք է, թե ճապոնացիները, ներմուծելով որևէ օտար կամ նոր բան, այն հարմարեցնում են իրենց ընկալումներին և կիրառում մեծ արդյունավետությամբ: Տվյալ հանգամանքով է նաև պայմանավորված այն տարածված արտահայտությունը, թե «ճապոնացիները չեն կրկնօրինակում, այլ յուրացնում են»¹:

Մեր նպատակն է ներկայացնել «Ճապոնական հրաշքի» փիլիսոփայությունը և սկզբունքային մոտեցումները՝ կապված ֆինանսատնտեսական լծակների, ճապոնական մենեջմենթի, ինչպես նաև էթնոմշակութային առանձնահատկությունների հետ, և դրանք որոշ ուղղություններով ծառայեցնել Հայաստանում տնտեսական հրաշքի գործարկմանը:

Նախքան «Ճապոնական տնտեսական հրաշքի» ֆենոմենին անդրադառնալը անհրաժեշտ է ներկայացնել ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման գործընթացը, որն էլ հենց հիմք դարձավ «Ճապոնական տնտեսական հրաշքի» իրագործման համար:

Արդիականացումը ճապոնիային հնարավորություն տվեց «հետապնդող զարգացման» մոդելից անցնելու համընթաց զարգացմանը և նույնիսկ աշխարհին առաջարկելու կատարելագործման հետագա ուղիներ: Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման վերաբերյալ առանձնացվում են գիտական երկու ուղղություններ՝ «Քրիզանթեմ և սուր» կամ «Ամերիկյան դպրոց»² և ռիզիոնիստական տեսություն³:

Ճապոնական տնտեսության արդիականացման հենքի վրա էլ տեղի ունեցավ «Ճապոնական տնտեսական հրաշքը», որը բնութագրվում էր «խաղաղության տնտեսության» ստեղծմամբ, քանի որ նախապատերազմյան տնտեսությունը մեծամասամբ կառուցված էր ճապոնական միլիտարիզմի պահանջարկների վրա: Հետպատերազմյան տարիներին ճապոնական տնտեսության հաջողությունները պայմանավորված էին նաև երկրում որակյալ աշխատուժի հսկայական բանակի առկայությամբ, աշխատավորների շահագործման բարձր մակարդակով, նրանց

¹ Kuwabara T., Japan and Western Civilization: Essays on Comparative Culture. Tokyo, University of Tokyo Press, 1986, p. 125.

² Benedict R., The Chrysanthemum and the Sword. Boston: Houghton Mifflin, 1946, p. 32.

³ Jonson Ch., MITI and Japanese Miracle, the Growth of Industrial Policy 1925-1975, Stanford, 1982, p. 128.

ցածր աշխատավարձով: 1951-1958 թթ. վերամշակող արդյունաբերության մեջ մեկ բանվորի աշխատանքի արտադրողականության տարեկան աճը 14 % էր¹: 1972 թ. Ճապոնիայի արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության մակարդակը կազմում էր ԱՄՆ-ի 1/3-ը²: Ավելին՝ Ճապոնիայի «Ոսկե դարում» (1956-1973) մեկ աշխատողի հաշվով արտադրողականության տարեկան աճը միջինը 8 % էր, ինչը 4 անգամ գերազանցում էր նույն ժամանակաշրջանում ԱՄՆ-ում գրանցված մակարդակը³:

Մեր դիտարկմամբ՝ «Ճապոնական տնտեսական հրաշքը» կարող ենք ներկայացնել բուրգի տեսքով, որը կազմված է հետևյալ մակարդակներից.

1. Էթնոմշակութային գործոններ (խմբայնություն, ավանդական ընտանիք),
2. Ճապոնական մենեջմենթ (խմբին նվիրվածություն, որոշումների կայացում, կորպորատիվ ոգի և կառավարում),
3. Ֆինանսատնտեսական գործիքներ (ներդրումային, հարկային, դրամավարկային քաղաքականություններ):

Խմբայնության՝ որպես ճապոնական հասարակությանը բնորոշ առանձնահատկության շեշտադրմանը կարելի է հանդիպել Ճապոնագիտական բազմաթիվ ուսումնասիրություններում: Ըստ Հիրոշի Հաձամայի՝ «խմբայնություն» բառը վերջին ժամանակներս սկսել են լայնորեն օգտագործել Ճապոնական տնտեսական ֆենոմենը հասկանալու համար: Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ռ. Օձակին համարում է, որ ճապոնական խմբայնությունն այն մոբիլիզացնող ուժն է, որը ոչ միայն Ճապոնացիներին օգնեց արագ արդիականանալու, այլև ստեղծեց տնտեսական զարգացման կայուն և բարձր աճի հնարավորություններ:

Ճապոնացիների էթնիկական ինքնության երկրորդ շերտը խմբային ինքնությունն է, որով պայմանավորված է Ճապոնական հասարակության հաճախակի բնորոշումը որպես «խմբային» հասարակության, ինչը կապված է հենց Ճապոնական ավանդական ընտանիքի հետ:

Ճապոնական մենեջմենթի հիմնական առանձնահատկություններից մեկը խմբին նվիրվածությունը շեշտելն է, խմբային հոգեբանությունը: Մարդկանց ոչ մի հանրության մեջ, թերևս, այնպես բարձր չեն գնահատում խմբային մթնոլորտը, խմբի հոգեբանական կլիման, ինչպես Ճապոնիայում: Աշխատանքի արտադրողականության բարձրացումը կամ անկումը շաղկապվում է աշխատանքային խմբի համերաշխության աստիճանին և նրա «անսայթաք» գործունեությանը: Խմբին նվիրվածության գաղափարախոսությունը փոխադրվում է ցանկացած ճապոնական ընկերություն և կիրառվում ճապոնական մենեջմենթում, դառնում անձնակազմի աշխատանքային ջանքերի ուժեղագույն խթանիչը, ջանքեր, որոնց կարևորագույն նպատակն է ամրապնդել ֆիրմայի ներկա դիրքերը և պատրաստվել ապագայում նոր դիրքեր գրավելուն: Այսպիսով՝ ճապոնացիների խմբային աշխատանքային գործողությունները ստեղծվում են փոքր խմբերի

¹ Պետրոյան Լ. Պ., Ճապոնիայի տնտեսական զարգացումը, Երևան, 1976, էջ 79:

² Корсунский А., Промышленность Японии и США, МЭМО, N 1, 1975, стр. 85.

³ Richard Kneller, Danny McGowan, Tomohiko Inui, Toshiyuki Matsuura, Globalisation, multinationals and productivity in Japan's lost decade, Journal of the Japanese and international Economies, 26 (2012), p. 110-128.

ջանքերով: Այդ խմբերին անհրաժեշտ ուղղվածություն տալու համար ճապոնական ֆիրմայում արմատավորվում է բարոյական հատուկ ոգի՝ կորպորատիվ ոգի:

Ճապոնական մենեջմենթի կարևորագույն բաղադրամասերից է որոշումների կայացման գործընթացը: Որոշումներ ընդունելու ճապոնական համակարգը հիմնված է ազգային ավանդույթների վրա, արտացոլում է ճապոնացիների ազգային հոգեբանության առանձնահատկությունները և կողմնորոշված է դեպի նրանց սոցիալական արժեքները¹:

Ճապոնիայում որոշումներ կայացնելու էական առանձնահատկությունը համաձայնեցման սկզբունքն է: Ընտանացիները նախընտրում են նախնական համաձայնեցումները, խորհրդակցությունները և ոչ ձևական բանակցությունները: Անհրաժեշտ է նշել, որ Ճապոնիայում որոշումներ ընդունելու գործընթացին բնորոշ է մի այնպիսի երևույթ, ինչպիսին «նեմավասին» է², որը նշանակում է «բախումների մեղմացում», այսինքն՝ տարաձայնությունների բացառում, հակասությունների թուլացում: Շահագրգիռ անձանց բազմաթիվ ժողովների և նրանց արձագանքը պահանջող խնդիրների հանգամանալի քննարկման շնորհիվ ստացվում է այնպես, որ ընդունված որոշումը բխում է խմբից, և այդ պատճառով պատասխանատվությունն ընկնում է ոչ թե մեկի վրա, այլ ամբողջ խմբի: Ահա հենց սա էլ ճապոնացիների էթնոմշակութային սկզբունքներից մեկն է՝ «խմբայնությունը», ինչն էլ հիմք է դարձել Ճապոնական մենեջմենթի ձևավորման համար:

«Ճապոնական տնտեսական հրաշքը» պայմանավորված է նաև մի շարք ֆինանսատնտեսական գործոններով, որոնք արտահայտված են մի շարք կառուցվածքային տարրերով՝ ֆինանսական լծակներ, ներդրումային, հարկային և այլ քաղաքականություններ:

Ըստ «Ճապոնական հրաշքը» հետազոտողների, Բրուքինգյան ինստիտուտի ներկայացուցիչներ Է. Դենիսոնի և Ու. Չանգի³ առավել հեղինակավոր ուսումնասիրություններից մեկի՝ 1950-1960-ական թթ. Ճապոնիայում արձանագրված զերբարձր տնտեսական աճի հիմնական գործոնների շարքը (դրանց նշանակության նվազման կարգով) պետք է դասել ներդրումների աճը, նոր տեխնոլոգիաների կիրառումը, մասշտաբի էֆեկտը, մարդկային կապիտալը, ռեսուրսների վերաբաշխումը (գյուղատնտեսությունից՝ արտադրություն):

Ֆինանսատնտեսական գործոններն առավել լավ պատկերացնելու համար ներկայացնենք «Ճապոնական հրաշքի» իրագործմանը նպաստող «ֆինանսական բանաձև», որը կարող է արտահայտվել հետևյալ տրամաբանական շղթայով⁴.

խնայողությունների և կուտակումների բարձր մակարդակ → մասշտաբային ներդրումներ առավել կապիտալատար ճյուղերում (պետության ընտրությամբ առավել հեռանկարային ճյուղեր) → մակրոտնտեսական կայունություն (ինֆլյացիոն ցածր տեմպ կամ բացակայություն (մինչև 1965 թ.) / պետական բյուջեի դե-

¹ Поршнев Б. Ф., Социальная психология и история. М., 1979, стр. 68.

² Владимиров В. А., О национальном характере японцев. «Азия и Африка сегодня», 1976, N 2.

³ Denison E. F., Chung W. K. How Japan's Economy Grew So Fast. Wash.: Brookings Institution, 1976.

⁴ Финансовые стратегии модернизации экономики: мировая практика / под ред. Я. М. Миркина. М., Магистр, 2014, стр. 63-64.

ֆիզիտի ցածր մակարդակ) → ազգային արժույթի ֆիքսված իջեցված կուրս՝ նպաստող ներմուծման փոխարինմանը և արտահանման զարգացմանը → տեխնոլոգիաների ներմուծման խրախուսման դեպքում օտարերկրյա կապիտալի սահմանափակում → արտահանմանը պետական օժանդակություն → կապիտալի հաշվեկշռի վերահսկողություն և դրա աստիճանական ազատականացում → տնտեսության լայնածավալ հարկային խրախուսում → բանկային համակարգի վերահսկողություն:

Հարկ է փաստել, որ 1950-ական թվականներին աճի հզոր գործոն դարձավ պետության կողմից բնակչության խնայողությունների ուղղումը դեպի տնտեսություն: Հենց խնայողությունների և կուտակումների ծայրահեղ բարձր նորման դարձավ Ճապոնիայում հետպատերազմյան արագ տնտեսական աճի աղբյուր:

Եզրափակելով՝ անհրաժեշտ է նշել, որ «Ճապոնական տնտեսական հրաշքից» Հայաստանի տնտեսության զարգացման համար գործածական կարող են լինել:

1. Ճապոնացիների նվիրվածությունը, որի շնորհիվ էլ պետական կամ ազգային նպատակներին հասնելու համար ճապոնացիները զոհում են անձնական շահը հանուն խմբի, պետության կամ ազգի: Դա շատ կարևոր է մեզ պես փոքր և սահմանափակ ռեսուրսներով և ոչ բարենպաստ տարածաշրջանում գտնվող պետության համար:

2. որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի կիրառումը: Երբ շահագրգիռ անձանց առաջադրած խնդիրների հանգամանակից քննարկման շնորհիվ ընդունված որոշումն արդեն բխում է խմբից, դրա համար պատասխանատվությունն ընկնում է ոչ թե մեկի վրա, այլ ամբողջ խմբի, կայացված որոշումն առավել ընդունելի է դառնում, կատարված փոփոխությունները չեն կարող հանգեցնել ընդվզումների կամ սթրեսների:

3. հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ճապոնական հրաշքի» կարևորագույն գործոններից մեկն էլ բնակչության խնայողությունների նպատակային օգտագործումն էր, առաջարկում ենք խթանել ՀՀ բնակչությանը՝ կատարելու խնայողություններ, բայց 21-րդ դարում ունենալով այլ դրսևորումներ, մասնավորապես՝ ազատ դրամական միջոցները ուղղել դեպի կապիտալի շուկաներ՝ ներդրումներ կատարելով, ինչի շնորհիվ Հայաստանում կակտիվանա բաժնեմասային ֆինանսավորման մշակույթը, ինչից էլ կօգտվեն և՛ ձեռներեցը, և՛ ազատ դրամական միջոցի տերը, և՛ ի վերջո նաև պետությունը՝ տնտեսական ակտիվություն արձանագրելով: Այս ամենի շնորհիվ ի վերջո ՀՀ տնտեսությունը զարգացում կարձանագրի նաև արժեթղթերի շուկայում:

ԻՍՐԱՅԵԼԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՀԵՏԱԳԻԾԸ

Մերի Մանուչարյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Իսրայելի Պետությունը ստեղծվել է 1948 թվականի մայիսի 14-ին՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1947 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ, ըստ որի՝ Մեծ Բրիտանիայի ենթամանդատային Պաղեստինը հռչակվում էր անկախ, և նրա տարածքում ստեղծվում էին երկու ինքնուրույն՝ արաբական և հրեական պետություններ:

«Մենք երագում էինք մեր հողի մասին, բայց հողը, որ ստացանք, երագանք չէր: Դա մի փոքրիկ կտոր էր: Դրա վրա երկու լիճ կար, մեկը՝ մահացած, մյուսը՝ մահացող: Ջուր ընդհանրապես չկար, բնական պաշարներ չկային: Մենք միայնակ էինք, չկար կրոնի եղբայր, լեզվի քույր, պատմության հարևան, և այդ ամենը Հոլոքոստից հետո էր: Մենք գնացինք այնտեղ ու չգիտեինք, թե ինչ անենք, և մենք մտածեցինք՝ բնության մեծագույն հարստությունը մարդն է, մարդն է հարստացրել հողը, ոչ թե հակառակը: Մենք բոլորս դարձանք գիտնականներ: Իսրայելի յուրաքանչյուր գյուղացի սկսեց սովորել, թե ինչպես կարելի է գյուղատնտեսություն հիմնել առանց հողի ու ջրի: Մենք հիմնեցինք բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված առաջին գյուղատնտեսությունը: Հիշենք՝ ապագայի համար կարևոր չէ, թե ինչ ենք գտնում, այլ այն, թե ինչ ենք արտադրում»: Այս խոսքերը պատկանում են Իսրայելի նախկին նախագահ Շիմոն Պերեսին:

Սկսած 90-ականների կեսերից՝ իսրայելական տնտեսությունը ենթարկվել է էական կառուցվածքային փոփոխությունների՝ կապված բարձր տեխնոլոգիաների ներդրման և արդյունաբերության վերակենդանացման հետ:

Իսրայելը ռազմականացված տնտեսությամբ ագրարային-արդյունաբերական երկիր է: Լինելով տարածքով փոքր և աշխարհագրական դիրքով ոչ բարենպաստ երկիր՝ կարողացել է հասնել էական զարգացման տարբեր ոլորտներում, ներառյալ գյուղատնտեսությունը:

Իսրայելի գյուղատնտեսությունը համարվում է երկրի ազգային տնտեսության գերզարգացած ոլորտներից մեկը: Երկրում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքները կազմում են ՀՆԱ-ի 2,5 %-ը և արտահանման կառուցվածքի 3,6 %-ը: Երկրի աշխատուժի 3,7 %-ը զբաղված է գյուղատնտեսությունում, ընդ որում՝ Իսրայելը 95 %-ով բավարարում է սեփական պահանջները: Երկրում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքների ավելցուկի խնդիրը գրեթե արմատախիլ է արվել, քանի որ տնտեսություններն ունեն պետության սահմանած արտադրության և ջրօգտագործման ծավալային սահմանափակումներ, այն է՝ քվոտաներ յուրաքանչյուր մշակաբույսի համար, ինչն իրապես օգնում է կայունացնել գյուղատնտեսական արտադրանքների գները:

Փոքր տարածք և սահմանափակ բնական ու ֆինանսական ռեսուրսներ ունեցող Իսրայելը, որը նաև շարունակական ռազմական հակամարտության մեջ է

իր հարևանների մի մասի հետ, ստիպված է անընդհատ որոնել ոչ ստանդարտ՝ ստեղծագործական լուծումներ երկրի առաջընթացն ապահովելու համար: Խոսքը հատկապես գիտության, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների բնագավառում հաջողությունների մասին է:

Իսրայելական բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններն ավելի հանրաճանաչ են, քան ամերիկյան ընկերությունները. եթե առաջին չորս տարիներին ներդրումներն այստեղ աճել են 140 %-ով, ապա ԱՄՆ տեխնոլոգիական ստարտափերում՝ ընդամենը 64 %-ով:

Իսրայելցիները կենտրոնացած են բիզնեսի համար ապրանքների վրա, որը զարմանալի չէ՝ հաշվի առնելով տեղական փոքր շուկան: Ավելի քան 6 600 ակտիվ տեխնոլոգիական ընկերությունների 80 %-ը առաջարկում է B2B ապրանքներ: Ստարտափերը նախընտրում են փոքր քանակությամբ օտարերկրյա ընկերություններին վաճառել տեխնոլոգիաներ, քան փորձել իրենց տեղը գրավել երկրի ներսում կամ նվաճել արտերկրի օգտատերերին:

2018 թ. ներդրված գումարների քանակով գլխավոր 5 ոլորտներն են.

1. կիրառական գիտություն՝ 1,19 միլիարդ դոլար: Հետաքրքրական է, որ այս ոլորտում ընկերությունները զբաղեցնում են ամբողջ էկոհամակարգի ընդամենը 7 %-ը, բայց հավաքում են առավելագույն գումարներ:

2. Առողջապահություն՝ 900 միլիոն դոլար, նախորդ տարվա համեմատ պակասել է: Թվային բժշկության ոլորտում ներդրումները շարունակել են աճել, սակայն դեղագործական և բժշկական սարքավորումների սահմանաչափը անկում է ապրել:

3. Ֆինանսական ծառայություններ՝ 832 միլիոն դոլար, այս ոլորտը գրանցել է ռեկորդային աճ՝ գրեթե երկու անգամ ավելի, քան նախորդ տարի:

4. Տրանսպորտ՝ 753 միլիոն դոլար, որը 2017 թ. արդյունքից կրկնակի ավելին է: Բոլորից առաջ «Gett»-ն է՝ 80 միլիոն դոլար արժողությամբ:

5. Գյուղատնտեսություն և սնունդ (ագրոտեխնոլոգիա և սննդի տեխնոլոգիա)՝ 196 միլիոն դոլար: Գյուղատնտեսական տեխնոլոգիաների մեջ ներդրողների շրջանում ամենատարածվածը «խելացի գյուղացիական տնտեսության» և ագրոբիոտեխնոլոգիայի տեխնոլոգիաներն էին: Իսկ սննդի տեխնոլոգիաներում նրանց հետաքրքրում էին ստարտափերը մատակարարման, լոգիստիկայի և փաթեթավորման ոլորտում:

Բոլոր ոլորտներում առաջատար տեխնոլոգիան դարձել է արհեստական բանականությունը, որն օգտագործում է բոլոր նորարարական ստարտափերի 17 %-ը: Իսրայելական մշակողների շրջանում հանրաճանաչ այլ տեխնոլոգիաներն են իրերի համացանցը և բլոկչեյնը: Հենց արհեստական բանականությունն է ընկած «Datorama» ընկերության տեխնոլոգիայի հիմքում, որը գնել է «Salesforce»-ը: Տեղական էկոհամակարգի մեջ են մտնում նաև համաշխարհային ընկերություններ «Intel»-ը և «Nvidia»-ն, որոնք որոշել են Իսրայելում արհեստական բանականության ոլորտում բացել իրենց հետազոտական կենտրոնները: «Google»-ը արդեն թողարկել է իր արտադրանքը՝ «Google Duplex» ծրագիրը, որը մշակված է Իսրա-

յելի զարգացման կենտրոնում և ձայնային օգնականին թույլ է տալիս պատվերներ կատարել հեռախոսով:

Հարկերը Իսրայելի գանձարանի եկամտի մեծ մասն են: Եվ նրանք այստեղ բավական բարձր են: Եկամուտների ավելացմամբ ավելանում է եկամտահարկի տոկոսը: Հատկանշական է, որ մարդիկ գերադասում են այս հարցում չկատակել պետության հետ, քանի որ Իսրայելում հարկերից խուսափելու համար պատիժը չափազանց մեծ է: Բացի տուգանքներից՝ միանգամայն հնարավոր է հայտնվել ճաղերի հետևում:

Արժի առանձնացնել նաև Իսրայելի բժշկությունը: Ամեն տարի կառավարությունը ՀՆԱ-ի ընդհանուր մասնաբաժնի ավելի քան 8 %-ը հատկացնում է առողջապահության ոլորտին: Երկիրն ապրում է պատերազմական իրավիճակում, հետևաբար պետության համար կարևոր է յուրաքանչյուր քաղաքացու կյանքը: Ահա թե ինչու նրանք, հանգամանքներից հարկադրված, ձեռնամուխ եղան բժշկական ոլորտի զարգացմանը:

Իսրայելի ուժեղ կողմերից մեկը նրա բանակն է՝ ՑԱԽԱԼ-ը, որը համարվում է աշխարհում ուժեղագույններից մեկը: Այստեղ բոլորը զորակոչվում են. տղամարդիկ՝ երեք տարով, կանայք՝ երկու: Եվ ամենահետաքրքիրն այն է, որ բանակից խուսափելու գաղափարը այստեղ պարզապես գոյություն չունի: Իրենք՝ իսրայելցիներն ասում են. «Մեր բանակը շքերթների համար չէ, այլ պատերազմի»: Այդ իսկ պատճառով նրանք ժամանակ չեն ծախսում մարտական պատրաստության վրա: Եվ շարահրապարակում ժամերով քայլելու փոխարեն՝ զինվորները սովորում են զենքի տիրապետման տեխնիկան:

Թեպետ Իսրայելի տարածքի կեսից ավելին անապատ կամ կիսանապատ է, այնուամենայնիվ՝

✓ Իսրայելը կարողանում է ապահովել իր երկրի պարենային պահանջարկի 95 %-ը:

✓ Իսրայելն առաջինն է եղել կաթիլային ոռոգման համակարգերի զարգացման և ներդրման առումով: Ներկայում Իսրայելը արդյունավետ ոռոգման համակարգերի միջոցով ոչ միայն բավարարում է գյուղատնտեսական ապրանքների սեփական պահանջարկը, այլև ցիտրուսայինների, բանջարեղենի և բոստանային մշակաբույսերի արտահանման շուկաներում աշխարհում առաջատարներից մեկն է:

✓ Իսրայելում կյանքի մակարդակը ամենաբարձրն է Մերձավոր Արևելքում: Այդ երկրում յուրաքանչյուր բնակչին հասանելիք ՀՆԱ-ն ավելի բարձր է, քան Մեծ Բրիտանիայում:

Իսրայելում ամեն ինչ օգտագործվում է խնայողաբար: Այստեղ քաղցրահամ լճին վերաբերվում են առանձնահատուկ կերպով: Եթե լճի մակարդակն իջնում է, ապա այդ օրը ԶԼՄ-ներով հայտարարում են ամբողջ երկրին, և բոլորը փակ են պահում ծորակները՝ ջուր խնայելու համար: Այստեղ հաշվված է հողի յուրաքանչյուր կտորը, ջրի յուրաքանչյուր կաթիլ նախատեսված է բույսերի համար և անիմաստ չի ծախսվում, փորձ է արվում ամեն գնով օգտագործել արևային էներգիան: Իսրայելցիները կարողանում են այդ անապատում երեք անգամ բանջա-

րեղենի ցանքս կատարել, և դա այն դեպքում, երբ ամեն մի թփի համար ջրի կաթիլը հաշվված է:

Երկրում որդեգրված սկզբունքի համաձայն՝ հաջողության հասնելու առաջին նախապայմանը մարդկային ռեսուրսն է: Հողատարածքներն ու ջրային ռեսուրսները ոչինչ չարժեն, եթե չկան դրանց վրա ճիշտ աշխատող մարդիկ: Շատ կարևոր է աշխատել մի համակարգում, որն ապահովում է խորքային գիտելիքներ: Այս դեպքում գյուղատնտեսական արտադրության մեջ ներգրավված բոլոր տնտեսությունները, բոլոր պաշտոնյաները, հետազոտողները, խորհրդատվական համակարգում աշխատող անձինք գտնվում են սովորելու շարունակական գործընթացում, ինչի շնորհիվ ոլորտը անընդմեջ զարգանում է:

Իսրայելում ձևավորվել է ուժեղ տնտեսություն, որը կարելի է համեմատել այնպիսի երկրների հետ, ինչպիսին է Շվեդիայի կամ Նիդեռլանդների տնտեսությունը: Տնտեսական առումով սա Մերձավոր Արևելքը չէ: Ըստ «Bloomberg»-ի՝ նորարարական տնտեսություն ունեցող երկրների ցուցակում Իսրայելն առաջին տասնյակում է: Այնուամենայնիվ Իսրայելում, ի տարբերություն եվրոպական երկրների, սոցիալական անհավասարության մակարդակը շատ ավելի բարձր է:

Իսրայելական տնտեսության դինամիկ զարգացման ևս մեկ հիմնական գործոն էր 20-րդ դարի վերջին տասնամյակում նախկին ԽՍՀՄ-ից բարձր հմտություններ ունեցող ավելի քան մեկ միլիոն ներգաղթյալների մեծ ներհոսքը: Նրանցից շատերը բարձրակարգ գիտնականներ և ճարտարագետներ էին: Եվ ամենակարևորը՝ հրեա ժողովուրդը մի ընդհանուր բան ունի, ինչը նրանց օգնել է գոյատևել նույնիսկ ամենաբարդ ժամանակներում. դա նրանց միասնականությունն է:

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ». ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վլադիմիր Հարությունյան

ՀՀ ԳԱԱ ՏԻ տնօրեն,

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆեսոր

«Տնտեսական հրաշք» իրականացրած երկրների, անձանց, նրանց զբաղեցրած պաշտոնների մասին տեղեկությունների վերաբերյալ ժողովածուում բերված թիվ 4 հավելվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ բոլոր երկրներում եղել է հրաշքն իրականացրած կոնկրետ անձ, բարեփոխիչ, որի շուրջ համախմբվել են մյուս բոլորը: Հետագոտելով «տնտեսական հրաշք» իրականացրած ավելի քան երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձը՝ եկել ենք այն եզրահանգման, որ դրանցում կիրառված հիմնուղիներից ու գործիքակազմերից Հայաստանում գործարկելի ու արդյունքաստեղծ են հետևյալները.

1) հակակոռուպցիոն լայնածավալ ու արդյունավետ գործողությունների կազմակերպումը, ինչպես կատարվել է Մինգապուրում,

2) ճապոնական մենեջմենթի և որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի ներդրումը,

3) բնակչության խնայողությունների ուղղորդումը դեպի կապիտալի շուկաներ, ինչպես կատարվել է Ճապոնիայում ու Չիլիում,

4) չմշակված հանքաքարի արտահանման արգելումը, ինչպես կատարվել է Ինդոնեզիայում,

5) բնական ռեսուրսները սահմանադրորեն ընդմիջտ ժողովրդին ընդհանուր սեփականության իրավունքով ամրագրելը, ինչպես կատարվել է Իսլանդիայում,

6) հատուկ ուշադրություն պետք է դարձնել հայրենասիրության, միասնականության և թիմային ոգու բարձրացմանը,

7) անհրաժեշտ է խրախուսել թվայնացած տնտեսության զարգացումը և ուսումը:

8) Հետպատերազմյան Հայաստանին անհրաժեշտ է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, հարկերից խուսափելու պատժի մեծացումը, որպեսզի հարկատուները ժամանակին և ամբողջությամբ վճարեն հարկերը, բարձր գնահատել յուրաքանչյուր մարդու կյանքը, բոլորին գորակոչել բանակ, իսկ զենքից կրակել, ժամանակակից զենքից օգտվել և ուժային մարզաձևեր սովորեցնել դպրոցական տարիքից՝ անկախ սեռից:

Ցանկանում եմ արձանագրել, որ վերոնշյալ կիրառական առաջարկություններն արդյունք են այն բանի, որ, եթե թույլ տաք ինձ փոքր-ինչ քնարական ոճով արտահայտվել, ինչպես մեղուներն են ծաղկանցից նեկտարը՝ մեղրը հավաքում¹, այդպես էլ «տնտեսական հրաշքների» փորձը ուսումնասիրող խմբերն են գրքերից, գիտական հոդվածներից ու կայքերից տարբեր երկրների «տնտեսական հրաշք-

¹ Աստծո կանչը, Ե., 2018, էջ 3:

ների» փորձը վերցրել և կիրառական առաջարկություններ արել Հայաստանի Հանրապետությունում դրանք գործարկելու ուղիների վերաբերյալ:

Մի հանգամանք ևս: Ստեղծված հետպատերազմյան իրավիճակում և համավարակային շրջանում Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել ոչ թե տնտեսական հեղափոխություն, այլ «տնտեսական հրաշք», որի հնարավորությունն ունի հայ ժողովուրդը, քանի որ հայկական խմբայնությունն այն մոբիլիզացնող ուժն է, որը հայերին օգնեց և հաղթանակի հասցրեց ինչպես 2016 թ. ապրիլյան և 2020 թ. հուլիսյան պատերազմների ժամանակ: Կարծում եմ՝ «տնտեսական հրաշք» տեղի կունենա նաև Հայաստանում, և մեր երկիրը 3-4 տարի հետո կարձանագրի իրականություն դարձած «տնտեսական հրաշքի» պտուղները: Ընդ որում՝ «հայկական հրաշքը» պետք է կառուցվի՝ հաշվի առնելով մեր երկրի առավելությունները և թերությունները, քանի որ յուրաքանչյուր երկիր իր առանձնահատկություններն ունի, և միշտ չէ, որ այլ երկրների ձեռնարկած միջոցառումները որևէ երկրում ճշգրտորեն կրկնելը հնարավոր է, կամ այն նույնքան արդյունավետ կլինի: Բայց արտերկրյա առաջավոր փորձի օգտագործումը, անկասկած, տնտեսության մեջ դրական տեղաշարժեր արձանագրելու առումով շատ արդյունավետ կարող է լինել, միաժամանակ կարող են բացահայտվել մինչ այդ չերևացող բազմաթիվ խնդիրներ ու ծուղակներ:

Ուստի մեծ է հավանականությունը, որ գիտաժողովում հնչեցված առաջարկությունները հաշվի առնելը դրական տեղաշարժեր կառաջացնի ՀՀ տնտեսությունում: Եվ ընդհանրապես բազմաթիվ հարցերի լուծումը այս գիտաժողովից հետո, թույլ տվեք վստահաբար հույս հայտնել, կարող է գոնե մեկ քայլ առաջ տանել ՀՀ տնտեսությունը: Հայ ազգն ունի իրեն բնորոշ արժեհամակարգ (մենթալիթետ), պրպտուն մտքի տեր, ստեղծագործ մտածողությամբ որդիներ ու դուստրեր, բավականին արտաքին ներուժ (Սփյուռք), ապրում է արևոտ, անվտանգ, բերրի, չքնաղ ու ազատ երկրում: Մեզ պետք չէ դառնալ ո՛չ նոր Մինգապուր, ո՛չ նոր Ճապոնիա, ո՛չ էլ նոր Իսրայել: Մեզ պետք է դառնալ նոր Հայաստան՝ առավել արդիական, ազատ ու հզոր:

«Տնտեսական հրաշք» իրականացրած երկրների փորձը վկայում է, որ դրանց տնտեսության վերելքի ժամանակաշրջանը փակ տեղեկատվական համակարգերի դարաշրջան էր, երբ չկար համացանց և գլոբալացում, երբ նորագույն տեխնոլոգիաների հնացման ցիկերը 10-15 տարի էին, այլ ոչ թե 2-3, ինչպես հիմա: Սա մեծ առավելություն էր տալիս այն ժամանակ իրականացվող տնտեսական ռեֆորմներին և ներդրումների արդարացվածությանը: Իսկ այժմ աշխարհը փոխվել է, փոխվել են նաև խաղի կանոններն ու ներքին բաղադրիչները, աճում են տեխնոլոգիական բարդ բնեռացումը և դրա ստացման ֆինանսական և գիտական գինը: Ավելին՝ նախկին «տնտեսական հրաշքի» որոշ երկրներ այսօր կառուցվածքային խոր ճգնաժամ են ապրում, քանի որ տնտեսական աճի նախկինում հաջողված մոդելները դժվարությամբ են հարմարվում գլոբալացման ներկա ժամանակաշրջանին: Եվ եթե Հայաստանին հաջողվի գլոբալացվող այս դարում բոլորովին այլ հիմքերով «տնտեսական հրաշք» իրականացնել, ապա այս նորագույն տնտեսական դարաշրջանում Հայաստանն առաջինը կլինի, ինչպես որ եղավ հեղափո-

խություն կատարած երկրների շարքում՝ իրականացնելով ոչ բռնի, թավշյա հեղափոխություն: Իսկ դրա համար կարևոր և անհրաժեշտ են համարում նաև, որ «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում» հողվածների ժողովածուն թարգմանվի ռուսերեն և անգլերեն, յուրաքանչյուրից տպագրվի 100 օրինակ և հանձնվի ՀՀ գիտության ու կրթության նախարարությանը, իսկ աշխատանքների ֆինանսավորման հասցեատերեր առաջարկում են ճանաչել ՀՀ գիտության պետական կոմիտեին, որպես աշխատանքների իրականացման կազմակերպիչ հասցեատեր առաջարկում են ճանաչել ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտին: Այդ թարգմանված գրքերը կարող են օգտագործել կառավարության և ԱԺ պատվիրակությունները՝ տարբեր հանդիպումների ու գործուղումների ժամանակ:

Մի հանգամանք ևս: Պատերազմում ունեցած պարտությունը և, հատկապես, կապիտուլյացիան, երբեք էլ չպետք է համարել դատավճիռ: Հիշենք նման իրավիճակում հայտնված Գերմանիային ու Ճապոնիային, որոնք 2-րդ աշխարհամարտի ընթացքում կապիտուլյացիայի ենթարկվեցին, բայց հետագայում նրանց տնտեսություններում «տնտեսական հրաշք» տեղի ունեցավ՝ օրինակ հանդիսանալով աշխարհի շատ երկրների համար: Դրանց շարքին կարելի է դասել նաև Հարավային Կորեան: Այնպես որ, ամեն ինչ չէ, որ կորած է:

Տնտեսական հրաշք իրականացրած երկրների փորձի հետազոտությունից և նրանց փորձը ՀՀ-ում գործարկելու հնարավորությունների բացահայտումից բացի՝ անհրաժեշտ են նաև ստորև հիշատակվող առաջնահերթությունները.

առաջին՝ անհրաժեշտ է, որ տնտեսական հրաշք իրականացնող պատասխանատուները ակտիվացնեն շփումները շարքային քաղաքացիների հետ: Այստեղ հիշատակության արժանի է աստվածաշնչյան այն միտքը, որ «Մեղուն փոքր է թռչունների մեջ, սակայն նրա պտուղը քաղցրության սիրտն է»¹: Եթե դիմենք Մեծ լոռեցու օգնությանը, ապա պետք է արձանագրենք, որ գիտությունը և իմաստությունները ոչ թե գրքերում և աշխատասենյակներում են ամբարված, այլ շարքային քաղաքացիների հետ ունեցած շփումներում²: Եվ շարքային քաղաքացիների հետ ունեցած շփումների արդյունքում էր, որ Հովհաննես Թումանյանը, Սայաթ-Նովան, Կոմիտասը, Ջիվանին և մյուս մեծանուն հայորդիները մնացին հայ ժողովրդի հոգում ու սրտում և ստացան միջազգային ճանաչում:

Երկրորդ՝ տնտեսագիտության ինստիտուտի խորին համոզմամբ՝ տնտեսական հրաշքի իրականացումն առավել դյուրին է, քան Մեծ հայրենական պատերազմի հաղթանակի հրաշքն էր:

Երրորդ՝ «տնտեսական հրաշքն» իրականություն դարձնելու համար, բացի վերոնշյալներից, անհրաժեշտ է կատարել նաև մի շարք քայլեր.

քայլ առաջին՝ ի հայտ բերել մերօրյա, մեր ժողովրդի ուղեկիցները դարձած Բաղրամյաններին, Նելսոն Ստեֆանյաններին, Հովհաննես Թումանյաններին, Կոմիտասներին, Ջիվանիներին, Մերգեյ Մերգեյաններին, Վիկտոր Համբարձումյաններին և այլոց, ովքեր կան, ապրում են մեր ժողովրդի մեջ, մեր կողքին:

¹ Հին կտակարան, էջ 925:

² Նվարդ Թումանյան, «Հուշեր և գրույցներ», Երևան, 2009, էջ 21, 41, 83:

Քայլ երկրորդ՝ երիտասարդացնել ողջ պետական ապարատը, զինել նրանց մտավոր պաշարով ու բարոյապես՝ փոխանցելով ավագ սերնդի փորձն ու մտավոր ներուժը:

Քայլ երրորդ՝ առաջ մղել երիտասարդներին, վստահել պատասխանատու պաշտոններ ու դիրքեր, որպեսզի նրանք չլքեն հայրենիքը և իրենց երիտասարդական եռանդն ու ավյունը օգտագործեն հանուն Հայաստանի Հանրապետության:

Քայլ չորրորդ՝ կառավարման մարմինների ղեկավարները, լինեն նրանք խորհրդարանում, կառավարությունում, մարզպետարաններում թե տեղական ինքնակառավարման մարմիններում, պետք է ավելի ակտիվացնեն շփումները շարքային քաղաքացիների հետ: Շարքային քաղաքացիների հետ ինտենսիվ շփումների արդյունքում կառավարման մարմինների ղեկավարներն անպայման կիմաստանան: Իսկ իմաստունների համար հանրահռչակած ոչ մի խնդիր անլուծելի չի մնում: Այս ճանապարհով հնարավոր կլինի հեղափոխություն կատարել շարքային քաղաքացիների գիտակցության մեջ, իսկ «տնտեսական հրաշքի» իրականացումը կլինի դրա հետևանքը: Մա՛ է պատմության դասը:

Քայլ հինգերորդ՝ «տնտեսական հրաշքի» իրականացմանը անհրաժեշտ է ներգրավել բոլոր մասնագիտությունների գիտական և դասախոսական անձնակազմին՝ որպես հարթակ ծառայեցնելով կազմակերպվող գիտաժողովները, որոնցում բարձրաձայնվող կիրառական առաջարկությունները կարող են նպաստել տնտեսության արագատեմպ զարգացումն ապահովող միջավայրի ձևավորմանը:

Քայլ վեցերորդ՝ «տնտեսական հրաշքի» յուրաքանչյուր փուլում անհրաժեշտ է թիրախավորել առանձին առաջնահերթություններ: Մեր կարծիքով՝ արդի փուլի առաջնահերթություններ պետք է դիտարկել.

- 1) պետական բյուջեի եկամուտների ավելացումը,
- 2) նոր աշխատատեղերի ստեղծումը,
- 3) ազգաբնակչության եկամուտների և նրանց բարեկեցության մակարդակի բարձրացումը,
- 4) թվայնացված տնտեսության զարգացման խթանումը:

Քայլ յոթերորդ՝ խորհրդարանականները և պետական կառավարման համակարգի պատասխանատուները պետք է արված կիրառական առաջարկությունները ի մի բերեն և հնարավոր կիրառականները հաշվի առնեն իրենց հետագա գործողություններում: Ըստ իս «տնտեսական հրաշքի» իրականացման առաջնահերթություններ են նաև, որ ՀՀ կառավարությունը՝

1. ոգեկոչի և քաջալերի շարքային քաղաքացիներին՝ ակտիվորեն մասնակցելու «տնտեսական հրաշքի» գործընթացներին,
2. ստեղծի պայմաններ «տնտեսական հրաշքի» իրականացման համար,
3. շարքային քաղաքացիներին հաղորդի հոգեբանական ազդակներ: Ի դեպ, «գերմանական հրաշքի» հեղինակ Լյուդվիգ Էրհարդը նշանակալի տեղ էր հատկացնում հոգեբանական գործոնին և մի առիթով նկատել է, թե տնտեսությունը հիսուն տոկոսով հոգեբանություն է: Այս հարթության մեջ նրա վերլուծությունները, ելույթներն ու շրջագայությունները Գերմանիայում ստացել են «հոգևոր

մերսում» անվանումը¹:

- Համոզված եմ, որ գիտաժողովի նյութերում ներառված գիտական հոդվածները իրենց նպաստը կբերեն հանրապետությունում «տնտեսական հրաշքի» իրականացմանը:

- Միայն լավատեսական մտածողությամբ ու հոգեբանությամբ հայ ժողովուրդը կարող է իրականություն դարձնել «տնտեսական հրաշքը»՝ չմոռանալով, որ թերահավատները ոչ թե անապատի, այլ ամուր բերդի վրա են հարձակվում:

Միայն այդ դեպքում կարող է հարատևել մեր ազգային ինքնությունը արդի համաշխարհային փորձություններում:

Այսուհետ նոր Հայաստանում մենք շեշտադրումներ պետք է կատարենք նաև հանրապետության լիկվիդային այնպիսի ապրանքատեսակների վրա, ինչպիսիք են, օրինակ.

1) հանքային ու քաղցրահամ ջրերը, որոնք անհրաժեշտ է անկորուստ շաղցնել և արտահանել առաջին հերթին Ռուսաստան, Մերձավոր Արևելք ու Եվրոպա: Անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով արգելանք դնել Սևանա լճի քաղցրահամ ջրերը ռոռզման նպատակով օգտագործելու վրա և դրանք նպատակաուղղել միայն ու միայն արտահանմանը: Իսկ ռոռզման նպատակով օգտագործել Արաքս գետի ջուրը՝ գտնելով հնարավոր գործիքներ ու ֆինանսական միջոցներ: Որպես ֆինանսական միջոց կարող են հանդիսանալ, օրինակ, Սևանա լճի քաղցրահամ ջրի արտահանումից ստացված գումարները:

2) Լիկվիդային ապրանքատեսակներ են հանդիսանում նաև տարբեր տեսակի մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոները, որոնք դեռևս դարեր առաջ գրավել և շարունակում են գրավել շատ օտարերկրացիների ուշադրությունը՝ սկսած 18-րդ դարից, երբ ֆրանսիացիները եկան և Լոռիում հիմնադրեցին Մանես քաղաքը (ժամանակակից անվանումը՝ Ալավերդի): Մինչդեռ դրանք մեր թողտվությամբ ջրի գնով արտահանվում են, իսկ դրա բացասական հետևանքները թողնվում են հայ ժողովրդին:

3) Լիկվիդային ապրանքատեսակ է նաև ծխախոտի հումքի, այսինքն՝ թուրունի արտադրությունը, որը գյուղացիների համար զբաղվածության մեծ խնդիր կարող է լուծել: Մինչդեռ մեր օրերում այն դարձել է «Գրանդ Տոբակո»-ի մենաշնորհը Տավուշի մարզում:

4) Լիկվիդային ապրանքատեսակ է նաև բամբակի արտադրությունը, որի որակը, հատկապես Արաքսի ափամերձ շրջաններում աճեցված բամբակինը, գերազանցում է դրա հայրենիքը հանդիսացող միջինասիականին: Այն, մի կողմից, գյուղացիների համար կապահովի աշխատատեղեր և, մյուս կողմից, կնպաստի տեքստիլ արդյունաբերության զարգացմանը՝ իր բոլոր դրական հետևանքներով հանդերձ:

5) Լիկվիդային ապրանքատեսակ է նաև խաղողի արտադրությունը, որը Հայաստանի Հանրապետության համար և՛ ավանդական է, և՛ եկամտաբեր, և՛

¹ «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածու - 2019, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 405:

ունի դարերի պատմություն, իսկ մեր օրերում այն, մի կողմից, զբաղվածության խնդիր կարող է լուծել, իսկ մյուս կողմից՝ կարող է նպաստել գինեգործության և երկար տարիների պատմություն ունեցող կոնյակի արտադրության զարգացմանը:

6) Անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով դադարեցնել փոքր հեկտրի գործունեությունը: Նրանց գործունեության շղթան կարելի է պարզ ձևակերպել այսպես. ջուրը սարերից հոսում է, վերածվում է գետերի ու առվակների, որոնց վրա կառուցված փոքր հեկտրը ջրից ստանում են էլեկտրաէներգիա և այն ազատորեն, օրենսդրորեն սահմանված գներով վաճառում են Հայաստանի էլեկտրական ցանցերին՝ ցամաքեցնելով ու չորացնելով շրջակա միջավայրը իրենց բնորոշ բոլոր բացասական դրսևորումներով, ինչի հետևանքով սակավահող Հայաստանի շատ գյուղերի բնակիչներ արտագաղթում են, քանի որ ջրագրկված տարածքներում հնարավոր չի լինում ո՛չ գյուղատնտեսությամբ և ո՛չ էլ անասնապահությամբ զբաղվել: Դրա վառ օրինակներից է Լոռվա մարզի Մոսկոբի հանդամասը, որը տեղակայված է Դսեղ, Քարինջ, Մարց և Ահնիձոր գյուղերի միջնամասում, որտեղ ջրագրկվել ու ցամաքեցվել է Դեբեդի վտակ Մարց գետը:

Փոքր հեկտրից ստացվող էլեկտրաէներգիայի պակասը առաջարկում եմ լրացնել արևոտ Հայաստանի արևային էներգիայից ստացվող էներգիայով:

Ահա սրանք են, որ պետք է թիրախավորվեն՝

- 1) հանրապետության կառավարության գործունեության ծրագրերում,
- 2) բուհերի և գիտական հաստատությունների գիտաժողովներում, գիտական ու մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ժամանակ,
- 3) տնտեսագետ-մարքեթոլոգների կողմից, և համաշխարհային շուկաները գրավելու խնդիր պետք է դրվի: Ահա սրանք է պետք առևտրայնացնել և ոչ թե գիտությունը:

Պետք չէ առևտրայնացնել գիտությունը, հատկապես՝ ֆունդամենտալ և տեսական՝ մոռանալով կարևոր մի հանգամանք, որ գիտական արդյունքը միայն նյութականորեն չափելի արդյունք չէ, որ ակնկալենք ստանալ եռամսյակով, կիսամսյակով կամ տարվա կտրվածքով: Գիտական արդյունքը բացառիկ և յուրահատուկ ապրանք է, որն իր սպառողական արժեքը պահպանում է տասնյակ տարիներ և, բնականաբար, դրա արդյունքաստեղծ գործընթացն էլ երկարատև և ու սովորական ապրանքի նման չպետք է շուկայականացնել¹, որի պայմաններում գիտությունը կդադարի գիտություն լինելուց և կմահանա:

Թույլ տվեք խոսքս ավարտել իմ մի բանաստեղծությամբ, որը գրել եմ 2019 թվականի հոկտեմբերին, երբ ձևավորում էին «տնտեսական հրաշք» իրականացրած երկրների հետազոտական խմբերը:

¹ Ազգային տնտեսություն: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետազոծող (2007-2017 թթ.). Եզրակացություններ, կիրառական առաջարկություններ, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 249:

*Ամեն մեկն էլ իր սրտում
Ունի մի մեծ երազանք,
Գուրգուրում է, փայփայում
Երազանքը նա իր թանկ:*

*Քուն թե արթուն՝ երազը
Մարդու հետ է, միշտ ներկա,
Ե՛վ լուսատու մի փարոս,
Ե՛վ մի պայծառ ապագա:*

*Թն է տալիս նա մարդուն,
Ստիպում գործել հրաշքներ,
Առանց երազ, ա՛ իս, ինչքան
Փուչ կլիներ կյանքը մեր:*

*«Գործն է անմահ», - ասել են
Մեր մեծերը իմաստուն
Ու երազել մի աշխարհ՝
Ազատ, հզոր ու հարուստ:*

*«Գործն է անմահ», մենք գիտենք,
Ե՛վ երազը՝ իրական,
Մեր ջանքերով, ուս ուսի
Պիտ կերտենք Նոր Հայաստան:*

Մենք պարտավոր ենք ոգեկոչել հայ ժողովրդին, որպեսզի Հայոց աշխարհում իրականություն դառնան տնտեսական հրաշքը, բարեկեցիկ կյանքն ու հայ մարդու երկարակեցությունը: Եվ որպեսզի թուրքի մտքով անգամ չանցնի ծուռ աչքով նայել հայ մարդու կողմը, լինի դա Հայոց աշխարհում թե արտասահմանում:

**ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից
ՀՀ կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկությունները (2018-2020 թթ.)**

№	Գիրառական առաջարկության անվանումը կամ վերնագիրը	Հեղինակի անուն, ազգանունը	Առաջարկության տարեթիվը	Առաջարկությունը իր արտացոլումն է ստացել	Առաջարկության հասցեատերը
1.	Հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական և մեթոդաբանական ուղենիշերը անուղղակի հարկերի մասով	Հարությունյան Վլադիմիր, Հարությունյան Տիգրան	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն
2.	Ֆինանսական համակարգի կատարելագործման ուղենիշերը ՀՀ-ում	Հարությունյան Վլադիմիր	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ ԿԲ, ՀՀ ֆինանսների նախարարություն
3.	Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման ուղենիշերը ՀՀ-ում	Հարությունյան Վլադիմիր, Հակոբյան Եվգենյա	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն
4.	Բենզինի և դիզելային շուկայի ազատականացման ուղենիշերը	Բաղդասարյան Քրիստինե	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն
5.	Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության հիմնախնդիրներն ու զարգացման ուղենիշերը ՀՀ-ում	Դալլաքյան Սվետլանա	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
6.	Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման ուղենիշերը արդի տեխնոլոգիական զարգացումների համատեքստում	Մարկոսյան Հայկ	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
7.	Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման հեղափոխական մոդելը	Սարգսյան Լիլիթ	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
8.	Գյուղատնտեսության ապահովագրության ներդրումը որպես գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման ուղենիշ	Մանուչարյան Մերի	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

9.	Մտորումներ հարկային օրենքների շուրջ («Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներ)	Հարությունյան Վլադիմիր, Հարությունյան Դավիթ	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ ՊԵԿ
10.	Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում	Դավլաթյան Սվետլանա, Սարատիկյան Նարեկ	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
11.	ԵՏՄ երկրներում գործող հարկային դրույքաչափերի և ՀՆԱ ցուցանիշի շուրջ	Հակոբյան Եվգենյա	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն
12.	Ներառական տնտեսական զարգացման հարկային խթանիչ մեխանիզմները (ՀՀ օրինակով)	Հարությունյան Գևորգ	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
13.	ԵԱՏՄ երկրների տնտեսական պլատֆորմների զարգացմանը ՀՀ շուկայի սուբյեկտների մասնակցության հիմնախնդիրները	Մարգարյան Սոնա	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
14.	Ստվերային տնտեսության նվազեցման մոտեցումները. մարտահրավերներ և առաջարկություններ	Պետրոսյան Լիլիթ	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ ՊԵԿ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
15.	ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման հնարավորությունները	Սարգսյան Անուշ	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

16.	Ագրոտուրիզմի զարգացման հիմնախնդիրները և խթանման ուղիները ՀՀ-ում	Ազատյան Լիանա	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
17.	ՀՀ գյուղատնտեսությունում մեքենատրակտորային համակարգի ներկա վիճակը և թարմացման հնարավոր ուղիները	Ալոյան Ռուզաննա	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
18.	Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների ինովացիոն գործունեության խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում	Զախարյան Արմինե	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
19.	Օրգանական գյուղատնտեսության նշանակությունը որպես կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմացման միջոց	Մանուչարյան Մերի	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
20.	Գիտակրթական համակարգը որպես ՀՀ գյուղատնտեսության զարգացման գործոն	Ոսկանյան Գոհար	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
21.	Ինովացիոն START-UP-երի հիմնախնդիրները և դրանց խթանումը ՀՀ-ում	Պողոսյան Շողեր	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն,
22.	Տնտեսության թվայնացումը որպես տնտեսական հեղափոխության կարևորագույն նախադրյալ	Շահինյան Տաթևիկ	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

23.	Սինգապուրի «տնտեսական հրաշքը»	Սարգսյան Լիլիթ	2020 թ.	«Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
24.	Մալայզիայի «տնտեսական հրաշքի» «կորպորատիվ ազգայնականության» մոդելը	Բաղդասարյան Քրիստինե	2020 թ.	Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
25.	«Ճապոնական տնտեսական հրաշքի» փիլիսոփայությունը	Դավլաթյան Սվետլանա	2020 թ.	Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
26.	Իսրայելի «տնտեսական հրաշքի» հետազոծը	Մանուչարյան Մերի	2020 թ.	Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
27.	«Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում	Հարությունյան Վլադիմիր	2020 թ.	Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից ՀՀ կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկությունները ըստ գիտաշխատողների և հասցեատերերի (2018-2020 թթ.)

№	Հեղինակի անուն, ազգանունը	Գիրառական առաջարկության անվանումը կամ վերնագիրը	Առաջարկության տարեթիվը	Առաջարկությունը իր արտացոլումն է ստացել	Առաջարկության հասցեատերը
1.	Հարությունյան Վլադիմիր (5 հատ)	Ֆինանսական համակարգի կատարելագործման ուղենիշերը ՀՀ-ում	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ ԿԲ, ՀՀ ֆինանսների նախարարություն
2.	Հարությունյան Վլադիմիր Հակոբյան Եվգենյա	Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման ուղենիշերը ՀՀ-ում	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն
3.	Հարությունյան Վլադիմիր	«Տնտեսական հրաշքները» գործարկման ուղիները Հայաստանում	2020 թ.	Տնտեսական հրաշքները» գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
4.	Հարությունյան Վլադիմիր Հարությունյան Տիգրան	Հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական և մեթոդաբանական ուղենիշերը անուղղակի հարկերի մասով	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն
5.	Հարությունյան Վլադիմիր Հարությունյան Դավիթ	Մտորումներ հարկային օրենքների շուրջ («Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներ)	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ ՊԵԿ
6.	Մարկոսյան Հայկ	Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման ուղենիշերը արդի տեխնոլոգիական զարգացումների համատեքստում	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
7.	Մարգարյան Լիլիթ (2 հատ)	Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման հեղափոխական մոդելը	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

8.	Մարգայան Լիլիթ	Մինգապուրի «տնտեսական հրաշքը»	2020 թ.	«Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
9.	Բաղդասարյան Քրիստինե (2 հատ)	Բենզինի և դիզվառելիքի շուկայի ազատականացման ուղենիշերը	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն
10.	Բաղդասարյան Քրիստինե	Մալայզիայի «տնտեսական հրաշքի» «կորպորատիվ ազգայնականության» մոդելը	2020 թ.	Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
11.	Դալլաքյան Սվետլանա (2 հատ)	Բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության հիմնախնդիրներն ու զարգացման ուղենիշերը ՀՀ-ում	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
12.	Դալլաքյան Սվետլանա	«Ճապոնական տնտեսական հրաշքի» փիլիսոփայությունը	2020 թ.	Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
13.	Դալլաքյան Սվետլանա, Մարատիկյան Նարեկ	Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
14.	Մանուչարյան Մերի (3 հատ)	Գյուղատնտեսության ապահովագրության ներդրումը որպես գյուղացիական տնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման ուղենիշ	2019 թ.	Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
15.	Մանուչարյան Մերի	Օրգանական գյուղատնտեսության նշանակությունը որպես կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմացման միջոց	2019 թ.	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
16.	Մանուչարյան Մերի	Իսրայելի «տնտեսական հրաշքի» հետազոծը	2020 թ.	Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, գրքույկ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

17.	Հակոբյան Եվգենյա (2 հաս)	ԵՏՄ երկրներում գործող հարկային դրույքաչափերի և ՀՆԱ ցուցանիշի շուրջ	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն
18.	Ջախարյան Արմինե (1 հաս)	Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների ինովացիոն գործունեության խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
19.	Պողոսյան Շողեր (1 հաս)	Ինովացիոն START-UP-երի հիմնախնդիրները և դրանց խթանումը ՀՀ-ում	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն,
20.	Շահինյան Տաթևիկ (1 հաս)	Տնտեսության թվայնացումը որպես տնտեսական հեղափոխության կարևորագույն նախադրյալ	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
21.	Ոսկանյան Գոհար (1 հաս)	Գիտակրթական համակարգը որպես ՀՀ գյուղատնտեսության զարգացման գործոն	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
22.	Հարությունյան Գևորգ (1 հաս)	Ներառական տնտեսական զարգացման հարկային խթանիչ մեխանիզմները (ՀՀ օրինակով)	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
23.	Մարգարյան Սոնա (1 հաս)	ԵԱՏՄ երկրների տնտեսական պլատֆորմների զարգացմանը ՀՀ շուկայի սուբյեկտների մասնակցության հիմնախնդիրները	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

24.	Պետրոսյան Լիլիթ (1 հատ)	Սովերային տնտեսության նվազեցման մոտեցումները. մարտահրավերներ և առաջարկություններ	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ ՊԵԿ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
25.	Մարգարյան Անուշ (1 հատ)	ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման հնարավորությունները	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
26.	Ազատյան Լիանա (1 հատ)	Ագրոտուրիզմի զարգացման հիմնախնդիրները և խթանման ուղիները ՀՀ-ում	2019 թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
27.	Ալոյան Ռուզաննա (1 հատ)	ՀՀ գյուղատնտեսությունում մեքենատրակտորային համակազմի ներկա վիճակը և թարմացման հնարավոր ուղիները	2019թ.	Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

h/h Անուն, ազգանուն

*Գիտական աստիճանը, գիտական կոչումը,
աշխատանքի վայրը*

1. **Վլադիմիր Հարությունյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. **Տիգրան Հարությունյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տնտեսագիտության դոկտոր
3. **Դավիթ Հարությունյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տնտեսագիտության դոկտոր
4. **Լիլիթ Սարգսյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, տնտեսագիտության թեկնածու
5. **Քրիստինե Բաղդասարյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտ. քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6. **Հայկ Մարկոսյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
7. **Մերի Մանուչարյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
8. **Սվետլանա Դավլաբյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
9. **Եվգենյա Հակոբյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
10. **Արմինե Զախարյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
11. **Շողեր Պողոսյան** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու

- | | |
|--------------------------------|--|
| 12. Գևորգ Հարությունյան | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու |
| 13. Գոհար Ոսկանյան | Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու |
| 14. Տաթևիկ Շահինյան | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ինստիտուտի ասպիրանտ |
| 15. Նարեկ Սարատիկյան | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ |
| 16. Սոնա Մարգարյան | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող |
| 17. Անուշ Մարգարյան | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ինստիտուտի ասպիրանտ |
| 18. Լիանա Ազատյան | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող |
| 19. Լիլիթ Պետրոսյան | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող |
| 20. Ռուզաննա Ալոյան | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող |

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՍ 2
2018-2020 ԹԹ.

Հրատարակության խմբագիր՝	բ. գ. թ.	Ա. Մանուկյան
Շարվածքը՝		Մ. Բաբայանի
		Դ. Սարաֆյանի
Էջադրումն ու ձևավորումը՝		Մ. Համբարձումյանի

Չափսը՝ 70×100^{1/16}, 17.75 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 100 օրինակ: